Ազնիվ է երգիծաբանի նպատակը. նրա ծիծաղն իր էության մեջ պաշտպանում է արդարությունը, ճշմարտությունը. „Մեր միտքը Մեղուն պաշտպանելը չէ, վասն զի անի կրնա իր փեթակը ապաստանիլ, և իր խայթոցովը իր թշնամյաց դեմ դնել, մենք արդարությունը կուզենք պաշտպանել...<sup>11</sup>: Սըվաճյանն ընդգծում է, որ „Մեղուն ծնած օրեն մինչև հիմա հարսնիքին տունը լալն ու մեռելին գլխուն վերև խնդալը սովորություն ըրած ըլլալով, այս սովորությունը իրեն բնություն մը եղեր է ու ալ չկրնար... ազգօգուտ ձեռնարկությանց արգելք եղողներուն վրա սրտացավ ազգասերներուն հետ ինք ալ լալ. հապա պիտի խնդա և պիտի խնդա,,: Այստեղ ուշագրավը նաև այն է, որ տաղանդավոր սկզբնավորողի՝ երգիծանքի ուժի գիտակցումը հետագայում իմաստախոսությունների պիտի հասցներ հանճարեղ Պարոնյանը. „Մոլություններու վրա ծիծաղիլն առաքինության ճանբուն վրա գտնվիլ կ'ենթադրե և, այս հաշվով, որչափ շատ ծիծաղ քաղեմ՝ այնքան նվազ մոլություն պիտի գտնեմ,, , կամ՝ „Ես արտասուքի հետ զործ չունիմ և չեմ փափագիր ունենալ, քույլ տվեք ծիծաղներուն ինձի գալ, զի անոնց է այս աշխարհիս արքայությունն,,<sup>12</sup>:



Ինչպես տեսնում ենք, կարևորագույն քայլը կատարված էր. «Չայոց առաջին երգիծաբանը / Ա. Չոպանյանի բնորոշումն է /<sup>13</sup> հայտնաբերում է ծիծաղի ներգործուն ուժը և ուղիներ որոնում այն մարմնավորելու համար: Սկզբնական շրջանում նրա երգիծանքը շոշափում է առավելապես կենցաղային խնդիրներ. ծաղրվում են նորաձևությունն ու օտարամոլությունը, շահակրատանքը, բամբասասիրությունը, որկրամոլությունը, պճնասիրությունը... «Մեղվի», հենց առաջին համարում սպանիչ ծաղրով երգիծվում է թեթևալիկ ու օտարամոլ դատարկապորտը / «Օկյուսթ-Կինեն /, այնուհետև մի քանի թիվ հետո երգիծաբանի դիպուկ նետերի տակ իր բարոյական մահն է ստանում տգետ ու սնամեջ, ծույլ ու անբան հայ երիտասարդը / «Չարուստ երիտասարդի մը սենյակը», /, խարազանվում են տգիտությունը, խավարամտությունն ու սնահավատությունը / «Կեշը կեշով տեֆ կ'ըլլա», /, օտարամոլությունը / «Չայերեն խոսելու զանազան կերպեր», /, նորաձևությունն ու պճնասիրությունը / «Այս ամսուն մոտաները», /, շատախոս ու որկրամոլ միջնորդ կինը / «Մանկասարին հարսնիքը», /, պոլսահայ մեծատունի տգիտությունն ու ամբարտավանությունը / «Լրագիրներուն գինը կանխիկ է», /, շահասիրությունը / «Չոգաբարձու մը ըլլայի», /, բթամտությունը / «Կիները մարդ չեն»,<sup>14</sup> և այլն:

Չեղարկելով հանդես են գալիս մի տեսակ գողված, գիրկընդխառն, և այդ ճանապարհին կենդանի կյանքի ընթացքը հեղինակին թելադրում է ոչ միայն նոր թեմաներ, այլև գրական զանազան ձևեր ու արտահայտամիջոցներ՝ արձակի տարբեր տեսակների ուրվագծեր, երգիծական մանրապատումներ ու երկխոսություններ, գրույցներ, պատմվածքներ, նովելաձևեր... Այստեղ Սըվաճյանը դառնում է ուսուցիչ: Գիշտ է նկատված, որ «Մանկասարը, Թագուկ հանընը և մնացյալ երկրորդական դեմքերը այն նախատիպերից են, որոնք, հետագայում, գեղարվեստական մեծ ընդհանրացումներով, մշակվում են հայ գրականության մեջ Դ. Պարոնյանի, Գ. Սունդուկյանի, Եր. Օտյանի կողմից, դառնալով մեր գրականության հանրահայտ հերոսները»<sup>15</sup>:

Սկստելի է, որ արևմտահայ կյանքում տեղ գտած արատավոր երևույթների քննադատությունը հատկապես բնորոշ է Սըվաճյանի ստեղծագործական կյանքի առաջին շրջանին /1856-60/: Մեծ կյանքի բովում՝ կենսական շարժման մեջ, նա աստիճանաբար անցում է կատարում դեպի սոցիալ-քաղաքական խնդիրները, ասելիքը մարմնավորելու համար որոնում գրական նորանոր ձևեր. ծնվում են ֆելիետոններ ու պամֆլետներ, կատակերգություններ ու երգիծական բանաստեղծություններ՝ հագեցած քաղաքացիական և գաղափարական ցայտուն շեշտավորումներով: Այստեղ, սակայն, մեզ առավել հետաքրքրող գրական դիմանկարի ժանրի ասպարեզում Սըվաճյանի կատարած նախավործերն են:

## 3

Դիմանկարի ժանրի սաղմնավորման, խմորումների տեսակետից ուշաբժան է, որ Սըվաճյանը «Մեղու», երգիծաթերթի հենց առաջին թվում «Անվանի տղայք. ներածություն», ոչ այնքան համառոտ ծանուցման մեջ խոստանում է հանդեսի հաջորդ համարից սկսած թարգմանաբար տպագրել «Բարեպաշտ, ողջախոհ և իմաստուն», Միշել Մասոնի «Անվանի տղայք», վերնագրով 52 «կենսագրություններ», «որոնք հեղինակն իր գրքում բաժանել էր 8 խմբի / «Թագավոր տղայք», «Մարտիրոս տղայք», «Բարեպաշտ տղայք», «Ժրաջան տղայք», «Քաջասիրտ տղայք», «Բանաստեղծ տղայք», «Գիտուն տղայք», «Ճարտարարվեստ տղայք» /: «Այս հիսուն երկու անվանի տղայոց պատմությանը մեջ հեղինակը չար և բարի մարդոց վարքը և գործքը այնքան լավ կը նկարագրե, անոնցմե այնքան պարզ ու առողջ բարոյականներ կը հանե, - գրում է Սըվաճյանը,- որ տղայոց բարերարություն մը ընելու նպատակով գրած առենը, ամեն վիճակի և ամեն հասակի մարդկան գվարձալի հետաքրքրական և օգտակար գիրք մը շինե. իր ոճը ազդու, վառվռու և վսեմ. իր խոսքերը ավելի սիրտերու հետ են քան թե աչքերու ու ականջներու հետ, ինչպես որ պիտի տեսնենք՝ հաջորդ թիվեն սկսելով»<sup>16</sup>: Եվ ահա «Մեղվի», հաջորդ և հետագա թվերում սկսում են տպագրվել հին ու նոր աշխարհի «երևելիների», «կենսագրությունները» / «Էդուարդ Դ-ի տղաքը», «Եվդոքսիա. արևելյան կայսրուհի», «Չովհաննա Կրեյ», «Իվան Զ», «Չովաս»,



„Լյուդովիկոս ժե., , „Նաբոլեոն Բ., և այլն.,<sup>17</sup>: Ինչպես տեսնում ենք, օտար նշանավոր գործիչների ներկայացվող „զվարճալի,, „կենսագրությունները,, ենթադրել են բարոյախրատական նպատակներ, սակայն հետաքրքրությունից զուրկ չէ նաև այն հանգամանքը, որ դրանք Սըվաճյանի ստեղծագործական տարերքի մեջ կարող էին նպաստել գրական դիմանկարի ժանրի մտահղացմանը. „կենսագրությունից,, կարող էր ճեղքվել երգիծական դիմանկարը, ինչպես դա հետագայում պատահեց „Ազգային ջոջերի,, հեղինակի՝ ֆրանսիական „Պոլիշինել,, երգիծաթերթից 1874-ին կատարած քարզամանությունների ճանապարհին: „Օտար ազգաց մեջ իրենց գործերովն երևելի հանդիսացած անծերն մեր ազգայնոց ալ ծանոթացնելու նպատակավ,- ծանուցում է Պարոնյանը,- այսօրվնե կսկսինք անոնց երգիծական կենսագրությունը գաղղիերենե քարզմանելով թերթերնուս մեջ հրատարակել.,<sup>18</sup>:

3. Սըվաճյանի երգիծական դիմանկարների՝ իբրև նախապարոնյանական շրջանի ուշագրավ փորձերի, բանասերներն անդրադարձել են հպանցիկ և բավարարվել են լոկ ընդհանուր դիտարկումներով: Այսպես, Ալիս Մանուկյանը նշել է. „Թե՛ Չամուռճյանի և թե՛ Գալֆայանի երգիծական դիմանկարները արժեքավոր են իբրև նախափորձեր Պարոնյանի „Ազգային ջոջերի.,<sup>19</sup>: Իսկ Գրիգոր Սարգսյանը գրել է. „... սրամիտ ու ոչնչացնող ծաղրով է ներթափանցված „Պ. Չամուռճին աշխարհես վերնա նե՛ տեղը ո՞վ դնենք,, վերնագրով պամֆլետը, որը մի կողմից ծայնակցում է՝ Նալբանդյանի „Երկու տողին,, , մյուս կողմից ասես նախապատրաստում Պարոնյանի „Ազգային ջոջերի,, համանուն դիմանկարների ծնունդը.,<sup>20</sup>:

Դիտելի է, որ ժանրային բնութագրումների հարցում գրականագետների կարծիքները հիմնականում միաբևեռ են. Չամուռճյանին և Նար-Պեյին նվիրված դիմանկարների ուրվագծումները համարվել են հողված-պամֆլետներ: Ինչ խոսք, Սըվաճյանի ստեղծած դիմանկարային երեք նախափորձերը / „Մեծ ՔԻԹ մը,, , „Պ. Չամուռճին աշխարհես վերնա նե՛ տեղը ո՞վ դնենք,, և „Խորեն եպիսկոպոս.,<sup>21</sup>/ , ինչ-որ չափով հրապարակախոսական են՝ հենված իրական փաստերի, վավերական իրողությունների ու կոնկետ անձերի գործունեության վրա, բայց և այնպես

դրանք միևնույն ժամանակ գրական դիմանկարների ինքնատիպ ուրվագրումներ են, որոնք փայլում են նաև գեղարվեստական ընդհանրացումներով: Շատ հաճախ իրական փաստերն աննկատելիորեն փոխակերպվում են պատկեր-գաղափարի, պատկեր-գործող անձի, իսկ վերջինում նաև պատկեր-երկխոսության, և աստիճանաբար բարձրանում է գեղարվեստականացող կերպարը՝ իր բնորոշ „դիմագծով,, : Այդ ամենին գումարվելու է գալիս երգիծական տարերքը՝ միախառնված, այսպես կոչված, թե՛ „հրապարակախոսական պամֆլետի,, և թե՛ „գեղարվեստական պամֆլետի,, տարրերին: Միանգամայն իրավացի է գրական ժանրերի տեսաբանը՝ Գասմիկ Մարգունին՝ գրելով, որ „պամֆլետի ու նրան „ազգակից,, երգիծական մյուս ժանրերի միջև որոշակի սահման չկա: Սա բացատրվում է ժանրի իրոք սինթետիկ բնույթով, որ օգտվում է ոչ միայն գեղարվեստական, այլև հրապարակախոսական և նույնիսկ հռետորական միջոցներից: Չէ՞ որ պամֆլետում շատ կարևոր է ապացույցների բնույթը՝ մեղադրանքների անառարկելի, տրամաբանական, համոզիչ լինելը: Սակայն բոլոր այս միջոցները, ինչպես և խոսքի պաթետիկությունը, լեզվի սրությունը, փաստերի, թվերի, փաստաթղթերի օգտագործումը գեղարվեստական պամֆլետում ծառայում են երգիծական պատկերավորությանը.,<sup>22</sup>:

Սըվաճյանի հողված-պամֆլետներում ամենից առաջ ակնառու է գրական դիմանկարի առանձնահատկություններից մեկը՝ սեղմ ձևի մեջ „բնորդի,, բնավորության ու գործունեության ամենաէական հատկանիշների վերհանումն ու խարազանումը:

60-ականների սկզբի ազատագրական պայքարի բովում ցայտուն ընդգծվել էին դեմոկրատներն ու հետաշարժները, բարեկամներն ու թշնամիները: Արևմտահայերի Սահմանադրությունը, չնայած իր սոսկ կուլտուրական ու կրոնական բովանդակությանը, ավելի շատ արևմտահայոց ներքին կյանքը տնօրինալուն միտված օրենքների ժողովածու լինելուն ու „թլփատվածությամբ,, , իրականում այն կիզակետն էր, որի շուրջ բախվում էին հասարակական-քաղաքական միանգամայն տարբեր ու իրարամերժ հոսանքները: Հովհաննես Չամուռճյանը, Գաբրիել Այվազովսկին, Գրիգոր Տեյիրմենճյանն ու ամբողջ Պողոսյան շարժումը դեմ էին Սահմանադրությանը,



Բարձրագույն Դռան սաղրանքներով ազգադավ ճիգեր էին անում վիժեցնելու դրա կիրարկումը: Ավելին, արևմտահայ հետադիմության պարագլուխը՝ տիրահամբավ Յովի. Չամուռճյանը, բացերև գնում էր մատնության՝ „կայսերական կառավարության բարձրաստիճան պաշտոնեից միտքը արթնցնել, ուզելով, երբ գրում էր, թե „Սահմանադրությամբ միևնույն տերության մեջ երկու կերպ կառավարություն ընդունել կըլլա. որով ծանրակշիռ է, կըսե, այսպես տերության օրենքն օտարեր օրենքով հպատակ ազգի մը կառավարության արտոնություն մը շնորհվիլը“<sup>23</sup>:

Այդ „անվեղար կաթողիկոսը“, հոգևորական չէր, դեռ ջահել օրերից դիմադրել է հոգևոր աստիճան ընդունելու առաջարկներին, սակայն ժամանակին վայելել է „խորագետ աստվածաբանի“, „լուսավորյալ բարեպաշտի“, „գնայուն մատենադարանի“, կրոնադավաբանական խնդիրների ու եկեղեցու համաշխարհային պատմության քաջահմուտ գիտունի համբավ: Ինչպես վկայում է կենսագիրը՝ Զ. Մրմրյանը, Յովի հանդես Տեր-Կարապետյան Տերոյենց Չամուռճյան Պրուսացի բազմանուն Պատվելին „տիրած էր 10-15 լեզուներու, լափած էր հազարներով գիրք, գրած էր հարյուրներով ալ. կը մաքառեր ու կը հաղթեր հռոմեական ու բողոքական աստվածաբաններու և հրեա ռաբբիներու. ուներ նաև սոսկալի՝ բան՝ դևերու գիտությունը, վարժապետած էր կաթողիկոսներու և, խայթիչ գրողի մը /Զ. Սըվաճյանի-Ալ. Ս./ խոսքով, ինք անվեղար կաթողիկոսն իսկ էր ազգին...“<sup>24</sup>: Դավանաբանական սուր վեճերի ժամանակ նրա աջակցությանն էին դիմում կրոնական բարձրագույն մարմինները, Տերոյենցին իրենց հովանավորության տակ էին վերցրել ճարտարապետ մեծահարուստ ամիրաները՝ Պալանները<sup>25</sup>:

Կրոնական մոլի միստիցիզմով զինված այդ ռեակցիոն գաղափարախոսն իր հրատարակած պարբերականներում՝ „Յայաստան, /1846-48, 1850-52/, „Չոհալ, /1855-56/, „Երևակ, /1857-66/, չքուլացող եռանդով պաշտպանում էր մայրամուտ ապրող ավատատիրական հասակարգը, դիմակայում ազգային զարթոնքին ու ժողովրդի սոցիալ-քաղաքական պահանջներին: Բազմաթիվ են հատկապես „Երևակ“, էջերում ամիսներ շարունակ տպագրվող ինքնուրույն կամ ֆրանսիացի աստվածաբան Ժեհան դը

Սեն-Քլավիանից թարգմանված այն հոդվածները<sup>26</sup>, որոնց մեջ պատմվում են ինչ-որ դևերի գոյության, նրանց չարության մասին, այն „անմարմին գոյացությունների“, գոյության, որոնք „աշխարհիս մեջ պատահած գործերուն ալ կը խառնվին“, „Դև չը կա ըսելը Տեառն մերո մարմին առնելուն և փրկարար խաչելությանը պատճառը վերցընել է,- հանդված ճամարտակուն է Պատվելին,- և պատճառը վերնա մե՝ գործն ալ կը վերնա. մեկ մարդ մը որ միտքը հաստատությամբ դրած ըլլա որ դև չկա, և բնական տրամաբանության ծիրք ալ ունենա, հետևութեն հետևություն մինչև Տեառն մերո մարդեղությունը, խաչելությունը և հարությունը ուրանալու կը հասնի“<sup>27</sup>:

Ծիծաղելի է ու անհեթեթ: Պոլիս ժամանած Միք. Նալբանդյանի ուշադրությունից չվրիպեց պոլսահայ ամիրաների և հետադեմ հոգևորականության այդ գաղափարախոսը: Նա Չամուռճյանի դեմ սկսեց հայտնի բանավեճը՝ նախ „Հրաշափառ խայտառակություն“, պամֆլետով, ապա շարունակեց նշանավոր „Երկու տողում“, Կարդալով Պատվելու „Ապացույցք ավետարանական պատմության“, հոդվածը, ուր հեղինակը գտնում էր, թե ժխտել դևերի գոյությունը կամ կախարհությունը՝ նշանակում է ժխտել նաև քրիստոնեական կրոնը, Նալբանդյանը նրան պատասխանում է „Հրաշափառ խայտառակություն“, պամֆլետով: Լուսավորյալ ժամանակներում Տերոյենցի քարոզած միջնադարյան սխոլաստիկական համարում է „հոգեկան հիվանդության“, արտահայտություն և գրում. „Որպես հայ, ամոթահար զայրանում ենք, որ այս ժամանակում հայ մամուլից արծակվում են այսպիսի ցնորաբանությունք: Մինչև ե՞րբ պիտի խայտառակվին և յուրյանց հետ պիտի խայտառակեն հայ մամուլը, մեր այս դեղնկալ իմաստունքը. կարծենք թե ժամանակ էր արդեն սթափելու միջին դարերի արբեցութենից“<sup>28</sup>: Տերոյենցի նկատմամբ իր վերաբերմունքը Նալբանդյանը շատ ավելի խստացրեց „Երկու տող“, պամֆլետում՝ հայ հրապարակագրության փայլատակումներից մեկում: Հրապարակախոսը սթափորեն ցույց տվեց, որ Տերոյենցը „յուր փտած ու վաճառված գրիչով, ձգտում է պատնեջ կանգնեցնել դեմոկրատիայի ու առաջընթացի ուժերի դեմ, պաշտպանում է միջնադարյան խավարամտությունը և, „գտանվելով երկրագունդի վերա, ապրում է շատ հեռի նորա մակերևութից“:



3. Սըվաճյանը ևս նախքան դիրքերից մեծ պայքար է ծավալում Տերոյեցցի դեմ: „Մեղվի,, էջերում տեղ են գտել երգիծական բազմաթիվ հողվածներ, մանրապատումներ, ուր անողոք ծաղրի է ենթարկված Պատվելին<sup>29</sup>: Այս առումով հատկապես ուշագրավ են „Չքնաղ հյուրընկալություն,, , „Պ. Չամուռյանի գործունեությունը,, և „Չամուռյանին զեկուցում,,<sup>30</sup> հողվածները: Դրանցից առաջինում, ուր „հեզնական ձևը,, հմտորեն միահյուսված է տրամաբանությանը, Սըվաճյանը գրում է, որ Միք. Նախքանդյանը թեև կարիք չունի պաշտպանության, բայց ինքը „պ. Նախքանդյանին գրած նույն հողվածին /„Նամակ „Մեղուի,, խմբագրին,, - Ալ. Մ./ ամեն մեկ տողին, ամեն մեկ բառին պատասխանատու ու պաշտպան,, է: Երկրորդ հողվածում հեղինակը դարձյալ երգիծախառն ոճով ծաղրում է „Երևակ,, հանդեսի և նրա խմբագրի ունայնամտությունը, քաղաքական ստրկամտությունն ու ազգադավությունը: „Երեսդ ճերմակ, պատվելի, Դուդայի մոմին պես...-սարկաստիկ շեշտերով դառնացած բացականչում է հրապարակախոս-երգիծաբանը: Սըվաճյանը նկատում է հետադիմական ուժերի համագործակցությունը, այն, որ մի ժամանակվա թշնամիները՝ Չամուռյանն ու „Արևելյան դար,, կիսամսյա հանդեսի խմբագիր Տեյիրմենճյանը, „այս միջոցին իրարու հետ շատ սիրաբլորեր են և իրարմե չեն կրնար կոր գատվիլ,,:

Իսկ „Չամուռյանին զեկուցում,, հողվածում հեղինակը փորձում է Չամուռյանին բացատրել, որ զուր են նրա և նրա համախոհների ջանքերը՝ թշնամություն սերմանելու հայոց մեջ, քանի որ, մինևույն է, ազգն ազատագրվում է քաղաքական նիրհից. „Գիտցիր, որ խավարյալ ըսվածներն ու լուսավորյալ ըսվածները խավարյալ ու լուսավորյալ ըլլալեն առաջ հայ եղած են և դուև որչափ աշխատիս, օր օրի անոնք իրարու պիտի մոտենան և դուև քու մեկ քանի ներշնչողներուդ և ներշնչյալներուդ հետ մինակ պիտի մնաս միշտ հեռու քու հայրենակիցներեդ և ատելի միշտ անոնք,,:

Գովի. Չամուռյանի դեմ Սըվաճյանի ուղղած հրապարակախոսական-հողվածային քննադատությունն սկսում է զեղարվեստականորեն հանդերձավորվել երգիծական դիմանկարի ստեղծման նախափորձերում՝ դիմանկար-ուրվագծերում: Դեղինակը խնդիր չի դրել տալու Չամուռյանի

գործունեության համապարփակ բնութագիրը. բավարարվել է միայն էական առանձին հատկանիշների ընդգծմամբ: Այդ ճանապարհին նա Պարոնյանի գրական ասպարեզ իջնելուց շատ առաջ՝ դեռևս 1862-ին, գիտակցել է երգիծական դիմանկարի հասարակական ներգործուն մեծ ուժը և գտել, որ „բնորդի,, անգամ ուրվագիծը իրեն հատուկ սեղմ, կոնկրետ ոճով ու երգիծական արտահայտչամիջոցներով կարող է դառնալ պայքարի հարմար զենք. „Չամուռյանին ուրվագիծը տեսնելով՝ հարկավ ամեն մարդ անոր ուրվականեն անգամ տոկաց,,<sup>31</sup>:

Ահա „Մեծ Ժիժ մը,,<sup>32</sup> դիմանկար-ուրվագիծը: Դեղինակը հենց սկզբից Չամուռյանի արտաքին նկարագրությամբ բացահայտում է նրա խավարամտությունը, կրոնական մոլեռանդությունը: Այստեղ ձևի կոմիզմն արտահայտվում է արտաքինի կոմիկական դրսևորման միջոցով. ձևի արտասովորությունը ծնում է գրոտեսկի հասնող կոմիզմ, որն էլ իր հերթին ձգտում է կեցության առանցքային հակասությունների ամբողջական արտահայտման: „Երևակի,, 1862 թ. 116-117-րդ համարներում Չամուռյանը „մեղվականների,, և ընդհանրապես „լուսավորյալների,, դեմ տպագրել էր հողվածներ՝ փորձելով „լուսավորյալներուն միսը ուտել,,: Եվ ահա Սըվաճյանը, օգտագործելով Չամուռյանի „լուսավորյալները,, „քիթերնին իրենց չըհասկըցած բանին մեջ կը խոթեն, և տարապարտ վեճեր և կոիվներ կը բանան,,արտահայտությունը /ընդգծումն իմն է - Ալ. Մ./, իր գլխավոր նշանակետն է դարձնում Պատվելու քիթը՝ կիրառելով մերթ զմերթ բառախաղը /Չամուռյանը „քիթին ոխը քիթով առնել ուզեր է,,/, մերթ գրոտեսկը, որն առաջին հայացքից թեև թվում է սրամիտ ու զվարճալի, սակայն եության մեջ ունի մերկացման անողոք ուժ՝ ուղղված հասարակական-քաղաքական մի ամբողջ հոսանքի խավարամտության դեմ: Պատվելու դեմքն այլանդակվել է „Մեղվի,, թունավոր խաթոցներից. „Պ. Չամուռյանին քիթը մեծցեր էր, վասն զի մեղու մը անցած տարի անոր վրա նստավ, կճեց, շուտ մը քիթը ուռեցավ, քիչ ատենի մեջ ահագին մեծություն մը ստացավ և այս այլանդակ ուռեցքը տեսնողները չըկրցին ծիծաղնին բռնել, հարկ եղավ Պարոնին կիսատ ձգել իր հրապարակախոսությունը և քթին դեղ ընել... ուստի պարտավորեցավ զայն տղմին մեջ ընկղմել,,<sup>33</sup>:



Առերևույթ պահպանելով զուսպ ոճը՝ հեղինակը շարունակում է գծագրել իր գաղափարական հակառակորդի երգիծական դիմանկարը, մարդու, որն ապարդյուն ճիգեր է անում՝ պատասխանելու «լուսավորյալների», օրեցօր ստվարացող բանակին. «Պատվելին չի կարող „հազար կտոր լինել...“ „հարյուր հազար կտոր ալ ըլլա չըկրնար հասնիլ անոնց...: Սըվաճյանը հատուկ ընդգծում է, որ նոր բարձրացող դեմոկրատական ուժերն աչքի են ընկնում իրենց համառությամբ, գաղափարական նպատակամիտված պայքարով, մակարյոյծներին ասպարեզից հեռացնելու անկոտրում կամքով. «...լուսավորյալները, ինչպես ինք կը կոչե գանոնք, իրենց անվան գորությամբը հարկավ ըրածնին թողածնին կը տեսնեն, գիտեն և կը հասկընան, և անանկով ոչ թե մինակ քիթերնին տեսած, գիտցած, հասկըցած և հանդգնած բանին մեջ կը խոթեն, այլ գլխով ոտքով անոր մեջը կը մտնեն և անկե դուրս չ'են ելներ մինչև որ իրենց խումբովը անոր մեջեն ստամոքս խառնըվցնող ճանճերը բուրոյվին հալածեն»<sup>34</sup>:

Հեղինակը, սեղմ ձևի մեջ օգտագործելով ժողովրդական բանահյուսությունից առանձին բեկորներ, աստվածաշնչյան ասույթներ, հիպերբոլիկ փոխաբերություններ ու համեմատություններ, ընդհանուր համապատկերում բարոյապես լիովին ոչնչացնում է Չամուռճյանին ակնարկելով նաև նրա կապը աղայական-ամիրայական խավի հետ. «Պ. Չամուռճյան իր քիթին թող մայի որ շարունակ երկար ատեն տղմին մեջեն դուրս չ'ելներ, ուրեմն տիղմին վեր թո՛ղ չ'ելեն, „կոշկակարն ցկոշիկս... և պարապ տեղը՝ լուսավորյալներուն միսը ուտել թո՛ղ չըփործե, վասն զի անոնք ինքզինքնին աղեկ պատսպարած են: Թե որ Պատվելին անոթի է նե՝ անվանի հարուստներունը թո՛ղ երթա ուտե ու շատանա և հոն լայնարձակ բազմելով տափկուկ տափկուկ ասոր անոր համար չըզրաբանե, որպես զի անոնց հետ զբաղած ատենը չ'ըլլա որ մեղուն այս անգամ ալ զա բերանը կճե և ուռած տիկ դարձունե գանի»<sup>35</sup>:

Դժվար չէ նկատել, որ Սըվաճյանը հաճախ է օգտագործում տիղմ բառը՝ ակնարկելով Պատվելու՝ Չամուռճյան ազգանվան ծագումնաբանությանը, որը նշանակում է տիղմ, ցեխ, կեղտ<sup>36</sup>:

Ստեղծագործական գյուտ է դիմանկար-ուրվագծի վերջնամասը, հեղինակը, ընդհանրացնելով Չամուռճյանի՝ դիվապաշտության բարձրացած խավարամտությունը, դիվային չարամտությունը, խավարանոլ էությունն ու կրոնական մոլեռանդությունը, կոմիկական այսպիսի առաջադրություն-խրատ է տալիս նրան. «Ի վերջո օգտակար խրատ մ'ալ կու տանք մեր պատկառելի Պատվելին որ իր թերթերը լեցնելու համար Դևերուն գոյությանը վրա թող ճառե միայն, թեպետ և քանի որ ինք կա՝ անոնց գոյությունը ապացուցանել հարկ չըկա. վասն զի ինք կենդանի վկա է անոնց գոյությանը և չարությանը և ո՛չ ոք կը տարակուսի անոնց վրա, վասն զի „ի գործոց ձերոց ծանիցեն գծեզ մարդիկ»<sup>37</sup>:

Ուշագրավ է, որ Հովհ. Չամուռճյանին տրված սվաճյանական այս բնութագրումը Պարոնյանը 1879-ին ինքնատիպ խմբագրումից հետո հմտորեն ծուլում է «Հովհաննես Տերոյենց», դիմանկարին՝ օգտագործելով ալոզիզմի ամենաբնորոշ դեպքերից մեկը՝ վերացական պնդումների վրա հենված կոմիզմը. «Յուր ծննդյան հետևյալ գիշերը ծնան դևերն, որոնց գոյությունն այն թվականեն ի վեր հաստատված ճշմարտություն մ' է: ... Դևերու գոյությունը ուրացողները հերետիկոս կը հռչակվեին, և ինք ամեն ճիգ կը թափեր դևերու գոյությունն հաստատել յուր գոյությամբը, և, որ գարմանալին է, դատը միշտ կը վաստկեր»<sup>38</sup>: Ինչպես տեսնում ենք, անմիջական ազդեցությունն ակնհայտ է, սակայն այդ հանգամանքը բնավ ստվեր չի նետում հանճարեղ երգիծաբանի վրա. գրական ազդեցությունները բնական ու անխուսափելի երևույթներ են յուրաքանչյուր գրողի ստեղծագործական ճանապարհին. էականը դրանցից ծնված և բյուրեղացված արդյունքներն են: Պարոնյանն ուշադրությամբ հետևում էր նախորդների գործունեությանը, բաժանում էր նրանց համոզումները և քաջագիտակ էր գրական ժառանգությանը: Այդ իսկ պատճառով նա չի վարանել դիմելու իր ուսուցչի 17-ամյա հնություն ունեցող «Մեծ Թիթ մը», պամֆլետին և փոխառելու նրա դիպուկ բնութագրումները: Պատահական չէ, անշուշտ, որ «Հովհաննես Տերոյենց», դիմանկարի վերջնամասում անփոփելով Չամուռճյանի «կենսագրությունը», Պարոնյանը վերջինին պատկերել է մեջքի վրա պատկած և ձեռքին գիրք բռնած, ճակատին



դրոշմված կրոնք բառը, դևերի խմբով շրջապատված, իսկ „Քթին վրա միշտ կը բզզա մեղու մը և երբեմն կը խայթե,“<sup>39</sup>:

Հաջորդ „Պ. Չամուռժին աշխարհքես վերնա նե տեղը ո՞վ դնենք,, դիմանկար-ուրվագիծը, գեղարվեստական արժանիքների տեսակետից և երգիծական հնարանք ների ու միջոցների բազմազան կիրառություններով նոր որակ է սվաճյանական գրական դիմանկարի ժանրի ստեղծման ճանապարհին: Ձվարթ ոճը, շրջասությունները և չափազանցությունները, սրամիտ հարցադրումներն ու կոմիկական գուշակությունները, դրության կոմիզմը, բառախաղերն ու տրամաբանական անսպասելի շրջադարձերը ծառայում են երգիծական պատկերավորությանը, և թանձր վրձնահարվածներով այս դեպքում ևս կերպավորվում է „խավարը լույսեն ավելի սիրելով՝ անոր մեջ թաղված-մնացած,, Պատվելին:

Հեղինակը դիմանկարն սկսում է արտաքուստ լրջությամբ ու թվացյալ մտահոգությամբ՝ ի՞նչ կլինի, եթե „պ. Չամուռժին աշխարհքես վերնա,, , ո՞վ կարող է արդյոք փոխարինել նրան: „Ասիկա խիստ կարևոր խնդիր մըն է որ այժմեն շատերուն ուշադրությունը կը գրավե,“<sup>40</sup> , - „անհանգստացած,, շարունակում է երգիծաբանը: Արտաքին լրջության քողի տակ, սակայն, շուտով զգացնել է տալիս ոչնչացնող ծաղրի տեսակներից մեկը՝ հեզմանքը, որի ուժն ու ազդեցիկությունը թերևս հենց սառնության ու լրջության մեջ է: Քանի որ Պատվելին „չորս միլիոն ազգին *եզական* մարդն է,, , շատերն են անհանգստանում, որ վշտի մեջ կշփոթվեն և իրենց անելիքը կմոռանան. „Պ. Տեր Կարապետյանը, Աստված տա երկար ապրի, բայց որովհետև մահկանացու է, ինչպես ինք ալ կը հավատա, օր մը պիտի մեռնի հարկավ և աշխարհքես վերնա. վասն զի արդեն բավական տարիքն առած է, ինչպես կ'ըսեն. ուստի երբ Աստուծո անդառնալի վճիռը իր վրա կատարվի՝ չորս միլիոն ազգին այս *եզական* մարդը ո՞հ պիտի կորսըվի: Անոր համար քանի որ հիշյալ Պարոնը դեռ կենդանի է, կ'ապրի, շատերը իրեն համար այսօրվըն կը մտածեն. վասն զի անոր հրաժարման իրենց ազդելիք մեծ ցավը այժմեն զգալով՝ կը վախճան որ ցավի ու կսկիծի մեջ չըկրնան հայնժամ ըստ արժանվույն մտածել անոր վրա ու անհոգ կենան,,:

Հեզման շեշտադրումներով հագեցած արտաքին լրջությանն այնուհետև փոխարինելու է գալիս մերկացումների ամողոք մտրակը՝ սատիրան այս անգամ արդեն մի դեպքում սրամիտ կալամբուրներով / „Հիրավի այսպիսի *եզական* անծ մը ամբողջ ազգի մը հոգնակի վիշտեր կու տա և իրոք մեծ վիշտեր,,/, որով և ցրվում է Պատվելու բացառիկության միջը, մյուս դեպքում թվացյալ զովեստների ու դրանց հակադրություն պարսավանքների տրամաբանական անսպասելի շրջում-զուգորդումներով, որոնք էլ իրենց հերթին բացահայտում են կղերաավատական հոսանքի պարագլխի ունայնամտությունն ու անտաղանդությունը, խավարամտությունը, խառնակչությունը... „Ըստ որում Հովհաննես Պատվելին իր ուշիմությամբը, հմտությամբը, զիտությամբը, իմաստությամբը, գերբնական հանճարովը, գերադրական տաղանդովը, հարուստ քանքարներովը, փարթամ գաղափարներովը, առատ և անհամ գրություններովը, անիմաստ քարզանություններովը, ցուրտ գվարճաբանություններովը, պաղ կատակաբանություններովը, դատարկաբանություններովը, ճամարտակություններովը, ճոռոմաբանություններովը, զրաբանություններովը, վերջապես իր անհեթեթ գլխովը ազգիս մեջ *միակ, անզույգ*, և ստույգ *եզական* մարդ մ'եղած է:

Պ.Պուրսացին այս ամեն հատկություններովը, կատարելություններովը, հանած գրգռություններովը, լարած որոգայթներովը մեծ համբավ ստացած է, և ամենքը մատով կը ցուցնեն այս տարօրինակ անձը, և երբեմն ալ ավելի հարգելու համար, մատներուն վրա կ'առնեն զանիկա,,:

Պատվելու դիմանկարային շտրիխներին ավելանում են նաև անզուսպ կրոնամոլության ու կաթոլիկությանն անդուլորեն ծպտյալ հարելու ակնարկումները. „Պ. Տերոյենց ասոնց ամենուն հետ գլխավորապես քաջ աստվածաբան է, ուսյալ ՚ի կրոնս և ՚ի հավատս, առաքինի և բարեպաշտ, մեծահավատ և բազմահավատ, բայց ոչ անհավատ, վասն զի ինք շատ հավատքներ գիտե և կը քարոզե, ինչպես որ պիտի տեսնենք,,:

Դիմանկար-ուրվագծի սկզբնամասի սեղմ, բայց չափազանց խիտ ու հատու վրձնահարվածներն աստիճանաբար վերածվում են հեղինակի խոստացած որոշ վավերական մերկացումների ու վիճաբանական բացահայտումների, որոնք միտվում են ամբողջացնելու երգիծական կերպարը:



եվ հետաքրքրական այն է, որ այդ հատվածներում ևս հրապարակախոսական ոճն ու դատողությունները գրեթե բոլոր դեպքերում սովորվում են երգիծական պատկերավորության ու նախապես լավ մտածված գեղարվեստական կառույցի չթուլացող լույսից:

Հատկանշական է, որ հեղինակը Չամուռճյանին տված յուրաքանչյուր պատկեր-բնութագրում սկսում է նրա տարբեր անվանումներով. ներառյալ խորագիրը՝ հաջորդաբար հինգ անգամ թվարկվում են „դևընկալ իմաստունի,, բազմահարկ անունները՝ պ. Չամուռճի, պ. Տեր Կարապետյան, Հովհաննես Պատվելի, պ. Պրուսացի, պ. Տերոյենց, ապա այնուհետև մեկտեղվում են բոլոր անունները, և շարունակվում են հեզմախառն անողոք դիմակագերծումները. „Արդ՝ այս ամեն անունները հոս ամփոփելով, Հովհաննես Պրուսացի/Սըվաճյանը նախընտրել է այս անվանածը - Ալ. Ս./ Տեր Կարապետյան Չամուռճյան Տերոյենց բազմանուն Պատվելին յուր 'ի կրոնս և 'ի հավատն ունեցած ծայրահեղ իմաստությամբ տեսնելով, դիտելով, նկատելով որ ազգիս մեջ օր օրի կրոնքը կը խանգարի և հավատքը կը թուլնա ամենուն քով, որով տակավ առ տակավ բողոքականության մոտենալով Հռովմա Ս. Աթոռն կը հեռանան, /տես իր նախկին Երևակները/, իր սրբազնյալ հոգին չըհանդուրժելով ասոնց և իբրև 'ի վերուստ պաշտոն և հայրուստ պարզև առած՝ ձեռք զարկավ ազգը այս ապագա վտանգեն ազատելու և ուղղելու.:

Շուտով պարզվում է նաև „պ. Չամուռճիին ուրվագիծը,, գրելու շարժառիթը. ինչպես նկատում է Սըվաճյանը, Պատվելին մի զարմանալի եռանդով իր „Երևակի,, 1862թ. դեկտեմբերի 1-ի թվով վերստին „լուսավորյալներուն միսը ուտել փորձեր է.։ Ինչու": Հեղինակը խորաթափանց հայացքով հայտնաբերում է բուն պատճառը. ազգային դպրոցներն այլևս չեն գնում Պատվելու „Քրիստոնեական վարդապետություն,, գիրքը և ոչ թե այն պատճառով, որ „լուսավորյալների ձախողակի խորհրդով,, վերացված է քրիստոնեական ուսմունքը, ինչպես պնդում է Չամուռճյանը /քավ լիցի, „ԼՈՒՍԱՎՈՐՅԱԼՆԵՐԸ *անհավատ* չ'են կրնար ըլլալ.:/, այլ պարզապես „Պ. Պրուսացիին շինած *Քրիստոնեական վարդապետությունը* չ'են կարդացուներ կոր.։ Եվ ահա „քաջ աստվածաբանը,, առանց հաշվի առնելու, որ շուտով Կրոնական ժողովն իր „Քրիստոնեական վարդապետություն,, իբրև դասագիրք

կիանձնարարի դպրոցներին, և դրան կնպաստի Սահմանադրության մեջ ամրագրված ուսումնական խորհրդի որոշումը, աճապարանքով աջ ու ախյակ ապերախտորեն սուր է ճոճում, կրոնի պատրվակով „ուղղափառության տեղ չարափառություններ,, քարոզում ստոր պայքար ծավալելով իր գաղափարական հակառակորդների դեմ: Եվ երգիծաբանը սարկաստիկ շեշտադրումներով, արդեն առանց որևէ քողավորման կամ զվարթ ոճի իրերը կոչում է իրենց անուններով...Իժ մըն է այս հրեշը որ միշտ իր թույնը թափել կ'ուզե անմեղներուն վրա և իր ականջները խցելով իրեն դեմ ըսվածները չը լսեր և զուխը կախած իր փորձեն ետ չըկենար: Իր փորձն է ամեն անգամ դաժան բերանը բանալուն կամ ժանտ գրիչը ձեռք առնելուն կրոնքի պատրվակով հարմար անհարմար քաշկըռտելով քաշկըռտելով ասոր անոր, ուզածին *անհավատ* ըսել,,<sup>41</sup>:

Դիմանկարի վերջնամասում հնչում է սկզբի „անհանգստացնող,, հարցը՝ ի՞նչ կլինի, եթե պ. Չամուռճին աշխարհի երեսից վերանա: Հաջորդում է սրամիտ պատասխան-եզրահանգումը. ոչինչ էլ չի պատահի. պարզապես պետք է նրա տեղը բաց թողնել. նա տխուր վրիպակ է...Ուրեմն դժար նա մանավանդ անկարելի է մեզի հիմա որ անի աշխարհես վերնալեն ետքը անոր տեղը մեկը դնել մտածենք կամ մեկը կարենամք գտնալ անոր տեղը անցնելու. ասոնք անկարելի բաներ են, ուրեմն ավելորդ է ասոր վրա միտք հոգնեցնելու, ուստի բաց կը թողունք անոր տեղը և վերին Նախախնամությամբ կը հանձնենք որ անոր տխուր հիշատակները մեր մտքեն բոլորովին ջնջե և մեր ազգին մեջ անոր տեղը բռնելու մարդ չըհարուցանե վասն զի ասի անգամ էվել կուզա կոր.:

Այսպես, ահա, Սիք. Նալբանդյանի հետ միաժամանակ և Հ. Պարոնյանից առաջ Հ. Սըվաճյանի երգիծական գրչի տակ իր բարոյական մահն է ստանում ազգային զարթոնքն ու առաջընթացն ատող և չըջիկի պես խավարում խարխափող Պատվելին<sup>42</sup>:

Հ. Սըվաճյանը լուրջ տարածայնություններ է ունեցել նաև արևմտահայ մի ուրիշ նշանավոր գործչի՝ Խորեն Նար-Պեյի /Գալֆայան/ հետ: Դրանք երևան են եկել թե՛ գաղափարական և թե՛ գրական ոլորտներում: Սըվաճյանը, „Քրիստոսի եկեղեցիին բաժանումը և պապականությունը, դոկտոր Շիշմանյան



և Տեր Խորեն եպիսկոպոս., հողվածում /1871/ ներկայացնելով Նար-Պեյի մասին „թե՛ հրատարակությամբ և թե՛ հրապարակավ եղած բազմաթիվ ամբաստանությանց գլխավորները.., շարադրում է մեծահամբավ կրոնավորի անցած կյանքի արատավոր ուղին և մատնանշում նրա գործունեության նեղ անձնական, փառասիրական բնույթը: Ռեալիստական գրականության պաշտպան Սըվաճյանին խորթ էին նաև Նար-Պեյի երկերում երևան եկող բռնագրոսիկ պատկերները: Այսպես, դրականորեն գնահատելով հանդերձ „Ալաֆրանկա,, կատակերգության թեմատիկ արդիականությունը, դեռևս 1862-ին քննադատել է հեղինակի պահպանողական մտայնությունը և հատկապես ճշմարտությունից հեռանալը, այսինքն՝ անբնականությունը. „Ըստ մեզ՝ ինչ որ ճշմարտության դրոշմը չունի, մեր առջևը անոր իրական արժեքը շատ նվազ է..<sup>43</sup>:

Տասը տարի հետո „Խորեն եպիսկոպոս.,՝ երգիծական մամրապատման մեջ Սըվաճյանն արդեն փորձում է գծագրել Նար-Պեյի գրական դիմանկարը: Այն ևս ստեղծված է հեզմախառն ոճով. ամենուր զգացնել է տալիս հեղինակի արհամարհական վերաբերմունքը փառասեր ու պաշտոնատենչ եպիսկոպոսի նկատմամբ: Դիմանկարում հիշատակված իրական փաստերն այստեղ նույնպես անտեսանելիորեն փոխակերպվում են պատկեր-գործող անձի, պատկեր-երկխոսության: Սըվաճյանը հարազատ է մնում իր ոճին. սկզբնամասի արտաքին լրջության քողի, դրվատանքի ու գնահատանքի խոսքերի տարափի տակ, թվում է, դափնեպսակ է հյուսում մի մարդու շուրջ, որին „Աստված դրկեց, որ մեր ազգին այսպիսի ընդհանուր անտարբերության միջոցին այսպիսի ահագին ալեկոծության մեջ ազգին նավը խաղաղության նավահանգիստը տանի մտցնեն,<sup>44</sup>: Նա նամակներով և լրագրական ծանուցումներով երեսփոխաններին ժողովի է հրավիրել Ղալաթիայի խորհրդարան, որպեսզի „հոս Ազգային Քաղաքական ժողովի անդամոց թվոյն և ընտրության եղանակին վրա եղած տարբեր կարծիքները միացնեն և սա ազգակործան խնդիրին վախճան մը տա..: Թվում է՝ ազնիվ է նպատակը, հայրենասիրական ու անանձնական: Բայց շուտով հեզմական լրջության հանդիսավոր, գովաբանական բնույթից ճեղքվում ու հորդում է անողոր սատիրան՝ անակնկալ հայտնաբերելով երևույթների արտաքուստ

աննկատելի, պատահական կապերը և իր դառը վճիռը արծակելով խոսքի ու գործի աղաղակող հակասությամբ շաղախված անուղղելի փառասերի նկատմամբ: „Մեկ քարով քառասուն ընկույզ թափել,, ուզող եպիսկոպոսը մտահոգված է ոչ թե ժողովրդի թշվառ վիճակով, այլ ազգի կողմից ծնծղաների ու դափնեպսակների արժանանալու մոլուցքով.

„Ուրեմն կեցցե Խորեն եպիսկոպոս – ծափ գարկեք թշվառականներ:

Չըտեսա՞ք որ Խորեն եպիսկոպոս գործին մեջ մտնելուն պես ի՞նչպես շուտ մը լմնցավ գործը....

Հա՛ հա՛ հա՛ հա՛.....

Բայց ինչու՞ կը խնդաք, ի՞նչ կըլլա եղեր գործը չըլմննալով:

Խորեն եպիսկոպոսի ալ հոգն ա՞յն էր կը կարծեք որ գործը լմննա: Անի ուրիշ փափաք և ուրիշ հասկնալիք ուներ. փափաքը այն էր որ ժողովուրդը իմանա թե Խորեն եպիսկոպոսն զատ ազգին մեջ, ազգին վրա մտածող մարդ չըլկա: Հասկընալիքն ալ այն էր թե քանի՛ երեսփոխան պիտի գտնըվին արդյոք, որ իր հրավերին հնազանդելով, անսալով, պիտի գան իր շուրջը նստին և զինքը իրենց Նախագահ պիտի ընտրեն,<sup>45</sup>: Պարզվում է, սակայն, որ եպիսկոպոսի հրավերն ընդունել են սոսկ չորս երեսփոխաններ, և Մեջուխեչա-Սըվաճյանը նրան կարծես մխիթարելու համար ասում է, որ „մյուս երեսփոխանները այն օրը մեռած էին, անոր համար չգացին.չէ՛ նե ո՞վ կը հանդգնի անոր հրավերը մերժելու..: Ո՞րն է այստեղ դրության կոմիզմը. այն, որ ազգային խնդիրների նկատմամբ էությանբ անտարբեր փառասերը հայրենասիրական ճառեր է արտասանում մի նպատակով, որ „ժողովուրդին մեջ իր վրայոք շատ խոսվի,, , իսկ այդ հանգամանքը նկատվում է շրջապատի կողմից,և հեղինակը միմյանց հակադիր իմաստներ արտահայտող բառերի կողք կողքի համադրմամբ ստեղծում է կոմիկական իրավիճակ, և պայթում է ծիծաղը. „Խորեն եպիսկոպոս ելավ երեսփոխանները հրավիրեց որ ժողովուրդը իր վրա խոսի. ժողովուրդը միմակ խնդաց: Ընդհանուր ժողովին մեջ խնդողյն վրա խոսելեն ետքը ելավ ազգին ապագային վրա իր ունեցած իղծը, բաղձանքը, փափաքը, տենչանքը...

Մեջուխեչա.- անտարբերությունը....

Թշվառական, լռե.



հայտնեց, իրավամբ մարդը ծափահարություն մը սպասեց:

Բերանները բարսացին բայց ձեռքերը չըխոսեցան, .:

Փառասեր վեղարավորը նաև ցուցանոլ է. չխրատվելով մի քանի օր առաջ պատահած խայտառակությունից՝ կիրակի օրը մի ազդեցիկ էֆենտու՝ Սոռթման պատվելու ուղեկցությամբ պտույտի է դուրս գալիս Գյունքար-Իսկելեսիի դաշտավայրը՝ „ժողովուրդի բազմության ինքզինք ցուցնելու, համար, բայց „անպիտան ժողովուրդը հոն ալ չը ծափահարեց զանի, .: Պատճա՞ռը. նա այլևս կշիռ չունի ժողովրդի աչքում:

„-Ասկե ետքը արբա Մարկոսն ալ ըլլաս՝ հավտացողին խերն անիծենք, .- լսվում է նրա հետևից:

\*\*\*

Ինչ խոսք, Գ. Սըվաճյանի դիմանկար-ուրվագծերը չեն դիմանում գեղարվեստական խիստ քննության, հեռու են կատարելությունից, երգիծական դիմանկարի ժանրային առանձնահատկությունների առումով էլ պակասավոր են: Սակայն դրանք ժամանակաշրջանի հասարակական պահանջների թելադրանքով ստեղծված նախանմուշներ էին, որոնք չէր կարող անտեսել նրա անմիջական հաջորդը, իր իսկ խոսքերով բնորոշած՝ „ազգին անկուտի ծառայելու հատկությունն, . ունեցող Գալոբ Պարոնյանը: Զէ՞ որ, ինչպես պատկերավոր նկատում է գրականագետ Գ. Գասպարյանը, Սըվաճյանի առաջ քաշած „դրույթները „Մեղու, .-ի ծովում նմանվում են մի արշիպելագի, որի կղզիները թեև ճանապարհորդին երևում են փոքր-փոքր հեռավորությամբ, միմյանցից անջատ՝ ցրված վիճակում, սակայն և այնպես, ամբողջությամբ վերցրած, հանդիսանում են առանձին օղակները ընդծովյա մի հրաբխային լեռնաշղթայի: Այդ կղզիների խումբը հենց տեսանելի ապացույցն է այդ լեռնաշղթայի գոյության ծովի հատակում, .<sup>46</sup>: Իսկ այդ լեռնաշղթան արդեն տեսանելի լեռնապարի վերածեց հայ ժողովրդի ծիծաղի հանճարը՝ Պարոնյանը, որի „ստեղծագործական կյանքի արևելյան հորիզոնում Սըվաճյանն է կանգնած, իսկ արևմտյան հորիզոնում՝ նրա արժանավոր հաջորդը՝ Երվանդ Օտյանը և այլ հետնորդներ, ./Ա. Ասատրյան/<sup>47</sup>:

## Աղբյուրներ և ծանոթագրություններ

1. Գարություն Սըվաճյան, Գրապարակախոսություն, Երևան, Գայետիկատ, 1960, էջ 345:
2. Միբայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժող. վեց հատորով, հ. 3, Երևան, ԳՍՄԳ ՊԱ հրատ., 1982, էջ 103:
3. Գարություն Սըվաճյան, Գրապարակախոսություն, էջ 127:
4. Միբայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժող. վեց հատորով, հ. 4, 1983, էջ 293:
5. Մատթեոս Մամուրյան, Երկեր, Երևան, „Գայաստան, . հրատ., 1966, էջ 614: Ծերենց-Շամիլ կեղծանունը վերծանել ենք մենք „Մատթեոս Մամուրյանի դիմանկարները, . հոդվածում /տես „Կանթեղ. գիտական հոդվածների ժողովածու, . , ք. 4, Երևան, „Ասողիկ, . հրատ., 2001, էջ 19-21:
6. Գալոբ Պարոնյան, Երկերի ժող. տասը հատորով, հ. 9, Երևան, ԳՍՄԳ ՊԱ հրատ., 1975, էջ 23-24:
7. Գրանտ Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 130-131:
8. Գալոբ Պարոնյան, Երկերի ժող. տասը հատորով, հ. 6, 1968, էջ 361:
9. Михаил Бахтин, Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса, Москва, изд-во „Худ. лит.“, 1990, с.107-108:
10. Գարություն Սըվաճյան, Գրապարակախոսություն, էջ 54:
11. Նույն տեղում, էջ 60:
12. Գալոբ Պարոնյան, Երկերի ժող. տասը հատորով, հ. 4, 1965, էջ 375-376, 499:
13. Տես „Անահիտ, . ամսագիր, Փարիզ, 1903, հունիս-հուլիս, ք. 6-7, էջ 85:
14. Տես „Մեղու, . 1856, ք. 1, 4, 1857, ք. 13, 22, 1859, ք. 3, 6, 9, 12, 15, 21, 36, 1860, ք. 106:
15. Ալիս Մանուկյան, Գ. Սըվաճյանի երգիծանքը „Մեղվի, . էջերում, „Տեղեկագիր Գայակյան ՍՍՌ ՊԱ, . Երևան, 1957, ք. 3, էջ 74:
16. „Մեղու, . 1856, ք. 1, 15 սեպտեմբեր, էջ 17:
17. Տես նույն տեղում, ք. 2, 8 հոկտեմբեր, էջ 35-40, ք. 3, 15 հոկտեմբեր, էջ 54-60, ք. 4, 31 հոկտեմբեր, էջ 82-88, ք. 5, 15 նոյեմբեր, էջ 103-109, ք. 6, 30 նոյեմբեր, էջ 126-130, ք. 7, 15 դեկտեմբեր, էջ 176-181 և այլն:
18. „Թատրոն, . լրագիր, Կ. Պոլիս, 1874, ք. 3, 13 ապրիլ:
19. Ալիս Մանուկյան, Եղված հոդվ., էջ 80:
20. Գրիգոր Ասրազյան, Սըվաճյանը՝ հրապարակախոս-երգիծաբան, Երևան, „Սովետ. գրող, . հրատ., 1981, էջ 65:
21. Տես „Մեղու, . 1862, ք. 154, 28 փետրվարի, էջ 47, ք. 157, 31 մարտ, էջ 69-71, 1872, ք. 87, 3 հունիս:
22. Գասմիկ Մարգունի, Ակնարկային գրականության ժանրերը, . „Գրական ժանրեր. պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը, . Երևան, ԳՍՄԳ ՊԱ հրատ., 1973, էջ 457:
23. Գարություն Սըվաճյան, Գրապարակախոսություն, էջ 152:
24. Գ. Գ. Մրժրյան, Տասնվեցերորդ դար և Գովի. Պրուսացի Տերոյենց, Կ. Պոլիս, Զարդարյան գրատուն, տպագր. Սազայան, 1908, էջ 14:
25. Կարապետ Պալյան ամիրան Տերոյենցին ցմահ նշանակել էր ամսական 10 ոսկի բոշակ / Տես նույն տեղում, էջ 95-96/:
26. Տես „Երևակ, . տետրակ կիսամյա, Կ. Պոլիս, 1861, ք. 113, 1 սեպտեմբերի, էջ 137-143, ք. 114, 16 սեպտեմբերի, էջ 169-177, ք. 115, 1 հոկտեմբերի, էջ 209-216... 1862, ք. 121, 1 հունվարի, էջ 3-10, ք. 122, 16 հունվարի, էջ 32-42 ...



27. Նույն տեղում, 1861, ք. 113, էջ 140-141:
28. Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժող. վեց հատորով, հ. 3, 1982, էջ 265:
29. Այս պատվանունը սովորաբար տրվում է բողոքական հոգևորականներին: Արվաճյանը, ինչպես նաև հետագայում Պարոնյանը այն գործ են ածում երգիծելու համար Տերոյենցի հերձվածողությունը:
30. Տե՛ս Դարոսթյուն Արվաճյան, Դրասպարակախոսություն, էջ 145-149, 151-153, 263-266:
31. „Մեղու..“, 1862, ք. 157, 31 մարտի, էջ 71:
32. Ի դեպ, բնագրում „քիթ“, բառն անշուշտ որոշակի միտումով գրված է գլխատառերով, ինչը, ցավոք, անտեսվել է:
33. Տե՛ս „Մեղու..“, 1862, ք. 154, 28 փետրվարի, էջ 47:
34. Նույն տեղում:
35. Նույն տեղում:
36. Դավանաբար իր ազգանվան ստուգաբանության անհարմարությունն է նկատի ունեցել Չամուռճյանը, երբ 1857 թ. „Երևակի.., անդրանիկ թվի առաջնորդողում հրապարակավ հայտնել է ազգանվան փոփոխության մասին. „Մեր նախնիքը Դերջան գավառի Վժան գյուղեն եկած ըլլալով, այն գյուղին մեջ իրենց մականունը Տերոյենց կրավեր: Տերոյենց Տ. Դավաճյան Տ. Գրիգորի Սարգիսը յուր ընտանյոքը Կստանդնուպոլիս գալով նեղուցի Ստեֆան գյուղը բնակեցավ, և յուր ապրուստին համար էլուպ բանող բրտտներուն /չեռմեկճիներուն/ համար հող կրելով Չամուռճի Սարգիս անունով մանչցվեցավ. և անոր որդին Քյուրճեցի Սերոբե, որ 1815 թվին Պրուսայու առաջնորդ Տ. Պողոս արքեպիսկոպոսեն քահանա ձեռնադրվելով Տ. Կարապետ ըսվեցավ, յուր հորը արվեստեն մականուն առնելով Չամուռճի օղլու կրավեր, և ես այ՛ ռույն Տ. Կարապետի որդին ռույն մականունը ժառանգած գտնվեցա: Բայց ասիկա ցեղական անուն մը չլլալով հիմա ետ կը ձգեմ. և բուն մեր ցեղական Տերոյենց մականունը գործ կածեն ասկեց ետքը հրատարակելու զըղվածներուս մեջ.. /Տե՛ս „Երևակի ..“, 1857, ք. 1, 1 հունվարի, էջ 5-6/:
37. „Մեղու..“, 1862, ք. 154, 28 փետրվարի, էջ 47:
38. Դակոբ Պարոնյան, Երկերի ժող. տասը հատորով, հ. 2, 1964, էջ 41, 45:
39. Նույն տեղում, էջ 51:
40. „Մեղու..“, 1862, ք. 157, 31 մարտի, էջ 69:
41. Նույն տեղում, էջ 70:
42. Զարմանալի է, որ Դակոբ Օշականը պնդել է, թե Ղ. Ալիշանը և Դովի. Չամուռճյանը իրենց վաստակով „հավասար կուզան..“ /Տե՛ս Դակոբ Օշական, Դամապատկեր արևմտահայ գրականության, հ. 1, Երուսաղեմ, 1945, էջ 139/:
43. „Մեղու..“, 1862, ք. 160, 30 ապրիլ, էջ 98:
44. Նույն տեղում, 1872, ք. 87, 3 հունիս:
45. Նույն տեղում:
46. Գասպար Գասպարյան, Դարություն Ավաճյան, Երևան, Դայախտիրատ, 1958, էջ 114:
47. Ասատուր Ասատրյան, Դարություն Արվաճյան, Երևան, ԴՍՍԴ ԳԱ հրատ., 1967, էջ 237:

ՍԻՄՎՈԼԸ ՇԱՆԹԻ ԴՐԱՄԱՆԵՐՈՒՄ

Շանթի սիմվոլիզմը հիմքում առնչվում է գրողի բնափիլիսոփայական հայացքներին: Դամընդհանուր առաջընթացը պայմանավորված է երևույթների հակադրամիասնությամբ: Տիեզերքն ամբողջության մեջ դիտելով՝ գրողն օրգանական և անօրգանական աշխարհի զարգացման մեջ տեսնում է ընդհանուր օրինաչափություններ: Չգողական և վանողական ուժերի միաժամանակյա գոյությունը պահում է տիեզերքի կայուն վիճակը: Նույնը օրգանական կյանքի մեջ, որտեղ հակադրվում են ժառանգականությունն ու փոփոխականությունը: „Նույն երևույթը մարդուս կուլտուրական կյանքի մեջ, ըլլա այդ երևույթը քաղաքական, կրոնական, գիտական, թե ուրիշ, ուր այդ երկու հակադիր ու միաժամանակ գործող ուժերու անունն է պահպանողականություն և հառաջադիմություն“<sup>1</sup>: Բնությունը մատերիայի և ոգու, արտաքինի և էության միասնություն է: Դետևապես բնությունը և արվեստը սիմվոլիկ են որպես հակադրությունների՝ իրականի և իդեալականի, զգայականի և գերզգայականի „միասնություն-նմանություն“: Մարդկային էությունը ենթակա է ինչպես վերի, այնպես էլ վարի աշխարհներին, ինչը „ծնավորում“ է սիմվոլի՝ որպես երևույթների արտացոլման համապարփակ միջոցի, ներքին կառույցը՝ իրականի խորքում իդեալականն է, անսահմանության խորքում՝ վերջավորը կամ հակառակը: Սիմվոլի վերաբերյալ եղած տեսությունները որքան էլ տարաբնույթ կերպով ներկայացնեն երևույթը (այն „նշան“ է (Ֆ. Սոսյուրից Յու. Լոտման), „մեկնաբանություն“ է Պ.Ռիկերի լեզվաբանական փիլիսոփայության մեջ, „առարկա“ է Մ. Սամարդաշվիլի, „կերպար“, „մետաֆոր“ և այլն), միևնույն է դրանցում կարևորվում են իրականությունից իդեալականի ոլորտին ձգվող փոխադարձ անցումները<sup>2</sup>:

Սակայն տարբեր ոլորտների միջև գոյություն ունեցող հակադրամիասնությունը ոչ միայն կեցության հիմքում է, այլև ճանաչողության բուն ընթացքում: Քանի որ իդեալականը և իրականը մշտապես



ներթափանցված են, հետևապես ընկալու՞մը հոգեբանորեն դառնում է դժվար հաղթահարելի, մենք չենք կարող տրամաբանորեն բացատրել տարբեր աշխարհների միջև եղած կապերը, բայց կարող ենք „հայել“ էության խորքը, որ բազմաշերտ է, բազմիմաստ ու անսպառ: Երևույթների պատկերման և ընկալման նման կերպն ազատ է, միազի՞ծ ու պարզունակ խոսքից, որտեղ հստակ են սահմանները բարու և չարի, վերի և վարի, սևի և սպիտակի միջև:

Խորհրդանշականը, որպես երևույթների արտահայտման համապարփակ միջոց, լրացուցիչ իմաստ, արժեք է ավելացնում օբյեկտին կամ իրականությանը՝ չխախտելով դրա նախնական իմաստը: Այն երևույթները կոնկրետ վիճակից վերածում է „բաց“ իրադրության, խորհրդանիշը տրված չէ, այլ առաջադրված է, այստեղից էլ դրա ներքին բովանդակության հարստությունն ու անսպառելիությունը<sup>3</sup>:

Շանթն իր տեսական դատողություններում կարևորելով մարդկային հոգու, նրա ներաշխարհի պատկերումը, առանձնակիորեն ընդգծում է այն երկերի դերը, որ „հոգեկան ապրումի մը պատկերացումը ըլլալեն զատ, ըլլա նաև հավելվածորեն, իբրև վրադիր, փիլիսոփայական-հոգեբանական ըմբռնումի մը կամ բարոյական-ընկերային գաղափարի մը մարմնացումը“<sup>4</sup>:

Եթե Շանթի համոզմամբ „Չեղինակին ուզածը երևույթին խորքը մատնանշելն է. մեր քննադներու անդունդին մեջեն, մեր ձգտումներու խավարին մեջեն“<sup>5</sup>, ապա պակաս կարևոր հանգամանք չէ գեղարվեստական երկի ընկալումը, այն „խորունկ“ անոթ է, որտեղից ամեն մարդ հանում է այն իմաստը, „ինչ որ իր բուռին տարողությունը և իր բազկին երկարությունը իրեն կը թույլատրեն“<sup>6</sup>:

Շանթի „Չին աստվածներ“ դրամայում հանդես եկող հերոսներն ունեն իրենց ճակատագիրը, ներաշխարհը, բնավորության գծերը: Ավելին կատարվող դեպքերը հարուստ են ներքին իմաստով: Այսինքն՝ կենտրոնական բնավորությունները նաև խորհրդանշական արժեք ունեն: Նրանք ներկայացնում են մարդկության պատմության զարգացման տարբեր ժամանակները. Աբեղան „մանկության ժամանակն“ է, Վանահայրը՝ „հասունության“: Սակայն դրամատուրգը սրանով չի սպառում ենթատեքստը: Նա իրականում մարդկային ներաշխարհը տրոհում է զգացմունքի և

բանականության: Այս դեպքում՝ արդեն խոսք է գնում ավանդական որակների (զգացմունք, կրքեր) և հարափոփոխություն առաջ բերող որակների (բանականության) մասին, որոնք մշտառկա են բանական արարածի էության մեջ: Չետևաբար մարդկային ներաշխարհը հակադրամիասնություն է՝ սրտի և բանականության, վերջավորի և անվերջի, իրականի և իդեալականի: Այստեղ „ժամանակը կանգ է առած“ և խոսք է գնում մարդկային ողբերգական գոյության սկզբնապատճառի մասին:

Խորհրդանիշն իր մեջ միահյուսելով „անհամադրելի“ իմաստային ոլորտներ՝ ստեղծում է աշխարհի ամողջական պատկերը:

Առօրյա իրադրության մեջ միմյանց են հակադրվում հերոսները, իսկ երբ դրամատուրգը պատկերում է նրանց ներաշխարհը (անտեսանելին՝ ակնհայտ), ապա հակասություններն առարկայական տեսք են ստանում տեսիլների, մտապատրանքների շնորհիվ (Վանահայր- Ծերմակավոր, Աբեղա-Ծզնավոր): Նրանց հոգում կատարվող տեղաշարժերը զգացմունքի և բանականության, հնի և նորի, վարի և վերի, մակերեսի և խորքի, ի վերջո բնության և ոգու հակադրամիասնության արդյունք են:

Շանթը գործադրելով դեռևս առաջին շրջանում գրված դրամատիկ երկերում („Եսի մարդը“, „Ուրիշի համար“) հանդես եկող հերոսների ստեղծման սկզբունքը՝ իր համար նախընտրելի գաղափարն արտահայտում է արտաքուստ բացասական որակներ ունեցող անձի միջոցով, որն է՝ Վանահայրը: Վերջինս մերժելով հին ու նոր աստվածներին ստրկանալու Աբեղայի (անցյալ) և միաբանության (ներկա) „ցուցած“ ուղիները՝ նախընտրում է հավատքի նախաստեղծ էությունն իր մեջ վերակերտելու՝ անհատական ճշմարտության ճանապարհը (ապագա): Սակայն կենտրոնական անձինք, որոնք իրենց մեջ միահյուսում են տարբեր ժամանակային դաշտեր ու բարոյափիլիսոփայական տեսակետեր, ներթափանցված են, և հակադրամիասնությամբ պայմանավորված որակներն են առաջ մղում զարգացումը:

Դրամատուրգը գործողության տարբեր պատկերները, առանձին դրվագները, ինչպես նաև հերոսներին ներկայացնում է հակադրության միջոցով: Սակայն իրական և իդեալական աշխարհների համապարփակ հակադրամիասնությունը Շանթը ներկայացնում է լույսի և ոգու սիմվոլների



փոխկապվածությամբ: „Լույսը և ոգին,- նկատում էր Գյոթեն,- իշխելով առաջինը ֆիզիկական, երկրորդը բարոյական աշխարհում” կազմում են բարձրագույն մտային անբաժանելի ենթոգիայի էությունը<sup>7</sup>: Լույսն իր „ձևն” ունի, բայց և միաժամանակ „անձև” է, այն դիմամիկ է, շարժուն, ինչպես ոգին. արտաքին ձևը „կրկնում” է ներքին էությունը: Գիշտ նույն կերպ Շանթի դրամայում ֆիզիկական աշխարհի բարձրագույն որակը լույսն է, որին հակադրվում է մարդկային ոգին՝ անսպառ ու անչափելի խորությամբ: Նրանցից առաջինի կրողը Աբեղան է, երկրորդինը՝ Վանահայրը: „Ա՛տ է քու հասկցածդ: Ինձի քաշողը ինքը լույսն է ու գեղեցկությունը. ինձի քաշողը աստվածներն են”<sup>8</sup>, - հեգնում է Աբեղան Կույրին: Չեթանոսական բազմի տեսարանը ողողված է լույսով, իսկ հին աստվածները երևում են արևի սկավառակի ֆոնին՝ վառ լուսավորվածությամբ:

Շանթը երևույթները ներկայացնելու իր նախասիրած սկզբունքը (ընդունելին մատուցել „բացասական” որակների միջոցով) կիրառում է և այստեղ: Ֆիզիկական աշխարհին լույսին, հակադրում է... խավարը. „Խավարը խավար է կարճատես աչքերուն: Բոլոր մեծ հղացումները խավարի ծոցն են գոյացեր, բոլոր մեծ խորությունները միայն խավարի մեջ կարելի է տեսնել”:<sup>9</sup> Եթե լույսն ակնհայտ է, տեսանելի ու „պարզ”, ապա ոգին խորհրդավոր է և մութ, քանի որ շատ բան բանական արարածի համար դեռևս մնում է անհասանելի:

Բայց դրամատուրգին հետաքրքրում են ոչ միայն տարբեր ոլորտներին բնորոշ որակները, այլև դրանց միասնությունը, այստեղ արդեն խոսքը աշխարհի հակադրամիասնության մասին է՝ արտաքին ձևը („լույսը”) „կրկնում” է ներքին էությունը, ոգին. „Մոռցիր արևն ու իր ծագումը, որ ծագի քեզի ծագումներուն ծագումը, որ արևե քեզի արևներուն արևը”:<sup>10</sup> Հարկ է մոռանալ բնությունը, զգայական աշխարհը, վերին ճշմարտությանը, գերզգայական ոլորտին, „արևներու արևին” հաղորդակցվելու համար:

„Շղթայվածում” գրողն առաջնությունը տվել է խորհրդանշականի արտահայտման դիմամիկ կերպին. պատկերները հարաշարժ ընթացքի մեջ են: Թեև այստեղ խորհրդանշերը ևս գոյաբանական արժեք ունեն. բնությունը և ոգին մշտապես հակասության մեջ են և առաջ են մղում զարգացումը, այսուամենայնիվ դրանք չունեն նախորդի գեղարվեստական, բովանդակային հարստությունը: Բանն այն է, որ իրական գործողությանը զուգահեռ

զարգանում է առասպելի սյուժետային գիծը, որտեղ շատ բան ակնհայտ է մեկնաբանելի, ինչն առավել կարևորում է պատկերների մետաֆորիկ, քան սինվոլիկ նշանակությունը: Տարբեր ժամանակները միաժամանակյա գործողության վերածելու ջանքերը որոշ արհեստականություն են մտցրել խոսքի մեջ: Այնպես, ինչպես Նաղաշ-Արտավազդի, այնպես էլ Իշխան-Կյանքի Դևի կերպարները ստեղծված են գրեթե նույն հակադրության սկզբունքով, ինչ նախորդ պարագայում: Եթե մարդն „անտեսում” է զգացմունքը և առաջնորդվում մտքով, ապա անխուսափ են բարոյական կորուստները, իսկ երբ „անտեսվի” միտքը, ապա ընդհանուր կարգի մեջ կտիրի քաոսը: Կյանքի դևը հանդես չի գալիս իբրև բացասական երևույթ, այն տիեզերական ուժ է, որ կյանքի հիմքում է և կրողն է ինչպես կործանող ուժի, այնպես էլ լույսի: Առանց դրա աշխարհը չի կարող գոյություն ունենալ այնպես, ինչպես այն այսօր է: Դևը որոշակի սահման է դնում մարդ-արարածի մթին բնագոյներին, քանի որ նա դեռևս չի կարողանում ազատությունը „գործադրել” ըստ էության: Խորհրդանշի երկչերտ կառույցը հնարավորություն էր ընձեռում Շանթին երևույթները դիտել համընդհանուր կապերի մեջ, ինչն անհամեմատ ընդլայնում էր գեղարվեստական աշխարհի սահմանները:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լ. Շանթի երկերը, հ. 5, Բեյրութ, 1948, էջ 63:
2. Стен И. Лагутина, Символическая реальность Гете, М., 2000, стр. 19.
3. Մինվոլի բովանդակության, կառուցվածքի վերաբերյալ տես Ա. Белый, Мысль и язык, кн. 2, М., 1910, стр. 240-258, А. Губер, Структура поэтического символа, М., 1927, стр. 125-155, А. Лосев, Логика символа, „Контекст”, 1972, А. Михайлова, О художественной условности, М., 1970, стр. 191-236, Д. Лихачев, Поэтика древнерусской литературы, Л., 1971, стр. 175-183, Энциклопедия символизма, М., 1998.
4. Առն Շանթի երկերը, Բեյրութ, 1948, հ. 5, էջ 312:
5. Նույն տեղում, էջ 315:
6. Նույն տեղում, էջ 317:
7. Гете И. В., Избранные философские произведения, М., 1964, стр. 330.
8. Լ. Շանթ, Երկեր, Ե., 1989, էջ 421: Այսուհետ էջերը կտրվեն ստղում:



### ДРАМАТУРГИЯ И.ШПАЖИНСКОГО В АРМЯНСКОМ ДОРЕВОЛЮЦИОННОМ ТЕАТРЕ

Во все времена в театральном репертуарах большое место занимали пьесы, которые отвечали злободневным вопросам современности и потому пользовались популярностью. С течением времени большинство из них предавалось забвению. На рубеже XIX — XX веков много пьес армянских авторов игралось на армянской сцене с большим успехом. Но только некоторые из них, такие, как "Из-за чести", "Намус" А.Ширванзаде, "Утес" Вртанеса Папазяна, "Старые боги", "Император" Л.Шанта, выдержали экзамен временем и считаются классическими в армянской драматургии. Переводной репертуар армянского театра также был наводнен большим числом пьес, чьи названия и авторы сегодня совершенно забыты, но это еще не значит, что это были не имеющие художественной ценности пьесы или что они занимали незначительное место в театральной жизни, в репертуаре театра, или оказали небольшое влияние на актерское искусство, на сценическое искусство вообще.

Армянский театр, уделяя еще в 70-80-х годах XIX века большое внимание пьесам Гоголя, Островского, Сухово-Кобылина, перенес из прошлого века в XX не только пьесы русских классиков. Рядом с Островским работали, и очень активно, его современники: И.В. Шпажинский, П.М. Неужин, А.А и Н.А. Потехины, Н.Н. Куликов, В.А.Дьяченко. И их пьесы, написанные на рубеже двух веков и вошедшие в репертуар дореволюционного армянского театра, представляют большой интерес.

Некоторые из исследователей считают, что такие драматурги, как И. Шпажинский, принесли русской сцене ложь, фальшивое приукрашивание действительности, изменили

исконной традиции русского национального искусства — традиции художественной и жизненной правды. И именно из-за них в спектаклях появились театральные трафареты, театральные типы, штампы вместо живых человеческих характеров.

Но в этот же период /1890-1900годы/, как писал Ю.И.Корзов в своей книге о драматургическом творчестве известного театрального деятеля Вл.И.Немировича-Данченко, целью драматургов было поддержание интереса к театру. Не было уже Островского, драмы Л.Толстого с большим трудом пробивали себе путь на сцену. Чехов и Горький как драматурги еще не родились. И, по мнению Корзова, в драматургических кругах шли бесконечные поиски, потому что многих актеров и зрителей перестал удовлетворять самый тип существующей драмы, однообразной и прямолинейной в передаче внутренней жизни героев.

Пьесы Ипполита Шпажинского (1848-1917) привлекали психологической разработкой сюжета, интересными характерами, затрагиванием, хотя и неглубоким, социальных вопросов, тяготением к реализму. И если часть из этих пьес имела мелодраматический сюжет, ничего плохого в этом не было, т.к. хорошо сыгранная мелодрама оказывала и оказывает также сильное воздействие на зрителя.

Пьесы Шпажинского, которые ставились на армянской сцене в начале века и которые носят на себе, как и большинство его произведений, печать зрелищности, были очень эффектными.

"Поставщиком эффектных мелодрам" называет Шпажинского тот же Ю.Корзов. И там же выражает мысль, что у драматурга происходит обновление излюбленного им жанра мелодрамы путем введения новых психологических мотивов и ситуаций.

Драма "Кручина" появилась в год смерти великого Ф.Достоевского и была написана, как считает в своей статье "Драматургия И.В. Шпажинского" Г.А. Бялый, под явным влиянием Достоевского.



Тема "маленького" человека, раздавленного жизнью, большим городом, обманутого, а затем схватившегося за первую попавшуюся соломинку, не нова. Возможно, что какой-то дух Достоевского и есть в коллизиях пьесы. И хотя она читается с большим интересом /когда-то и смотрелась с таким же интересом/, нужно сказать, что далеко этой драме до сложных психологических характеров, созданных Достоевским.

В Ереване пьеса была поставлена режиссером Н.И.Славским и игралась русской драматической труппой в городском клубе в 1901г.

Талантливый драматург, знающий требования театра, владеющий секретами сценического успеха, Шпагинский в некоторых своих пьесах выступил как продолжатель традиций Островского и пользовался непреходящей популярностью в двух столицах Российской империи и в провинциях, в число которых входило и Закавказье. На армянских сценах около 10-ти лет жила "Темная сила" Шпагинского - социальная драма, написанная в 1900-м году.

Тема разлагающей силы денег интересовала драматурга задолго до этого. Еще в 80-х годах он работал над пьесой "Легкие деньги", где затрагивалась эта проблема. Но наибольшую глубину и остроту тема получила в пьесе "Темная сила". С одной стороны - непреходящая тема развращающей силы денег, начатая еще Островским, с другой стороны - тема пошатнувшихся семейных отношений. Накануне революции 1905 года эти темы не могли не заинтересовать армянского зрителя.

На три группы можно разделить персонажей "Темной силы". К первой отнесем старшее поколение семьи Бырдиных - отца и мать. Мать рано умирает, не выдержав семейных потрясений: слабохарактерный, но любимый сын Леонид женится на уличной женщине. Он выволок ее из грязи, считает себя героем и обожает жену. А сам Бырдин - человек с цепкой, деловой хваткой, позволяет обвести себя вокруг пальца новоявленной невестке Клеопатре \Пате\.

Вторая группа - это представители "темных сил": Патя, со своими низкими стремлениями и желанием получить новое завещание, где фигурировала бы она, и жених дочери Бырдиных со скользкой фамилией Ящеров.

Острым взглядом и нюхом чувствовала Патя в благородном, представительном женихе Анны такого же хищника, как и она сама. В откровенном разговоре с ним с глазу на глаз она характеризует его так метко, что добавить к этому почти нечего: "Всегда ровный, спокойный, вы добродушны и даже... даже искренни. Если прибавить, что вы держитесь с достоинством, которое внушает доверие, то портрет ваш готов. А вы ... вы задушите родного отца, если он лишит вас наследства!"

Третья группа - Анна. Это единственный персонаж, который с первой страницы до последней несет в себе здравую мысль, но неумение, несостоятельность борьбы со злом. Ее противостояние старшему поколению, отцу, очень слабо и не воспринимается как конфликт. Анна не Маргарит из пьесы Ширванзаде "Из-за чести" - сильная и гордая натура, не перенесшая позорного поведения отца. Но образ Анны стоит на подступах к появлению умных и решительных героев Горького и Ширванзаде.

Мир хищников породил такие силы, которые цепко держатся друг за друга, так как обоюдные интересы заставляют их делать это. Их душам чужды переживания и страсти человеческие, а действует в них только холодный расчет.

Руководствуется этим и Патя, притворяясь нежным и заботливым человеком. Руководствуется этим и Ящеров. После отказа Анны, не будучи еще женихом, он тут же мчится делать предложение горбатой княжне Раисе, за которой "миллион дают, да и родство получше". Этой линии придерживается он и тогда, когда отказывает Пате в приеме: скандальная женщина может повредить его репутации. Разные формы грабежа у этих хищников, но суть одна: прибрать к рукам все, что можно.



Сгусток "темных сил", воплощенных еще Островским, показан в новых условиях, на новом этапе. Но веяния жизни не могли не проникнуть и в его затхлые горницы, вызвав разлад между отцами и детьми.

Семейный конфликт, данный в аспекте психологическом и социальном, не мог не привлечь внимания армянских театральных деятелей, так как сгусток "темных сил" /Клеопатра, Ящеров/- явление не узко семейное, а социальное, порожденное обществом, укоренившееся в нем задолго до Островского и живущее много-много лет и после него.

"Темная сила" на армянской сцене ставилась большей частью силами любителей с участием и под руководством профессиональных артистов: Амо Харазяна, Забел, Армена Арменяна, Ольги Майсурян. По газетным отзывам можно сделать вывод, что пьеса заинтересовала и зрителей, и исполнителей именно своей новизной.

"Авлабарцам надоело периодически смотреть "Пепо", "Разрушенный очаг", "Аслан Баласи", "Из-за короны", "Аршак II", "Самвел" и другие спектакли. Народ сейчас нуждается в новом", - пишет "Алик" /"Волна"/ (5). И этим было все сказано.

Зритель требовал постановки пьес из современной жизни. И деятели армянского театра старались показать со сцены то новое, что могло бы взволновать сидящих в зале людей.

#### Литература:

1. И.В. Шпажинский, Драматургические соч-ия в 4-х томах, т.3, П., 1886-1900, стр. 126-127.
2. Л.Фрейдкина, Вл.И. Немирович-Данченко, М-Л, 1945.
3. Ю.Корзов, Драматургия Вл.И.Немирович-Данченко, Киев, 1971.
4. Г.Бялый, статья "Драматургия И.В. Шпажинского", Ученые записки Саратовского ун-та им. Н.Г. Чернышевского, 56, Саратов, 1957, выпуск филологический.
5. "Алик" /"Волна"/, 1906, N 33.

#### ՀԱՅՈՑ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԱՐՏԱՅՈՒՆՈՒՄԸ ՀԱՄԱՍՏԵՂԻ «ՍՊԻՏԱԿ ՉԻՎԱՈՐԸ» ՎԵՊՈՒՄ

Համաստեղի (Համբարձում Կելենյան, 1895-1966) «Սպիտակ Չիվորը» վեպը առաջին գլուխների<sup>1</sup> հրատարակությունից մինչև վերջերս հաճախ դիտարկվում էր որպես «դաշնակցական գրականություն» (վերջին բառը՝ չակերտներում), այլ խոսքով՝ գաղափարական վեպ՝ զուրկ գեղարվեստական արժանիքներից: Մեր օրերում, բարեբախտաբար, հնարավոր է (նաև՝ անհրաժեշտ) վեպը դիտարկել ոչ միայն որպես ՀՀԳ պատմության մի շրջանի արտացոլում, այլ նաև իբրև հայ ազատագրական պայքարի մի զգալի հատվածի գեղարվեստական պատկերման փորձ, հավելենք՝ բավական հաջող փորձ: Համաստեղը ծրագրել էր երեքհատորանոց վեպ հայ գյուղի կյանքից՝ ազգային-ազատագրական պայքարի, ազգամիջյան հարաբերությունների լայն համայնապատկերի վրա: Սկիզբը խոստումնալից էր. վեպում ներկայացված է գրողի հարազատ միջավայրը՝ ծանոթ հերոսներով, հեքիաթային բնությամբ, խաղաղ աշխատանքով, հովվերգական սիրավեպով, հեքիաթով...

Վեպի առաջաբանում «Մի քանի խօսք»-ում, գրողն ընդգծում է հայ ժողովրդի ազգային նկարագրի երկու կարևոր գծերը՝ տառապանքը, որը «հայուն մեջ դրած է մարդկայինն ու գաղափարականը», և «երազներու վսեմութիւնը», որ դառնում է ազգային գոյությունն ապահովող «ազնուական նպատակ»: Անշուշտ, դժվար է «իսկապես բոմանքիք ժողովուրդի մը պարուններուն» հարազատ պատկերումը, ու Համաստեղը հակիրճ այսպես է բնորոշում իր երկը. «Վեպը փնտռու է մեր հոգեկան աշխարհին ու աշխարհագրական ցամաքին: Փորձած են տալ ժողովուրդի մը հերոսական մարտնչումները»: <sup>2</sup> Եւ ընդգծում է, որ պատկերված են 20-րդ դարի սկզբի դեպքերը, որ «քարտեսի գիծերու հետ գործ ունեցած» չէ՝ Հայաստանը ներկայացնելով ոչ թե որպես աշխարհագրական սահման, այլ «աւելի հոգեկան քարտէս», իսկ հերոսներից շատերի «ներքեւ կան իրական նկարագիրներն ու անձնաւորութիւնները»:



Վեպում ներկայացված է մեր ժողովրդի պատմության «փոթորկոտ շրջանի» գեղարվեստական նկարագիրը՝ հենվելով փաստական հարուստ տվյալների վրա:

Ասում են՝ ոչ մի պատահականություն պատահական չէ: 1952-ին լույս տեսան «անասան ֆիդայի եւ ֆիդայայետ» Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» և Համաստեղի «Սպիտակ Ձիավորը» երկհատոր վեպը: Գուցե սա էլ էր պատահական... անհրաժեշտություն. ընթերցողի սեղանին դրվեցին ազգային-ազատագրական պայքարի վավերագիրը և գեղարվեստական արտացոլումը: Վավերագիր, որ հարուստ է գեղարվեստական սքանչելի էջերով, և վեպ, որ պատմական դեպքերի ու դեմքերի նկարագրությունն է՝ գեղարվեստական ընդհանրացման սկզբունքով կերտված, բայց վավերագրի պես հավաստի ու համոզիչ:

Ռուբեն Դարբինյանը չէր սխալվում, երբ Ռ.Տեր-Մինասյանի գրքի առաջաբանում գրում էր. «Կարելի է ըսել նոյնիսկ, որ Ռուբենի յուշերը կը ներկայացնեն անզնահատելի ատաղձը ազատատենչ հայութեան նորագիր ժամանակներու դիցազներգութեան: Եւ իսկապէս, որքա՛ն շատ նիւթ կայ ինձ մեր ներկայ ու ապագայ բանասերներու դիցազնական ստեղծագործութեան համար» (1,33):<sup>3</sup> «Սպիտակ Ձիավորը» այդ «դիցազնական ստեղծագործութեան» փորձերից է: «Յիշատակների» և «Սպիտակ Ձիավորը» վեպի հերոսները դարասկզբի հայ իրականության հերոսական, անկրկնելի դեմքերն են՝ ֆիդայիները, որոնց մասին Ռ. Տեր-Մինասյանը գրել է. «Ես շատ սերունդներ տեսայ տարբեր վայրերու մէջ, բայց այդ սերունդին համն ու հոտը տարբեր էր, ինչպէս Արտամետի խնձորինը, թէկուզ մէջը որդ ինկած լինի...» (1,5):

Ավ.Իսահակյանը «Հայդուկի երգեր»ում կերտել էր ֆիդայու քնարական կերպարը, «Ուստա Կարո» անավարտ վեպում պարոն Կայծակին: Ռ.Տեր-Մինասյանը «Յիշատակներ»-ում ներկայացնում է կատարվածի հավաստի պատկերը՝ ականատեսի ու մասնակցի աչքերով տասնամյակներ անց նայելով կատարվածին, նոր օրերի չափանիշներով արժեքավորելով, գնահատելով իր ընկերների արածը, սիրո, հարգանքի տուրք մատուցելով ընկածների հիշատակին, եղածից դաս քաղելու կոչ անելով ժամանակակիցներին: Համաստեղի վեպի հերոսները շարունակում են Արաբոյի ու Նրա ընկերների «ղաջաղութիւնը»

նոր պայմաններում և այն գիտակցությամբ, «թէ երկրի տերը Հայն է, իսկ տաճիկն ու քիւրտը եկուոր են» (3,59):

Համաստեղի և Ռ.Տեր-Մինասյանի գրքերը, բացի հերոսներից, որոնցից շատերը եթե նույն էլ չեն, ապա անշուշտ «ազգականներ» են, ունեն նաև աչքի զարնող մի քանի ընդհանրություններ՝

ա) զենքի դիմելու հարկադրանքը, որ թելադրում են թուրքերի անիրավությունները,

բ) խաղաղության, բարեկամության, հողի աշխատանքով զբաղվելու ազգային երազանքի անհնարինությունը կյանքում,

գ) պարտադրված կռվի պայմաններում մարդկային, ազգային նկարագրի անխաթար պահպանումը,

ե) ազգային արժեքների անձեռնմխելիությունը, համամարդկային գաղափարների, առաջին հերթին ազատության պաշտամունքը,

զ) կռվի ասպետական կողքսը, որն անգամ թշնամուն ստիպում է հարգանքով վերաբերվել հայ ազատամարտիկին,

է) կուսակցական գործիչները, որոնցից շատերը ֆիդայիների հետ կռվի դաշտում են ու անձնական օրինակով են ծառայում ազգային ծրագրերի իրականացմանը:

Համաստեղն էլ Ռ.Տեր-Մինասյանի պես համոզված է, թե «Բարոյական ազդակները նոյնքան անհրաժեշտ են ժողովրդի մը փրկութեան համար, որքան զէնքը» (3,241), իսկ Գ.Նժդեհը պնդում էր, որ «Ոյժը միայն նիւթական ազդակները չեն, այլև ժողովրդի առաքինութիւնները»: <sup>4</sup> Հայի բարոյական արժեքներն սկսվում են դպրոցից ու այբուբենից: Այս նպատակին են ծառայում բոլոր՝ շինական, ֆիդայի, կուսակցական գործիչ:

Դյուցազնավեպում նկարագրած պետությունը, թող որ ռոմանտիկ շնչով, բայց հայի ազգային երազանքի ու վրեժի պատկերումն է. չէ՞ որ հայ ժողովուրդը կոտորածից ընդամենը մի քանի տարի անց իր մեջ ուժ ու կարողություն գտավ պետություն ստեղծելու: Այս դեպքում երկրորդական են կուսակցական, քաղաքական բոլոր «հիմնահարցերը», որոնք, դժբախտաբար, եղել ու մնում են մեր ազգային թուլություններից և թերություններից մեկը, եթե ոչ՝ ամենաակնառուն:



Ռ.Տեր-Մինասյանը ներկայացնում է հայոց ազատամարտի դեռևս Արարոյի ժամանակներում ձևավորված երկու ուղղությունները՝ «ժողովրդական-յեղափոխական» և «Ֆետայական-զինվորական» (3,198): Նա 1900-1904 թվականները անվանում է «Հրայրեան շրջան»՝ Հրայր Դժոխքի անունով, իսկ Գ.Լազյանը «Յեղափոխական դեմքեր» գրքում պատմում է, որ Հրայրը նախապատրաստում էր «ժողովրդական կազմակերպուած ապստամբութիւն»,<sup>5</sup> բայց սկսվեց թուրքերի հարձակումը: Վեպում նկարագրված է պայքարի այն շրջանը, երբ ֆիդայական առանձին խմբերից ձևավորվում են զինվորական գնդեր, այլ խոսքով՝ Համաստեղը ներկայացնում է հայոց ազատամարտի ցանկալի, տասնամյակներ փայփայած ավարտի պատկերը, որը, դժբախտաբար, չիրագործվեց:

Աստճուն, աշխատանքին, խաղաղությանը փարված հայ մարդը հեշտությամբ չի դառնում զինվոր, ֆիդայի, ավելին՝ գեներ վերցնելուց հետո էլ մտովի հանդ ու արոտի հետ է, կրակում է ինքնապաշտպանության համար, այսինքն՝ մնում է հայ: «Վրեժը երբեք շինարար չէ. քանդող է» (2,600),- զգուշացնում է Համաստեղը: Հայոց պետությունը պիտի կառուցվի «լաւ, զեղեցիկ հիմքերով վրա», հայ երեխան «բարիին եւ չարին պէս» կիմանա «թուրքին եւ հային տարբերութիւնը» (2,600): Գրողի համար այդ «տարբերութիւնը» մարդու ավարառու (Հ.Թումանյանը կասեր՝ մարդակեր) և շինարար տեսակների տարբերությունն է՝ առանց ազգային տարբերակման:

Հայոց երկրում կլինի «կարծիքի ազատութիւն», ինչպես «ազատութիւնն է մամուլի եւ խօսքի»: Համաստեղը դիպուկ մի համեմատությամբ ամբողջացնում է ազատությունների քաղաքական ծրագիրը, որն այսօր էլ չի կորցրել այժմեականությունը՝ «Պէտք է պահել ծաղիկներու բազմազան գոյները, աղբրտիճ, եթէ կ'ուզէք գարունը լրիվ տեսնել» (2,601): «Արեւին եւ Արարատի չափ իրական» այդ երկրում հայերը գտնելու են իրար, միավորվելու ու շենացնելու են պապեմական հողը: Հայը, անկախ պատմական հանգամանքներից ու քաղաքական ռեժիմից, հողապաշտ է, և գրողը համոզված է՝ «Ամեն հայու մէջ կայ էդ կանչը: Էդ մեր պապերու սրբազան հիվանդութիւնն է» (2,622):

«Ո՞վ է հայը» հարցին գրողը պատասխանում է՝ «Յավիտենական Գամբորդ»,<sup>6</sup> «իր խորքին մէջ այնքան համամարդկային, որ կ'օրհնէ աշխարհի չորս կողմերը: Կ'օրհնէ հողը, պտղաբերութիւնը, զիւրը, քաղաքը, անապատը, վանքը ու բոլոր ժողովուրդները աշխարհի» (2,642): Հայի ազգային նկարագրի մէջ կան «հին դարերէն, հեթանոսականէն խաս գոյները» (2,639): Համաստեղը գրում է. «Հայ ժողովուրդը հողին հետ մտերմացած՝ նոյնիսկ կը մոռնար իր թշնամին: Աշխատանքին հետ ան կը լեցուէր անսահման բարութիւնով. հեթանոսի մը պէս կ'ողջունէր արեւը, որ կարծես իր աղօթքին հետ կը ցաթէ: Ան կ'ըմբռնէր աւետարանի էջերուն չափ իմաստուն հողին բարութիւնը ու իր սիրտն ալ կը դառնար արգասաւոր, ճիշտ հողին պէս» (2,486):

Հայ գյուղացու, ֆիդայու մարդասիրության օրինակները վեպում շատ են:

Ջրաղացպան Նավոն հարկադրված էր զենք վերցրել, կրակել դեպի ինքը վազող քուրդ զինվորի վրա՝ «ինքզինք ազատելու համար»: Կրակելուց հետո հանկարծ կռահեց, որ զինվորն օգնություն էր խնդրում: Քուրդն աչքերը փակեց Նավոյի գրկում՝ կարծես գոհ, որ մարդու թևերի մէջ է մեռնում, «հոգ չէ, թէ զինքը զարնողին թելերուն մէջ» (1,365): Կյանքի օրենքն է Նավոյին ստիպում գտնել ու խնամել իր սպանած քուրդ զինվորի որբերին: Հայի տիպական կերպար է կյանքի չգրված, բայց նախահայրերից ժառանգած մարդասիրության օրենքներով ապրող այս հերոսը: Համոզված կարելի է ասել՝ Նավոն Համաստեղի իդեալն է. ինչ-որ ժամանակ մարդն ու մարդկությունը կմոռանան զենքն ու կռիվը, կապրեն խաղաղության, մարդասիրության օրենքներով, իսկ այսօր Նավոն դեռևս եզակի է, նրա արարքները՝ անհասկանալի, պատերազմական ժամանակներում՝ նույնիսկ շատերի համար դատապարտելի, բայց միշտ հարգանք ներշնչող ու ընդօրինակման արժանի:

Յնցող են ջարդի, քահանաների դիակների, յաթաղանին զոհ գնացած մոր կըրծքին լացող ծովեր մանկան, այրված եկեղեցիների պատկերները: Երիշտ է, Համաստեղը խուսափում է արյան ու կոտորածների ծավալուն նկարագրություններից, բայց առանձին վրձնահարվածներով ամբողջացնում է այն երկրի նկարագիրը, որով թուրքն է անցել: Սա ռճիրի սահմանն է, որը ֆիդային չի անցնում: Երբ անցնում է, ինչպես Հեթումն ու նրա ընկերները, որոնք իրենց



ծնողների ու համագյուղացիների վրեժն էին լուծել՝ սրի քաշելով թուրքական գյուղի բնակիչներին, գնդակահարելով գերիներին, պատժվում են ամենայն խստությամբ: Երբ կռիվն ինքնանպատակ է, թելադրված չէ ինքնապաշտպանության անհրաժեշտությամբ, դառնում է ոճիր ու դատապարտելի է նաև միջազգային օրենքով: Ոճիրը ոճիր է ծնում...

Հիմա՝ տասնամյակների հեռվից, գուցե և կարելի է Հեթումի արարքին բացատրություն գտնել, հաստատ է նաև, որ դժբախտաբար աշխարհում «առանց սպանելու իրաւունք չի պաշտպանուիր եւ էն տարրականը իրաւունքներում՝ ինքն կեանքն է» (2,509), բայց հայի համար կան, գործում են կռվի ասպետական օրենքները: Ուրիշ հարց, որ այդ նույն միջազգային օրենքն ու պառակտված աշխարհը, որը կոչվում է նաև քաղաքակիրթ, լուծ են, իսկ մեծ տերությունների համատիեզերական շահերը՝ պատճառ դառնում, որ Արևմտյան Հայաստանում, իսկ դարավերջում՝ նաև հարևան երկրում կատարված ոճրագործության մեղավորներին երբեմն շփոթեն... զոհերի հետ: Հայերի հետ «մարդավարի» խոսող, բայց «շնականօրեն թուրքին արարքները» պաշտպանող դիվանագետների մեղքով՝ մարդկության խղճին նորանոր ոճիրներ են ծանրանում...

Եիշտ է, Համաստեղն Արամ Հայկազի պես ուղղակի հարց չի տալիս. «Թուրքը ստեղծելու համար չե՞ս ամչնար Աստուած...»<sup>7</sup>, բայց կատարվածն ու գրողի վերաբերմունքն ընթերցողին հանգեցնում են համանման հարցադրման: Մարդուն արարումից բաժանում է նաև քաղաքակրթությունը: «Թուրքը Արարչագործութեան մեծագոյն սխալն է ու ամօթը... Շնչաւորներուն ամենէն վայրագն ու ստորինը»<sup>8</sup>, գրում է Ա.Հայկազը «Հաշտուի՞մ Աստուծոյ հետ» պատմվածքում: Հ.Օշականը «Մնացորդաց»ում թուրքին բնորոշում է այսպես. «Արեւելքին աղտն է, կեղտը, թարախը»<sup>9</sup>, իսկ «Սիւլէյման էֆէնտի» վեպում կարդում ենք. «Պատերազմը բնական ուղրտն էր թուրքին»:<sup>10</sup>

«Երբ կը ջարդուէր հայ ժողովուրդը,- բացատրում է Չերչի Կիրոսը եվրոպացի դիվանագետին,- ըսիք որ Աստուած իր սիրելի զաւակներուն այդպէս է կամեցեր: Ըսէք նաեւ, որ թուրքերն են դարձեր Ալլահին սիրելին եւ Ալլահը այդպէս կամեցեր է ... չէ՛, մենք չենք ջարդէր, միայն կ'ուզենք, որ չի ջարդուիմք» (2,525): Կարդում են ու հավատում՝ Կիրոսը «մէկն է որ կրնայ Հայկական Հարցը

նոր փուլի մէջ դնել» (2,433): Այո՛, նոր ժամանակները ծնում են նոր հերոսներ, որոնք Հայկ Նահապետի ու Սասունցի Դավթի օրինակով կծառայեն բարուն, մարդկայինին՝ հեռու մնալով ոճիրից ու ոճրագործությունից: Այսպես եղել է, այսպես կլինի այսուհետև:

Աշխարհն ապրում է «Ձարկ, եւ իրաւունքը քուկդ է» սկզբունքով, իսկ հայ ժողովուրդն «իր մարդկային ու բարոյական ըմբռնումով վաղուանն է» (2,406), պնդում է Համաստեղի գաղափարակիր հերոսը՝ Նայիրյանը: Նա այսպես է ձևակերպում հայ ժողովրդի գոյության նպատակը՝ «Պահենք այս ազնիւ ժողովուրդը վաղուան համար, որ ան կարենայ իր դերը կատարել մարդկային յառաջադիմութեան մէջ դէպի բարոյական կատարելութիւն: Մտքի զօր է, աղբերս, մանաւանդ մեզ համար պահանջել մարդկային եւ կամ քրիստոնէական բարոյականութիւն: Մարդկային մեծագոյն բարոյականութիւնը ուժ է ինքնին եւ ուժը ուժով կարելի է լիակատար ընել» (2,406):

Պատմության դասերից և կատարվածը վերաիմաստավորելու փորձերից է ծնվել հայոց ազատամարտի այս «նոր տասնաբանեայ»ն, որի իմաստության առաջ խումբանում են կուսակցական, քաղաքական տարբերակումները: Եիշտ է, մենք, ոգևորված համամարդկային արժեքներով, որոնցից ամենաարժեքավորն Ազատությունն է, անվերապահ տրվելով ազգային անուղղելի, համառ ռոմանտիզմին, այսինքն՝ ցանկալին իրականի տեղ ընդունելով, ազգովին հաճախ ենք հայտնվել գոյության ու չգոյության եզրին, բայց համառորեն պահել ու պահպանել ենք մեր ազգային նկարագիրը: Վկան՝ մեր ինքնատիպ մշակույթը, աշխարհասփյուռ հայության գոյությունը, ինչպես նաև՝ ազգային պետություն կերտելու նորօրյա խնդիրը, որի լուծման տարբերակներից մեկը Համաստեղը ներկայացնում է «Սպիտակ Ձիավորը» վեպի վերջին հատվածում: Հայոց նորաստեղծ պետականության ու դատարանի նպատակն է՝ պաշտպանել ինչպես ժողովուրդների՝ նույն հողի վրա խաղաղ ապրելու իրավունքը, այնպես էլ դատապարտել «թուրքի ձեւի ոճիրները», երբ զենքն ուղղվում է անզենի, անզորի, անպաշտպանի դեմ:

Խորհրդանշական է այն պատկերը, երբ կռվի դաշտից սարը բարձրացող մարտիկները լսում են «նոր աշխարհ եկող երախայի մը սուր ճիչը» (1,336):



Գրողը կատարված ողբերգության արձատյանը փնտրում է վաղ անցյալում: Այն օրերին, երբ կար հայոց երկիր, թագավոր ու թագավորություն, հավլունի թուր ու բանակ, ամեն ինչ կարգին էր: Բայց թագավորը որոշեց, որ թրի, արյուն հեղելու կարիք չկա, «քանի որ երկնքի թագաւորութիւնը կայ» (1,15): Թուրը կորցնելուց հետո անպաշտպան երկիրն ու ժողովուրդը հայտնվեցին ուժի, կռվի ու արյունհեղության օրենքներով ապրող աշխարհում, իսկ հայն իր ներքին դիմադրությունը հաղթահարելով է զենք վերցնում, երբ հարկադրված է արարելու փոխարեն կռվի դաշտ գնալ՝ արարելու իրավունքը պաշտպանելու: Գրողն էլ իր հերոսների պես հավատացյալ մարդ է, խոնարհվում է քրիստոնեության համամարդկային արժեքների առջև, բայց աշխարհում գործում են այլ օրենքներ, և քրիստոնյան փորձում է պաշտպանել իր իղեալները:

Վարպետ Օհանը դժգոհում է, որ հայը դարեր շարունակ կառուցել է, իսկ թշնամին՝ սպանել ու ավերել: «Ի՞նչ լաւ էր, որ մոռնայինք, բոլորը մոռնայինք՝ աւերակ եկեղեցի, Աստուած, հայրենիք, բոլորը, բոլորը:

Ի՞նչ ընենք, որ չենք կրնար մոռնալ. փարուանան կանթեղի քովէն չի կրնար հեռանալ, կ'այրին թեւերը ու կ'իյնան ձեթին մէջ» (1,154),- սա հուսահատության ճիչն է այն հայի, որը հարկադրված է զենք վերցնել: Եզրակացություն՝ «Արարչութիւնը թեմամ չէ. ոճրագործ ըլլալ ճարտարապետ ըլլալէն աւելի բարձր է» (1,154): Հայն ապրել ու ապրում է կառուցելով, հողի աշխատանքով: Թշնամուց պաշտպանվելու համար սարերը բարձրացող հայ գյուղացին վշտանում է, որ չի կարող հետը արոր տանել, այնուամենայնիվ մի տոպրակ սերմացու է վերցնում: Կռվի դաշտում նա մի պահ հմայվում է աստղերից ծորացող խաղաղությամբ, մտորում արտերի, պարտեզների մասին՝ մոռացած, «որ լերան քարերուն զնդակներ կը զարնուէին»: Հայ ծերունին խրատում է. «-Տղաս, քիւրտի աչքին վրայ որ կոխես՝ չէ չեն ըսեր: Ցանուած արտին մէջէն անցնիլը մեղք է» (1,473):

Հայ գյուղացու՝ խաղաղ աշխատանքով ապրելու երազանքն անիրականանալի է. բռնությունն ու անիրավությունը հայրենի հողից կտրել են հողագործին, որը զենք է վերցրել ու լեռները բարձրացել: Համաստեղը հայի մեջ համամարդկայինի ու ազգայինի, հեթանոս հայրերի անպարտելի ուժի և

քրիստոնեական մարդասիրության յուրահատուկ միացում է տեսնում. տառապանքն է մարդուն, ազգին հասցնում երկընքի, երկնայինի բարձունքները, իսկ մեր պատմությունն ու ազգային նկարագիրն անբաժան են տառապանքից: «Սիրի՛ր թշնամուդ»՝ աշխարհի համար անիրագործելի քրիստոնեական պատվիրանի վրա է հենվում հայի բնավորությունը՝ հախուռն, սիրուց մինչև ատելություն հասնող բռնկումներով, անհավասարակշիռ, բայց միշտ մարդկային ու մարդասեր:

Պատմության անողոք վճռով հայ մարդու համար արորն ու զենքը դրվել են կողք կողքի, դարձել անբաժան՝ հանուն նրա, որ աշխարհը մնա, լինի, մարդն ու մարդկությունն ապրեն: Օգտագործելով Գ.Լազյանի՝ Նիկոլ Դումանին բնութագրող տողերը՝ կարելի է ասել, որ Համաստեղի հերոսներն էլ «կենքի մէջ տէր են երկաթեա կամքի, իսկ կռուի դաշտին վրայ՝ անսահման քաջութեան»:<sup>11</sup>

Հանուն ազատության զենք են վերցրել հայ ազատամարտիկները, որոնք կռվի դադարներին երեխաների համար գրատախտակ են սարքում կամ դպրոցի շենք կառուցում: «Անոնց համար ժողովուրդին յաղթանակը այնքան իրական էր, որքան ապառաժներուն վրայ տեղաւորուած հայ երեխաներուն սերտած ԱԲԳ-ը» (2,282),- գրում է Համաստեղը: Ամսախ է այն ժողովուրդը, որի զինվոր դարձած զավակները կատակում են անգամ «վտանգաւոր կռուի ատեն», կռվում, բայց երբեք «թուրքի ձեւի ոճիրներ» չեն գործում՝ համոզված, որ «ոճիրին նպատակը ոճիր է միայն» (2,630): Ռ. Տեր-Մինասյանը նկարագրում է ֆիդայիների «անտեղի» վեճը կռվից հետո ու գրում. «...փոխանակ սովորական մարդոց նման մտածելու հագուստները ցամքցնելու մասին՝ վէճի են բռնուած, թէ ձիւ պոչը կանգնա՞ծ էր թէ դմակի նման փռուած: Մանուկներ են ֆետայիները, երջանիկ, անհոգ» (4,358): «Յիշատակները» կարդալիս հաճախ փշաքաղվում են՝ իմանալով (սոսկ կարդալով) այն տառապանքի, զրկանքների մասին, որոնք իրական կյանքում սեփական մաշկի վրա ամեն օր ապրել ու զգացել են ֆիդայիները: Այդպիսի լարվածության մեջ ապրող մարդիկ միայն կարող էին երեխայի պես հրճվել այն եզակի խաղաղ պահերով, որոնց կրկին հաջորդում են տառապանքն ու զրկանքը:



Սեր ժողովրդի պատմության վճռական փուլերում, հատկապես ազգային-ազատագրական շարժման մեջ զգալի ավանդ ունեն հայ կանայք:<sup>12</sup> «Գյուղը» ու «Անձրև» ժողովածուների հերոսուհիները վեպում կիսում են իրենց ամուսիններին ու սիրեցյալներին բաժին ընկած դժվարությունները, հարմարվում կենցաղային պայմանների բացակայությանը (այլ խոսքով՝ չգոյությանը), մարտի դաշտ գնում՝ ջուր, զենք հասցնում ֆիդայիներին, երբեմն էլ՝ զենք վերցնում: Կինն այն առասպելական ուժն է, որը թևավորում է հերոսների հոգիները, փոխում իրերի կարգն ու դեպքերի ընթացքը, անգամ՝ գյուղի սովորույթները: Նա ֆիդայուն կտրում է իրականությունից, տանում երջանկության, ընտանեկան խաղաղության աշխարհ:

«Սպիտակ Ձիավորը» վեպի «գաղափարական» հերոսները հայ մարդիկ են՝ ազգային նկարագրի դրական գծերի համադրումով, խոսքի ու գործի նվիրյալներ, որոնք ժողովրդին առաջնորդում են պատմության դժվարին, հակասական ու բարդ շրջաններից մեկում: Գ.Թումանյանը գրում էր. «Գաղափարի մարդը միշտ գրավիչ է և ազնիվ»:<sup>13</sup>

Վեպի կուսակցական գործիչներից ամենաակտիվը Չերչի Կիրոսն է, որի նախատիպը Զրայր Դժոխքն է (Ղազարյան Արմենակ, 1864-1904): «Մարդս գաճաճ է իր ներքին հսկայի բաղդատմամբ»<sup>14</sup>, - գրում է Գ.Նժդեհը: Համաստեղի հերոսն այս վճռակալ հաստատող օրինակներից է: Հավելենք, որ Խ.Դաշտենցն իր «Ռանչպարների կանչը» վիպասքում կերտեց Զր.Դժոխքի համակրելի կերպարը: Փաստորեն այդ ցնցոտիավոր «թափառականն» է «Սպիտակ Ձիավորը» վեպի ոգին ու շունչը: Ինչքան էլ Համաստեղը փորձում է համոզել ընթերցողին, որ Նայիրյանն է կատարվածի ոգեշնչողը, ղեկավարը, տպավորությունն այլ է. Կիրոսն ամենուր է, ամեն ինչ գիտե, ղեկավարում է՝ և՛ հայ, և՛ քուրդ, և՛ թուրք հեղափոխականների շարժումը՝ հետևելով կուսակցական համծնարարականներին (սուրբ անմեղություն՝ «թուրք հեղափոխական». սա է հայի ռոմանտիզմը):

Կիրոսն ապրում և գործում է այն սկզբունքով, որ «իրաւունքը միշտ ժողովուրդինն է, անոր շարժումը օրէնք է ու անոր բարկութիւնը արդար, հետեւաբար ժողովուրդը իր բնազդին մէջ պէտք է ազատ ձգել» (1,469): «Տակաւին հին դարերու հետ ենք ու հեռու մնացած ենք իրականութենէն ու

շրջանէն» (2,465), - խորհում է նա՝ փորձելով հասկանալ, թե ի՞նչ ակունքներից է սնվում հայ ժողովրդի «միամիտ ու մանկական գիծը», «դէպի լաւն ունեցած անկեղծութիւնն ու հաւատքը»: Երզնկացի Կարապետը հայ ժողովրդի՝ ժամանակից, կոնկրետ տարածությունից դուրս գոյության մարմանվորումն է՝ առաջին հայացքից՝ ռոմանտիկական խտացում, բայց ուշադիր զննության դեպքում վեպի հերոսների նկարագիրն ամբողջացնող հայ, անցած ու եկող դարերի յուրատեսակ կապ: Առանց այդ հիշողության, առանց այդ կապի՝ հայը ոչ թե ազատության զինվոր է, այլ զինված մարդ՝ ազգային նկարագրից զուրկ, այլ խոսքով՝ պարզապես կռվող: Համաստեղը համոզված է՝ հայ ժողովուրդը «տանջանքէն դուրս եկած լաւագոյն ստեղծագործութիւնն» է:

Նայիրյանի նախատիպը Նիկոլ Աղբալյանն է: Համաստեղի և Ն.Աղբալյանի նամակներից կարելի է հիշատակել շատ հատվածներ, որտեղ արտահայտված են գրողի հիացմունքն ու խոնարհումը Աղբալյան հայի, գործչի, մանկավարժի, գրականագետի նկատմամբ: Նրանց հոգեհարազատության հիմքում միայն կուսակցական պատկանելությունը չէր ընկած, այլ նաև հայի ոգու բացահայտման, հայ մշակույթի հարըստացման, պահպանման ջանքերը, որոնք նրանք գործադրում էին աշխարհի տարբեր անկյուններում, բայց միշտ նույն նպատակին հետամուտ: Ներկայացնելով Հայ ճեմարանի գործունեության ծրագրերն ու կատարած աշխատանքները՝ Ն.Աղբալյանը ասում է. «Այս բոլորին նպատակը մէկ է - ստեղծել Մոլեռանդ հայը, ինչպէս կան կրօնական մոլեռանդներ, որոնք իրենց կրօնական կեանքին շնորհիւ կը պահեն իրենց դաւանանքը, այնպէս ալ մոլեռանդ հայերը իրենց ազգային մոլեռանդութեամբը պէտք է պահեն հայութիւնը»:<sup>15</sup> «Մոլեռանդ հայը» այն ժողովրդի ներկայացուցիչն է, որն անցյալում ապացուցել է իր «արժէքն ու ստեղծագործական տարր մը ըլլալը» ու ներկայով էլ պիտի հաստատի այդ ճշմարտությունը: Հիշենք՝ Ն.Աղբալյանն էր Ավ.Իսահակյանի «Ուստա Կարո» վեպի Շրջիկ Կայծակի նախատիպը:

Նայիրյանը մտավորականի հավաքական տիպ է: Համաստեղին հաճախ են մեղադրել, թե տուրք է տվել կուսակցական գաղափարախոսությանն ու ներկայացրել «իդեալական» գործիչների կերպարներ: Սակայն չպէտք է մոռանալ նաև ոչ պակաս կարևոր մի այլ հանգամանք՝ յուրաքանչյուր ընթերցող



քաղաքական կուսակցությունների (մանավանդ տասնամյակներ շարունակ երկրի պաշտոնական գաղափարախոսության կողմից քննադատված ու արգելված) և հայտնի գործիչների մասին ունի իր կանխակալ կարծիքը՝ ճիշտ թե սխալ, լավ թե վատ: Շատերի համար քաղաքական գործիչը սոսկ գաղափարախոս է, մարտիկ: Ս.Վրացյանը գրում է, որ «գործիչը մահից յետոյ էլ գործով կենդանի եւ պատասխանատու է իր արաքների համար թէ ժամանակակիցների եւ թէ յաջորդ սերունդների առջեւ»:<sup>16</sup>

Ազգային գեղով շինարար, ուսուցանող և ուսանող, իրեն ոչ մի ժողովրդից չգերադասող, աշխարհի ամենահեռու անկյուններում հայտնված հայի վրեժի միջոցը ազգային նկարագիրն է: Ազգային էպոսի հերոսի՝ Փոքր Սիեերի օրինակով հայն ամբարել է անսահման համբերություն (տեղին է ասել՝ աստվածային համբերություն), ուր էլ լինի՝ արթնանում ու քնում է հայրենիքի երազանքով: Հայրենիքին ծառայելու միջոցներից մեկն էլ համամարդկային արժեքների պահպանումն է՝ հանուն մարդու ու մարդկայինի. չէ՞ որ մարդու ավարառու տեսակը բոլոր ժամանակներում էլ ժամանակավրեպ է, իսկ զավթած հողը հայրենիք չէ, չի դառնա: Ամենակարևորը՝ հայն աշխարհի բոլոր անկյուններից էլ տեսնում է Արարտը, և նրա՝ միավորվելու կանչը հասնում է աշխարհի չորս ծագերը:

Համոզված կարելի է պնդել՝ պատմության դատաստանն ու հատուցումն անխուսափելի են: Դարեր շարունակ պետական համակարգ չունեցող հայ ժողովուրդը երազում էր պետություն ունենալու մասին, և դարասկզբի հերոսական պայքարը, անկախ քաղաքական, կուսակցական հարցերից, անգնահատելի դեր ունի հենց միայն նրանով, որ կրկին հրատապ դարձավ ազգային պետություն կերտելու խնդիրը, որի լուծման տարբերակներից էր Առաջին Համրապետությունը մեր հողի վրա: Անմոռանալի է «Սպիտակ Ձիավորը» վեպի այն հատվածը, երբ զինվոր դարձած Մերկերիոսը երազում է «հայկական բանտին մեջ բանտարկեալ ըլլալ»: Հայի պատմական հիշողությունն իր մեջ ամբարած այս հետաքրքիր հերոսը Կիրոսի հետ երազում է ու նվիրվում պետականություն ստեղծելու նպատակին՝ երակներում պահած հայոց թագավորների ու թագավորության «գեներտիկ» հիշողությունը: Հետաքրքիր մի զուգահեռ՝ Ա.Հայկազի հերոսներից մեկը երազանք ունի՝ Հայաստան

հասնելուն պես քար վերցնել, ապակի կտորել, որ «հայ փոլիսը գայ ու հայերեն ձերբակալ է զիս: Թող այդ օրը տեսնեն ու թող Աստուած հոգիս առնէ, մինակ թէ՛ տեսնեն այդ օրը»:<sup>17</sup>

«Ուել բանի առջեւ չպետք է տնտնալ երբ նպատակ մը կայ իրագործուելիք» (2,338),- գրում է Համաստեղը: Ազգային պետություն կերտելու խնդիրը համազգային ծրագիր է՝ քաղաքական, կուսակցական, աշխարհագրական, սոցիալական բոլոր բաժանումներից դուրս և վեր: Գրողը համոզված է՝ չպետք է վախենալ. վախկոտը պարտվում է անզամ նապաստակից, իսկ «նոյն ուժն ունեցող քաջը կրնայ առիւծ մը պարտել» (2,321): Դարասկզբի մեր հերոսամարտը, ճշմարտությունը վերականգնելու համազգային մեր ջանքերը իզուր չեն եղել և չեն լինի երբեք: Նա դիմում է մեր ազգային համահավաք հիշողությանը՝ նպատակ ունենալով հավերժացնել ողբերգական իրադարձությունների շղթայում կատարված հերոսականն ու անմոռանալին: Այդ հիշողությունն է ընկած «Սասնա Շռեր»ի և մեր գոյամարտի նորօրյա հերոսների հոգեբանության, վարքագծի հիմքում: Սա է ժողովրդի հարատևելու գաղտնիքը:

Համաստեղի վեպը, ճիշտ է, ունի կառուցվածքային և այլ զգալի թերություններ, բայց անժխտելի է, որ վեպում կան ժամանակի ոգին, շունչը՝ հերոսական և միաժամանակ՝ ողբերգական: Կարևորն այն է, որ հայի ազատատենչ ոգին դարասկզբի հեքիաթային բռնկումներից ու ճակատագրական համարվող պարտություններից հետո էլ կրկին վերհառնեց: Ահա «հեքիաթային» այն հիմքը, որից ծնվում է գրողի՝ «ռոմանտիզմ» անվանվող տիպիկ հայկական համառությունը, որն այնպես վառ է արտահայտված վեպի հանգուցալուծման մեջ:

«Ժողովուրդներու բուն առաջնորդը իրենց մեռելներն են եւ ոչ թէ ողջերը» (5,146),- գրում է Ռ. Տեր-Մինասյանը: Մեր ժողովրդի նահատակները մեզ առաջնորդում են դեպի համամարդկային արժեքներն ու պատվիրում՝ փայփայել ազատությունը: Հայոց ազատամարտի ամենաբարդ, հակասական ու հերոսական շրջանին նվիրված «Սպիտակ Ձիավորը» վեպում Համաստեղի ուշադրությունը սևեռված է կատարվածից դաս քաղելու իմաստնության վրա:



## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վեպի առաջին գլուխը լույս է տեսել «Հայրենիք» ամսագրի՝ 1931-ի թիվ 7-ում և գրեթե անընդմեջ շարունակվել մինչև 1933-ի թիվ 12-ը:
2. Համաստեղ, «Սպիտակ Ձիաւորը», Լոս Անճելես, 1952, հ. 1, էջ 4: Վեպից մեջբերումները նշվում են տեքստում. առաջին թիվը հատորն է, երկրորդը՝ էջը:
3. Ռուբեն, Հայ յեղափախականի մը յիշատակները, Ա-է հատորներ, Թեհրան, 1982:  
Մեջբերումները նշվում են տեքստում. առաջին թիվը հատորն է, երկրորդը՝ էջը:
4. Գ.Նժդեհ, Էջեր իմ օրագրէն, Գահիրէ, 1924, էջ 15:
5. Գ.Լազեան, Յեղափոխական դէմքեր (Մտաւորականներ եւ հայդուկներ), Գահիրէ, 1945, էջ 315:
6. «Յաւիտենական ճամբորդը», - Համաստեղն այսպէս է վերնագրել «Բագին» հանդեսի՝ 1965, թիվ 4-5-ում տպագրված հուշագրություն-պատմվածքը, ուր նկարագրված է Տեր-Ջոր կատարած նրա ուխտագնացությունը:
7. Արամ Հայկազ, Կարօտ, Պէյրուք, 1971, էջ 24:
8. Արամ Հայկազ, Երջանկութիւն, Պէյրուք, 1985, էջ 84:
9. Յ.Օշական, Մնացորդաց, Գ հատոր, Անթիլիաս, 1988, էջ 301:
10. Յ.Օշական, Սիւլէյման էֆէնտի, Պէյրուք, 1985, էջ 42:
11. Գ.Լազեան, Յեղափոխական դէմքեր (Մտաւորականներ եւ հայդուկներ), Գահիրէ, 1945, էջ 327:
12. Ա.Ձէյթեան, Հայ կնոջ դէրը հայ յեղափոխական շարժման մէջ, Անթիլիաս, 1968:
13. Հ.Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, հ.7, Ե., 1995, էջ 148:
14. Գ.Նժդեհ, Որդիների պայքարը հայերի դէմ, Սօֆիա (Սէլանիկ), 1927, էջ 23:
15. «Յուսաբեր», 1931, հոկտեմբերի 28:
16. Ա.Վրացեան, Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրուք, 1962, էջ 335:
17. Արամ Հայկազ, Յեղին ծայրը, Նիւ Եորք, 1949, էջ 136:

## ՍՈՒՄԱՆՆԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ

### ԱՆՀԱՏԻ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՐՉԱԿՈՒՄ (60-80-ական թթ.)

Մարդկային եությունը, լինելով խիստ անհատական, եզակիի կրող, որոշակիորեն հարաբերվում է ընդհանուրին, կրում շրջապատի ազդեցությունը: Անհատականության եզակիությունը շեշտվում եւ ճանաչվում է ընդհանուրի ֆոնի վրա, միայն զուգահեռումների եւ հակադրությունների միջոցով է ճշտվում նրա տեսակը: Անհատի ճանաչումը ճշտվում է նաեւ ընդհանուրի ճանաչման միջոցով: Անհատը երբեք դուրս չէ տարածությունից, ժամանակից, միջավայրից: Այն իր մեջ ներառում է մի քանի շղթաների տարրեր՝ դառնալով դրանց մի օղակը:

Ժամանակակից արձակուրդ կան ազգային հանրության ճանաչման, ազգային հոգեբանության եւ վարքի արտահայտություններ: Ազգին բնութագրող հատկանիշները խոսում են ազգի հոգեբանության մասին: Հ.Մաթևոսյանի «Մեսրոպ» պատմվածքի մեջ տրված են հայերի ազգային հոգեբանության որոշակի կողմեր, ընդգծված է նաեւ թուրքերի (հեղինակը այդ էթնոնիմն է օգտագործում) վարքը ու հոգեբանությունը. «Ամռանը նրանք իրենց քոչերով գալիս էին, եւ մեր տունը դառնում էր ուրիշի տուն... Ձորի մեր անտառում հաճարի մեր ծառերին մենք գրած էինք լինում մեր անունը եւ կարծած, թե ծառը մեզնից հետո մեր անունը պահելու է դեռ երկար ու երկար, մեկ էլ՝ մեր գիրը վրան այդ ծառը գոմեշների քամակով էր տալիս նրանց չորանն ու հո հա հո քաշում իրենց ուրք մեր անունը վրան այս ծառը»<sup>1</sup>: Սրանց կողքին հայն է իր հոգեբանությամբ. «... սարեր են, էլի, կապրենք, էլի, ինչո՞ւ անտեղի նեղանանք-նեղացնենք»<sup>2</sup>:

Այս հակոտնյա հոգեբանությունների հարաբերությունը, տեսակների զուգահեռումը պատմության եւ ժամանակների մեջ միշտ էլ վնասել է հայերին: Մեսրոպը դառնում է սրա դեմ ընդվզողը: Ազգի ճանաչման,



ինքնագնման կրողն է նա, որը փորձում է գտնել եւ իր արմատ-սկիզբը, եւ իր ազգի դժբախտության սկիզբը: Եւրոպացիներն ընդվզում է ազգի ներողամիտ, հավատացող, հանդուրժող հոգեբանության դեմ: Այդ հակադրության մեջ էլ ճանաչվում են ազգի եւ անհատի հոգեբանությունները:

Գալչոյանի Դավոյի տիպը եւս ընդգծվում է ազգի կեցություն-հոգեբանություն հիմքի վրա: Թշնամին ճանաչում է հայի գեղապաշտ, երեխայապաշտ ու մեծապաշտ լինելը եւ խորամանկում: Այն դարձնում է իր ապրելու խաղաքարը:

Երգով, աղմուկ-կանչվառուքով կռվող ցեղակիցներին ոգետրող բնակիչները պաշտպանվելու կարիք չունեն. Անդրանիկ փաշան հայի ազնիվ պայքարի («Ասանա ծռերում») թշնամու ժողովուրդը երբեք չի վնասվում) կրողն է, ուստի թուրքին պաշտպանողը հայն է՝ իր հոգեբանությամբ: Դավոն մերժում է նման էթնոհոգեբանությունը:

Ժամանակակից արծակում թաղը հաճախ ներկայացվում է իր իսկ հոգեբանությամբ. անհատը դառնում է ոչ թե թաղի հոգեբանության կրող, այլ իր յուրաքանչյուր քայլի, արարքի համար թաղի հոգեբանության առջև է պատասխանատու, ապրում է թաղի ամենատես աչքի առաջ (աչքի խնդիրն ավելի լայն եւ խոր արժարժում ունի՝ Վ. Մուղնեցյանի «Եկվորներում»): Անհատը կորցնում է իր ներքին ազատությունը, կաղապարվում թաղի հոգեբանությամբ: Թաղն անձնավորվում է:

Խնդրի բավականին հետաքրքիր լուծումներ կան Վ. Մուղնեցյանի երկերում. «Ալիզում» Դիմացն է, «Եկվորներում» Մուշեղի թաղը: Գրողը թաղի հոգեբանական կեղտվածքի երկու կառույց է բերում. Դիմացում անհատներն ընդհանուրի հոգեբանության կրողներն են, «Եկվորներում» թաղը դառնում է Մուշեղի հոգեբանության կրողը, անգամ Մուշեղ-Ալան հավասարազոր մեծությունների դեպքում Ալանը դուրս է մղվում. թաղը ճանաչվում է Մուշեղով:

«Ալիզի» մեջ թաղի հոգեբանությունը եւ դիմանկարը միաձուլվել են. արարքը բնորոշում է թաղի հոգեբանությունը. էպիկական ժամանակների վերապրուկ կա այստեղ:

Դիմացը նախանձախնդիր է. իր իրավունքները պաշտպանում է հերոսականորեն, անգամ նորամուծությունն անընդունելի է, որովհետեւ քանդվում-ավերվում է իր միաձուլվել, նախնական անխաթար էություն-դիմանկարը. «Դիմացում ընկեր-բարեկամ չունեցող ոչ մի մարդ չէր կարող անպատիժ անցնել Տանձուտը, անվթար հասնել իր նպատակին... Դիմացը հարգում էր համարձակ մարդկանց, Դիմացը միայնակ մարդկանց առաջ ճամփա կփակեր, բայց նրանց վրա ձեռք չէր բարձրացնի»<sup>3</sup>:

Դիմացի հոգեբանության կրողների երկու սերունդ կա:

Թաղի հոգեբանության ժառանգորդման խնդիրները ուժեղ են. Օդրաթ Մարտինը, Փիղ Միկիչը, Քավոր Մամբրեն, Դարսեցի Ավոն, Նաթանիելը առաջին սերնդից, իսկ Վահրամը, Էռնիկը, Նշանը՝ երկրորդ սերնդից: Եթե առաջին սերունդը հաստատել ու ապրում է իր օրենքներով, ապա երկրորդ սերունդը մեծ պարտականություն ունի՝ պահպանել օրենքները. օրենքի փոքր-ինչ շեղումը բերում է վրդովմունք: «Գուգարք» կինոթատրոնը Դիմացի տիրույթների մի նոր սահման էր, նվաճում, թաղի ինքնահաստատում ու ինքնարժեքավորում: Ուրախության հորձանքը վրդովում է Նաթանիելին. «Հաշվի չեն առնե աղաթները, օր իմ գլխով կանցնեն, օր աղաթները հաշվի առնեին, ի՞նչըղ իմ գլխով կանցնեին»<sup>4</sup>:

Մուշեղի թաղում տիրապետողը Մուշեղի հոգեբանությունն է, որովհետեւ Մուշեղն է թաղի հզորության, անկախության գրավականը եւ նրա հետնորդներն ունեն ընդհանրական մի անուն՝ Մուշեղի տղերք (այստեղ արյան ժառանգորդումը կապ չունի):

Մուշեղը, խոսելով իր թաղի եւ ուրախության մասին, ասում է. «Դե, հոգով ուժեղ ենք, - պատասխանեց Մուշեղը, - որովհետեւ կռիվ ենք տալի ընդամենը մեր նամուսն ու պատվասիրությունը տեղը պահելու համար»<sup>5</sup>:

Այստեղ կարելու է այս պահվածք-հոգեբանություն էության բացահայտումը վեպի մեկ ուրիշ հերոսի կողմից. «Էդ ասա՛ դուք ժողովրդի խասիաթին եք, էլի»<sup>6</sup>:

Մուշեղի թաղի հոգեբանությունը համարում է էթնոհոգեբանության արտահայտություն:



Վ. Մուղնեցյանի երկերում ուժի հոգեբանությունն առնչվում է զոռբայության հոգեբանության հետ (որոշակի աղերսներ կան «Կյորեսի» հետ): Թաղն ընդունում է Մուշեղի եւ Ալանի զոռբայության տեսակը, բայց մերժում է Թորգոմի եւ Հաբեթնակի զոռբայությունը (վերջիններիս զոռբայությունը փողի մեջ է): Վ. Մուղնեցյանն օգտագործում է կերպարաստեղծման եռաձյուղ հնար. թաղի հոգեբանություն - թաղի հոգեբանության խորհրդանիշ կերպար - այլ կերպարներ, որոնք վեպում դառնում են նույն գաղափարի կրողները. հեղինակը դրանք տարրալուծում է, որպեսզի ավելի ամբողջական լինի ասելիքը. մեկ կերպարը «կճզմվեր» ասելիքի բեռն տակ: Կարելու է խորհրդանիշ-կերպարի խնդիրը. Մուշեղը ամբողջանում է Ալանի միջոցով: Այս հնարը միջոց է դառնում անծային հատկանիշների ճշգրտման համար:

Ա. Այվազյանի, «Ավետարան ըստ Հավլաբարի» պատմվածքում Հավլաբարն ապրում է իր օրենքներով, հոգեբանությամբ, իր ճշտված եսով: Հավլաբարը հայոց թաղ չէ սոսկ, այլ միաձուլյ մի աշխարհ, որի օրենքներն անսասան են թվում. «Հավլաբարում մարդիկ թասիբ են պահում, մամուսի համար իրար աչք են հանում, իրար սպանում են, իրենք իրենց են սպանում... ու սիրում են սպանելու չափ, ատելու չափ ... ու եթե սիրելուց դարդակոխ են լինում. ճարի մի աբասի ու գնա Սարկիսովի գետնափոր գինետունը... ոմանց՝ սիրուց դաղվածներին, շատ էր սիրում Հավլաբարը, գլխի վրա էր պահում, ոմանց ցեխն է կոխում, աչքով-աչք չուներ<sup>7</sup>»:

Հավլաբարը մերժում է իր սրբի, փիլիսոփայի՝ Միրզա Ասատուր Խանի ընդվզումը Հավլաբարի օրենքներին՝ այդ ընթացքում պարզելով իր հոգեբանությունը: Ասատուր Խանը չգիտեր եւ չպիտի իմանար սիրո լեզուն, նա վեր էր երկրայինից, եւ մահկանացուի զգացումը խորթ էր լինելու նրան: Սա միանշանակ, աքսիոմատիկ դրույթ-հոգեբանություն էր, որը ծայրահեղ իրադրության մեջ կարող էր մեծահոգաբար թույլ տալ ծերունագարդ Ասատուրի՝ աղաթով ու ծեսով սերը օրհորդ Փառանծեմի նկատմամբ: Հավլաբարը, մերժելով Ասատուր Խանի սերը, մերժում է Ցեցիլիային, որը խորթ է նրա դիմագծին ու հոգեբանությանը, ուրիշ աշխարհից է: Հավլաբարը մերժում է «Աղաթ» սերը, բայց, լինելով սիրո ծնունդ, հասկանում եւ սիրում է

Ասատուր Խանի եւ Ցեցիլիայի սիրո ծնունդ Վարդիկին. «Ոնց կարող է Հավլաբարը չհասկանալ սերը, ինքը սիրո ծնունդ: Ինչ արած, թող էս մեկն էլ էսպես լինի... Ինչ անենք, որ Ցեցիլիան չի բռնում Հավլաբարի ճաշակին, ի՞նչ անենք, որ մի քիչ մազալու է էդ բոլորը...<sup>8</sup>: Այս արդեն հոգեբանության նոր դրսեւորում էր, որքան էլ ընդհանրական ու անխախտ, այնուամենայնիվ ենթակա է ժամանակի եւ իրադրությունների ամենագորությանը (ինչպես յուրաքանչյուր անհատի հոգեբանությունը):

Հավլաբարը խանդոտ է եւ պատվասեր, մարդկային է, մարդու բնույթի իր չափանիշներն ունեցող: Նա չի ընդունում չարը անգամ գեղարվեստական կերպարի մեջ, խեղդում է Յագոյին, փրկում՝ դերակատարին: Արարքի միջոցով դրսեւորվում է հոգեբանության մի կողմը: Այդ հոգեբանությունն ավելի է ընդգծվում և շեշտվում, երբ Հավլաբարը զարմանում է զարմացած անհասկացողների վրա:

Հավլաբարի հոգեբանության ճանաչումն ավարտվում է նրա կենսափիլիսոփայության ճանաչմամբ. «...Հավլաբարը գիտե, որ եթե մարդ կոտորվում է, ինքն իր խղճին, մամուսին գիջում է, կուլ է տալիս ամեն ինչ, դեռ թույլ է տալիս մի խաբեություն, հետո կուլ է տալիս մի ուրիշ անվայել քայլ, ու ինքն էլ արդեն սուտ կարող է խոսել...»<sup>9</sup>: Մուտը անհարիր է Հավլաբարին, որովհետեւ ապրելու կերպը՝ հոգեբանությունը, սիրո պաշտամունքն է, սերը արյունակցության կրողն է:

Ասատուր Խանի եւ Հավլաբարի հակադրությունը ստեղծվել էր՝ ընդգծելու վերջին ճշմարտությունը, սերն է ճշմարտությունը, մարդկության, հավլաբարցիների արյունակցության միակ ապացույցը: Նույն հակադրությունն էլ միջոց է դառնում պարզելու Հավլաբարի եւ Ասատուր Խանի՝ հիմքում նույնական հոգեբանությունը:

Յուրօրինակ միկրոաշխարհ է նաեւ Ա. Այվազյանի «Եռանկյունու» դարբնոցը: Հինգ Մկրտիչներից կազմված այդ աշխարհը միասնական է, ունի իր չափումները, մասնավորապես ամուսնության եւ կնոջ տեսակի ընտրության հարցում: Ա. Այվազյանը վարպետորեն է ընդգծում այդ խիստ տարբեր ընդհանրությունը. «Ամեն մեկին կոչում էին տարբեր ձեւով: Հայրս ուստա Մուկուչն էր, մյուսը՝ վարպետ Մկրտիչը, երրորդը՝ Մկոն... Չէր կարող



պատահել, որ հորս կոչեին Սկրտիչ կամ վարպետ Մուկուչ, հայոս ուստա Մուկուչն էր: Ոչ մի դեպքում Սկոյին չէին անվանի Մուկուչ կամ Սկրտիչ, նա Մկոն էր: Եվ նրան անվանել Սկրտիչ, միևնույնն էր, թե անվանել մի ուրիշ անունով»<sup>10</sup>: Դարբնոցի հոգեբանությունը շատ խորն է թաղված. հեղինակը, դիմելով լուսանկարի հնարին, շեշտում է յուրաքանչյուրի տարբերությունը, որոնք շրջանակից ներս ընդհանրություն են կազմում: «Եռանկյունում» սերն անմիջապես ճանաչվում է, կարճ խորհրդակցությունը (առանց մանրամասների) բացահայտում է ընդհանուր հոգեբանությունը. սիրում է, պիտի ամուսնանա: Ճանաչման հաջորդ աստիճանը Լյուբայի մերժումն է. Լյուբան չէր տեղավորվում կնոջ իրենց կաղապարի մեջ: Անտարբեր, չնկատող վերաբերմունքը դառնում է նրանց հոգեբանության կրողը: Մերժման դաժանությունը նույնիսկ հակամարդկային է. փորձելով յուրովի փրկել Սկոյին՝ նրանցից յուրաքանչյուրը բացահայտում է իր վերաբերմունք-դատավճիռը: Տեղի է ունենում խզում. Մկոն հակադրվում է Սկրտիչներին՝ իր սիրով: Խզումն էլ դառնում է միկրոաշխարհի ընդհանուր հոգեբանության ամրապնդման եւ այդ աշխարհի անքակտելիության պատճառը: Սկրտիչների սերը եւ գորովը, մարդկայնությունը իրենց մերձավորի ճակատագրի նկատմամբ ընդունում են, ենթարկվում Սկոյի չափուկ շոյթներին: Այս հանգամանքը նպաստում է Սկոյի տեսակի ճանաչմանը, նրա էության, հոգեկան գեղեցկության բացահայտմանը:

Եթե Այվազյանի Հավլաբարը «ես»-ը ճշտած եւ արդեն կազմավորած հոգեբանության կրող է, ապա այլ է Մ. Մնացականյանի՝ գրականություն բերած թաղը «Թաղի զավակը» պատմվածքում: Այստեղ եւս գործում են համատեղ կյանքի ընթացքում առաջացած սովորույթները, հոգեբանության ընդհանրական կողմեր կան, կան նաեւ հակադրություններ: Թաղի հոգեբանությունը ամբողջական է դառնում թորոսիկի հարցում, որի պատճառը խորապես մարդկային է. որդեկորույս մայրերը թորոսիկի մեջ փնտրում են իրենց արյան շարունակությունը: Նրանց միացնողը մայրությունն է, որն էլ դառնում է նրանց հակառակությունների պատճառը: Կանանց հոգեբանության ճանաչումը տեղի է ունենում մի քանի փուլով. բոլորը ջերմ, կարեկից վերաբերմունք ու սեր

ունեին խենթավուն Մարիամի նկատմամբ (Մարիամը հիվանդ էր, ուստի արժանի կարեկցանքի ու ներողամտության), բոլորը մերժում են հղի Մարիամին (բացահայտվում էր զավակների հանցավոր արարքը՝ կապը Մարիամի հետ, որը ամոթալի եւ դատապարտելի է եւ չափտի կաչեր իրենց զավակներին), բոլորը ցանկանում են իրենց ցեղի շարունակությունը ունենալ (զավակների մահից հետո թորոսիկը ցանկալի շարունակություն էր): Այստեղ յուրաքանչյուր կնոջ մեջ ապրում է իր ցավը, վիշտը, սերը: Դրանք էլ ընդհանրացնում, նույն հարթության վրա են դնում որդեկորույս մայրերին: Ընդգծվում է մարդկայինը, մայրականը եւ ընդհանուր հոգեբանությունն էլ պայմանավորվում է այդ հիմքով:

Նույնական է նաեւ հույսի փայփայումն ու մյուսից թաքցնելու ձգտումը: Մյուսի մեջ տեսնելով հակառակորդին՝ ներքին տատանումների միջոցով փորձում են իրենց համոզել, որ թորոսիկն իրենց զավակի արյան կրողն է: Բայց ներքին այդ խռովքը, որոնումը կարող էր հաստատվել միայն ուրիշի կողմից ընդունվելով, ուստի այդ ներքին տառապանքը դառնում է բարձրաձայն արտահայտված կասկած-հավատ: Հոգեբանության փոխանցելիության պատրանք է ստեղծվում, բայց հիմքը ընդհանրականն է՝ մայրությունը եւ մոր հոգեբանությունը: Նման անհատական-ընդհանրական հոգեբանության, դրա փոխանցելիության եւ սեփականման դրսեւորումներ կան նաեւ Մ. Մնացականյանի «Կնանիք» պատմվածքի մեջ: Ամուսիններին պատերազմ ճանապարհած կանայք բռունցքվել են եւ փորձում են միասին հաղթահարել ցավը, կանացի իրենց դժվարությունները՝ հոգեկան եւ մարմնական: Նրանց ընդհանրացնողը հոգսն է, սպասումը և մահվան վտանգը: Նույն հոգեվիճակը և վիճակը դառնում են այն բարերար հողը, որի մեջ նետված սերմն անմիջապես աճում է եւ ընդհանրացնում հոգեբանությունները. «Արի գյուլաչ կպնենք ... ով հաղթեց՝ մարդը բանակից կգա»<sup>11</sup>:

Կոլեկտիվ հոգեբանության միաձուլում չկա այստեղ, բայց կա անհատական հոգեբանությունների ընդհանրական գիծը, որն առաջին հերթին պայմանավորվում է դրանց կրողների կին լինելով եւ իրավունքներով: Ընդհանուրի եւ անհատի հոգեբանությունների հակադրումը դրանց ճանաչման միջոց է դառնում նաեւ Ա. Այվազյանի «Հեքիաթ» պատմվածքի մեջ: Այստեղ



հերոսների ընդհանրությունը խիստ պայմանական է, մարդկային տեսակներն են դառնում դրանց կրողները: Տեսակի ճանաչման հիմքում էլ դրվում է նրանց հոգեբանությունը:

Պատմվածքի սկզբում արդեն ստեղծվում է հերոսի և մյուսների՝ բնիկների տեսակների հակադրությունը: Այսպիսին է հերոսը. «Ամեն ինչ տեսնելու իմ ողորմելի ազահությունը, աշխարհից շատ վերցնելու ցանկությունը, վախը, որ այս բոլորը մնալու է առանց ինձ. այս անգոր, տղայական զգացումի մղմամբ ես գտնվում եմ այստեղ ... այս էլ տես, որ չասես ինչու եկար, որ իմանաս ինչ է աշխարհը, գուցե հասկանաս աշխարհի իմաստությունը, նպատակը: Որ չասես, ավելի շուտ ինքս չասեմ՝ համբա՛կ, անշնորք, բոլորը քեզ ծծեցին, աշխարհում բան չտեսար, ուղղակի թո՛ւյլ ես, թո՛ւյլ... ոչինչ չկարողացար վերցնել, նույնիսկ այն, ինչ ուրիշները չեն ուզում էլ վերցնել, նույնիսկ այն, ինչ միայն քոնն է, քո անխելքության, քո թեթևամտության հետևանքով...»<sup>12</sup>: Բնիկները մերժում են այսպիսի գոյությունը: Նրանց համար լեռների սիրահար, օբյեկտիվ աշխարհը ճանաչելու, սուբյեկտիվացնելու ձգտմամբ մարդը, որը վեր է նյութականից, աշխարհին իրենց նման տիրելու ձգտումից, մերժելի է (հիշենք բուֆետապանին): Դերոսը չէր տեղավորվում նրանց ունեցած կաղապարների մեջ եւ մերժվում էր: Ընդհանրական, չափուկչոռության մեջ ապրելու հոգեբանությունը ստիպում է հերոսին կեղծել, դավաճանել իրեն՝ փորձելով երեւալ նրանց նման: Դանրության կաղապարված հոգեբանությունը նորից դառնում է ֆոն, որի վրա արդեն գծվում է հերոսի հոգեբանության ճանաչման հետագիծը, որն ավելի է ընդգծվում անսովոր իրադրության մեջ՝ մերկ մարդկանց երեւան գալով:

Քաղաքի բնակիչները «չարժվում են», «ցնցում ապրում», մերժում անսովորը, բաց, աշխարհին պարզված մերկության հրաշքը նրանց հոգուն խորթ է: Նրանց էությունը անկարող է դիմագրավել այդ լույսին, ուստի եւ միասնական, անխնա, դաժանաբար պայքարում են: Նրանք վախ են ապրում, որովհետև կարող էր վտանգվել ստեղծված կյանքը, ապրելու կերպը: Այս վախի և ինքնապաշտպանության հոգեբանության մեջ նրանք բացարձակապես նույն

են: Նրանք բռունցքվում են պաշտպանելու համար իրենց՝ պայմանականությունների, կեղծիքների սովոր աշխարհը, ուր ուժը բիրտ եւ անհոգի լինելու մեջ է, ուր իրենց հոգու խաղաղությունն են գտնում: Նրանք ցանկանում են պաշտպանել իրենց տեսակը. «... ուղղակի մարմինները ցույց կտան, իրենց մերկությունը ցույց կտան եւ արդեն հերիք է ... Դետո մեզ էլ կուզենան մերկ տեսնել, ավելի բան պետք չէ ... »<sup>13</sup>:

Մերկ մարդկանց նախճիրի կազմակերպումը եւ հաղթական ավարտը դառնում է բնիկների հոգեկան դատարկության կրողը: Մարդկանց այդ տեսակը իր հոգեբանությամբ պարտվում է, քանի որ ապրում է մերկ ծեր կինը՝ շարունակական վերադարձը դեպի ակունքներ:

Պատմվածքի հերոսի հոգեբանական տիպն էլ է ճշտվում այս իրադրության մեջ: Նա, ընդունելով, հասկանալով մերկ մարդկանց հրաշքը, այնուամենայնիվ ուժ չի գտնում պաշտպանելու նրանց, մա իրեն թույլ է տալիս միայն մտովի ընկերանալ ու պայքարել նրանց համար: Դերոսը, պահելով մտքի ազատությունը, այնուամենայնիվ հոգեբանորեն կաղապարված է, ենթակա ապականված աշխարհի պարտադրած կաղապարներին: Նրանը միայն աշխարհի փիլիսոփայական ընկալումն է, մարդկանց իր չափանիշների մեջ տեղավորելը (սրանք խորն են եւ համամարդկային). «Ես զգացի, որ այսօրվանից նրանք ավելի դաժան կլինեն, ավելի խեղճ կլինեն եւ ավելի դժբախտ կլինեն:

Ես ուզում էի եւ չէի կարողանում պատկերացնել, թե ով պետք է պաշտպանի այս կացիներով, հրացաններով, մեքենաներով մարդկանց ... »<sup>14</sup>:

Մարդկային ցեղը (տոհմը՝ ժառանգականության ընդհանրությամբ) իր մեջ ունի հոգեբանական ընդհանրություն: Այս ընդհանրական հոգեբանության ամենաճշտված արտահայտությունն է: Նրանց ընդհանրացնողը եւ համատեղ կյանքն է, եւ գենը: Ցեղի հոգեբանությունն իր անխախտելի թվացող ընդհանրականությամբ ուժեղ է Դ.Մաթեոսյանի մոտ: Սիմոնի ցեղը միասնական է, մեկը մյուսի մեջ, նույն հարկի տակ, իրենց ապրելու հայտնությամբ զոհ, աշխարհում իրենց բաժին հասածով երջանիկ: Ցեղի ներկայացուցիչների ճանաչմամբ իրենց բաժինը սերն է, իրենց շղկապողը սերն է միմյանց նկատմամբ: Այդ սիրո մեջ են ապրում եւ



շարունակվում: Ցեղի բավարարվածությունը եւ երջանկությունը, միասնականությունը խախտելու է գալիս անհատը՝ Աղունի տեսքով: Դրվում է հակադրության հիմքը: Մարդկային տարբեր հոգեբանությունների կրողներ են հայտնվում նույն հարկի տակ, որը հղի էր պայթյունով: Աղունը մերժում է Սիմոնի ցեղի հոգեբանությունն ու տեսակը. «Չորս պատի մեջ հաց էին ուտում, լվացք էին անում, քնում էին, տրեխները հանում էին, ոտքերը լվանում էին ապին, նանը, Ադամը, Մանեն, Սիմոնը, Արփիկը, Արաքսին, Սիրանը, Գակորը, Զրաչիկը, Պետիկը, Ամայան, Վազգենը, ինքը, Գովրտի բարեկամները, Գսեղի բարեկամները, Խաչերի բարեկամները, միրգ ծախելու եկած ղազախեցիք .... որպեսզի իրիկունները թեյ խմեն ու գյուղի ծաղր անեն. ինչ որ էր, այդպես միատեղ՝ ապրուստ էր եւ ափսոս էր կտոր-կտոր անել, տալ վանքերեցու ձեռքը, եթե վանքերեցին արժանի լիներ՝ այդպես չթի մի շորով չէր գա էն լի աշխարհից ... »<sup>15</sup>:

Նույնն են նաեւ աշխարհի հետ ունեցած իրենց հարաբերություն-ապրելակերպով. «... սրանք խեղճերին ծաղրում են ուզածների չափ, իսկ ուժեղների դեմ մոռանում են, որ լեզու ունեն»<sup>16</sup>:

Ցեղն ունի իր կենսափիլիսոփայությունը, կնոջ իր չափանիշները, որի տեսանկյունից էլ մերժվում է Աղունը. «Կինը կին պիտի լինի, իսկ դու կին չես եղել երեխայիս համար»<sup>17</sup>: Ցեղի հոգեբանությունը մերժում է Աղունի մաքառող տեսակը, աշխարհում իր անկյունը, միայն իրենն ունենալու ձգտումը: Չի ընկալվում անսեր ապրող կնոջ մեծ դժբախտությունը, որը կարիքի եւ հոգսի, սեփականն ստեղծելու մեջ կորցրել է թվացյալ կանացիությունը՝ պահելով միայն կանացի էության հիմքերի հիմքը՝ արարող, օջախ պահող ջիղը:

Ցեղի հոգեբանության դրսևորումները շատ են Մաթեոսյանի արձակում եւ այն նորից ֆոն է դառնում Աղունի, ինչպես նաեւ ցեղի ժառանգորդների ճանաչման համար:

Որո՞նումները բացահայտում են, որ մարդը անպայմանորեն իր վրա է կրում աշխարհի հայացքը եւ միշտ ապրում է այդ հայացքի ներքո՝

ենթարկվելով նրա օրենքներին, բայց միաժամանակ բերելով նաեւ խիստ անձնականը:

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զ.Մաթևոսյան, Ծառերը, Սովետական գրող, Երևան, 1978, էջ 191:
2. Նույն տեղում, էջ 192:
3. Վ. Սուղնեցյան, Ազիզ, Սովետական գրող, Երևան, 1986, էջ 67,69:
4. Նույն տեղում, էջ 224:
5. Վ.Սուղնեցյան, Եկվորներ, Սովետական գրող, Երևան, 1989, էջ 224:
6. Նույն տեղում, էջ 224:
7. Ա.Այվազյան, Եռանկյունի, Սովետական գրող, Երևան, 1983, էջ 336,337:
8. Նույն տեղում, էջ 339:
9. Նույն տեղում, էջ 341:
10. Նույն տեղում էջ 5:
11. Մ.Մնացականյան, Ընտիր երկեր, Սովետական գրող, 1986, էջ149:
12. Ա.Այվազյան, Եռանկյունի, էջ 439,440:
13. Նույն տեղում, էջ 452:
14. Նույն տեղում, էջ 455:
15. Զ.Մաթևոսյան, Ծառերը, էջ 346:
16. Նույն տեղում, էջ 347:
17. Նույն տեղում, էջ 362:



ПЕРЕВОД КАК ФОРМА ЛИТЕРАТУРНЫХ  
ВЗАИМОСВЯЗЕЙ

Художественный перевод на протяжении веков был одним из важнейших форм литературных взаимосвязей. Благодаря ему происходит сближение и взаимообогащение культур разных народов. Не случайно, русский поэт — переводчик Б. Слуцкий в одном из своих стихотворений о переводе писал так:

Работаю с неслыханной охотою  
Я только потому над переводами,  
Что переводы кажутся пехотою,  
Штурмующей вражду между народами.  
Перевожу смелее все и бережней  
И старый ямб, и вольный стих теперешний.  
Как в Индию зерно для голодающих,  
Перевожу правдивых и дерзающих.<sup>1</sup>

Переводы, в свою очередь, влияют на литературу, в которую входят. На этот факт в свое время указал русский поэт Олег Дмитриев, который писал: "Переводы много берут у поэта. Но немало и дают. Борясь с сопротивлением материала, не лезущим в рамки западной формы (особенно при переводе с близких языков), поэт расширяет свой словарь, овладевает новыми ритмами, обретает новые приемы в обращении со словом. Переводческая работа чаще стимулирует рост мастерства, обогащает личность автора, ибо любое творческое общение с иноязычным поэтом, с его особенным миром не проходит

<sup>1</sup> Л. Мкртчян. Аветик Исаакян и русская литература. Ереван, 1963 г., с. 113.

бесследно".<sup>1</sup>

В России развитая переводческая деятельность существовала уже в эпоху Киевской Руси, когда на русский язык были переведены произведения с латинского, греческого, немецкого и других языков. В годы правления Петра I количество переводов значительно увеличилось. Известен указ Петра I, в котором он выступает против дословного перевода, чтобы не затемнять смысла оригинала.

Благодаря переводам В. К. Тредьяковского, А. Д. Кантемира, М. В. Ломоносова, А. Д. Сумарокова русский читатель имел возможность ознакомиться с произведениями европейских писателей. С 1768 года по 1788 год в России существовало состоящее из 114 членов общество переводчиков, в которое входил А. Н. Радищев. В этот же период проводились своеобразные поэтические состязания в переводе. Таково было, например, состязание между Ломоносовым и Сумароковым в переводе оды Ж. Б. Руссо "На счастье". В XVIII веке в России уже были сформированы первые теоретические рассуждения по проблеме перевода. Одним из важнейших принципов того времени было соблюдение стиля оригинала. Отметим, что и по сей день этот принцип остается одним из важнейших требований в переводе. Расцвет переводческой деятельности в России знаменовала собой эпоха Пушкина и декабристов, когда на русский язык были переведены произведения не только европейских, но и восточных писателей.

Значительную роль в развитии теории художественного перевода, в свое время, имели работы В. Г. Белинского, Н. Г. Чернышевского, Н. А. Добролюбова, которые указали в них на основные принципы перевода.

Конец XIX — начало XX веков в переводческой деятельности является временем известного усиления интереса к

<sup>1</sup> В. П. Рагойша. Проблемы перевода с близкородственных языков. Минск, 1980г., с. 21.



передаче формы переводимых произведений. Подъему культуры переводов содействовал новый переводческий коллектив, созданный в 30-х гг. И. А. Кашкиным. В него вошли лучшие поэты-переводчики, среди которых — П. А. Антокольский, Б. Л. Пастернак, Д. С. Самойлов, С. Я. Маршак, Л. В. Гинзбург и другие. Благодаря их переводам читатель познакомился с украинской, таджикской, грузинской, армянской и другими литературами.

Армянская литература на протяжении целых десятилетий являлась объектом внимания выдающихся русских поэтов-переводчиков, которые не только оценили и полюбили ее, но и с большим вдохновением стали переводить ее на русский язык.

Армянская литература также славится своими древними переводческими традициями. Начиная с V века на армянский язык стали переводиться произведения с греческого, ассирийского, арабского и других языков. На протяжении целых веков армянские переводчики переводили лучшие достижения европейских и русских писателей. Русская культура и литература всегда были объектом внимания армянских переводчиков, которую они переводили с большим переводческим мастерством. Так, достаточно вспомнить переводы Ов. Туманяна, П. Севака, В. Давтяна, А. Сагияна, Г. Эмина и многих других, которым удалось в своих переводах передать мысли, дух, настроение русских писателей.

В начале XX века В. Брюсов, познакомившись с армянской поэзией, писал: "Знакомство с армянской поэзией должно быть обязательно для каждого образованного человека, как обязательно для него знакомство с эллинскими трагиками, с "комедией" Данте, драмами Шекспира, поэмами Виктора Гюго".<sup>1</sup>

Большим культурным событием для двух народов было издание антологии "Поэзия Армении с древнейших времен до

наших дней", вышедшей в свет в 1916 году под редакцией и со вступительной статьей Валерия Брюсова. Отметим, что многие переводы В. Брюсова и А. Блока из антологии, до сих пор являются образцом высокого переводческого искусства.

Расцвет русско-армянских литературных связей наблюдается, в особенности, с 50-ых по 80-ые годы XX века, когда на русский язык с большим профессионализмом были переведены лучшие произведения таких крупных мастеров поэзии, как Ов. Туманян, Ав. Исаакян, В. Терьян, Е. Чаренц, П.Севак, Ов. Шираз, А. Сагиян, С. Капутикян и многие другие.

За последние годы важность изучения проблем перевода все более возрастает. Издаются многочисленные серьезные исследования, посвященные вопросам теории, истории и практики художественного перевода. Особого внимания заслуживают следующие книги: Федоров А. В., Основы общей теории перевода, 3 изд., М. 1968 г., Кашкин И. А., Для читателей современника, М., 1977; Егиазарян А. К., Поэт и перевод. Ереван, 1979; Гачечиладзе Г. Р., Художественный перевод и литературные взаимосвязи, 2 изд. М. 1980 г; Рагойша В. П., Проблемы перевода с близкородственных языков. Минск, 1980 и т. д.

Г. Эмин был одним из современных армянских поэтов, который приветствовал и высоко оценивал работу русских переводчиков. Так, в статье "Со словом, как с оружием"<sup>1</sup> он отмечал, что армянская поэзия была богата всегда, но именно в наши дни, благодаря русским переводам, она зазвучала в полный голос и стала известна всему миру.

Поэзия Г. Эмина благодаря русским переводам явилась своеобразным ключом к познанию Армении, ее истории и народа. Русские читатели воспринимали ее с большим интересом, находя в ней отголоски своих мыслей и чувств. Свидетельством этому может послужить статья А. Катеринина "О самом личном" ("Литературная Россия", 1980 г., 11 апреля), которая была посвящена творческому вечеру Г. Эмина в Москве,

<sup>1</sup> Поэзия Армении. Издание московского армянского комитета. М., 1916, с.13.



состоявшемуся в концертной студии Останкино. На этом вечере Г. Эмин прочел свои лучшие стихотворения об Армении и ее народе. Публика с большим вниманием слушала выступление Г. Эмина и тех русских поэтов, которые переводили его поэзию. И реакция зала, по замечанию автора статьи, подтвердила строгие слова Г. Эмина о том, что «книга нужной быть должна, как хлеб, дающийся трудами поколений...»<sup>1</sup>

Отметим, что и сегодня высказывание Г. Эмина не потеряло своей силы. И хочется надеяться, что традиция литературных связей между русским и армянским народом не останется в памяти о прошлом тысячелетии, а будет жить и развиваться со временем и лучшие достижения этих литератур будут переводиться и впредь.

<sup>1</sup> Литературная Россия. 1980 г., 11 апреля.

ՃՇՄԱՐԻՏ ՏԱՂԱՆԴԻ ԵՐԱՆԱՅՐԻՔԸ  
(Վարդան Գրիգորյանի «Հավերժական վերադարձ»  
վիպակը)

«Հավերժական վերադարձ» պատմական վիպակը Վարդան Գրիգորյանի անդրանիկ փորձն էր այդ ժանրի ոլորտում, եւ հենց առաջին փորձից երեւաց ճշմարիտ տաղանդը: Եճմարիտ եւ անսովոր: Նա խիզախեց հայ պատմավեպին տալ խոհափիլիսոփայական ուղղվածություն, հերոսների կերտման սկզբունքների մեջ բերել թարմություն, սյուժետային գծերի ծավալման ու կառուցվածքային ձեւերի որոնումներում հայտնաբերել նոր միջոցներ: Այս ամենով հանդերձ Վ. Գրիգորյանը հավատարիմ մնաց հայ դասական պատմավեպի մի կենսական առանձնահատկությանը՝ օրերի հրատապ խնդիրներին արծագանքելու, արդիական սրություն ապահովելու, պատմության փիլիսոփայությունը նորօրյա բովանդակությամբ իմաստավորելու պահանջին: Այս առումով վիպասանը մի ներքին զգաստություն է ցուցաբերել՝ մասնավորապես մեր վերջին երկու տասնամյակների հասարակական ու քաղաքական կյանքը «ալեհեր անցյալի» սուր իրադարձությունների համապատկերում ներկայացնելու եւ դրանց գնահատականը իր հերոսների միջոցով տալու համար: Պատմաբանի, գրողի եւ քաղաքացու ներքնատեսությամբ նա խորաթափանց վերլուծություններ է կատարել եւ անհերքելի տրամաբանությամբ հաստատել, որ, ցավոք, դարերի դառը փորձերից ու ծանր փորձություններից հայը դասեր չքաղեց, որ մեր իսկ մեղքով կրած պատմական թանկ կորուստները շարունակական ընթացք ունեցան՝ ասես «հավերժական վերադարձի» ճակատագրական նզովք թողնելով սերունդներին: Վ. Գրիգորյանի պատմագեղարվեստական փիլիսոփայության գլխավոր խորհուրդը սա է:

«Հավերժական վերադարձի» սյուժետային հետազիծը առանձնապես բարդ կառուցվածք չի պարտադրել, սակայն ընթանում է խիստ ինտրիգային զարգացմամբ՝ ներառելով անսպասելի ու խորհրդավոր հանգուցալուծումներ:



Վ. Գրիգորյանը կարողացել է 7-րդ դարի խռովահույզ ու դժվարին ժամանակներից առանձնացնել քիչ հայտնի, սակայն պատմական արժեքով նշանակալից ու յուրահատուկ դրվագներ, որոնք այնքան բնորոշ լինելով մեր հեռավոր անցյալի խճանկարին, նույնքան ճանաչողական իմաստուն արժեք ունեն արդիական կտրվածքով:

Կոստանդնուպոլսից, բյուզանդական կայսեր վերին հրամանով, պավլիկյանների դեմ կռվելու եւ նրանց շարժումը վերացնելու նպատակով Չայաստան է գալիս քաջ զորավար Սիմեոնը՝ հինգհազարանոց զորքով: Սեփական ուժերի նկատմամբ ինքնավստահ, մի քանի պատերազմներում տարած հաղթանակներով փառաբանված երիտասարդ Սիմեոնը Գրիգորյանի սեղմ ու արտահայտիչ վրձնահարվածներով ներկայանում է որպես Ապենինյան թերակղզում, Բալկաններում, բարբարոսների դեմ վարած մարտերի անպարտելի հրամանատար, որի զինվորական ուղին միայն վերելք էր, «զերծ սայթաքումներից ու դադարից»: Նա Չերակլիոս Երկրորդ կայսեր՝ պարսիկների դեմ վարած հաղթական պատերազմների հերոսի թոռ էր, սենատորի որդի, զինվորական փայլուն կրթություն էր ստացել, տասնութ տարեկանում դարձել վաշտապետ, երեք տարի անց գնդի հրամանատար: Տարած հաղթանակները նշվել էին Սուրբ Առֆիայի տաճարում նրա պատվին պատարագ մատուցելով, ուր «խաչված Չիսուսի մարմարյա արձանի առջի ծունր դրած Սիմեոնը զգում էր կայսեր հայրական, ժողովրդի հիացմունքով լի հայացքները: Սեւ, պարզ ու համեստ պարեգոտն ու թավ միրուքը նրան հոգեւորականի տեսք էին տվել, եւ եթե չլիներ կողքից կախված սուրը, կարելի էր կարծել, թե եկեղեցու առյուծի առջի վարդապետ ձեռնադրվող երիտասարդ արեղա էր կանգնած: Բուրումնավետ խնկի կապտավուն ծխով պարուրված Սիմեոնը կարծես խորհրդանշում էր խարխուլի հզորությունը խաչի եւ սրի միասնությամբ պահպանել ձգտող Բյուզանդական կայսրությունը»:

«Չավերժական վերադարձ» վիպակի մուտքային հատվածներում գլխավոր հերոսի փոքր-ինչ գունազարդումով այսպիսի պատկերումը պայմանավորված է հեղինակի գեղարվեստական նպատակայնությամբ: Նա հենց սկզբից գործողությունների դաշտ է բերում Սիմեոնին՝ վիպակի կենտրոնածիղ կերպարին, մինչեւ ավարտը պահում թե տեսանելի՝ իր անմիջական մասնակցությամբ կատարվող իրադարձությունների եւ թե ոչ իր ներկայությամբ, սակայն ենթա-

տեքստում միշտ իր գոյությունը ենթադրող դեպքերի հանգուցակետերում: Սիմեոնն է վիպակի գեղարվեստական գաղափարաբանության առանցքը կազմող մասշտաբային հերոսը: Մյուսները, որքան էլ կարեւոր, հաջող լուծումներով ավարտուն ու առարկայական, առավելապես լրացուցիչ դերակատարում ունեն:

Փառքի հասնելուց հետո, երեք տարի պալատական կյանքից անմիջապես մեկնում է իր համար անհայտ, անճանաչ մի երկիր եւ ապրում էր խառն ու հակասական զգացումներով: Մի կողմից՝ արդեն հոգնել էր պալատականների միջավայրից ու ընկերակցությունից, ամենօրյա բանսարկությունները, սենատորների դավադրությունները անտանելի էին նրա ազնիվ խառնվածքին, մյուս կողմից՝ մի ներքին վախ ներշնչում էր նրան, թե կարող է կորցնել ամեն ինչ՝ փառքը, դիրքը, կյանքը: Սիմեոնը նախկինում այդպիսի զգացումներ չէր ունեցել, թեկուզ այնուամենայնիվ ուրախ էր, որ հեռանում էր պալատից եւ մտնում էր զինվորական տարերքի մեջ: Վիպասանն այս կերպ է ներկայացնում նրա հոգեկան ապրումները. «Եվ այժմ, երբ կրկին տեսնում էր զինվորների մռայլ, բայց հնազանդ կերպարանքները, զենքերի փայլը, լուծ միերի վրձնյունն ու զրահների զնգոցը, իրեն վերակենդանացած էր զգում: Անցած-զնացած օրերի արթնացած կարոտը սեղմում էր կոկորդը, շտապում էր ժամ առաջ հասնել Կիբոսսա ամրոցը, եւ միայն բնատուր զգուշությունն էր զսպում անհամբերությունը: Նա հրաժարվել էր կարավանային բանուկ ճանապարհից, ընտրել բնակավայրերից հեռու ընկած այդ ուղին, որպեսզի աննկատելի մնար բանակի առաջխաղացումը, անսպասելիորեն հայտնվեր Կիբոսսայի մատույցներում եւ հանկարծահաս գրոհով մեկերկու օրում վերցներ ամրոցը, հիմնահատակ ոչնչացներ պավլիկյանը որջը»:

Սիմեոնին հաջողվում է հասնել նպատակին, ճիշտ է, ոչ այն դյուրինությամբ, ինչպես կարծում էր, սակայն կոտրելով Կիբոսսա ամրոցում պաշարվածների համառ դիմադրությունը՝ ինչպես Կոստանդին Չորրորդ կայսեր հրամանում էր ասված՝ գրավում է ամրոցը, ջախջախում «պավլիկյանների պիղծ աղանդը», ցրում նրանց համայնքը, մահապատժի ենթարկում առաջնորդին՝ Կոստանդին-Սիդվանոսին:

Սիմեոնի կերպարի ներքին բարդությունը գեղարվեստական աներկբա համոզությամբ է տվել Վ. Գրիգորյանը՝ ցուցաբերելով իսկական տաղանդ՝ դեպ-



քերի զարգացման, քաղաքական հակասությունների պատկերման եւ, ամենազլխավորը՝ մարդկային ու հոգեբանական կնճռոտ համգույցներում հերոսի բնավորության դինամիկան եւ դրամատիզմը մինչեւ վերջ պահպանելու համար:

Բանն այն է, որ Սիմեոնը չգիտեր իր ինքնությունը, ըստ էության չէր ճանաչում իրեն. ազգությամբ հայ էր, շատ փոքր հասակում նրան գերել էին Կոստաս երկրորդի զինվորները եւ որդեգրվել էր Դոմենտիանոս Քսանիասի կողմից: Նա կրում էր այդ ազգանունը, իսկ իրականում՝ հայրը կռվել էր Թեոդորոս Ռչտունու բանակում, մայրը զոհվել գերեվարության ճանապարհին: Այդ մասին առաջին անգամ Սիմեոնը լսել է Կոստանդնուպոլսում իր ծառաներից մեկի՝ Ներսեսի խոստովանությունից, երբ վերջինս փորձում էր դուրս պրծնել արաբների կողմից պաշարված քաղաքից: Սիմեոնն արդեն զորական հրամանատար էր եւ պատժեց ծառային՝ կարծելով, թե մաշկը փրկելու համար էր մոզոնել այդ լուրը: Սակայն տարիների հետ ծառայի ասածը կասկածի ձեռով պահել է հոգում եւ առանձին պահերի իր մտորումներում կրկին ու կրկին վերադարձել դրան: Հայաստանում, Կիբոսսա ամրոցն ավերելիս՝ Սիմեոնը դարձյալ ոչ միայն անդրադառնում է դրան, այլեւ փշուր-փշուր բեկորների պես նրա մտապատկերներում արթնանում են վաղ մանկության տարիներից ինչ-ինչ հուշեր, սովերներ, առանձին ուրվագծեր: Տեղա՞նքը, ծանոթ վայրե՞րն են վերակենդանացնում այդ ամենը, թե՞ արյան կանչն է աներեւույթ ուժով ձայնում նրան: Սակայն նա պետք է կատարեր Բյուզանդիայի կայսեր հրամանը եւ ոչ մի բանի առաջ կանգ չի առնում՝ իրագործելու այն: Պավլիկյանների շարժման առաջնորդ Կոստանդին-Սիդվանոսը, որին մահվան է դատապարտում Սիմեոնը, վերջինիս հարազատ հայրն էր: Ծշմարտությունը վերջապես հասնում է զորավարին, բայց արդեն ուշ էր: Նա ապրում է մեծ հուզումներ, ներքին խռովք, հոգեբանական բեկում. վերականգնում է Կիբոսսա ամրոցը, սակայն նախախնամությունը մի այլ ճակատագիր էր սահմանել Սիմեոնին ու նրա վերակերտած Ամրոցին: Վերստին ավերվում ու կործանվում է Կիբոսսան, բոցի ու ծխի մեջ մոխրանում, անհետանում է Սիմեոնը, իսկ ժամանակը «հավերժության չխունացող էջերում» արձանագրում է նրա զարմանալի կյանքի առասպելը:

Սա է քիչ խորհրդավոր, տեղ-տեղ լեգենդաչիուս սյուժետային սեղմ այն գիծը, որի վրա Վարդան Գրիգորյանը խարսխել է «Հավերժական վերադարձ»

վիպակի ամբողջական կառույցը: Այն բաղկացած է չորս մասից, որոնցից յուրաքանչյուրը խորագրված է վիպական շղթայում կենտրոնական դեր ունեցող երեք հերոսների անուններով՝ «Սիմեոն», «Կոստանդին», «Հուստոս» եւ կրկին «Սիմեոն-Տիտոս»: Սակայն էականը՝ Վարդան Գրիգորյան արձակագիր-վիպասանի ուժը՝ սյուժետային այս ճյուղերի զարգացման դինամիկան եւ պատմության փիլիսոփայությունը բացահայտելու մեջ է, ստեղծագործական տաղանդի վարպետության մեջ, որով շունչ ու մարմին են առել հարյուրամյակներ առաջ տեղի ունեցած իրադարձություններն ու հերոսները եւ իրենցով ներկա դարձրել պատմական անցյալը:

Սիմեոնը ֆանատիկոս է կայսեր հանդեպ ունեցած նվիրվածության ու զինվորականի իր պարտքի մեջ: Ամեն ինչ անում է, որպեսզի բանակի մեջ որեւէ դժգոհություն կամ խռովություն չլինի՝ լավ իմանալով, որ զանազան պատճառներ՝ ինչպես ցուրտը, մթերքի պակասը, հոգնածությունը, զինվորների նկատմամբ անտարբերությունը կարող են բողոքի տեղիք տալ ու բարոյալքել նրանց: Խրախուսում ու ոգելորում էր զինվորներին, ձգտում խորտակել ամեն մի, նույնիսկ փոքր պատենչ իր եւ զորքի միջեւ: Նա իր կոչերում վստահ է, հետեւողական ու խիստ. «-Մեզ ոչ սովորական, այլ սրբազան պատերազմ է սպասվում մեր սուրբ հավատի մաքրության պահպանման համար: Այդ պավլիկյան կոչվածները այրում են եկեղեցիները, խեղդամահ անում քահանաներին, շնանում Տիրոջ պատկերի առաջ: Սակայն դրանք չեն ամենասարսափելին: Նրանք գողանում են ուղղափառ քրիստոնյաների օրորոցային երեխաներին եւ իրենց գիշերային խրախճանքների ժամանակ, շրջան կազմելով, այնքան ձեռքից ձեռք մետում, մինչեւ թշվառ մանկիկը շունչը փչում է: Ում ձեռքին երեխան հոգին ավանդում է, նրան համարում են իրենց աստծո, ավելի շատ՝ սատանայի ընտրյալը, որին էլ իրավունք է վերապահվում սեղանակիցների միջեւ բաժանել մեռած մանկան դեռես տաք մարմինը»: Այսպիսի դաժան պատկերներով է Սիմեոնը զինվորների մեջ զայրույթ ու ատելություն սերմանում պավլիկյանների դեմ գրգռելով նրանց ու հեշտացնելով իր գործը:

Առհասարակ Վ. Գրիգորյանը զարմանալի խնամքով ու հետզհետե նոր գունավորումներով է բացում հերոսներին: Այս իմաստով Սիմեոնի կերպարը չափազանց բնորոշ է: Նրան ճշմարտացի կերտելու համար Վարդան Գրիգորյանին



հարկ է եղել լավ իմանալու բյուզանդական կայսրության տվյալ ժամանակի պատմությունը, նաև 7-րդ դարի հայոց պատմությունը, պավլիկյան աղանդի սկզբունքներն ու շարժման էությունը, սրանց հետ կապված այլեայլ նյութեր: Պավլիկյան շարժման մասին արժանահիշատակ է. Տեր-Սինասյանը «Միջնադարյան աղանդների ծագման եւ զարգացման պատմությունից» աշխատության մեջ նշում է բացի հին բյուզանդական եւ հայկական աղբյուրներից, մեր օրերում ստեղծված գիտական մի շարք ուսումնասիրություններ (Ստ. Սելիք-Բախշյանի, Յր. Բարթիկյանի, Կ. Յուզբաշյանի եւ այլոց հոդվածներն ու մեմագրական գործերը): Դրանցից առանձնապես ընդգծում է Յր. Բարթիկյանի՝ մեր անվանի բյուզանդագետ պատմաբանի «Источники для изучения истории Павликнианского движения» (Երեւան, 1961) մեմագրական հետազոտությունը եւ «Պավլիկյան շարժման մի քանի աղբյուրների գնահատման շուրջը», «Պավլիկյան համայնքի կազմակերպության հարցի շուրջը եւ ուրիշ մի քանի հոդվածներ: Յր. Բարթիկյանի սույն աշխատանքները արժեքավոր են ոչ միայն աղբյուրագիտական առումով, հայ եւ օտար աղբյուրներից քաղած ու դրանց մասին հարուստ տեղեկություններով, պավլիկյան շարժման վերաբերյալ բյուզանդական աղբյուրների ամբողջական թարգմանություններով, այլեւ պատմաշրջանի հայ իրականության քաղաքական կացության, պավլիկյան շարժման առանձնահատկությունների, անվանակոչության գիտական բնութագրումներով:

Վարդան Գրիգորյանն ուսումնասիրել է պավլիկյանների մասին ամբողջ գիտական գրականությունը, Յր. Բարթիկյանի կողմից հետազոտված Պետրոս Սիկիլացու «Օգտակար պատմություն» գիրքը, որից էլ «Հավերժական վերադարձ» ստեղծագործության բոլոր չորս մասերին բնական է դարձրել հեղինակից քաղած հավաստի տվյալներ՝ Սիմեոնին պավլիկյանների դեմ ուղարկելու բյուզանդական կայսեր վճռի, Կոստանդին-Սիղվանոսին Պողոս առաքյալին հավասար պավլիկյանների կողմից մեծարման, Հուստոսի, Սիմեոնի՝ երեք տարի անց Կիբոսսա վերադառնալու, Կոստանդինի աշակերտներին ժողովելու եւ ամբողջ պավլիկյան աղանդի առաջնորդը դառնալու մասին: Այսինքն՝ Վ. Գրիգորյանը հաստատում է, որ պատմագեղարվեստական երկուսն օգտագործված դեմքերն ու դեպքերը ոչ թե հնարածին են, այլ հավաստի ու վավերական: Սինչեւ այսօր մեր արծակում քիչ չըջանառություն գտած 7-րդ դարի պատմա-

կան իրադարձություններին վիպասանը տվել է լայն շնչառություն, ըստ իր պատմահայեցության՝ հերոսների գործունեությունը վերակենդանացրել մասշտաբային ծավալներում, նրանց կերպարներում շաղախել անցյալի ու արդիականության հետաքրքիր զուգահեռներ:

Ըստ է. Տեր-Սինասյանի՝ պավլիկյանները «չէին ընդունում... եկեղեցու նվիրապետությունը, պաշտամունքն ու խորհուրդները եւ նրանց նշխարների պաշտամունքը, առանձնապես նաև պատկերահարգություն»<sup>1</sup>: Պավլիկյան աղանդավորները մի աստծուն չէին համարում այս աշխարհի տեր ու արարիչ, գտնում էին, որ նա երկնային հայր է, «այս աշխարհում իշխանություն չունի, բայց ունենալու է ապագայում, իսկ մյուս աստծուն մենք համարում ենք աշխարհի ստեղծող, որ իշխանություն ունի այս աշխարհի վրա: Իսկ հոռոմները միեւնույն աստծուն համարում են եւ երկնային հայր, եւ ամբողջ աշխարհի արարիչ»<sup>2</sup>: Պավլիկյանների ուսմունքը անարգում է Սուրբ աստվածածնին, Մարիամին չի համարում Հիսուսի մայր, չի ընդունում խաչը եւ այլն:

Վարդան Գրիգորյանի հերոսը՝ Սիմեոնը, իր զինվորներին ուղղված խոսքում, ինչպես երեսաց վերոհիշյալ քաղվածից, հենց այդ մեղքերի մեջ է մեղադրում պավլիկյաններին, պահանջում ոչնչացնել հավատաւիոյս աղանդավորներին: Վիպասանի մի էական հատկանիշը հերոս-ժամանակի հարաբերության մեջ ճշմարտության բացահայտումն է, պատմության ոգուն հարազատ մնալը: Վ. Գրիգորյանը չի մոռենացնում երեսույթները, ի սեր արդիականության թույլ չի տալիս պատմական դեպքերի ու հերոսների կտրուկ շեղումներ ժամանակից ու միջավայրից: Եվ գրողական իսկատիպ տաղանդը երեւում է այդտեղ. խորապես պահպանել պատմականությունը, սակայն արծագանքել իր ժամանակի կենսական խնդիրներին, ստեղծագործել պատմական թեմատիկայի ժանրերում՝ մնալով արդիական արվեստագետ:

«Հավերժական վերադարձ» վիպակի առաջին մասում փայլուն ծելով է նկարագրված Սիմեոնի գորքի մուտքը Կողոմիա եւ նրա տեր Փիլոնի հետ գորավարի հարաբերությունը: Փոքրասիական այդ քաղաքը Կոստանդնուպոլսից

<sup>1</sup>Ե.Գ. Տեր-Սինասյան, «Միջնադարյան աղանդների ծագման եւ զարգացման պատմությունից», Երեւան, 1968, էջ 116:

<sup>2</sup>Նույն տեղում, էջ 121:



Կիրոսսա տանող ճանապարհին էր, եւ զորավարը մեծ նշանակություն էր տալիս այդ քաղաքին Կիրոսսա ամրոցի վերացման գործում:

Վարդան Գրիգորյանի դիտողականությունը, մանրամասների նրբությունն ու դրանց համադրումը, գեղարվեստական սինթեզի ենթարկելու եւ ամբողջական տպավորություն ստեղծելու հմտությունը հրաշալի ձեւով երեւում է այդ հատվածում: Եվ այդպես է գրեթե ամբողջ ստեղծագործության մեջ, յուրաքանչ-յուր գլխում, նկարագրական բոլոր տեսարաններում: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե գործ ունենք գրական մեծ փորձառության տեր, երկար ճանապարհ կտրած արվեստագետի հետ: Սա, հիրավի, ճշմարիտ տաղանդի պարագայում միայն կարող է լինել: Իսկ որ Վ. Գրիգորյանը գրականություն մտավ նման տաղանդի կնիքով՝ կասկածից վեր է:

Վ. Գրիգորյանը վիպական հերոսներին այնպես է «տեղաբաշխում» սյուժետային զարգացման մեջ, որ, անկախ այն բանից, թե ինչպիսի դեր կամ ընդգրկում կունենան գործողությունների ծավալումներում, հնարավորինս նպաստեն ժամանակի ու պատմության դիմազօի ամբողջացմանը: Ստեղծագործական առաջին փորձերից՝ արձակագրին գրական հերոսը հետաքրքրել է, նախ, իբրեւ պատմության ու ժամանակի վերաբերյալ գաղափարական ու գեղագիտական որոշակի հայեցության կրող ու արտահայտիչ, իբրեւ իր իսկ հեղինակի դիրքորոշման սիմվոլ: Այսինքն՝ հերոսը հանդես է գալիս միանգամայն իմաստավորված, աշխարհի ու սեփական անձի նկատմամբ ձեւավորված վերաբերմունքով ու կողմնորոշմամբ: Եթե խոսքը գնում է գլխավոր հերոսների մասին, Վ. Գրիգորյանն առավել եւս շահագրգիռ ու հետեւողական է իր այդ դիրքորոշման մեջ: Սիմեոնը նրա պատմափիլիսոփայության կենտրոնացումն է «Հավերժական վերադարձ» վիպակում, Գայլ Արշավիրը՝ «Դար կորստյան» վեպում: Երկու հերոսներն էլ ստուգապես հաստատում են, թե հեղինակը որքան սկզբունքային կարեւորություն էր տալիս հերոսի ընկալման, նրա կերպավորման, հերոսի միջոցով հասարակական-քաղաքական, մարդկային ու բարոյական հարաբերությունները բացահայտելու պրոբլեմներին: Եվ այդ սկզբունքային մոտեցումն էլ պայմանավորել է հերոսի գեղարվեստական բնութագրման ու մեկնաբանության առանձնահատուկ մեթոդի ու արտահայտչական հնարանքների ընտրություն:

Սիմեոնն իր առաքելության ընթացքում տեղի ունեցող ոչ մի իրադարձության նկատմամբ հանգիստ կամ անտարբեր չի կարող մնալ: Նա այնպես ու այնքան կլանված է իր արշավանքով, պավլիկյանների դեմ մոլեգնությունը եւ Կիրոսսա ամրոցի խորտակման կիրքն այնպիսի ուժգնությամբ է համակել նրան, որ դրանից դուրս ոչ մի բան չի կարող շեղել նրա ուշադրությունը, ամեն մի այլ երեւոյթի պատճառ կամ հետեւանք որոնում է իր առաքելության կտրվածքով: Փիլոնի պալատում անցկացրած ժամերը, Կողոնիա քաղաքի սովյալների բողոքն ու գրոհը, առյուծների հարձակումը ամբոխի վրա, որոնց նկարագրության մեջ փայլուն կերպով երեւում է Վ. Գրիգորյանի արվեստի պլաստիկան, Փիլոնի դստեր՝ Իրենեի հայտնությունը գործողությունների մեջ եւ այլ մանրամասներ ստեղծված Սիմեոնի կերպարի բացահայտման զուգահեռականով, վկայում են, թե ինչպես է հերոսը շարունակ մնում վիպասանի դիտարկումների սեւեռակետում, որքան ներհուն ու ինքնավերլուծական խոհականություն է դրսեւորում երեւոյթների նկատմամբ. «Տեղում մեխված իր ձիու հետ ինքն էլ արձանացած, Սիմեոնը նայում էր այդ դաժան, ներքին հուսահատությունից պոռթկած, ինքնառչնչացման մոլուցքով բռնված անմիտ գոտեմարտին: «Ինչո՞ւ չեմ միջամտում,- մտածում էր Սիմեոնը,- չեմ փորձում դադարեցնել այս վայրենի գոտեմարտը: Ինչո՞վ եմ տարբերվում նմանօրինակ տեսարաններով զվարճացող հեթանոս ամբոխից: Մի՞թե պարզապես չեմ համարձակվում վերջ տալ խռովարարների դեմ արձակված գազանին, քանի դեռ նա չի հարձակվել կայսերական բանակի զինվորների վրա: Սպասողական դիրք եմ բռնել, որպեսզի պատասխանատվություն չվերցնեմ վրաս, առիթ չտամ մեղադրվելու խռովարարներին նպաստելու հանցանքում, սպասում եմ մինչեւ հասունացած դեպքերը առջիս բացեն անպայման, միակ գործողության ճանապարհը...»: Վիպասանի գրչի տակ կենդանություն են ստանում հերոսի խոհերը, ներաշխարհի ամեն մի գրգիռ, բնավորության տիպական գծերը: Օբյեկտիվորեն մինչեւ Կիրոսսա հասնելը եւ այն ավերելը՝ Սիմոնի կերպարն արդեն սինթեզում էր այնպիսի հատկանշական առանձնահատկություններ, որոնք բնութագրում են ուժեղ, խոհուն ու փորձառու զորավարի անհատականությունը: Բայց եւ անձնական ճակատագրի դրամատիզմը: Այդ առանձնահատկությունների գեղարվեստական խորացումը դառնում է Վ. Գրիգորյանի վիպական ֆարսիլայում առանցքա-



յին եւ, գործողությունների ընթացքում միախուսվելով պատկերավորման այլ միջոցների հետ, ավելի մեծ դաշտ ու հնարավորություն ստեղծելով հերոսի ինքնության ու ամենատարբեր իրադրություններում ինքնաբացահայտման համար:

Խոսելով Ֆեոդոր Դոստոևսկու կերպարաստեղծման հնարանքների մասին, նրա պոետիկայի լավագույն մեկնաբան Մ. Բախտինը գրում է. «Դոստոևսկին իր հերոսների արտաքին դիմանկարները տալիս է հաճախ եւ հեղինակի կողմից, պատմությունը վարողի կողմից, եւ ուրիշ գործող անձերի կողմից: Սակայն այդ արտաքին դիմանկարները չեն կրում իրենց մեջ հերոսի ավարտուն ֆունկցիաները, չեն ստեղծում ամուր եւ կանխորոշող կերպար: Հերոսի այս կամ այն գծի ֆունկցիաները կախված չեն, իհարկե, միայն տվյալ գծի բացահայտման գեղարվեստական հասարակ մեթոդներից (հերոսի ինքնաբնութագրման ճանապարհով, հեղինակի կողմից, անուղղակի ճանապարհով եւ այլն)<sup>3</sup>: Անվանի գրականագետն ու պոետիկայի տեսաբանը գտնում է, որ հերոսի ամբողջական կերպարը կայանում է բազում արտահայտչաձևերի ու գեղարվեստական պատկերավորման միջոցների համադրական մեթոդով: Եականն այն է, որ գրողը կարողանա իր գեղագիտական ու գաղափարական նպատակամիտումը այդ մեթոդի շնորհիվ հասցնի հերոսի խորքային լուծման:

Վարդան Գրիգորյանը, անշուշտ, չի անտեսում հերոսների արտաքին դիմանկարների ռեյինֆային գծագրությունը հեղինակային հուշումներով, բուն կերպարների ինքնաբացահայտումներով, ուրիշ անուղղակի միջոցներով եւ այլն: Սակայն նա իր գաղափարակիր հերոսներին ընդհանրացնում է ու տիպականի զույներ է տալիս՝ առավելապես հենվելով ոչ թե մեկ, ոչ թե այս կամ այն գեղարվեստական արտահայտչաձևանակի վրա, այլ ձգտելով հասնել պատկերավորման համադրական մեթոդի:

Վարդան Գրիգորյանը գտնում էր, որ գրականության պարտքն է ոչ թե կառչել զուտ առօրյա «կայուն» կենցաղային հարաբերություններին, այլ, առաջին հերթին, դրանց ետևում «նկատել եւ անգամ կանխատեսել նորը, առաջ ընկնել ժամանակից՝ ուսերին առնելով դրա հաստատման կամ ժխտման պա-

<sup>3</sup> Бахтин М., "Проблемы поэтики Достоевского", Москва, 1963 г., стр. 64-65.

տասխանատվությունը»<sup>4</sup>: Իսկական գրողների բնավորության մեջ նա առանձնացնում էր համարձակությունը, մի հատկանիշ, որով կարելի է վստահորեն ստանձնել ժամանակի թե դատավորի, թե փաստաբանի առաքելությունը: «Գրողը պետք է հավատա, թե ընդունակ է գրչով վերափոխելու աշխարհը»<sup>5</sup>:

Արձակագիրը գրականության ու գրողի համար շատ էական էր համարում հերոսի որոնումը՝ «եռանդուն, ժամանակի հոգսերով եւ ուրախություններով ապրող դրական հերոսի»: Իր որոնումներում Վ. Գրիգորյանը ցավով նկատում էր, որ այդպիսի հերոս հայտնաբերելը մեր օրերում շատ դժվար է, չի տարբերվում նա շրջապատի ու ընկերների մեջ: Հսկայական ջանքեր են պետք գտնելու այն իղեալ հերոսին, որի օրինակը կարող էր վարակիչ լինել, արժանի հետնորդներ ունենալ: Գիշտ է, երիտասարդ գրողը տեսնում էր, որ ոմանք բարեխղճորեն կատարում են իրենց աշխատանքը, ձգտում են ավելին անել, համեստ են եւ «նպաստում են համընդհանուր բարօրությանը»: Սակայն դրանցից առանձնացնել այն հերոսին, որի կերպարը կերտելու համար ոչ թե արհեստական գծեր սխրանք կամ ներքին խոր տառապանք պատվաստես, այլեւ դրանք տեսնես նրա բնավորության մեջ, ամենօրյա աշխատանքում, այս խնդիրը հեշտ լուծելի բան չէ: Ի՞նչ իմանաս, թերեւս այս մտահոգությունը նրան տարավ դեպի պատմության խորքերը, անցյալի հերոսական ու ողբերգական դրվագների հետախուզումը, ուր նա տեսնում էր իր հերոսներին:

Հողվածներից մեկում<sup>6</sup>, խոսելով գեղարվեստական արտահայտչաձևերի որոնման անհրաժեշտության մասին, Վարդան Գրիգորյանը միանշանակ պաշտպանում էր այն հեղինակներին՝ տարեց թե երիտասարդ, ովքեր «փորձում են ստեղծել նոր որակ», փնտրում են իրականության արտահայտման թարմ եղանակներ: Բայց եւ վճռականորեն մերժում էր այն փորձերը կամ, ինչպես ինքն է գրում, այն «էքսպերիմենտները», որոնց հորինողները արտաքին ձևի տակ կամենում են «իմաստավորել» չձեւավորված մտքերն ու մակերեսային ընկալում-

<sup>4</sup> «Ավանգարդ», 1984, 13 մայիսի:

<sup>5</sup> Եւրյն տեղում:

<sup>6</sup> «Գարուն», 1984, թիվ 6, էջ 1:



ները: Եւան դեպքերում, եզրակացնում է Վ. Գրիգորյանը, գրական այդ փորձերը դառնում են անհամոզիչ ու կասկածելի<sup>7</sup>:

Պարզ ու հստակ մտածողության արձակագիր էր Վ. Գրիգորյանը, թարմ ասելիքի ու նոր արտահայտչանախանակների նախանձախնդիր: Անմիջական ու սերտ կապ տեսնելով իրական կյանքի ու «գրական իրականության» միջեւ, նա ձգտում էր իր գեղարվեստական ստեղծագործությունը «զգեստավորել» այնպիսի միջոցներով, որպեսզի օբյեկտիվ իրականության պատկերը երբեք կեղծ ու արհեստական պատճենահանման տպավորություն չթողնի, իր խոսքը հնչի համոզիչ ճշմարտությամբ: Մեծ դեր հատկացնելով ասելիքի նպատակաուղղվածությանը՝ վիպասանը չի հրաժարվում պայմանական, գրոտեսկային կամ ֆանտաստիկ իրավիճակներից կամ դրանց պատկերման միջոցներից: Դրանք նույնքան կարելու են, որքան գեղարվեստական մյուս ձեւերն ու հնարանքները: Միայն թե պետք է գրական այդ միջոցներն ունենան գրողի անհատական դրոշմը: Վարդան Գրիգորյանն իրավացի է իր մտահանգումներում. «Յուրաքանչյուր գրող ստեղծում է իր ուրույն աշխարհը, իր ուրույն հերոսները, որոնք շարժվում են ստեղծագործողի «օրենքներով» եւ «սկզբունքներով»: Յուրաքանչյուր գրող ստեղծում է իր նախասիրած կյանքային իրավիճակները, որտեղ նրա գրիչն առավել վստահ է շարժվում, որտեղ նրա հերոսներն առավել լիարյուն եւ եռանդուն են գործում: Իրականությունը մայր հողն է, որի վրա հենվում է յուրաքանչյուր իսկական գրական երկ, սակայն այն չի պարտադրում կառչած մնալ իրենից»<sup>8</sup>:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 14:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 13:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՌԱԴԻՈՇՈՒԿԱՅՈՒՄ

Անկախ պետականության հռչակումից հետո Հայաստանում զանգվածային լրատվամիջոցների համակարգում կատարվեցին գաղափարական և կառուցվածքային լուրջ տեղաշարժեր: Եթե ամբողջատիրության և միակաժության պայմաններում զանգվածային լրատվամիջոցների աշխատանքը պլանավորվում և ֆինանսավորվում էր պետության, իսկ նրանց ամենօրյա գործունեությունը վերահսկվում գրաքննիչ պետական կառույցի կողմից, ապա խորհրդային Միության փլուզումից հետո հաստատված շուկայական հարաբերությունների պայմաններում ստեղծվեցին նոր զանգվածային լրատվամիջոցներ ու կառույցներ, որոնք համապատասխանում էին նոր ձևավորված լրատվաշուկայի պահանջներին. աստիճանաբար միակարծությունից անցում կատարվեց բազմակարծության ու տարակարծության լրատվադաշտ:

Եթե խորհրդային ժամանակաշրջանում հանրապետությունում գործում էին պետական քարոզչական մեքենայի հատկանիշներին բնորոշ լրատվամիջոցներ, ապա անկախացումից հետո հանրապետական լրատվադաշտը այլևս բաց էր նախկին այլախոհների և արգելված կուսակցությունների, ինչպես նաև նոր ձևավորվող կուսակցությունների, կազմակերպությունների, անհատ ձեռներեցների համար: Նոր ձևավորված հանրապետական լրատվաշուկայի իրավական դաշտը կարգավորելու համար Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմնի կողմից ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնց միջոցով կարգավորվեց և կանոնակարգվեց հանրապետական զանգվածային լրատվամիջոցների աշխատանքը՝ նախադրյալներ ստեղծելով անցում կատարելու իրավական պետության և քաղաքացիական հասարակությանը բնորոշ լրագրությանը:



Այս առումով հատկապես կարևորվեց նաև այն լրատվամիջոցների հիմնադրումն ու զարգացումը, որոնք արդյունք էին հենց այդ դաշտում կատարված որակական տեղաշարժերի և ինտեգրացիոն ընթացքների, որոնք մեծապես նպաստեցին հասարակական կարծիքի ձևավորմանն ու զարգացմանը:

Հանրապետական ռադիոյուկան ձևավորվեց 1991թվականից հետո, մինչ այդ լրատվական դաշտում մենաշնորհային վիճակում էր հանրապետական ռադիոն, որն իր եթերային ծավալով ընդգրկում էր ողջ հանրապետությունը, ինչպես նաև ամենօրյա հաղորդումներ պատրաստում արտերկրի մեր հայրենակիցների և օտարերկրյա քաղաքացիների համար: Նմանատիպ լրատվական դաշտը գերադասելի էր ամբողջատիրական, միակարծության պայմաններում ձևավորված պետությունների համար: Նման պետական կառույցը պարզապես խանգարում էր հանրապետությունում ձևավորվող նոր տնտեսական հարաբերությունների պայմաններում առաջին քայլերն անող ռադիոյուկայի կայացմանը: Աստիճանական անցումը ռադիոյուկային օգնեց, որպեսզի կարճ ժամանակաընթացքում հանրապետական ինֆորմացիոն դաշտը համալրվի նոր ֆորմատով ու մոդելով աշխատող ռադիոկայաններով, սրանք հիմնադրվեցին ոչ միայն մայրաքաղաքում, այլև մարզերում ու հանրապետության տարբեր քաղաքներում: Անցած տասնամյակի ընթացքում հանրապետությունում մասնավոր էլեկտրոնային զանգվածային լրատվաչառական դարձավ իրողություն և 2001 թվականի դրությամբ մեզնում արդեն գործում է 66 էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոց, որոնցից 31-ը ռադիոընկերություններ:<sup>1</sup> Սա բավականին մեծ թիվ է մեր փոքրիկ հանրապետության համար. համեմատության համար նշեմ, որ անգամ Լեհաստանի նման երկրում գործում է ընդամենը 3 մասնավոր ռադիոկայան, տարածաշրջանի հարևան երկրներում Վրաստանում և Ադրբեջանում միասին

գրեց ու ներմուծվեց զմեռյո ղմերսն ույլուննցո մտրադիալ ղմաաալով  
գնխրայանմոնայ ղմ գնխրայաուալ իտրոչն գնոո ոմնցննո  
զգնաաաաաաա փոմնոզոնաաաաաա միլանախքնաթ մոխտուկաղմաթ

<sup>1</sup> Լրատվությունը մեզ է տրամադրել ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի Ազգային հանձնաժողովի նախագահ Գրիգոր Ամալյանը:

վերցրած գործում են հազիվ մեկ տասնյակի հասնող ռադիոընկերություններ:<sup>2</sup> Մեզնում հանրապետական ռադիոյուկայի ձևավորման ժամանակ հաշվի առնվեցին արտասահմանյան մի շարք զարգացած երկրների հեռուստա-ռադիոյուկաներին բնորոշ մոդելներ: Նկատի ունենալով այս հանգամանքը, միջոցներ ձեռնարկվեցին հիմնելու այնպիսի էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցներ, որոնք համապատասխանում էին նոր ձևավորվող շուկայական հարաբերությունների պահանջներին: Հայտնի է, որ աշխարհում ընդունված է երեք մոդել՝ պետական, մասնավոր, հանրային: Մեր հանրապետությունում նորաստեղծ էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցները նույնպես ընտրություն կատարեցին այդ մոդելների միջև՝ նախապատվությունը տալով հանրային և մասնավոր մոդելներին: Հանրապետական ռադիոյուկայում արմատավորվեցին նոր ֆորմատի ու մոդելի (լրատվական-երաժշտական-զովագային) մասնավոր ռադիոկայաններ,<sup>3</sup> որոնք վաղուց իրողություն էին արտասահմանում և ունեն մշտական, կայուն հասցեագրված լսարան: Ընդունվեց նաև երկրորդ մոդելը, որը ֆինանսավորվում և հովանավորվում է հասարակական և գերատեսչական կազմակերպությունների, անհատ ձեռներեցների և հովանավորների կողմից: Այս մոդելին նախապատվություն տվեց հանրապետական խոշորագույն ռադիոկառույցը՝ Ազգային ռադիոն, որը չդիմանալով ժամանակի փոփոխություններին և խրոնիկական դարձած պետական բյուջեի ուշացումներին, աստիճանաբար հրաժարվեց նախկին վարչակարգին բնորոշ գաղափարական և կառուցվածքային մոտեցումներից և անցում կատարեց ավելի դեմոկրատական և մատչելի հանրային մոդելին: Անցման շրջանի դժվարություններն ու ինտեգրացիոն ընթացքները ժամանակավորապես թուլացրին հանրապետության խոշորագույն ռադիոկառույցի ստեղծագործական աշխատանքը, սակայն նաև նախադրյալներ ստեղծվեցին աստիճանական անցում կատարելու այնպիսի նոր որակական փուլի, որը ապահովում է հանրային դարձած ռադիոընկերության բնականոն

գրեց ու ներմուծվեց զմեռյո ղմերսն ույլուննցո մտրադիալ ղմաաալով  
գնխրայանմոնայ ղմ գնխրայաուալ իտրոչն գնոո ոմնցննո  
զգնաաաաաաա փոմնոզոնաաաաաա միլանախքնաթ մոխտուկաղմաթ

<sup>2</sup> Թորալսոն Փ., Հանրային և մասնավոր հեռարձակման օրենսդրական կարգավորումը, Երևանի մամուլի ակումբ, միջազգային կոնֆերանս, Երևան, 2001, էջ 3:  
<sup>3</sup> Հայաստանում առաջին մասնավոր ռադիոկայանը՝ Հայ FM 105.5, հիմնադրվեց 1994թ.:



աշխատանքը: Այս արմատական փոփոխությունները հանգեցրին հանրապետական ռադիոշուկայում մի այնպիսի իրավիճակի, երբ էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցների աշխատանքը դարձավ հասարակական կարծիքի ձևավորման կարևորագույն գործոն, օպերատիվ լրատվության տարածման ամենագոյու և արդյունավետ միջոցներից մեկը: Հանրապետական ռադիոշուկայի աշխատանքը բնականոն և արդյունավետ դարձնելու համար անկախության տասնամյակի ընթացքում հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը ընդունեց մի շարք օրենքներ, որոնց միջոցով կանոնակարգվեց նոր ձևավորված լրատվաշուկան և պայմաններ ստեղծվեցին նրանց բնականոն գործունեության համար: Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենսդրությունը ժամանակակից փուլում ներառում է Ազգային ժողովի կողմից ընդունված և հանրապետության նախագահի կողմից վավերացված մի շարք գերատեսչական ակտեր ու օրենքներ: Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում մինչև այժմ ընդունվել է վեց օրենք, որոնց կիրառումը մեծապես նպաստեց հեռուստառադիոընկերությունների գործունեությունը կանոնակարգելուն և պաշտպանելուն («Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին», «Հեռահաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին»):

Տեղեկատվական բնագավառը կարգավորվում է նաև այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության ընդունած միջազգային պայմանագրերով:

Առաջին փաստաթուղթը՝ «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» օրենքն էր, որն ընդունվեց հանրապետության Գերագույն խորհրդի ( այժմ՝ Ազգային ժողով) կողմից 1991թ. հոկտեմբերի 8-ին:<sup>4</sup> Սույն օրենքով մամուլ և զանգվածային լրատվության մյուս միջոցներ են համարվում թերթերը, հանդեսները, փաստավավերագրերը, տեղեկագրերը և պարբերականները, որոնք միանվագ հրատարակվում են 100 օրինակից ավելի

<sup>4</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը հեռուստատեսության և ռադիոյի մասին հարակից օրենքներով, Երևան, 2001, էջ 31:

տպաքանակով, ինչպես նաև հեռուստառադիոծրագրերը, կինովավերագրերը, որոնք պարբերաբար ստեղծվում և հրատարակայնորեն տարածում են լուրեր և տեղեկություններ՝ սույն օրենքով սահմանված կարգով: Ըստ օրենքի մամուլ և զանգվածային լրատվության մյուս միջոցներ ստեղծում և տարածում են խմբագրությունները, լրատվական գործակալությունները, հրատարակչությունները, զանգվածային լրատվություն թողարկող այլ հաստատությունները, որոնք ազատ են և գրաքննության չեն ենթարկվում: Այս օրենքը հնարավորություն տվեց նոր պայմաններից ելնելով ժուռնալիստիկայի ասպարեզում անցում կատարելու տոտալիտար, ամբողջատիրական գաղափարախոսությունից դեպի բաց, քաղաքացիական հասարակություն:<sup>5</sup>

Օրենքի առաջին երկու հոդվածներում ամրագրված հիմնադրույթները հետագայում հիմք հանդիսացան մշակելու ավելի կատարյալ օրենսդրական փաստաթղթեր և ամրագրել այդ ոլորտի այն նվաճումները, որոնք ձեռք բերվեցին վերջին տասնամյակի ընթացքում:

Հեռուստառադիոտրոսի կայացման համար կարևոր որակական փուլ էր 1993թ. ապրիլի 17-ին հանրապետության նախագահի հրամանագրով վավերացված «Լեզվի մասին» օրենքը, ուր մասնավորապես սահմանվում էին Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության հիմնական դրույթները: Այս փաստաթուղթը ամրագրեց էլեկտրոնային լրատվամիջոցներում հայերենի գերակայության և պետական պաշտպանվածությունը: Հեռուստառադիոտրոսի համար օրենքը կարևորվում էր նաև նրանով, որ օրենքի ընդունումից ընդամենը մեկ տարի անց հանրապետությունում հիմնադրվեցին մեծ թվով մասնավոր ռադիոկայաններ, որոնց հայերենի գործածության մակարդակը հեռու է գրական լինելուց, հաճախ են տուրք տալիս անգլիախառն ու ռուսական առողանությամբ հայերենին: Ճիշտ է՝ ժամանակի ընթացքում օրենքի գերակայության պայմաններում ռադիոդաշտը կանոնակարգվեց հայերենի կիրառման առումով, սակայն ռադիոկայանները դեռ շատ աշխատանք ունեն եթերային խոսքը կատարյալ և գրագետ

<sup>5</sup> Սույն տեղում, էջ 32:



դարձնելու համար: Մայրենիի դերը առավել կարևորվեց, երբ հանրապետական հեռուստառադիոտիրույթում թույլատրվեց օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների գործունեության ծավալումը: Հայերենի գործածության և կիրառման շառավղի պահպանումը դարձավ օրախնդիր, որը օրենքի շրջանակներում կանոնակարգվում է և թույլ չի տրվում մայրենիի հաշվին ներմուծելու օտար հաղորդումներ: Այդ է վկայում նաև սույն օրենքի 4 հոդվածը, ըստ որի հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են օտար լեզվով էլույթների զուգահեռ հայերեն թարգմանություն, միաժամանակ խրախուսելով լրատվամիջոցներով հայերենի պրոպագանդանն ու լեզվաշինության զարգացմանը: Այժմ արդեն կարելի է փաստել, որ հանրապետական լրատվամիջոցներում, հատկապես էլեկտրոնայիններում վերջին տարիներին ձևավորվել են հայերենի մատուցման նոր ոճ և մեթոդներ, որոնք հնարավորինս պահպանում են եթերը օտարամոլությունից ու խոսակցական, ժարգոնային կապակցություններից: Մայրենիի անաղարտ եթեր հեռարձակման համար հանրապետության ռադիոկայանները դեռևս շատ անելիքներ ունեն, հատկապես դիջեյների լեզվի իմացության և կիրառման որակական աստիճանը անհրաժեշտ եթերային պահանջներին համապատասխանող հայերենին հասցնելու համար:

«Լեզվի մասին» օրենքին օրգանապես կապված է Ազգային ժողովի ընդունած «Գովազդի մասին» օրենքը, որն սկսեց կիրարկվել 1996թ. ապրիլի 30-ից: Այն սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գովազդի ստեղծման և տարածման իրավական հիմքերը և նպատակ ունի անհրաժեշտ պայմաններ ապահովել հասարակության, գովազդ սպառողների, գովազդատուների, գովազդի ստեղծման ու տարածման համար: Օրենքում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում գովազդի լեզուն հայերենն է:<sup>6</sup> Գովազդի լեզվի կարևորությունը մեկ անգամ ևս ամրագրում է լրատվադաշտում առկա իրողությունները և պարտավորեցնում լրատվամիջոցներին չխախտելու օրենքի դրույթները: Այս առումով կարևոր է նշել գովազդի գործունեության հնարավորությունները զանգվածային

էլեկտրոնային լրատվամիջոցներում, մասնավոր, որ ողջ աշխարհում ժուռնալիստիկան բարգավաճում է գովազդից ստացված շահույթների հաշվին:<sup>7</sup> Փաստենք, որ միայն 2000 թվականին հանրապետության էլեկտրոնային լրատվամիջոցները գովազդից ստացել են մոտ 1 միլիոն դոլարի շահույթ: Այս գործունեությունը կանոնակարգելու համար գովազդի մասին օրենքի 9 հոդվածը ամբողջովին նվիրված է էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցներում գովազդի կիրառման ձևերին, ըստ որի արգելվում է մինչև 10 րոպե տևողությամբ ռադիոհաղորդումներում և մինչև 20 րոպե տևողությամբ հեռուստահաղորդումներում մեկ անգամից ավելի գովազդային ընդհատումը: Արգելվում է ռադիոհեռուստատեսային հաղորդման ընթացքում հեռարձակել գովազդ ավելի, քան 20 րոպե մեկ հաճախականությամբ և յուրաքանչյուր մեկ եթերային ժամի հաշվով 10 րոպեից ավելի տևողությամբ: Նման հիմնադրույթները լայն կիրառություն ունեն ամբողջ աշխարհում, հատկապես ԱՄՆ-ի հեռուստառադիոընկերություններում, որոնք երեկոյան մեկ ժամի համար նախատեսում են 12 րոպե գովազդ: Իհարկե, այս հիմնադրույթների կիրառությունը և գովազդային լեզվի անաղարտության պահպանումը հանրապետության հեռուստառադիոընկերություններում դեռևս բավարար մակարդակի վրա չէ, ոչ միշտ է պահպանվում հայերենի՝ որպես գովազդային լեզվի կիրառության աստիճանը: Սա հատկապես վերաբերում է մասնավոր հեռուստառադիոընկերության, որը վերահեռարձակելով օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների հաղորդումները, հաճախ վերահեռարձակում են նաև ռուսերենով և անգլերենով գովազդային հոլովակներ: Գովազդային շուկան այժմ հանրապետությունում մասնագիտացված է և բաշխված զանգվածային լրատվամիջոցների միջև: Ըստ «Սոցիոմետր» սոցիոլոգիական կենտրոնի հեռուստաշուկան, որն ունի ամենամեծ լսարանը, տնօրինում է հանրապետական գովազդային շուկայի 80 տոկոսը, մամուլին բաժին է ընկնում 11, իսկ ռադիոյին 9 տոկոս:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 94:

<sup>7</sup> Вачнадзе Г.Д., Всемирное телевидение, Москва, 1997, стр. 153.



Հանրապետական ռադիոշուկայի համար կարևոր խթանիչ հանգամանք հանդիսացավ «Հեռահաղորդակցության մասին» օրենքը, որն սկսեց գործել 1998թ. փետրվարի 17-ից: Եթե նախորդ օրենսդրական ակտերը կանոնակարգում էին ռադիոշուկայի ստեղծագործական, եթերային, ծրագրային քաղաքականությունը, ապա «Հեռահաղորդակցության մասին» օրենքը կարգավորում է այդ ոլորտում առկա տեխնիկական հիմնահարցերը, դրանք տեղափոխելով իրավական կարգավորիչ դաշտ: Համաձայն ընդունված օրենքի սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հեռահաղորդակցության բնագավառում գործունեության իրականացման իրավական հիմքերը, դրա մասնակիցների իրավասությունը և պատասխանատվությունը, ինչպես նաև հեռահաղորդակցության ծառայություններից օգտվողների իրավունքների պաշտպանության նորմերը: Մեր հանրապետությունը այժմ ունի ռադիոհաճախականությունների առումով կապուղիների սահմանափակ տիրույթ, որտեղ գործում են մասնավոր ռադիոկայանները, ինչպես նաև լարային ցանցն ու ռադիոկայանը, որի ծառայություններից օգտվում է հանրային ռադիոն: Այս դաշտի կանոնակարգման համար սույն օրենքի 13-րդ հոդվածը ամբողջությամբ նվիրված է ռադիոհաճախականության տիրույթի և հեռահաղորդակցության արբանյակների ուղեծրային դիրքերի օգտագործմանը: Համաձայն սույն հոդվածի ռադիոէլեկտրոնային միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիությունը և խանգարումներից պաշտպանությունն ապահովելու նպատակով ռադիոհաճախականության տիրույթի առանձնացման, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության ձեռք բերման, ներմուծման և շահագործման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում դրանց արտադրության դեպքում մշակման, նախագծման և արտադրության պայմանների իրավունքը վերապահված են կառավարությանը:<sup>8</sup> Այս հոդվածի կիրարկումը հնարավորություն է տալիս ռադիոեթերը զերծ պահել անորակ ինքնաշեն սարքավորումների շահագործումից ու վերահսկողության դաշտում պահել ճառագայթաօդային ֆոնը:

<sup>8</sup> Սույն տեղում, էջ 44:

Նկատի ունենալով, որ մասնավոր ռադիոընկերությունների որոշ մասը իրենց հաղորդակները տեղադրել են բնակելի շենքերի կտուրներում կամ նրանց շատ մոտ, սույն օրենքը պարտավորեցնում է նրանց ճառագայթման աղբյուր հանդիսացող հաղորդակցության միջոցները անպայման գրանցել, գործել հատկացված հաճախականության շառավղում հնարավորինս վնաս չհասցնելով մոտակայքում բնակվող մարդկանց առողջությանը: Հեռարձակող ընկերությունների վերահսկողությունը կատարվում է պետական կառույցների միջոցով, որոնք տեխնիկական հաղորդակցման միջոցները վերահսկելուց բացի ապահովում են նաև դրանց տեխնիկական շահագործումը:

Հանրապետության ռադիոշուկայի օրենսդրական դաշտի կարգավորման գործում կարևոր նշանակություն ունեցավ Ազգային ժողովում երկար քննարկումների նյութ դարձած «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» փաստաթուղթը, որն օրենքի ուժ ստացավ 1999թ. դեկտեմբերի 8-ին: Սույն օրենքը, ինչպես նշված է 1-ին հոդվածում, կարգավորում է գիտության, գրականության, արվեստի ոլորտների ստեղծագործությունների (հեղինակային իրավունք), կատարումների, հնչյունագրերի(ֆոնոգրամ), հեռարձակող կազմակերպությունների հաղորդումների(հարակից իրավունքներ) ստեղծման և օգտագործման հետ կապված հարաբերությունները:

Հեղինակային իրավունքի կիրառումը հնարավորություն տվեց վճռական պայքար ծավալելու մեծ չափերի հասնող եթերահեռության, առանց թույլտվության հաղորդումների ու ծրագրերի հեռարձակման դեմ, կանոնակարգելու արտասահմանյան ռադիոարտադրանքի մուտքը հանրապետական ռադիոշուկա և դրանց որակական չափանիշների սահմանում: Օրենքը ռադիոլրագրողներին հնարավորություն տվեց պաշտպանելու հեռարձակվող նյութերի և ծրագրերի նկատմամբ իրենց հեղինակային իրավունքը: Այդ է վկայում օրենքի 20-րդ հոդվածը, որն ամբողջովին նվիրված է տեսալսողական ստեղծագործության հեղինակային իրավունքի պաշտպանմանը, համաձայն որի տեսալսողական ամբողջական ստեղծագործության հեղինակներն են սցենարի հեղինակը, բեմադրող ռեժիսորը, հատկապես տվյալ տեսալսողական ստեղծագործության համար ստեղծված երաժշտության



հեղինակը(տեքստի կան առանց տեքստի), բեմադրող օպերատորը, ինչպես նաև ամբողջական տեսալսողական ստեղծագործության ստեղծմանը պայմանագրով մասնակցած և ստեղծագործական աշխատանքի ուրույն արդյունք ներդրած այլ անձինք:

Նշված օրենսդրական ակտերը նպաստեցին ամբողջացնելու և կանոնակարգելու հանրապետական ռադիոշուկայում առկա ստեղծագործական և ինտեգրացիոն գործընթացները և նախապայմաններ ստեղծեցին հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կանոնակարգող հեռուստա-ռադիոխորհրդի և ազգային հանձնաժողովի հիմնադրմանը: Մոտ հինգ տարի տևած խորհրդարանական լուսններից հետո 2000թ. հոկտեմբերի 9-ին Ազգային ժողովը վերջապես ընդունեց «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը: Եթե նախորդ օրենքները կանոնակարգում էին լրագրողական գործունեության որևէ բնագավառ, ապա այս վերջին օրենքով կազմավորված խորհուրդն ու Ազգային հանձնաժողովը վերահսկում են հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերությունների գործունեությունն ու լիցենզավորումը: Սույն օրենքը սահմանում է հեռուստառադիոընկերությունների (հեռուստաընկերություններ և ռադիոընկերություններ) կարգավիճակը, կանոնակարգում է դրանց հիմնադրման, լիցենզավորման և ղեկավարման կարգը, իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերը, հեռուստառադիոընկերությունների ստեղծման ու գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները: Համաձայն օրենքի հանրապետության նախագահը 2000թ. նոյեմբերի 12-ին նշանակեց հեռուստառադիոխորհրդի կազմը, որը վերահսկում է հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը, իսկ 2001թ. մարտի 19-ին Ազգային հանձնաժողովի անդամներին, որոնց վերահսկողությանն է հանձնված մասնավոր հեռուստառադիոընկերությունների գործունեությունը: Եթե խորհրդի պարագայում ավելի հստակություն կար և տարիներով կուտակված էր այդ կառույցների հետ աշխատելու համապատասխան փորձ, ապա Ազգային հանձնաժողովի պարագայում եղան բազմաթիվ հիմնախնդիրներ կապված մասնավոր հեռուստառադիոլորտի գործունեության կանոնակարգման հետ: Պատճառն այն էր, որ մինչ այդ ոչ մի օրենք չէր ընդունվել կանոնակարգելու մասնավոր հեռուստառադիո-

ընկերությունների աշխատանքը: Ազգային հանձնաժողովի ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ կանոնակարգելու մասնավոր հեռուստառադիոլորտի գործունեությունը և նրանց հետ հարաբերությունները տեղափոխել իրավական դաշտ: Կարճ ժամանակահատվածում Ազգային հանձնաժողովը ընդունեց 8 ենթաօրենսդրական կարգեր, մշակեց իր գործունեությունը կարգավորող կանոնակարգ, որով էլ հիմք դրեց այդ ոլորտի վերահսկմանն ու լիցենզավորմանը: Ազգային հանձնաժողովը, համաձայն սույն օրենքի 37-րդ հոդվածի, իրականացնում է եթերային հաճախությունների հրապարակային և մրցութային հատկացումը, հաստատում է լիցենզիայի ձևը, հատկացնում այն, կազմում և հրապարակում է լիցենզիա ստացածների ցուցակը, հսկում է լիցենզիայում նշված պայմանների կատարումը, հեռուստառադիո-հաղորդումների տեսագրությունների և ձայնագրությունների միջոցով պարզում է դրանց համապատասխանությունը գործող օրենսդրությանը: Իր գործունեության առաջին տարում հեռուստատեսության և ռադիոյի Ազգային հանձնաժողովը առաջին անգամ անցկացրեց հեռուստառադիոլորտում գործող ընկերությունների վերալիցենզավորում: 2001թ. օգոստոսին լիցենզավորման ներկայացած 40 ընկերություններից վերալիցենզավորվեցին 38-ը: Ազգային հանձնաժողովը հեռուստառադիոընկերություններին պարտավորեցրեց չխախտել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքով սահմանված դրույթները, հեռարձակման ժամանակ հաշվի առնել լեզվի և գովազդի մասին օրենքների պարտադիր պայմանները:

2001թ. հոկտեմբերի սկզբին Ազգային ժողովում գումարված միստում շահագրգիռ կողմերը ներկայացրին «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի վերաբերյալ իրենց տեսակետները, առաջարկելով մի շարք օրենսդրական փոփոխությունների միջոցով այն մատչելի դարձնել մասնավոր հեռուստառադիոլորտի համար և նախադրյալներ ստեղծել ոլորտում առկա դրական տեղաշարժերի ու զարգացման համար:

Ժամանակակից փուլում հանրապետության ռադիոշուկային իրավական տեսակետից պաշտպանված է և վերահսկվում է Ազգային հանձնաժողովի կողմից: Կերչինիս միջոցով նախադրյալներ են ստեղծված պաշտպանելու և խրախուսելու հայրենական արտադրողին, նախանշելու ռադիոընկերու-



թյունների տեղն ու դերը ռադիոշուկայում, նպաստելու ռադիոընկերությանը վարած ծրագրային և զովագրային քաղաքականությանը, ոլորտի հետագա զարգացմանը:

Հանրապետության ռադիոշուկայում առկա իրավական դաշտի կարևորությունը ընդգծելու համար պետք է նշեմ, որ տարածաշրջանում Հայաստանը առայժմ միակն է, որ ընդունել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը, ստեղծել համապատասխան խորհուրդ ու հանձնաժողով: Համեմատելու համար փաստեմ, որ անգամ Ռուսաստանի Ռաշնությունը դեռևս չունի նմանատիպ օրենք: Այս փաստը մեկ անգամ ևս վկայում է, որ հանրապետությունում գործող ռադիոկայանների համար ստեղծված են բարենպաստ պայմաններ և իրավական դաշտ՝ նրանց բնականոն գործունեությունը ապահովելու համար:

ЕЛЕНА КАРАБЕГОВА

КОННОТАЦИЯ "ЗАПАД - ВОСТОК" В  
НЕМЕЦКОЙ ЛИТЕРАТУРЕ XIX — XXВВ.

Проблема осмысления и осознания географического пространства своей страны всегда имела большое значение для формирования национального менталитета. Названия географических реалий могут получать в языковой практике самые разнообразные коннотации — и обозначать при этом события в истории и культуре данной страны. Эти топонимы, связанные с какими-либо историческими событиями, вызывают в сознании носителя языка определенные ассоциации и, таким образом, эти топонимы получают коннотации.

Исследование коннотации, возникающей в языке в связи с проникновением в национальное сознание немцев представлений о Востоке, представляет определенный научный интерес, поскольку восприятие "восточных" реалий осуществлялось в Германии начиная со Средневековья иными путями, чем, скажем, во Франции или Англии (которая, как известно, уже в XVI веке по яркости одежд и любви к экзотическим украшениям могла бы сравниться с какой-нибудь восточной страной!)

Знакомство немцев с Востоком (Средней Азией, Индией, Китаем и Ближним Востоком) долгое время было достаточно ограниченным и в первую очередь по той причине, что торговые связи с этими странами были сильно ограничены и в большинстве случаев опосредованы. Торговля велась через Италию, где, к примеру, Венеция была перекрестком торговых



путей западного и восточного мира. Эпоха крестовых походов положила начало не только бесконечным войнам, но и контактам Запада и Востока в экономической, политической и культурных областях. Однако исторические судьбы германских государств сложились так, что германское рыцарство почти не принимало участия в этих походах. Торговля же могущественного Ганзейского союза так же носила посреднический характер и связывала страны Северной, Западной и Восточной Европы.

Все это обуславливало то, что изучение Востока в Германии шло очень медленными темпами. Так, например, "Восточное общество" было основано только в 1845 году (первое заседание в г. Галле в 1845г.), были налажены контакты с Академиями Наук в Берлине, Мюнхене, Ст.Петербурге, а так же с подобными Обществами в Англии и Франции. И уже к 10 марта 1847 года было издано 155 печатных работ этого Общества.

Восток долгое время воспринимался германским национальным сознанием как далекий экзотический мир, изобилующий сказочными чудесами и богатствами. Такое представление о Востоке отразилось в фамилии "Pfeffersack", "мешок с перцем", в которой обозначение большого количества этой экзотической пряности стало синонимом богатства (мешок с перцем мог считаться хорошим приданым для дочери богатого купца).

В XVIII веке Восток воспринимался европейскими просветителями в первую очередь как удобный материал для философской утопии, выступающей как антитеза европейским державам ("Персидские письма" Монтескье, "Золотое зеркало или Короли Шешиана" Виланда и т.д.). Большое значение имел также перевод на европейские языки сказок "1001 ночи". Научное изучение Востока европейцами начнется в конце XVIII века, в частности, в трудах Гердера, и, в особенности, после египетских походов Наполеона.

Но в сознании немцев Восток долгое время нередко оттеснялся и подменялся другим географическим понятием — Италией.

Экономические, политические и культурные связи между Германией и Италией уходят корнями в глубокую древность, когда на рубеже двух эр начинаются походы римлян в германские земли, затем их частичное отступление и наступление германских племен на Рим, завершившееся двумя его захватами в V веке н.э. В Средние века территория Священной Римской империи германской нации включала в свой состав и некоторые государства северной Италии. Германское присутствие в Италии сыграло известную роль в политике (в частности, знаменитые флорентийские партии гиббелинов и гвельфов восходят к германским дворянским родам, а любимый герой немецкого народа Дитрих Бернский, появляющийся также и в "Песне о Нибелунгах", был королем остготов в Вероне).

Но итальянская коннотация возникает в национальном сознании немцев и отражается в научных исследованиях и литературе уже в XVIII веке, когда патриотически настроенные и стремящиеся к объединению страны путем создания единой культуры немецкие просветители видели в Италии наследницу демократических свобод древней Греции и страну великого искусства.

Так, все реалии в стихотворении Гете "Миньона" (лимоны, померанцы, мирт, лавр, залы с колоннами, мраморные скульптуры, теплый ветер, крутые скалы) свидетельствуют о том, что здесь подразумевается Италия, но путь должен увести к вершинам скал и — в никуда.

Тема Миньоны и Арфиста, тема искусства в современном мире, получает оттенок трагизма и связывается с недостижимым идеалом. Таким образом, в первом крупном романе Гете "восточная", "итальянская" коннотация получает значение "недостижимый, неосуществимый идеал", предвосхищая в



известной степени идеал немецких романтиков. И Миньоне, героине первой части дилогии "Вильгельма Мейстера", предстоит умереть совсем юной.

В литературе романтизма направление "к Италии" получает еще более широкую коннотацию. Герой, путешествующий в этом направлении, даже если он не пересекает границу Германии, и не называет открыто Италию, — совершает свой путь становления как творческая личность, поэт и художник. Так, из Германии в Швабию, с севера на юг, по направлению к Италии, лежит путь Генриха фон Офтердингена, это путь, символизирующий его познание самого себя как поэта.

Франц Штернвальд, герой романа Л. Тика "Странствия Франца Штернвальда", молодой живописец, ученик великого Альбрехта Дюрера, направляется из Нюрнберга через Фландрию в Италию. И этот путь так же обретает идеологическое значение — как открытие в самом себе поэта и художника, как осознание своего места в окружающем мире.

Коннотация "Германия — Италия" получает многочисленные вариации в прозе немецкого романтизма. Так, в романе Э.Т.А.Гофмана "Эликсиры сатаны" молодой монах Медард уходит из своего монастыря в широкий мир, и один из его путей приводит его в Рим.

Но в связи с общей политической оценкой современной Европы меняется и восприятие Италии — символом ее становятся страшные подземелья монастыря доминиканцев, где происходит казнь ни в чем не повинного старого монаха, с которым был знаком Медард.

В последующие периоды развития немецкой литературы эта коннотация получает наиболее яркое воплощение в творчестве Томаса Манна, в романах "Волшебная гора" и "Избранник".

Главному герою "Волшебной горы" Гансу Касторпу, потерявшему дорогу во время лыжной прогулки в швейцарских

Альпах, в галлюцинациях является образ Италии как призыв к жизни. — "Во имя любви и добра человек не должен позволять смерти господствовать над его мыслями"<sup>1</sup>.

Следует отметить, что в немецкой науке в XX веке начинается глубокое изучение Востока, его философии и культуры. Но в литературе продолжает сохранять свое значение Восток как обобщенный символ цивилизации и мировой культуры, которая должна противостоять разрушениям и войнам.

В романе Г. Гессе "Паломничество в страну Востока", вышедшем в свет в 1932 году, накануне Второй мировой войны, "страна Востока" получает, пожалуй, наиболее многообразную, "многоликую" коннотацию по сравнению с "восточными" образами и символами предыдущих эпох. Десять членов таинственного Братства совершают это паломничество, преследуя при этом как общую великую и тайную цель, так и каждый свою личную. При этом "страна Востока" в контексте романа Гессе только в последнюю очередь может быть истолкована как географическое понятие. "Наша страна Востока была не просто страна, не географическое понятие, но она была отчизной и юностью души, она была везде и нигде, и все времена составляли в ней единство вневременного".<sup>2</sup> Паломничество, прежде всего, символизирует путь художника к самому себе, открытие и познание своего творческого "Я". Так, переосмысливается и возводится на новый уровень путешествие Гериха фон Офтердингена из романа Новалиса (который не раз прямо или косвенно упоминается в книге Гессе). Далее, паломничество ограничивается сравнительно небольшой территорией — между Швабией и Италией, по которой двигаются, возвращаясь назад и перемещаясь в другие эпохи, члены Братства. Как отмечает Р.

<sup>1</sup> Т.Манн. Волшебная гора. В кн.: Т. Манн. Собр.соч. в 10 томах т. 4, М., 1959, стр.216.

<sup>2</sup> Г.Гессе "Паломничество в страну Востока", в кн.: Г.Гессе "Степной волк", Новосибирск, 1990, стр. 287



Каралашвили, "паломничество" порождается не внешним передвижением в конкретном географическом пространстве, а динамикой внутренней жизни, душевными переживаниями писателя"<sup>3</sup>. И эти душевные переживания осмысливаются автором как "совокупность и синтез всего душевно пережитого времени", это... "время – пространство, где нет 'до' и 'после', а есть только 'сейчас', есть настоящее, впитавшее, переработавшее и преобразовавшее прошлое и будущее"<sup>4</sup>. Но это спрессованное в единое целое настоящее, прошлое и будущее мыслится Гессе еще и как обобщенный символ мировой цивилизации и культуры. Когда над реальным миром нависает угроза войны, душа творческой личности становится прибежищем и хранилищем культурных ценностей.

В литературе Германии XIX века коннотация понятия "Восток" претерпевает целый ряд изменений и ее диапазон все больше расширяется. При этом обращает на себя внимание следующая закономерность: чем больше объективных научных знаний о реальном Востоке, о географическом и экономическом положении, о культуре и философии Китая, Индии и других стран Востока обретают и накапливают ученые Германии, тем более "абстрактными" становятся "восточные" мотивы и образы в отдельных произведениях немецких писателей, и их коннотация получает предельно широкий и во многом абстрактный смысл.

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԻՐԱԶԻ ԴՈՆՄԵՐՈՒՄ  
(ԴԱՆԹԵԱԿԱՆ, ԲԻԲԼԻԱԿԱՆ, ՀԱՅՈՑ ՀՐԱՇԷՐ, ՄԻԱՄԱՆԹՈՒ  
ԵՎ ԽՋԵԶԱՐԵ, ԱՆԻ)

Մեզնից յուրաքանչյուրը ոգեշնչվել է շիրազյան անգուգական բանաստեղծություններով ու պոեմներով: Դա մի անկրկնելի ու անգնահատելի աշխարհ է, ուր միախառնված են ոգեղենն ու բանականը, ուր հանգրվանված են Շիրազ - բանաստեղծի մտքի սլացքն ու հոգու հևքը: Իսկ այդ ներդաշնակությունն ստեղծվում է բառերի ընտրության շնորհիվ: Հանճարներին է վայել միայն իրենց բազմաշնորհ տաղանդի միջոցով ոչ միայն օգտվել մայրենի լեզվի բառապաշարի թաքստոցներից, կենդանություն տալ դրանց, այլև ստեղծել իրենց: Շիրազը ևս հետևել է ժամանակակից հայերենի համար սահմաններ չճանաչող բառաստեղծման օրենքին: Հայոց լեզվի բառապաշարի հարստացման ակունքներից են ածանցումն ու բառաբարդումը, որոնց մատչելիությունն ու ճկունությունը Շիրազին ևս հնարավորություն է տվել կերտել բառեր, որոնք ամբողջապես արտահայտում են բանաստեղծի ստեղծած պատկերի հուզականությունը: Դրանք բառեր են, որոնք համահունչ են հեղինակի անհատականությանը, ինքնատիպ մտածելակերպին, որոնք մի ամբողջ պատմություն են իրենց մեջ ամփոփում: Օրինակ „Դանթեականում .. անդրադառնալով հայ ժողովրդի արյունոտ լքերից մեկին հեղինակի բանաստեղծական երևակայությունը ստեղծում է երկրային դժոխքը արտացոլող բառեր, որոնք ավելի խոսուն, կենդանի, իրական գույներով են արտահայտում Շիրազի խորը վիշտը արցունքարշավ, եղեռնադժոխք, դերզորվել, գառնաբառաչ, զարհուրատեսիլ, մահաբառս, մեղսածով, լացահուր, իսլամաքրքիջ, կմախքակռիվ, ոճրակիտվել և այլն, բառեր, որոնք ցույց պիտի տային իր դժոխախոց ու սևաթավիչ սիրտը:

Նորաբանությունները աչքի են ընկնում իրենց նրբերանգային առանձնահատկություններով: Բանաստեղծը մշակել է հայերենի հարուստ ու բազմաբնույթ բառազանձից օգտվելու ուրույն եղանակ ու ձևեր: Նրա ստեղծած նորաբանությունները բառ-պատկերներ են, ընտրված բառարմատներ երևույթի

<sup>3</sup> Բ. Կարալավիլի "Միւր րօման Գերմանա Գեսսե", Թբիլիսի, 1984, սթր. 187-8.

<sup>4</sup> Բ. Կարալավիլի, տաւ յէ, սթր. 231.



խոր ընկալման զգացում են առաջացնում; Հեղինակը ստեղծում է հիմնականում իսկական բարդություններ / դրանք կազմում են նորաբանությունների մոտ 90 տոկոսը / ազգախաչ, այբբենաթուր, բելասպան, գաղտնաեղեռն, դանթեալուռ, եղեռնափոս, գորագորք, ինքնահունցվել և այլն;

Շիրազյան նորաբանություններն ունեն յուրահատուկ կառուցվածք; Այդ բառերը ըստ կազմության կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ պարզ բառեր, ածանցավոր բառեր, բարդ բառեր / դրանք հիմնականում իսկական բարդություններ են / և բարդ ածանցավոր բառեր: Պարզ բառերի մեջ մի առանձին խումբ են կազմում գոյականներից կազմված պարզ բայերը, որոնք դիպվածային բառեր են: Օրինակ՝ աշունել, բուրգել, գյուտել, եղեռնել, հարեմել, շատրվանել, կուրել, վեմել, ոտել: ա / Ածանցավոր բառեր: Շիրազը կազմում է ածանցավոր նոր բառեր, որոնք ևս բնութագրում են հեղինակի լեզվամտածողությունը և խոսքի ոճավորման ինքնատիպությունը: Դրանք բառեր են, որոնցում ձևի և բովանդակության ներդաշնակությունը պայմանավորում են պատկերի ստեղծման անփոխարինելիությունը: Ածանցավոր բառերը կազմվել են բացառապես գոյականներից բայ կերտելու ճանապարհով: Ամենից հաճախական կիրառություն ունի կրավորականի -վ ածանցը: Օրինակ՝ արելվել, անդրանիկվել, ակունքվել, դերգորվել, դժոխքվել, ենիչարվել, գորքվել, թագվել, կայենվել, կոմիտասվել, հրաբուխվել, հեթանոսվել, սֆինքսվել և այլն;

Այս բայաշարքի մեջ սակավ թիվ են կազմում այն բայաձևերը, որոնք կազմված են ածականներից: Օրինակ՝ անճարվել, վայրագվել, մենակվել և այլն; Ածանցավոր այս բայերը ևս բնորոշ են միայն շիրազյան ոճին և դարձյալ դիպվածային բառեր են;

Հայ ժողովրդի համազգային ողբերգության հանդեպ այլազգիների քար անտարբերության պատկերն է մարմնավորվել հետևյալ տողերում

Ազգեր ինչով եք դեռ քրիստոնյա...

Բայց սֆինքսվեգիք՝ լռությամբ դժնյա,

Երբ քրիստոնյա հայ ազգն էր խաչվում / Դ /:

Պատկերի էությունն ու գաղափարը արտահայտվել է մեկ բառի մեջ՝ սֆինքսվել: Եվ կամ ...Ցածում խաչքար էր Մասիսն էլ ինքը

Տակին աճյունվող իմ հայրենիքը... / Դ 78 /:

Այս բանաստեղծական տողում աճյուն գոյականի առարկայական իմաստը վերածվել է ընթացական գործողություն արտահայտող իմաստի:

Ածանցավոր բառերի շարքում կան այնպիսիները, որոնք հեղինակը կազմել է պատկերավոր խոսքի ստեղծման նպատակադրմամբ: Դրանք տարբեր ածանցներով կազմված նորաբանություններ են: Օրինակ՝ ազգավոր, անսպեղան, անգթալ, անհանգել, անկիսելի, ամայստան, աստվածարար, գերանգութ դժոխարար, դժոխունի, եղկին, եղծանի, ընկրկանք, ծաղկատ, համասպանդ, հյուսիսուհի, ոճրարար, պատժանք, պեղանք, քարայրենի և այլն;

բ/ Բարդ ածանցավոր բառերը համեմատաբար քիչ են: Օրինակ՝ բյուրագանգյա, խորերկրյա, խորհրդալուռին, դիակուտակ, ցեղասպանք, գայլամարդուկ մեղսամասունք, միմոսախնդում, մահալուրիկ, հողմնածնունդ, մերկամուրիկ, հուշախորհրդավոր և այլն;

գ/ Շիրազյան նորաբանությունները հիմնականում երկբաղադրիչ իսկական բարդություններ են: Օրինակ՝ աքիլեսավրեժ - աքիլես - ա - վրեժ, աստղանեկտար - աստղ - ա - նեկտար, խենթակուրծք - խենթ - ա - կուրծք և այլն; Իսկական բարդությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ իմաստաբանական տեսակետից բարդության ամբողջական, ընդհանուր իմաստը բաղադրիչների մեխանիկական գումար չէ, այլ ավելի լայն ու նորացված: Եվ բարդության մեջ առաջին բաղադրիչը հանդես է գալիս որպես երկրորդի լրացում: Այս դեպքում կարելի է խոսել բարդության բաղադրիչների՝ բաղադրական հիմքերի մասին, որոնցից առաջինը՝ լրացումը, լեզվաբաններից մի մասը համարում է սերող հիմք, իսկ երկրորդը՝ լրացյալը, բաղադրող հիմք<sup>1</sup>՝ Նորաբանությունների մեջ իսկական բարդության բաղադրիչների ազատ իմաստը վերածվում է կախյալ իմաստի: Օրինակ՝ կարապնակուրծք չի նշանակում կարապ և կուրծք, այլ կարապի սպիտակության նման ճերմակ կուրծք: Մասնակի դեպքերում միայն իսկական բարդության նոր,

<sup>1</sup> Աղայան Էդ. Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե, 1984, էջ 247:



ընդհանրական իմաստը կարելի է բխեցնել բաղադրիչների իմաստից; Այդ դեպքում առկա է բաղադրիչների համադասական հարաբերություններ; Օրինակ՝ ողբերգ - ողբ և երգ, շաքարաղանդ - շաքար և աղանդ, մահադամբան-մահ և դամբան, կայծալույս /կայծ և լույս / , անդնդավիհ/ անդունդ և վիհ /;

Շիրազի պոեմներում նորաբանություն - իսկական բարդությունները արտահայտվել են բառակազմական հետևյալ կաղապարներով.

ա/ գոյական - գոյական՝ ազգահայր, ազգամայր, ազգախաչ, այբբենաթուր, առասպելածով, արնակզակ, գանգագոգ, գինեգետ, դժոխաբույր, եղեռնադաշտ, եղնկանուշ, իսլամասյուն, լեզվաբահ, լեզվածով, խաչանտառ, ծաղկացեղ, հայաբույն, հիսուսագեն, հուսավիշտ, ձկնածով, մահահամ, մահիկնաճակատ, մարմնասյուն, մոխրաբարուր, նեռազասիրալույս, վեղարասուզ, վրիժաբոց, ուղեղախյուս և այլն;

բ/ Գոյական - ածական՝ այգեճոխ, գանգալուռ, դժոխավայրագ, հիսուսահեզ, մահիկնանեղ, մարմնամերկ, ցեղաժանտ, փրփրանուրբ և այլն;

գ / Գոյական - բայ՝ առյուծացույց, արհավրատես, եղեռնասաստ, հայաթուծ, հայրենահաս, մանկաքամ, մասիսատես, շիրմաշարժ, պառանասախեղդ և այլն;

դ / թվական - գոյական՝ յոթնամանուկ, յոթնադժոխք, յոթնավանք, յոթնացավ, հազարանշխար, հազարաշիրիմ, հազարաքարվան, հազարապատանք և այլն;

Մնացած կաղապարներով մեկ կամ երկու օրինակ են կազմված; Օրինակ՝ բայ- գոյական՝ հոգնախիղճ, հոգնափրփուր, գոյական - կապ՝ մասիսաչափ, ճամփամոտ, դերանուն - բայ՝ ինքնահունցվել, ինքնամոռ, ածական- ածական՝ հավերժադալար, մոլախև, մակբայ- ածական՝ մշտանոր, մակբայ - գոյական՝ մշտախարույկ , հավերժասուզ և այլն;

Բարդությունների մեջ, որպես երկրորդ բաղադրիչ, հանդես են եկել հիմնականում գոյականը, բայը, ածականը; Իսկական բարդության կազմությանը, ինչպես օրինակներն են ցույց տալիս, մասնակցել է նաև երկրորդ ձևով՝ հանդես գալով բարդության սկզբում և կատարելով լրացման դեր; Բայ գերադաս անդամին լրացրել է հիմնականում գոյականը;

Բարդությունների կաղապարներում սկզբնաբաղադրիչը, մասամբ էլ վերջնաբաղադրիչը, գործածված են հնչյունափոխված տարբերակով; Օրինակ՝

արնակզակ - արյուն / յու - օ / , արհավրատես - արհավիրք / ի-ը/, հուսածոճ - հույս / ույ - ու/, մոխրաբարուր - մոխիր /ի-ը /

մշտամրմունջ - միշտ / ի-ը/, սիրածոճ - սեր /ե-ի/, խնկախոս - խունկ / ու-ը/ և այլն;

Մի շարք գրաբարյան արմատների -ք հոգնակերտը, որը ժամանակակից հայերենում կորցրել է իր հոգնակիության իմաստը, բառակազմության ժամանակ անկում է ապրել; Օրինակ՝ դժոխախուց, դժոխախավար, դժոխաքարոն, զորագորբ և այլն; Մեղք սկզբնաբաղադրիչով բարդությունների մեջ կա գործածության մեկ տարբերակ՝ մեղս / գրաբարի հոգնակի հայցականի ձևերը/; Օրինակ՝ մեղսադժոխք, մեղսաթաղ, մեղսահոծ, մեղսակեր և այլն; Երբեմն հաղիպում են գրաբարյան քարացած ձևեր՝ աստեղարծիվ, աստեղնացունց, աստեղաբարձունք;

Ամեն դերանունը լեզվի պատմական զարգացման ընթացքում վերածվել է ածականի գերադրական աստիճանը կազմող նախածանցի; Սակայն չիրազյան նորաբանությունների մեջ ամենա ածանցը գործածվել է գոյականների հետ՝ ամենակույս, ամենասար՝ ձեռք բերելով բառային նոր արժեք;

Նորաբանությունները, ինչպես նշեցինք, հիմնականում իսկական բարդություններն են, որոնց բաղադրիչները միմյանց միացված են կամ հողակապով / դրանք մեծամասնություն են կազմում /մոտ 90/, օրինակ՝ ազգախաչ, աստղաոգի, արևահայ, բյուզանդախոս, գաղտնաբոց, հեռաթափառ, մարդականթեղ, մահաթնջուկ և այլն, կամ առանց հողակապի՝ անգղթև, գայլընկեր, շաքարաղանդ, վտարանդ, լուռընթաց, քաջընկեց;

Որոշ բառերի մեջ հողակապը հնչյունափոխված է գործածվում է արմատական վերջնահնչյունի հետ առաջացնելով է ծայրավորը / ի-ա -ե/; Օրինակ՝ այգեճոխ, գինեխենթ, գինեմշուշ, ոգեզորք, ոգեհույս, ոգեհույլ;

Այժմ քննենք, թե նշված կաղապարներից յուրաքանչյուն ինչ խոսքի մաս է կազմում;

ա/ գոյական -գոյական կաղապարով կազմվել են՝  
1/ գոյականներ՝ ազգահայր, ազգամայր, աստղանեկտար, եղեռնադաշտ, ազգավաչ,արթունահայ, երկնափիրուզ, լեզվաբահ, լեզվածով, լեզվագորբ, լեզվաեղջյուր, ծաղկածով, հանճարալույս, շաքարաղանդ;



2/ ածականներ՝ ակահաքրքիջ, անգղթև, այրբենաթուր, արնակզակ, աքիլլավրեժ, գահաթուրք, գինեխինդ, գինեմշուշ, երախտահուշ, լեզվաժխոր, կարապնավանք, հայազեն, հուսամրմունջ, մահակնճիռ, մարմնածյուն, մեռազարհուր, սիրալույս, վեղարասուզ, ուրվախոհ և այլն;

բ/ Ածական - գոյական կաղապարով կազմվել են՝

1/ գոյականներ՝ գաղտնաեղեռն, թխավարդ, պղծաճակատ, վայրենավագր, արթունահայ / ... դու իմ միակ արթունահայ, ԳԳ /;

2/ ածականներ՝ մերկուղեղ, խենթակուրծք, իմաստագործ, նորաթագ, ոսկեթաղ, գաղտնաբոց, դժնաթրթիռ, զարհուրաբիր, ապշաբերան;

գ/ գոյական - ածական կաղապարով կազմվել են միայն ածականներ գանգալուռ, գանգամուր, դժոխավայրագ, հիսուսահեզ, մահիկնանեղ, փրփրամուրբ և այլն;

դ/ թվական - գոյական կաղապարով կազմվել են միայն ածականներ յոթնադժոխք, յոթնավանք, յոթնացավ, յոթնահող, հազարանշխար, հազարաշիրիմ, հազարաքարավան և այլն;

ե/ գոյական - բայ կաղապարով կազմվել են՝

1/ գոյականներ՝ եղեռնասաստ / ԴԴ 43/ հարսնառ; / Բայց հարսնառի ժխորի մեջ... /; մեղսատենչ / Նոր մեղսատենչով թուխսի է մստել Մասիսից այն կողմ, ԴԴ 261/, հուսածառս /Մի հուսածառս՝ զրկված իր մի ողջ անհույս անտառից, ԴԴ 251/;

2/ ածականներ / որոնք մեծամասնություն են կազմում/ ազգապահ, առյուծացույց, աստղացիր, արհավրատես, արքունատար, աստեղնացունց, ասորախոս, եղեռնասաստ, երկնամատույց, հայաթուրծ, հայրենամոռուչ, մահահաս, մանկաքամ, մեղսակեր, վրեժավառ և այլն;

զ/ բայ- գոյական կաղապարով կազմվել են ածականներ՝ հոգնախիղճ, հոգնափրփուր;

է/ ածական -ածական կաղապարով բացառապես ածական խոսքի մասն է կազմվել՝ ամայաշվար, մոլախև, պղծամեծ, պղծալուռ;

ը/ դերանուն - գոյական կաղապարով կազմվել են ածականներ՝ ամենակույս, ամենասար;

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, նորաբանությունների մեջ իսկական բարդությունները աչքի են ընկնում կաղապարների բազմազանությամբ, խոսքամասային բազմաբնույթ կազմությամբ;

Այժմ անդրադառնանք բարդությունների ներքին կառուցվածքին, բաղադրիչների արտահայտած շարահյուսական հարաբերություններին, իսկ այդ հարաբերությունները, ինչպես նկատել է Մ.Աբեղյանը, սովորաբար «ստորադասական է. մասերից առաջինն ըստ իմաստի լինում է լրացում երկրորդի, այսինքն՝ բարդ բառի գլխավոր նշանակությունը երկրորդ մասի մեջ է, առաջինը միայն որևէ կողմից որոշում, լրացնում է երկրորդի իմաստը<sup>2</sup>...»;

Այն բարդությունները, որոնց գերադաս անդամը գոյականով է արտահայտվել, ունեն բաղադրիչների այնպիսի հարաբերություններ, որոնք հատուկ են գոյականական բառակապակցություններին, այսինքն՝ գոյական գերադաս անդամին ստորադասված խոսքի մասերը հիմնականում արտահայտում են շարահյուսական երկու՝ հատկացուցիչ – հատկացյալի և որոշիչ- որոշյալի հարաբերություն;

ա/ գոյական-գոյական կաղապարով կազմված գոյականներ, որոնք արտահայտում են հատկացուցիչ – հատկացյալի հարաբերություն; Օրինակ՝ աստվածամարմին / աստծո մարմին /, աստղահուր / աստղերի հուր /, աքիլլավրեժ / աքիլլեսի վրեժ /, գառնածայն / գառան ձայն /, գինեգետ / գինու գետ/, դժոխաբույր դժոխքի բույր /, եղեռնավայր / եղեռնի վայր /, խաչանտառ / խաչերի անտառ /, հիսուսամահ / հիսուսի մահ /, սիրաճրագ / սիրո ճրագ /, օջախաբար / օջախի քար /;

բ/ գոյական- գոյական կաղապարով կազմված բարդություններում որոշիչ- որոշյալ հարաբերություն արտահայտող բառերը ավելի սակավ են՝ դժոխաբույր /դժոխային բույր /, արնալաց / արյունալի լաց/, գանգալեռ գանգերից պատրաստված լեռ/,կաթնակուրծք / կաթնային կուրծք/; կանացազգեստ /կանացի զգեստ /, ծյունահյուսիս/ ծյունոտ հյուսիս /, դուրամահայ / դուրանը դավանող հայ /, անտունահայ / անտունի – որբ հայ /, վշտահուշ / վշտոտ հուշ/;

<sup>2</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե, 1965, էջ 201:



մոխրամատուռ / մոխրի վերածված մատուռ /, մեղրագազպե / մեղրի նման գազպե/;

Մնացած կաղապարներով կազմված բարդություններում բաղադրիչներն արտահայտում են որոշիչ- որոշյալի հարաբերություն

գ/ ածական - գոյական կաղապարով կազմված գոյականներ, որոնք արտահայտում են որոշիչ- որոշյալի հարաբերություն՝ արթունահայ / արթուն հայ/.

գաղտնաբոց / գաղտնի բոց /, դժնա թրթիռ/ , ապշաբերան / ապուշի նման բերանը բաց /, նորաթագ / նոր թագ կրող/, պղծաեղեռն / պիղծ եղեռն /, վայրենավագր / վայրենի վագր , վշտագույժ, լերկագանգ, ծանրալանջ;

դ/ գոյական - ածական կաղապարով կազմված բարդություններում գերադաս անդամ -ածականի բառային իմաստի թելադրանքով գոյական լրացումը տարբեր հոլովածներով է դրված: Օրինակ՝ այգեճոխ / այգիներով ճոխ / , գանգալուռ / գանգի նման լուռ /, գինեխենթ / գինուց խենթացած/ , դանթալուռ/դանթի նման լուռ /, հյուսքասև / սև հյուսք ունեցող /, մահիկնանել / մահիկի նման նել /, մարմնամերկ / մերկ մարմնի նման / , ցեղաժանտ / ժանտ ցեղ /, փրփրանուրբ / փրփուրի նման նուրբ /;

ե/ թվական - գոյական կաղապարով կազմվածները՝ յոթնադժոխք, յոթնավանք / յոթնախումբ, յոթնանահայ, յոթնացավ, հազարապատանք ;

զ/ մակբայ - ածական կաղապարով կազմվածները՝ մշտամունջ / ինչպիսի /, մշտանոր, ;

ը/ մակբայ - գոյական մշտախարույկ / ինչպիսի / , մշտաբուժ, մշտաբոթ;

Բայ գերադաս անդամ ունեցող կաղապարներում ուսումնասիրությունից պարզվեց, որ բաղադրիչների միջև կան խնդրային, պարագայական, ենթակայական հարաբերություններ;

1/ Գոյական - բայ կաղապարի բաղադրիչներն արտահայտում են խնդրային հարաբերություններ.

ա/ ուղիղ խնդրային հարաբերություն; Օրինակ՝ ազգապահ / ասզը պահող /, արհավրատես / արհավիրք տեսնող /, աստղացիր / աստղ ցրող /, աստղացունց / աստղը ցնցող /, աստվածակիր / աստծուն կրող /, արքունատար արքունիք

տանող /, բելասպան բելին սպանող/ , պանդխտատար / պանդուխտ տանող /, մանկաբամ / մանուկին քամող/, մասիսատես / Մասիսը տեսնող /;

բ/ Տրական հոլովով դրված անուղղակի խնդրի հարաբերություն; Օրինակ՝ հայացունց / հայերին ցնցող /, մահահաս / մահին հասնող /, մուրագահաս / մուրագին հասած /, սիփանահաս / Սրփանին հասնող /;

գ/ Գործիական հոլովով դրված միջոցի անուղղակի խնդրի հարաբերություն՝վրեժավառ / վրեժով վառված /, հիսուսագեն / հիսուսով զինված/, հայաիոծ/ հայերով խիտ, շատ /, խնկախոս / խնկով խոսող /;

Գոյական - բայ կաղապարով բարդությունների բաղադրիչներն արտահայտում են նաև պարագայական հարաբերություններ; Օրինակ՝ ազգախոսիկ / ազգի նման խոսող /, առյուծացույց / առյուծի նման ցույց տվող/, ասորախոս / ասորերեն խոսող , ինչպես /, բյուզանդախոս, դանթալուռ / դանթի նման կուռ , ամուր /, սերմնամեն / սերմի նման մեռնող /, ոսկեթաղ / ոսկու մեջ թաղված /, հայրենամուտ / հայրենիք մտնելը /, հայաիաչ / հայի նման հաչող /, շնահանգել շան նման հանգել , ինչպես /, կարապնասահ / կարապի նման սահող/;

Բարդությունների բաղադրիչները արտահայտում են նաև ենթակայի հարաբերություն; Օրինակ՝ եղեռնասաստ / եղեռնը սաստելը/, շիրմաշարժ /շիրիմը շարժելը/, հայկակերտ / Դայկի կերտած , կողմնակի ենթակա/;

Թվական - գոյական կամ մակբայ բաղադրիչները արտահայտում են պարագայական նշանակություն; Օրինակ՝ յոթնադժոխք, յոթնակողմ, յոթնածոր, յոթնամեղա, յոթնավանք, յոթնացավ / ինչքան / , հազարակտուց, հազարաթուր;

Գոյական -ածական, ածական-ածական, ածական -գոյական բաղադրիչները ևս արտահայտում են պարագայական իմաստ; Օրինակ՝ այգեճոխ, ապշահառաչ, գանգալուռ, գինեխենթ, դանթալուռ, դժնաթրթիռ, դժոխավայրագ, լուսնադժգույն, մոլխիս, պղծամեծ, ցեղաժանտ և այլն;

Նորաբանությունների ոճական նշանակությունը Շիրազի պոեմներում

Շիրազի պոեմների նորաբանությունների լեզվական քննությունը հանգեցնում է նաև նրանց ոճական ուսումնասիրությանը, .. քանի որ ամեն մի գրող որքան ինքնատիպ է իր մտածողությամբ ու լեզվով, նույնքան և



անհատական է իր ոճով, որով էլ հենց ամենից առաջ տարբերվում է մյուսներից<sup>3</sup> ,:

Շիրազի պոեմներում նորաբանությունները առանձնանում են իրենց ոճական յուրօրինակությամբ, որը պայմանավորված է բանաստեղծի ինքնատիպ մտածելակերպով: Բանաստեղծի անսպառ երևակայությունը ծնունդ է տվել այնպիսի բառերի, որոնք նպաստել են նկարագրված պատկերների տեսանելի և շոշափելի դառնալուն: Շիրազը բառապաշարում եղած բառերի մեջ փորձել է գտնել մինչև իր ժամանակները անհայտ իմաստներ ու նրբերանգներ: Դա արվում է բառերի անսպասելի համատեղմամբ, անսովոր կապակցություններով և դրանց՝ նույն այնքան անսպասելի գործադրմամբ: Շիրազյան նորակազմությունները համալրել են հայերենի բառամթերքը, թեպետ դեռևս բառարաններում արձանագրված չեն: Գրողի ստեղծած նորաբանությունները աչքի են ընկնում իրենց դիպուկությամբ, խորիմաստությամբ, պատկերավորությամբ: „Դանթեականում,, հայոց թախիծն ու վիշտն ընդգծելու համար Շիրազը պոեմում սփռել է բառեր, որոնք ամբողջական գաղափար են տալիս այդ երկի բովանդակության մասին: Օրինակ՝ եղեռն, դժոխք, գանգ, մահ, մեղք արմատներով կազմված են բառեր՝ գանգալեռ, գանգագոգ, դժոխախավայր, դժոխաքեն, եղեռնադաշտ, եղեռնախուժ, մահաշանթ, մահաշուրջառ, մահաքառս, մեղսաշար, մեղսահեղձ, մեղսակնճիռ և այլն, որոնք ընթերցողի հոգում կատարվածի խոր ընկալման զգացում են ծնում: Կարծես Շիրազը Դանթեի նկարագրած դժոխքի պատկերներին հակադրում է հայ Դանթեականը, որը սրտախոց հիշողություն է, այլ ոչ թե երևակայության արդյունք: Դժոխք արմատով կազմված բարդ բառերում այդ բառը որոշակի երանգավորում է ստանում՝դանթեադժոխք, դժոխահառաչ, դժոխաշրթունք, դժոխաքեն, դժոխանվագ և այլն:

Ախ, վայ, թե տեսնես ինչ պիտի տեսնենք,

Երբ լոթնադժոխք Դեր-Չորներն հասնենք...

Եվ այս մողոքի դժոխաքարոն հետքերը բռնած... /Դ/

<sup>3</sup> Լ.Կեզելյան, Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն, Եր., 1990, էջ 269:

եղեռն բառը հալածել ու խենթացրել է Շիրազին իր ողջ կյանքի ընթացքում, և նա ստեղծում է բառեր, որոնց արտահայտած իմաստները՝ հրկիզում են ընթերցողին՝ եղեռնաճամփա, եղեռնաձայն, եղեռնահար, եղեռնաղետ, եղեռնածոր, եղեռնասպի եղեռնասուգ, եղեռնասասան և այլն:

Դարեր անիծեն եղեռնասաստիս վրիժաբոցով նզովեն նոցա...

Ու ելանք վանքի ցրտից չարագույժ,

Որ գնանք Դեր-Չորն այն եղեռնախուժ.../Դ/

Մոխիր արմատով կազմված ինքնատիպ բառերում մոխրագույն երանգով պատկերը դառնում է նույնքան մռայլ ու չարագույժ: Օրինակ՝ մոխրաթախիծ, մոխրափլված, մոխրամիտք, մոխրափրփուր, մոխրածով:

Ո՛ր երբ դուրս եկանք մենք դանթեալուռ

Մեր դեմ հայտնվեց մի մոխրամատուռ,

Մատուռ դառած մոխրատրուշան .../ ԴԴ 93/

Ո՛ր մոխրագուլոհիզ մենք Դուլիս հասանք...

Մեղք բառով կառույցները ևս ինքնատիպ են. բանաստեղծը չափանիշներ է փնտրում մեղսագործին և մեղքը բնորոշելու համար. Այդ բառերից են՝ մեղսաթուրք, մեղսահոծ, մեղսակեր, մեղսաթաղ, մեղսահեղձ և այլն:

Ինչ ունի հայր մեղսափարիզում,-

Սոռացանք միթե մեղքը ֆռանգի.../ԴԴ 20/

Գալիս են հետքով մեղսաթուրքի

Փնտրելու համար մարմիններն իրենց;/ ԴԴ 40 /;

Բառերի իմաստները շահում են նաև այլ արմատական բառերի գործածությամբ՝ ազգ՝ ազգահայր, ազգախաչ, ազգախոսիկ, ազգամասունք, ազգաբերդ, ազգահառաչ և այլն; Բյուր՝ բյուրալեռ, բյուրագանգ, բյուրահալ, բյուրանդունդ, բյուրավերք; Մահ՝ մահաշանթ, մահաքառս, մահահամ, մահաթնջուկ, մահահրաբուխ, մահամուղոր, մահայլա; Հավերժ՝ հավերժավառիկ, հավերժանիշ, հավերժահայ, հավերժարև ; Ընթաց՝ ծծողնթաց, ուղտընթաց, լուռընթաց; Հազար՝ հազարաշիրիմ, հազարապահեստ, հազարադժոխք, հազարաթուր, հազարաբերդ, հազարաթարթիչ, հազարավայ և այլն:



Շիրազն ստեղծում է բառեր նաև, որոնք իրենց մեջ հակադրություն են պարունակում՝ պոռնկանեկտար.

Խաչեց մեր հույսը ու պոռնկանեկտար

Նարգիլն դրկեց սուլթան ու խանին.../ՀԴ 35 /

Տեսնում ենք, որ բանաստեղծական խոսքում յուրաքանչյուր նոր բառ խորապես պատմառաքանված է իմաստային առումով; Եվ նոր բառն էլ այնպես է ծուլվում պատկերին, որ հնարավոր չէ այն ընկալել առանց այդ մի բառի;

Շիրազի ստեղծագործությունների համար Մասիսը եղել է ներշնչանքի աղբյուր, և իր սերն ու կարոտը արտահայտելու նպատակով նա գործածում է ամենա բառով կազմություններ՝ ամենասար, ամենալեռ;

Գրողի համար մեծ արժեք է ստացելաստվածաշնչյան բովանդակություն ունեցող քվանշանների գործածությունը՝ յոթնադժիսք, յոթնացավ, յոթնամանուկ, յոթնահայ, յոթնամեղա յոթնավանք և այլն;

„Սիամանթո և Խջեզարե,, պոեմում Շիրազի անսպառ երևակայությունը ստեղծել է բառեր, որոնք կարդացողի հոգում ծնում են գեղեցիկը գնահատելու անզուսպ ցանկություն; Մարմին բառը շունչ է առնում բանաստեղծի գրչի տակ, և դու տեսնում ես , թե ինչպես են կարապնակուրծք աղջիկները ծովը մտնում մերկացած... Ծովը մտան ...փրփուր-փրփուր, տեսիլներով մարմնածև...

...Երագում էլ տեսած լիներ, բայց չէր տեսել մարմնամերկ,

Այն էլ վանքի սուրբ կույսերին...

Յուլյ բառը բարդությունների մեջ ոճական նոր երանգ է ստանում և նպաստում է խոսքի պատկերավորմանը;

Խոսում էիր Աստծո հետ հուսամորմունջ ու սրտաշուրթ...

...Մերթ նետի պես հուսաթռիչ, մերթ աղեղի պես կորվելով... / ՀԴ/;

Շիրազի խորին համոզմամբ հայ ժողովուրդը չկորավ դարերի մշուշի մեջ, քանզի „ղարակուտակ աղետների մոխրի մեջ էլ անթեղվելով,, ապավինեց հայոց գրին; Եվ չի ծուլվի հայը ազգերի մեջ, քանի դեռ լեզուն եղջյուր ունի,, լեզվանեղջյուր պիտի ցուլվի, հավերժ պիտի խոյահարե...,, /ՀԴ/

Բանաստեղծը երագում է այն բարի օրվա մասին, երբ այլևս չեն լինի իրանահայ, քուրանահայ, այլ հայը կլինի միայն հայրենահայ;

Ախ, երբ պիտի ազգահավաքն հային դարձնի հայրենահայ,

Որ աստղացիր ողջ հայերին խմբեարևահայ ՀԴ/;

Այս երկու տողում բանաստեղծը իր յուրօրինակ հնարանքով ստեղծում է բառեր, որոնք ավելի խորն են ընդգծում Շիրազ-գրողի ապրումները աշխարհացիր հայ ժողովրդի ճակատագրի մասին;

„Հայոց հրաշքը՝ Մեսրոպ Մաշտոց,, պոեմում նոր թափ է առնում շիրազյան գրչը. ստեղծվում են բառեր, որոնք ներդաշնակ են և գրողի հայրենասեր ոգուն, և Մեսրոպ Մաշտոցի երախտափուլ հիշատակին;

Հաճախ Շիրազը գործածում է բառարմատներ, որոնք տարբեր բարդությունների մեջ գործածվելով՝ տարբեր նրբերանգներ են ստեղծում խոսքում; Օրինակ՝ գորք – իմաստագորք, լեզվագորք, գորագորք,/ՀԴ/ , ծով - երկնածով, /Սև/, լեզվածով /Գ/, ծաղկածով, մայրածով /Սև/;

Պետք է նշել, որ Շիրազի պոեմները առանձնանում են նաև մակդիրների հմուտ ու ճաշակով գործադրմամբ; Հայտնի է, որ մակդիրները, հատկապես այն մակդիրները, որոնք հեղինակային նորաբանություններ են, ծառայում են խոսքին զգացմունքային լիցք հաղորդելուն; Նրա պոեմներում հաճախական կիրառություն ունեն ածականական /գահատու հրաման, աստվածարար ծով, մշտանքուծ մեղք/ և դերբայական ձևերը /դերգողված մահ-ճամբար, եղեռնված ազգ, նոնած գիրք, մատյանված ածու, չիրմաշարժվող դաշտ/, որոնք մեծամասամբ բարդ կառույցներ են; Շիրազը վարպետորեն է կիրառել մակդիրները՝ բացահայտելու տվյալ իրավիճակի մեջ բնորոշն ու կարևորագույնը; Մակդիրների միջոցով հեղինակին հաջողվել է ավելի խորն ու հուզալից արտահայտել իր մտորումներն ու խոհերը; Գրողը չի ստեղծում սովորական, ավանդական մակդիրներ, այլ ստեղծում է նորաբանություն-մակդիրներ, որոնցով հեղեղում է իր պոեմները / հատկապես Դանթեականը / ; Բառերի մակդրային արժեքը պայմանավորված է նրանց արտահայտած թեմատիկ նշանակությամբ; Այսպես՝ սիրո գաղափարի պաշտպան բանաստեղծը „ Սիամանթո և Խջեզարե,, պոեմում կերտել է մակդիրներ, որոնք նրա գեղագիտական ճաշակն են ընդգծում միաժամանակ; Օրինակ՝ մարմնածյուն ջրահարս, կարապնակուրծք աղջիկներ, փրփրանուրը մարմին, քիսավարդ թշեր ; Կորցրած հայրենիքի կարոտն արտահայտում է այնպիսի



մակդիրների միջոցով, ինչպիսիք են՝ հավերժահայ Սիփան, ծաղկածով Սիփան, պառնասայեռ Մասիս, բյուրավեռ Չայաստան, կայծակնագոչ Սասուն և այլն; „Չայոց Չրաշքը, պոեմում հեղինակը մակդիրներ է շռայլել Մեսրոպ Մաշտոցին հայ ազգին հավերժ հայ պահողին, մեծարելու համար; Քանզի օտարը այն դաժան օրերում ուզում էր „հային ծուլել չորս լեզվի մեջ մահաթնջուկ, / 230 ԳԳ/; Սակայն „երեսունվեց որդի ծնեց ... կույս երկունքով,“ իր հանճարի անմահության կնիքը դնելով „մահակնճիռ ճակտին հայոց „; Եվ հայ ժողովուրդը , ապավինելով հայոց գրերին, ղարակուտակ աղետների մեջ չկորցրեց իր ինքնությունը; Մակդիրների գործածությունը բանաստեղծի կողմից արվել է շատ ճաշակով ու նպատակասլաց;

„Ղանթեականում,“ նյութի բովանդակությունն ու մեկնաբանությունը Շիրազի կողմից ներկայացվում է բանաստեղծական անսպասելի պատկերների ստեղծմամբ; Նկարագրված պատկերներն այնքան հուզիչ են ու կենդանի, որ ընթերցողը կարծես դառնում է ակամատեսը այդ ամենի; Ինքնամոռաց, կլանված նկարագրվածով՝ հեղինակը ստեղծում է նորաբանություն-մակդիրներ, որոնք իրենց բացառիկ գործածությամբ, նրբերանգային առանձնահատկություններով բացահայտում են հայոց մեծ եղեռնի սարսափը: Աստվածային դժոխքը տեղափոխվել էր Չայաստան աշխարհ; Նման դժոխք Դանթեն նույնիսկ չէր տեսել, քանզի ինչ-որ չէր տեսել իր նկարագրած դժոխքում, տեսնում է այստեղ. „Ինչ-որ չէր տեսել Աստծո դժոխքում, Մարդկային վշտի ձևերը պես-պես , Զարհուրատեսիլ ու քստմնամեծ... / Դ , 14 / ; Իսկ այդ դժոխքը նկարագրելու համար Շիրազը ստեղծում է բառեր, որոնց միջոցով հեղինակը հասնում է խոսքի կատարելության ու պատկերավորության; Ինչպես սիրահառաչ հայ, ժայռաշրթունք աշխարհ, գարհուրաբիր աչքեր, եղեռնադժոխք անդունդ, մահաշուրջառ անապատ, մանկամահ մեղք, արհավրավիշտ հայ, մեղսադժոխք աշխարհ, հիսուսագեն ազգ, բյուրագանգյա մահեր, մթնուղեղ խաժամուժ, գոջախեյք թուրք, ահեղատեսիլ հորդա, մեղսածնունդ ոսոխ, մահախոնջ աչք, ահառած երկինք, հավերժասուզ երկիր, մշտանքուժ մեղք և այլն;

Շիրազյան նորաբանություն –մակդիրները իրենց մեջ պարունակում են նաև համեմատություն չնայած չկա համեմատության եզր;

Օրինակ, թափառավաչ արշավել – թափառական,վաչկատուն ցեղերի նման արշավել / Չայոց պատերն են ձեր թափառավաչ արշավել,.... ու այս հոդը կնքել սելջուկ անունով/ Դ 234 /; Գառնաբառաչ գոռալ /գառան բառաչի նման գոռալ/, ուրվաքայլ երթ / ուրվականի նման քայլող երթ/, հիսուսախաչ ընկրկանք/ Չիսուսի նման խաչվելով ընկրկել/, ղեղնաղագաղ անապատ/ դեղին գույնի դազաղի նման / , մարմնածյուն ջրահարս/ ծյան նման սպիտակ մարմին/ , փրփրանուրբ մարմին/ փրփուրի նման նուրբ/ և այլն;

Փոխաբերական իմաստ են արտահայտում հետևյալ մակդիրները՝ մերկուղեղ մագաղաթ /ԳԳ/, մահակնճիռ ճակատ/ ԳԳ /, այրբենաթուր զորավար, /ԳԳ/, պոռնկանեկտար նարգիլե /Դ/, աստղապեղ Շիրակացի /Դ/, ծյունած Գոմեր /Դ/, չիժմաշարժվող դաշտ /Դ/, ահառած երկինք /Դ/, մահակնճիռ եղեռնադաշտ /Դ/, ուրվախտի ոգի/Դ/, արհավրատես լուսին/ Դ/, դժոխաշրթունք լուսություն /Դ/ և այլն;

Մի քանի խոսք մակդիրների կիրառության մասին; Շիրազի պոեմներում մակդիրները գործածված են հիմնականում գոյականների հետ՝ իբրև գեղարվեստական որոշիչ լրացում; Ինչպես պանդխտատար ճամփա, աստղագիր հայեր, սիրահառաչ հայ, մահաթնջուկ մղձավանջ, ղանթեադժոխք ճամփա, հիսուսագեն ազգ, գոջախեյք թուրք և այլն; Սակայն շիրազյան մակդիրների մեջ առանձնակի կիրառություն ունեն պարագայական մակդիրները; Բայերի հետ կիրառելով՝ հեղինակը նպատակ է ունեցել ավելի խորն ընդգծել գործողության տևությունը; Օրինակ՝ղանթեալուռ դուրս գալ, ապշահառաչ մոլորվել, փախչել գառնաբառաչ, լեզվանդջուր ցուլվել, աստղագիր փշրվել, գինեմշուշ երգել, մահասոսալի սրսփալ, մահաշանք խուժել ,շահակամ լռել և այլն ;

Ինչպես տեսնում ենք, Շիրազի ստեղծած նորաբանություն-մակդիրները անկրկնելի են և համահունչ են բանաստեղծի հոգուն; Նա ինքնամոռաց նվիրումով, աստվածատուր երևակայությամբ թղթին հանձնեց տարիներ շարունակ իրեն մտատանջող թեման՝ հայոց եղեռնը և եղեռն-երևույթին զնահատում չստանալը; Չայ ազգի նկատմամբ մարդկության նման բուր անտարբերությունը գրողին ստիպեց դառնալ իր ազգի իրավունքների ջատագովը, դառնալ ազգապահպանության խոսափողը, ազգային



ինքնագիտակցության ռահվիրան; Եվ նա իր պոեմներում նկարագրեց պատկերներ, որոնք վերարտադրում են բանաստեղծի դժոխախոս սրտի մորմոռը:

Շիրազի պոեմների նորաբանությունները իրենց բազմաբնույթ կառուցվածքով և ռճական առանձնահատկություններով մեր կարծիքով կմնան որպես հեղինակային նորաբանություններ: Անշուշտ, այդ բառերի մի մասը ունի և կունենա իր գործածությունը: Ինչպես՝ ազգապահ, աշխարհացիր, արնահեղեղ, զինեխենթ հավերժվել, սիրապաշտ և այլն: Սակայն 759 / մեր հաշվարկով/ նորաբանությունների մեծ մասը դիպվածային բառեր են, որոնք հեղինակի կողմից ստեղծվել են խոսքի յուրահատուկ ռճավորման միտումով: Այսպես՝ ազգազայլ, ազգախաչ, արթունահայ, գաղտնաեղեռն, գերեզմանածով, գանգալուռ, ահախոնջ, աշխարհակարկառ, դժոխախենցար, դժմաքայլ, եղեռնածայն, եղեռնաղետ, զղջախելք, ժայռաշրթունք, կարապնավանք, խաչահույս, լեզվածով, խաչանտառ, ձյունահյուսիս, մահագունվել, մանկաքամ, մարմնախրճիթ, մոխրաթախիծ, նիզակաքեն, շատրվանել, ոսոխվել և այլն:

Այսպիսով, շիրազյան նորաբանությունները աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ, բաղադրիչների յուրօրինակ համադրումներով: Դրանք ինքնանպատակ չեն ստեղծվել, այլ գրողի հոգնատանջ հոգու պոռթկումներն են, որոնց գործածությամբ հեղինակին հաջողվել է ընթերցողին խորհել ու զնահատել տալ Շիրազ-բանաստեղծի պոեմների լեզվական արվեստը:

#### Օգտագործած գրականության ցանկ

1. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե, 1984, էջ 247:
2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե, 1965, էջ 201:
3. Եզեկյան Լ. Կ., Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն, Եր., 1990, էջ 269 :

## ՈՃԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կառուցվածքային լեզվաբանության կարևորագույն հասկացություններից մեկը մակարդակի հասկացությունն է: Լեզվի բաղադրիչները կազմում են իրար հետ փոխադարձաբար կապված ու միմյանցով պայմանավորված համակարգեր: Այդ բաղադրիչները միմյանց նկատմամբ գտնվում են ենթադասության և գերադասության հարաբերության մեջ, այսինքն կազմում են մակարդակների ստորակարգություն /հիերարխիա/, ըստ որի տվյալ կարգի միավորները ենթադասվում են և ծառայում հաջորդ, ավելի բարձր կարգի միավորների համակարգին: Այս փաստը թույլ է տալիս լեզուն դիտելու որպես միմյանց վրա բարձրացող, միմյանց հաջորդող մակարդակների կառուցվածք: Այսպես օրինակ, հնչույթային մակարդակը ստորադասվում է ձևության մակարդակին և ծառայում է ձևային կազմելուն, ձևության մակարդակը ստորադասվում է բառային մակարդակին և այլն:

Ամերիկյան նկարագրական լեզվաբանության մեջ ընդունվում է 2 մակարդակ՝ հնչույթային և ձևային, և նույնիսկ ասույթի վերլուծությունը հանգում է ձևայինների ու նրանց դասերի որոշմանը, այսինքն՝ բոլորովին դուրս է մնում բառը որպես լեզվի միավոր:

Լեզվաբանների կողմից առավել ընդունելի է համարվել Էմիլ Բենվենիստի տեսությունը, որի վրա էլ հիմնվում է լեզվական կառուցվածքի մակարդակների բնութագրումը: Նա ընդունում է հետևյալ մակարդակները.

1. Տարրության, որն ամփոփում է հնչույթների տարբերակիչ հատկանիշները,
2. Հնչույթային, որի միավորները հնչույթներն են որպես ձևայինների բաղադրիչներ,



3. Նշանային, որն ընդգրկում է լեզվի իմաստակիր միավորները, որոնց նա տալիս է ընդհանուր «բառ» անվանումը,

4. Ստորոգային, որի միավորը նախադասությունն է և հիմնական հատկանիշը՝ ստորոգումը:

Այս չորս մակարդակներից առաջինը և չորրորդը կազմում են սահմանային կամ վերջնային մակարդակները, որոնց միջև գործառուցվում են մյուս մակարդակների միավորները<sup>1</sup>:

Պետք է նշել, որ սույն հայեցակարգը շատ արդյունավետ եղավ թարգմանության տեսության համար և ընդունվեց որպես հիմք թարգմանչական համարժեքության մակարդակները բացահայտելու և ուսումնասիրելու համար: Այդուհանդերձ, թարգմանության մեջ այն ընդունվեց որոշ փոփոխություններով: Որպես թարգմանչական համարժեքության մակարդակներ ընդունվեցին.

1. բառը,
2. բառակապակցությունը,
3. նախադասությունը,
4. տեքստը:

Անցումը նոր՝ ավելի բարձր մակարդակի, անհրաժեշտ է դառնում, երբ նախորդ՝ ավելի ցածր մակարդակը չի տալիս անհրաժեշտ ինֆորմացիան, որն ունի բնագիրը:

Բառային համարժեքության խնդիրը տեքստային մակարդակում բարդանում է նրանով, որ առաջնայինն այստեղ ոչ թե բնագրի և թարգմանված տեքստի միջբառային հարաբերություններն են, այլ ամբողջ տեքստի գործառական համարժեքությունը:

Այս հանգամանքը թարգմանչին թույլ է տալիս, իսկ որոշ դեպքերում նույնիսկ պարտադրում է հեռանալ բառային հիմնական իմաստից՝ պահպանելու համար տեքստի իմաստային ամբողջական կառուցվածքը: Եվ որպեսզի թարգմանիչն առավելագույնս հավատարիմ մնա ելակետային տեքստին, ստիպված է լինում դիմելու որոշ փոխակերպումների՝ թարգմանվող լեզվում անհրաժեշտ համարժեքը գտնելու համար:

Այսպիսի փոխակերպումների կոնկրետ պատճառները բազմաթիվ են բառի իմաստային ծավալի տարբերություն երկու լեզուներում, քերականական

կառուցվածքների տարբերություն, և վերջապես, երկու լեզուների ոճական համակարգերի անհամապատասխանություն:

Ըստ այդմ էլ փոխակերպումները իրենց բնույթով լինում են՝

1. բառային,
2. քերականական,
3. ոճական:

Ոճական փոխակերպումների անհրաժեշտությունը ի հայտ է գալիս հատկապես տեքստային մակարդակում, քանի որ թարգմանչի առջև դրված առաջնային խնդիրներից մեկն է ընթերցողի մոտ առաջացնել այն նույն հակազդեցությունը, ինչը ցանկացել է ելակետային տեքստի հեղինակը<sup>2</sup>: Ահա թե ինչու ոճական փոխակերպումները թարգմանության տեքստային մակարդակում հաճախ վերարտադրում են համարժեքների ոչ թե անվանական, այլ նշանակցային իմաստները և հիմք են տալիս պնդելու, որ բանաստեղծական թարգմանությունը իրականացվում է տեքստային մակարդակում:

Կան ծայրահեղ, իրարամերձ կարծիքներ պոեզիայի թարգմանության վերաբերյալ:

Իտալացի փիլիսոփա և գեղագետ Բենեդետտո Կրոչեն այն տեսակետի ջատագովներից է, ըստ որի բանաստեղծությունը թարգմանելի չէ ընդհանրապես, այսինքն՝ նման թարգմանության հնարավորությունն իսկ բացառվում է: Բայց կան նաև լավատեսորեն տրամադրված լեզվաբաններ<sup>3</sup>, որոնք համառորեն պնդում են, որ հնարավոր են բանաստեղծությունների կատարյալ թարգմանություններ:

Вообще говоря, наблюдения над анализируемыми СП говорят о преобладании частично совпадающих моделей над тождественными, с одной стороны, и над уникальными, с другой стороны. Интересно отметить, что уникальные модели в каждом отдельном языке составляют лишь 6 и в русском и армянском языках (из расчета на 27 русских и 24 армянских моделей) и 9 моделей среди 28 английских моделей СП.

Вот некоторые из русских моделей:

S+V “железоделательный”; V+S “пучеглазый”; Prn+A “всесильный”; D+V “мимолетный”; Num<sub>c</sub> +V\_en “малоосязаемый”; в русском языке.

Из английских моделей — Prn+S (all — union, all-Canada); A+V\_en (soft-spoken, clean-shaven); Num<sub>c</sub>+ D (first-ever, second-up); D+S+\_ed (largest-scaled, well-coated); A+D (good-ever).

А из армянских моделей это — V+V (տախտաշուտախ), D+S (ծշտաբարձութիւն), Num<sub>c</sub> +V (եղբարձութիւն, քրտախ) и др.

Приведенные выше количественные данные о соотношениях между тождественными, сходными и уникальными моделями убеждают нас в существовании структурного с х о д с т в а между этими языками в плане моделирования СП, в плане общей тенденции в н е ш н е г о о б о з н а ч е н и я сложного непроцессуального признака.

Внешнее структурное сходство касается и некоторых общих тенденций в формировании этих СП. Эта тенденция, в

первую очередь, проявляется в том, что в тождественных и частично совпадающих моделях преобладают те модели, где формирующая часть представлена прилагательным, суффиксоидом, причастием (в русском и английском языках), а в английском языке и суффицированным существительным. Однако, несмотря на примерно одинаковый состав элементов на месте формирующей части, указанные модели по-разному формируют эти модели:

Так, если в русском и армянском языках в моделях A+S, (A+S)→A второй элемент оформляется с помощью обычного суффикса прилагательного (хладнокровный, черноморский, ծովափնիշ, խոսքիւսուսիւն, то в английском существительное получает оформление в виде суффиксального причастия —ed (dark-haired, tophatted). Это же явление суффицированного субстантивного прилагательного наблюдается и в уникальной для английского языка модели D+S+\_ed (largest-scaled).

Таким образом, прилагательное, причастие, суффиксоид и суффицированное существительное формируют СП как часть речи, т.е. являются его ономазиологическим базисом в полностью или частично совпадающих моделях, что можно отнести к универсальным явлениям во всех трех языках.

Что касается участия других частей речи и прежде всего основных частей речи в качестве первого и второго компонентов, их суммарной валентности, то картина в каждом языке предстает несколько иная.

Если исходить из данных, полученных в ходе подсчета валентности основных частей речи\*, а также условных частей речи, то в армянском и английском самым активным участником (как на месте II, так и I компонентов) оказывается существительное (ср. 33,33% и 28,57%), а в русских моделях-

\* Относительная величина валентности выводится из общего количества участия данной части речи в качестве первого и второго компонентов в 28 английских, 24 армянских и 27 русских моделях.



прилагательное (общая валентность равна 27,788), что дает основание предполагать, что в истоках структуры обозначения сложного непроцессуального признака при помощи СП чаще всего обнаруживается обозначение простого непроцессуального признака при помощи прилагательного. Иначе говоря, ономасиологическая сущность СП предопределена их структурой, при этом ярким проявлением этой предопределенности семантики СП их структурой или моделью служат те случаи, когда на месте базиса стоит прилагательное.

Таким образом, суммарная валентность существительного в формировании моделей СП сближает армянские и английские модели и отличает их от русских моделей. Однако, если по каждому языку объединить так называемые "признаковые" слова (русские прилагательные, причастие и суффиксоид, армянские прилагательные, глагол и суффиксоид, в английском языке- причастия, суффиксоид и суффиксированные существительные), то можно бы увидеть общую для всех трех языков тенденцию – более активное участие "признаковых" слов, чем других частей речи и при этом – их употребление в качестве ономасиологического базиса.

Ономасиологический же признак (т.е. их первый компонент) обычно выражен всеми прочими "участниками" формирования моделей СП, однако же и здесь наблюдаются расхождения в распределении их по разным языкам.

К примеру, среди русских и английских СП нет таких, которые на месте отсылочной части имели бы глагол; роль же глагола в качестве ономасиологического признака достаточно активна в армянских СП (около 8,3%) и делает эти модели уникальными.

Далее уникальными в плане моделирования ономасиологического признака можно считать русские СП, где названный признак представлен количественным числительным в соединении с формирующей частью- причастием или

прилагательным (Num<sub>c</sub>+ V\_ing, Num<sub>c</sub>+ V\_en, Num<sub>c</sub>+ A), а также английские Num<sub>o</sub>+D (first-ever), D+S (outcollege), D+S+ -ed (well-coated).

Наконец, во всех трех языках была выделена редупликативная модель, хотя и здесь особого внимания заслуживает своеобразие армянских редупликативных моделей, которые заключается, во-первых, в том, что в них повторяется не только прилагательное, но и существительное (S<sup>2</sup> (նվղ-գնվղ, խնւր-խնւր) и, во-вторых, в регулярном и продуктивном характере этих моделей в армянском языке.

В плане семантики в моделях СП одинаково для всех трех языков наглядно проявляются истоки номинации сложного непроцессуального признака – достаточно прямое название прилагательного, что выражается в том, что большинство моделей каждого из этих языков- номинационные, ономасиологический базис которых непосредственно относит сложное слово к прилагательному.

Таких моделей в русском и английском- 18, а в армянском- 15, тогда как мотивационными оказались оставшиеся 9 русских и армянских и 10 английских моделей.

Универсальным и для всех данных языков можно также считать не просто корреляцию, но и полное совпадение номинационных моделей СП с эндоцентрическими, а мотивационных- с экзоцентрическими моделями.

Таким образом, к явлениям тождества следует отнести явное преобладание во всех трех языках таких моделей, по которым более целенаправленно (эндоцентрически) или с незначительными модификациями формируется смысловая структура СП, которая и составляет основу номинации.

Относительно синтаксической природы СП в каждом из данных языков, приходится констатировать определенные расхождения в плане образования СП на синтаксической основе, в плане соотносительности СП с синтаксическими



словосочетаниями. Это, во-первых, преобладание в русском и армянском языках синтаксических моделей, имеющих дефиницию в виде такого словосочетания, члены которого расположены аналогично элементам и их порядку следования в модели СП (в русских-17, в армянских-23, в английских же СП-превалируют асинтаксические модели). Но несмотря на определенное сходство русских и армянских моделей, можно подметить и некоторую специфику внутри синтаксических моделей того и другого языка- это то, что в армянском языке синтаксические и асинтаксические модели противопоставляются более четко и определенно, чем в русском языке. Так, если модель описана двумя и более значениями, то все они одинаково синтаксичны, например, как у моделей S+A, S+S, S+V, V+S, A+A, Pm+S, Pm+A и S<sup>2</sup>. И при этом в армянском языке лишь одна асинтаксическая модель- Num<sub>c</sub>+V и нет смешанных. В русском языке такой четкости не наблюдается, ибо у 4 моделей, описанных двумя и более значениями (S+A, S+S, A+A, A+V\_ing), устанавливается синтаксико-асинтаксический, т.е. смешанный характер.

Наличие указанных различий позволяет сделать заключение о том, что в русском и армянском языках образование СП в основном протекает по линии дефиниционного словообразования, а в английском- аналогического и корреляционного (в терминах Е.С.Кубряковой) /15/, что объясняется различиями в строе этих языков и в частности свободным порядком в русском и армянском языках и несвободным строгим порядком слов в английском языке.

Сказанное, тем не менее, не исключает аналогического и корреляционного словообразования в русском и армянском языках, равно как и в английском имеет место и дефиниционное образование СП (например, у 11 моделей и у 1 промежуточной модели).

Наконец, сравним, как соотносятся типы способов словообразования СП в трех языках и их охват моделями СП в каждом из данных языков.

В целом, номенклатура этих типов совпадает, поскольку все 5 типов, принятых нами за исходные, включая и такой тип словообразования как повторы, существуют среди СП всех трех языков. Во-первых, это чистые сложения (или подлинные сложения, с опорным компонентом, равным самостоятельному слову

а) с сочинением (ср. *shhshqwrqwnh, qwbjtzhaqlh*; red-blue, deaf-mute; физико-математический, афро-азиатский).

б) с подчинением (*qwrhwrpnr, shhwbrd*; stone-built, snow-white, red-hot; душераздирающий, скороспелый, общеевропейский, двухспальный, всеильный, свежеевыбритый).

2. Сложения со связанным компонентом — суффиксоидом (ср. *dwqlwrtr, zhwnwltr* и *godlike, nation-wide*; зигзагообразный, одновалентный, вулканогенный).

3. Сращения (агглютинативные сложения) (*prwhrhl, dnprhr, hrwhwrqlwh*, whites-only, easy-to-learn; малодействующий, умалишенный, многообещающий, сиюминутный).

4. Суффиксально — сложные СП: *shshshsh, qwrhwrhwrh, trqlrwhh*; gaincoated, blue-eyed, moon-faced; голубоглазый, четвероногий, центробежный, каменноугольный и т.д.

5. Тип-повторы (одинаковых или модифицированных компонентов): *wtwtwt, pretty-ptretty, lovely-dovely, humdrum; dnldn; белый-белый, большой-пребольшой.*

Совпадение типов словообразования, однако, не исключает и некоторых расхождений в охвате упомянутых типов конкретными моделями СП. Последние, как и ожидалось, по-разному группируются вокруг тех или иных моделей в каждом данном языке.



Так, если первому типу соответствуют модели армянских СП, такие как A+S, S+S, S+A, A+V, A+A, D+V, V+S, V+V, Num<sub>c</sub>+S, D+S, D+A, Prn+V, Prn+A, то среди английских СП возможны и D+V<sub>en</sub> (well-bred), Prn+V<sub>ing</sub>, Prn+V<sub>en</sub>(all-affecting, all-admired, а, скажем, русская модель S+A формирует не только этот тип словообразования, т.е. сложение ("паровыпускной"), но и другой — сращение ("азотфиксирующий"). В английском языке суффиксоидно-сложные группируются в основном вокруг моделей S+ S+ -ed, A+S+ -ed, D+n+ -ed, а суффиксоидные чаще всего охватывают одинаковые модели (это Num<sub>c</sub>+Sfd, S+Sfd).

Вообще, распределение моделей по типам способов словообразования обнаруживает больше случаев тождеств и сходств, чем различий.

Правда, существует одно, но принципиальное различие, а именно, русские и армянские СП в большинстве случаев образуются на базе о с н о в о с л о ж е н и я, а английские СП — на базе с л о в о с л о ж е н и я.

Подытоживая сказанное, следует отметить, что попарное сопоставление структуры и семантики русских СП последовательно с английскими и армянскими СП в равной степени показали неоднородный характер структурно-семантических соотношений внутри всех трех пар языков, а именно: три разные степени их соотношений — тождество, сходство и уникальность в номинации СП.

## ЛИТЕРАТУРА

1. "Русский язык". Энциклопедия, изд. "Советская Энциклопедия", М., 1979.
2. Смирницкий А.И. Синтаксис английского языка. Учпедгиз. М.-Л., 1957.
3. Русская грамматика, т. I, под ред. Н. Ю. Шведовой, Н. Д. Арутюновой, А. В. Бондарко. Изд. АН СССР. М., 1980.

4. Виноградов В.В. Русский язык. Грамматическое учение о слове. М.: Наука, 1972.

5. Абемян М.Х. Теория армянского языка. Изд. АН Арм. ССР. Ереван, 1965 (на арм. яз.).

6. Sweet H. A New English Grammar, pt I, Oxford, 1940.

7. Будагов Р. А. Введение в науку о языке. М.: Просвещение, 1965.

8. Потебня А.А. Из записок по русской грамматике, в кн.: "Хрестоматия по истории русского языкознания". М.: Высшая школа, 1973.

9. Жирмунский В. М. Происхождение категории прилагательных в индоевропейских языках в сравнительно-грамматическом освещении. Изв. АН СССР, ОЛЯ, вып. 3. М., 1946.

10. Абрамян С.Г. Грамматика современного армянского языка. Ереван: Изд. Луйс, 1975.

11. Мещанинов И. И. Члены предложения и части речи. Л.: Наука, 1978.

12. Щерба Л. В. Языковая система и речевая деятельность (сб. трудов). Л.: Наука, 1974.

13. Лайонз Дж. Введение в теоретическую лингвистику. М.: Прогресс, 1978.

14. Атаян Э. Р. Части речи, их дифференциальные признаки и критерии классификации, в кн.: "Теоретические и практические вопросы преподавания иностранных языков. М.: Наука, 1970.

15. Кубрякова Е. С. Типы языковых значений производного слова. М.: Наука, 1981.



ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՎ ՄՅՈՒՄ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ  
20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ**

20-րդ դարի սկզբին քաղաքական հորիզոնում ուրվագծվող և իրենց լուծմանը սպասող հարցերից առանձնանում էր Արևելյան հարցը, որի շուրջ բախվում էին մեծ տերությունների ռազմավարական շահերը: Որպես այդպիսին այն դառնում էր գլխավոր հանգրվաններից մեկը համաշխարհային հեգեմոնիայի համար մղվող մենամարտերում:

Հայկական հարցը, որպես Արևելյան հարցի բաղադրիչ, վերաբերվում էր ոչ միայն թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկական վեց նահանգներին: Այն սերտորեն կապված էր Արևելյան հարցի լուծման հետ, թուրքիայի լինել-չլինելու հարցի հետ: Հայկական հարցը դարերի հետ գործ ուներ, որովհետև այն շոշափում էր ոչ միայն եվրոպական պետությունների քաղաքական և ֆինանսա-տնտեսական տարաբնույթ շահերը թուրքիայում, այլև խորհրդածության սեղանի վրա էր դնում միաժամանակ Բոսֆորի, Դարդանեղի, Միջերկրականի, Պարսից ծոցի, Հնդկաստանի և Եփրատի գետահովտի վրա տիրապետություն հաստատելու խնդիրները: Եվ որքան շատ պետություններ էին առաջադրում իրենց կենսական շահեր այդ տարածքներում, այնքան ավելի էր բարդանում Հայկական հարցի լուծումը:

20-րդ դարի սկզբին մեծ տերությունները Հայկական հարցում համեմատաբար պասիվ քաղաքականություն էին վարում: Այս հանգամանքը պայմանավորված էր նրանց մասնավոր շահերով երկրագնդի այլ մասերում, ինչպես նաև միջպետական քաղաքական, տնտեսական շահերի բախմամբ Հեռավոր Արևելքում: Թուրքիայով շահագրգռված տերությունների

քաղաքականությունը գլխավորապես հիմնված էր նրանց տնտեսական շահերի վրա: Մեծ տերություններին ձեռնադրելու էր status quo-ի պահպանումը Արևելյան հարցում, քանզի թուրքիան նրանց կողմից դիտվում էր սոսկ որպես էժանագին ապրանքների շուկա: Հայկական հարցի շուրջ մեծ տերությունների դիվանագիտական պայքարում ֆրանսիայի դիվանագիտության ակտիվությունը պայմանավորված էր մի շարք կարևոր հանգամանքներով: Մեր կարծիքով դրանցից ամենակարևորը ֆրանս-ռուսական դաշնակցությունն էր:

20-րդ դարի սկզբին ֆրանս-ռուսական դաշնակցությունը հանդես էր գալիս որպես եվրոպական հավասարակշռության հզոր գործոն և տոն էր տալիս ոչ միայն զուտ եվրոպական միջազգային գործերին, այլև հիմնականում իր ձեռքում էր պահում Հեռավոր և Մերձավոր Արևելքում ծագած բարդությունների լուծման նախաձեռնությունը<sup>1</sup>: Դարասկզբի միջազգային հարբերություններում եթե կար մի սահման, ուր այնքան մեծ արժեք ու նշանակություն ստացավ Ռուսաստանի քաղաքական ազդեցությունը, դա Արևելյան հարցն էր: 19-րդ դարի վերջին ցարական Ռուսաստանի նվաճողական քաղաքականության անհաջողությունները Մերձավոր Արևելքում բերեցին Ռուսաստանին այն համոզման, որ ստեղծված քաղաքական իրավիճակում հնարավոր չէր իր օգտին լուծել Արևելյան հարցը<sup>2</sup>: Այդ իսկ պատճառով ռուսական արտաքին քաղաքականության հիմնական նպատակը դարձավ դիրքերի ամրապնդումը Հեռավոր Արևելքում: Սակայն այս երևույթը ռուսական արտաքին քաղաքականության մեջ ժամանակավոր բնույթ ուներ: Ցանկացած միջամտություն եվրոպայի կողմից Հայկական հարցում Ռուսաստանի կողմից դիտվում որպես casus belli (պատերազմի առիթ)<sup>3</sup>:

Իր արտաքին քաղաքականության հիմնական խնդիրը համարելով իր ազդեցության ամրապնդումը Հեռավոր Արևելքում Ռուսաստանը զուգահեռաբար փորձում էր ուժեղացնել իր դիրքերը թուրքիայի առևտրա-տնտեսական կյանքում: Արդեն 1900թ. Ռուսաստանը թուրքիայից ստացավ

<sup>1</sup> Տե՛ս «Մուրճ», 1901թ, N 9, էջ 246:

<sup>2</sup> Տե՛ս Ե. Ա. Борян, Армения, международная дипломатия и СССР, том I, М., - А., 1928, էջ 277:

<sup>3</sup> Տե՛ս Ալ. Վ. Ամֆիտատրով, Եվրոպա և Հայաստան, Թիֆլիս, 1906, էջ 37:



Փոքր Ասիայում երկաթուղիներ կառուցելու կոնցեսիաներ, համաձայն որի երկաթուղին պետք է անցներ Բաթումից Էրզրում և Կարս: Պայմանավորվածության համաձայն, երկաթգծերի շահագործումից առաջացած հասույթների մի մասը պետք է գնար Էրզրումի, Կարսի շրջանների բարեկարգմանը<sup>4</sup>: Սա շատ ձեռնտու էր Ռուսաստանին: Նման պայմաններում նրան ձեռնտու չէր ինքնավար Հայաստանի գոյությունը Փոքր Ասիայում, որովհետև միջազգային դիվանագիտության գրավականներով երաշխավորված Հայաստանը կդառնար խոչընդոտը Մերձավոր Արևելքում Ռուսաստանի գաղութային և համասլավոնականության քաղաքականության համար: Թուրքական տիրապետությունից Բուլղարիայի և Սերբիայի ազատվելուց հետո Ռուսաստանի կառավարությունը քաջ գիտակցում էր, որ իր «ազատարար» դերը Բալկանյան թերակղզում չունեցավ այն նպաստավոր հետևանքները, որոնք հանդիսանում էին նրա բալկանյան քաղաքականության մոտիվները: Հայաստանի նկատմամբ ռուսական քաղաքականության նշանաբանը դարձել էր 1895թ. Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Լոբանով-Ռոստովսկու արած արտահայտությունը. «Մենք երկրորդ Բուլղարիա չենք ուզում»: Ռուսաստանի արտաքին քաղաքական նմանատիպ ուղղվածությունը ձեռնտու էր սուլթան Աբդուլ Համիդին, որն իր հերթին դավանում էր «Հայաստանն առանց հայերի» գաղափարին<sup>5</sup>: Փաստերը ցույց են տալիս, որ այս շրջանում Ռուսաստանը, ավելի քան եվրոպական որևէ այլ պետություն, շահագրգռված էր Թուրքիայի ամբողջության անձեռնմխելիությամբ:

Ռուսաստանի այս քաղաքականությունը թուլացնում էր նրա դիրքերը Փոքր Ասիայում այնպիսի ժամանակ, երբ Մերձավոր Արևելքում գնալով ամրապնդվում էր Գերմանիայի ազդեցությունը:

20-րդ դարի սկզբին եվրոպական քաղաքականության մեջ Գերմանիան հանդես էր գալիս պահպանողական դիրքերից: Պահպանողական էր եվրոպայում, որպեսզի կարողանար հաստատուն պահել Ֆրանսիայից գրաված

Էլզաս-Լոթարինգիան, ստեղծեր հաստատուն կռվաններ իր համաշխարհային քաղաքականության համար և զարգացներ ռազմածովային ուժերը:

Գերմանական պահպանողական քաղաքականությունը առավել ցայտուն դրսևորվեց Արևելյան հարցում: Մերձավոր Արևելքում իր շահերի առաջխաղացման համար Գերմանիան հենվում էր մահմեդական տարրերի վրա, պաշտպանում էր Թուրքիայի ամբողջականության գաղափարը և կողմնակից էր սուլթանի իրավունքների անձեռնխեղությանը<sup>6</sup>: Արևելյան հարցում գերմանական դիվանագետները շեշտը դնում էին այն հանգամանքի վրա, որ անգլիական, ֆրանսիական և հոլանդական գաղթավայրերից զուրկ Գերմանիան գաղթականության տեղավորման և տնտեսական շահագործման մեծ առաքելություն ունի Մերձավոր Արևելքում, հատկապես՝ Փոքր Ասիայում: Այստեղ Գերմանայի խնդիրն էր զուգահեռաբար իրականացնել երկու, մեկը մյուսին նպաստող, ձգտումներ՝ առևտրա-տնտեսական և գաղթականական<sup>7</sup>: Վերոհիշյալ նկատառումներից ելնելով՝ Գերմանիան ձեռնմուխ եղավ Թուրքիայում երկաթուղային ճանապարհների շինարարությանը: 1899թ. նոյեմբերին թուրքական կառավարությունը գերմանական «Deutsche Bank»-ին թույլատրեց իրականացնելու Կոնիայից Բաղդադի վրայով մինչև Պարսից ծոց երկաթուղային գծի շինարարությունը: Երկաթգիծը Գերմանիայի համար ուներ և՛ քաղաքական, և՛ տնտեսական մեծ նշանակություն: Կ. Պոլսից մինչև Պարսից ծոց տանող երկաթուղային գիծը կդառնար Թուրքիայի ողնաշարը և կտարածեր իր ազդեցությունն ամբողջ երկրի վրա: Գերմանական կառավարությունը ձգտում էր երկաթգծի հարակից տարածքները բնակեցնել գերմանացի գաղթականներով: Այս հանգամանքն անվիճելի կդարձներ Գերմանիայի քաղաքական ազդեցությունը Փոքր Ասիայում:

Տնտեսական առումով երկաթգիծը մեծ եկամուտներ կբերեր բնակչության և ապրանքների տեղափոխությունից: Այն կոչված էր կարճ ժամանակամիջոցում բարձրացնելու հարակից շրջանների առևտրա-արդյունաբերական զարգացման մակարդակը, որն էլ իր հերթին կնպաստեր

<sup>4</sup> Տե՛ս «Մշակ», 1900, N 32, էջ 1:

<sup>5</sup> Տե՛ս Ալ. Վ. Ամֆիտատրով, Եվրոպա և Հայաստան, էջ 23:

<sup>6</sup> Տե՛ս «Յնչակ», 1908, N 8, էջ 77:

<sup>7</sup> Տե՛ս Բ. Իշխանյան, Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1907, էջ 66:



գերմանական արդյունաբերական ապրանքների սպառմանը: Գերմանիան փոքրասիական տարածքներից շահագրգռված էր նախ և առաջ հացահատիկի արտահանմամբ, որը նրա համար ուներ ռազմավարական նշանակություն: Բաղդադի երկաթուղին Գերմանիային կազատեր Ռուսաստանից և ԱՄՆ-ից կախվածությունից՝ կապված հացահատիկի ներմուծման հետ: Այս պետություններից մեկի կողմից հացահատիկի մատակարարումները 5-6 ամիս դադարեցնելու դեպքում Գերմանիան կկանգներ լուրջ խնդիրների առջև: Այս հարցը Գերմանիայի համար հատկապես հրատապ էր դառնում, քանի որ Ռուսաստանը և ԱՄՆ-ը հակված էին իրականացնելու հացահատիկի սպառումը իրենց երկրներում: Եվ քանի դեռ գերմանական կապիտալը չէր ամրապնդել իր ազդեցությունը Թուրքիայի տնտեսության մեջ Գերմանիան շահագրգռված էր Արևելյան հարցում status quo-ի պահպանմամբ: Մյուս կողմից գերմանական կառավարությունը Հայկական հարցն ավանդաբար դիտում էր որպես ռուսական քարոզչության արդյունք, որի միջոցով Ռուսաստանը փորձում էր նպաստավոր պայմաններ ստեղծել Փոքր Ասիայում հետագա տարածքային նվաճումների համար, հաստատվել Բոսֆորի և Պարսից ծոցի ափերին և դրանցով իսկ ճանապարհ բացել դեպի Հնդկական օվկիանոս<sup>8</sup>: Այս հանգամանքերով էլ պայմանավորված էր Գերմանիայի պահպանողական քաղաքականությունը Հայկական հարցի նկատմամբ:

20 դարի սկզբին Արևելյան հարցում, այդ թվում Հայկական հարցում, Անգլիան համեմատաբար պասիվ քաղաքականություն էր վարում: 1878թ. սկսած Հայկական հարցում անգլիական դիվանագիտության անմիջական առաջ մղիչ ուժը եղել է պատմական այն հակամարտությունը, որ Անգլիան ուներ Թուրքիայում Ռուսաստանի դեմ: Որքան Ռուսաստանը ձգտում էր ազդեցության ոլորտներ ձեռք բերել Մերձավոր Արևելքում, այնքան էլ Անգլիան խոչընդոտներ էր հարուցում նրա առջև: Ընդհանուր եվրոպական տնտեսական շահերը և քաղաքական ձգտումները Անգլիային թելադրում էին հնարավորին չափ շատ արգելքների և խոչընդոտների ամուր պարիսպ քաշել Ռուսաստանի առաջ Բոսֆորի ափերին և Փոքր Ասիայի սահմանների վրա: Անգլիայի

«հայասիրությունը» կամ «հայասեր» քաղաքականությունն արտահայտվեց միայն այնքանով, որքանով դա անհրաժեշտ էր կռվելու իր պատմական հակառակորդի՝ Ռուսաստանի դեմ<sup>9</sup>: Անգլիական քաղաքագետների հիմնական խնդիրն էր «պաշտպանել» Օսմանյան պետությունը հյուսիսից՝ Գերմանիայից և Ռուսաստանից, և դրանով իսկ, հեռացնել ամեն մի արգելք Կիպրոսի, Եգիպտոսի, արաբական բերակղզու վրա իր ազդեցությունն ամրապնդելու ճանապարհին: Դրանց տիրապետության պահպանումն Անգլիային դարձնում էր Պարսից ծոցի և ամբողջ Հնդկական օվկիանոսի տերը: Թուրքական տարածքներով դեպի Հնդկաստան ճանապարհ բացելու դիտավորությամբ Անգլիան կրկնակի խաղ էր վարում թուրքական սուլթանի հետ: Մի կողմից նա խրախուսում էր սուլթանի ներքին քաղաքականությունը, մյուս կողմից՝ զրգռում Եվրոպայի հասարակական-քաղաքական կարծիքն ընդդեմ այդ քաղաքականությանը և այդ եղանակով փորձում պահպանել իրերի դրությունը Օսմանյան կայսրությունում:

Սակայն 20-րդ դարի սկզբին քաղաքական իրավիճակը այլ էր: Անգլիային այլևս ձեռնտու չէր status quo-ի պահպանումը Արևելյան հարցում, քանի որ նրա ազդեցությունը գնալով թուլանում էր Թուրքիայի թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական կյանքում: Այս երևույթի հիմնական պատճառն անգլո-բուրական պատերազմն էր Հարավային Աֆրիկայում 1899-1902թթ.: Status quo-ի պահպանումը Մերձավոր Արևելքում ուղղակիորեն հակասում էր Անգլիայի ռազմավարական շահերին, որովհետև այս տարածաշրջանում ատեղծված քաղաքական իրավիճակը ձեռնտու էր Գերմանիային, որի դիրքերը Թուրքիայի ֆինանսա-տնտեսական կյանքում գնալով հզորանում էին, և Ռուսաստանին, որի ազդեցությունը Թուրքիայի քաղաքական կյանքում ավանդաբար ուժեղ էր: Ուստի Անգլիան հակված էր կողմ լինելու այն առաջարկություններին, որոնք ուղղված կլինեին Արևելյան հարցի բաղադրիչների՝ Հայկական և Մակեդոնական հարցերի լուծմանը:

Եվրոպական մեծ պետությունների համաշխարհային քաղաքականության մեջ Ավստրո-Հունգարիան և Իտալիան իրերի բնական բերումով զբաղեցնում էին երկրորդական տեղ: 20-րդ դարի սկզբին Ավստրո-

<sup>8</sup> Տե՛ս А. В. Амфитеатров, Армянский вопрос, СПб., 1906, т. 10:

<sup>9</sup> Տե՛ս Բ. Իշխանյան, Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, էջ 53:



Հունգարիայի և Իտալիայի դրական թե բացասական վերաբերմունքը դեպի Հայկական հարցը լոկ թվական առավելության հարց էր: Այս երկու պետությունները չունեին համապատասխան ուժ և կարիք Հայկական հարցում ձեռներեց լինելու՝ դրական թե բացասական ուղղությամբ: Ուժ և հեղինակություն չունեին, որովհետև նրանց վերապահված չէր միջազգային դիվանագիտության մեջ առաջնակարգ դիրք գրավելու և դեր խաղալու նախապատվությունը: Կարիք չունեին, որովհետև չկային այնպիսի անմիջական շահեր, որոնք կհարկադրեին նրանց դիմադրելու հակառակորդ պետություններին՝ հոգուտ Հայկական հարցի և Արևմտյան Հայաստանի համար խոստացված ռեֆորմների գործադրության: Պատմական անցյալը ցույց է տալիս, որ այն դեպքում, երբ հարկադրական գործողություններ էին տեղի ունենում թուրքիայի դեմ Հայկական հարցի համար, Ավստրո-Հունգարիան թեքվում էր Ռուսաստանի ու Գերմանիայի կողմը, իսկ Իտալիան՝ Անգլիայի ու Ֆրանսիայի<sup>10</sup>:

Անրադառնալով ֆրանսիայի քաղաքականությանը Հայկական հարցում, պետք է նշել, որ այն պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով:

20-րդ դարի սկզբին Ֆրանսիան, ինչպես եվրոպական մյուս մեծ պետությունները, ուներ իր քաղաքական և առևտրա-տնտեսական շահերը Մերձավոր Արևելքում և այդ շահերի պաշտպանության և առաջխաղացման համար շահագրգռված էր եվրոպական status quo-ի սահմաններում պահպանել բարի դրացիական հարաբերությունները թուրքիայի հետ: Ֆրանսիան նույնպես ձգտում էր երկաթուղային արտոնություններ ստանալ թուրքիայում: Ֆրանսիական կառավարության հիմնական նպատակն էր երկաթուղային կոնցեսիաներ ստանալ Ասորիքում, և այդ ձգտումները պաշտպանություն էին գտնում Ռուսաստանի կողմից: Դա համընկնում էր նաև սուլթանի ծրագրերին, որը վճռել էր երկաթուղի գցել Դամասկոսից Մեքքա ուխտագնացությունը խթանելու համար: 1900թ. ապրիլի սկզբին սուլթանը բավարարություն տվեց Ֆրանսիայի պահանջին՝ սիրիական երկաթուղու շինարարության վերաբերյալ: Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Կոնստանին հանձնվեց մի իրադե, որի համաձայն սուլթանը հրաժարվում էր Բեյրութ-Դամասկոս-Բաջուկ-Բերեջիկ երկաթուղային գծի շինարարությունից և տալիս

էր արտոնություն միայն Հոմս-Համամ (մոտավորապես 200 կմ. երկարությամբ) երկաթգծի շինարարության համար: Սուլթանը յուրաքանչյուր կմ-ի համար տալիս էր 15.000 թուրքական լիրայի չափով երաշխավորություն: Այս գումարը հնարավորություն էր տալիս ֆրանսիական սինդիկատին հետագայում իրականացնելու նաև Բեյրութ-Դամասկոս երկաթգծի շինարարությունը: Մյուս կողմից Ֆրանսիան ներգրավված էր նաև Բաղդադի երկաթուղու շինարարության մեջ: Ֆրանսիայի բանկային և մետաղագործական ընկերությունները մեծապես շահագրգռված էին երկաթուղու շինարարության մասնակցության մեջ: Դրան հիմնականում նպաստեց այն հանգամանքը, որ Գերմանիան չէր կարող միայնակ ֆինանսավորել երկաթգծի շինարարության հետ կապված ծախսերը և փորձում էր ներգրավել նաև ֆրանսիական բանկային և ֆինանսական շրջանները: Գերմանիայի այս փորձերը Ֆրանսիայում պաշտպանություն գտան ի դեմս ֆինանսների նախարար Բուվիեի և արտաքին գործերի նախարար Դելկասեի<sup>11</sup>:

Հայկական հարցում ֆրանսիական դիվանագիտությունը պայմանավորված էր նաև Ֆրանսիայի ակտիվ գաղութային քաղաքականությամբ Աֆրիկայում, հատկապես Մարրոկոյում: 20-րդ դարի սկզբին ֆրանսիական գաղութային քաղաքականության հիմնական խնդիրն էր ազդեցության ամրապնդումը աֆրիկյան մայրցամաքում, և այս տենդենցն ուներ իր օբյեկտիվ պատճառները: Բավական է նշել միայն այն հանգամանքը, որ Ֆրանսիայի գաղութային տարածքները կազմում էին 11 մլն. կմ<sup>2</sup>, որից 7.7 մլն. կմ<sup>2</sup> գտնվում էր Աֆրիկայում: Օգտվելով անգլո-բուրական պատերազմից՝ Ֆրանսիան աշխատում էր ընդարձակել Ալժիր գաղութի սահմանները Մարրոկոյի հաշվին:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Հայկական հարցում Ֆրանսիայի քաղաքականությունը հիմնականում պայմանավորված էր ֆրանս-ռուսական դաշնակցային հարաբերություններով և Հայկական հարցի նկատմամբ Ռուսաստանի ունեցած դիրքորոշմամբ: 20 դարի սկզբին Ռուսաստանին ձեռնտու էր status quo-ի պահպանումն Արևելյան հարցում, և ցանկացած եվրոպական պետության, անգամ Ֆրանսիայի միջամտությունն այս հարցում հանդիպում էր Ռուսաստանի դիմադրությանը, ինչպես 1901թ. ֆրանս-բուրքական ընդհարման ժամանակ, երբ Ֆրանսիան իր առևտրատնտեսական

<sup>10</sup> Տե՛ս Բ. Իշխանյան, Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, էջ 73:

<sup>11</sup> Տե՛ս М. Павлович, Борьба за Азию и Африку, Ленинград, 1924, էջ 62:



շահերը պաշտպանելու նպատակով թուրքական Մետիլենե նավահանգիստ ուղարկեց մի քանի ռազմանավեր: Ֆրանսիական խորհրդարանի պատգամավորների ճնշման տակ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Դելկասեն պատրաստ էր պահանջելու սուլթան Աբդուլ Յամիդից բավարարություն տալ ոչ միայն ֆրանսիացի ձեռնարկատերերի պահանջներին, այլ նաև իրականացնել բարենորոգումներ հայկական նահանգներում: Այս հանգամանքը մեծ դժգոհություն առաջացրեց Ռուսաստանի կառավարող վերնախավում, և արտաքին գործերի նախարար կոմս Լամոնրոֆի պահանջով Դելկասեն չբարձացրեց Յայկական հարցը:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ Ֆրանսիան առանձնապես շահագրգռված չէր Յայկական հարցի լուծմամբ երեք հիմնական պատճառներով.

- Նա մեծապես շահագրգռված էր Թուրքիայի տնտեսական շահագործմամբ:
- Նրա արտաքին քաղաքականության մեջ կարևորագույն նշանակություն ուներ դիրքերի ամրապնդումը Աֆրիկայում:
- Նրա համար Ռուսաստանի հետ դաշնակցությունն ուներ կենսական նշանակություն:

Քանի դեռ, Ֆրանսիան կապված էր Ռուսաստանի հետ դաշնակցական կապերով, նրա դիվանագիտությունն Արևելյան հարցի և հատկապես Յայկական հարցի նկատմամբ պետք է սերտորեն միացած լիներ ռուսական դիվանագիտությանը, ավելի ճիշտ՝ ենթարկված լիներ ռուսական քաղաքականությանը: Ռուսաստանի հետ ամուր դաշնակցությունը Ֆրանսիայի համար առաջնակարգ նշանակություն ուներ պետությունների ընդհանուր անրոպագույն քաղաքական կարևոր գործոններից մեկը մնալու և համարվելու տեսակետից: Ակնհայտ էր, որ Յայկական հարցի լուծմանն ուղղված պետությունների հավաքական միջամտության դեպքում Ֆրանսիան չէր մասնակցի դրան, եթե Ռուսաստանը դեմ կամ ձեռնպահ լիներ նման դիվանագիտական քայլերի նկատմամբ. Ֆրանսիան չէր գնա քաղաքական այնպիսի քայլերի, որոնք կհակասեին Ռուսաստանի շահերին, ցարական քաղաքականությանը:

ԳԵՂԱՆՈՒՇ ԿԱՐԴԱՆՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ՌԻՍՈՒՑԱՆ  
ՄԻ ՔԱՆԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1990-ական թվականներից սկսած առանձնահատուկ ուշադրություն է առաջացել տնտեսագիտության և նրա հետ կապված երևույթների, տարբեր ոլորտներում նրա դրսևորումների նկատմամբ:



Դրա հիմնական պատճառներից մեկը նախկին սոցերկրների պլանային տնտեսագիտությունից շուկայական տնտեսագիտության անցումն է, նոր տնտեսական հարաբերությունների ստեղծումը, տարբեր երկրների միջև առևտրա- տնտեսական հարաբերությունների խորացումը, առևտրային թղթակցության հաղորդակցման ձևերը և այլն: Վերջինս իր արձագանքը գտավ տնտեսագիտական բառապաշարի մեջ, որն էլ իր հերթին չէր կարող չանդրադառնալ տնտեսագիտության ֆակուլտետի օտար լեզվի դասավանդման մեթոդների, ուսումնական նոր ձեռնարկներ ստեղծելու, նոր նյութեր և ինֆորմացիայի նոր աղբյուրներ ձեռք բերելու վրա:

Գնալով խորանում են տարբեր երկրների միջև արտաքին տնտեսական հարաբերությունները, և ուսանողը պետք է պատրաստ լինի հասկանալու մասնագիտական տեքստը, կարողանա օտար լեզվով հաղորդակցվել, իր մտքերն արտահայտել, ինչպես նաև ձևակերպել նամակ- առաջարկներ, գովազդներ և այլն:

Այժմ արտասահմանում առաջարկվող գերմաներեն լեզվի դասընթացների 50%-ը տնտեսագիտական ուղղվածություն ունեն, (Wirtschaftsdeutsch), որտեղ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում արտաքին տնտեսական, առևտրային հարաբերությունների, ինչպես նաև բիզնեսի պարզաբանվող խոսքի զարգացմանը: Նման դասընթացներ կազմակերպում են նաև



տմտեսագիտության ֆակուլտետում դասավանդող դասախոսների համար, որովհետև միայն լեզվական ընդհանուր գիտելիքները — բավարար չեն մատուցելու մասնագիտական տեքստի ճիշտ բովանդակությունը կամ էլ գործընթացը: Հատկապես ուշադրություն է դարձվում այնպիսի ոլորտների վրա ինչպիսիք են տմտեսական աշխարհագրությունը, արտահանումն ու ներմուծումը, ՉՖՀ — ի դերը Եվրոհամայնքում, առևտրային թղթակցությունը, բանակցությունների լեզուն, ապրանքների շնորհանդեսի կազմակերպումը: Ցավոք մեր բուհերում դեռ չեն ուսումնասիրվում այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են հյուրանոցային գործը, գաստրոնոմիան և տուրիզմը: Օտար լեզվով տմտեսագիտության ուսուցման գործընթացում պետք է կատարվի ուղղակի բաժանում՝



Ելնելով վերը նշված բաժանումից՝ ուսանողը հաղորդակից է դարձվում այդ բնագավառներին վերաբերող բառապաշարին և արտահայտություններին նախօրոք լսած լինելով այդ թեմաներով դասախոսություններ մայրենի լեզվով: Ուսանողը պետք է ձեռք բերի հմտություններ ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր հաղորդակցման բնագավառներում (բանակցություններ, երկխոսություններ, պայմանագրեր, հեռախոսազրույց և այլն):

Մատուցվող բառապաշարը պետք է վերաբերի 'արտադրող- հաճախորդ' թեմային (Fachpersonal und Kunde im Service):

Գրավոր խոսքում զարգացվում են հմտություններ ձեռնարկության քիզնես (առևտրային գրագրություն/ թղթակցություն (Geschäftskorrespondenz)), զովագղ(Werbung), պայմանագրեր(Vertrag), ուղեցույցներ, արտադրական պլաններ ոլորտները:

Բանավոր խոսքում հեռախոսազրույց բանակցություններ գնորդի, հաճախորդի սպասարկում, ինֆորմացիոն բնույթի կոնֆերանսներ ոլորտները:

Բանակցային երկխոսությունների համար անհրաժեշտ է իմանալ որոշ կարևոր ճյուղերի տերմինաբանություն (Sprache des Produkts) Օրինակ՝ /Bayer:Chemie, /Siemens:Elektronik, /Daimler Benz: Automobilbau, / Dr. Oetker: Nahrungsmittel և այլն:

Տմտեսագիտության ֆակուլտետում գերմաներեն լեզվի դասավանդումը կայանում է երեք ասպեկտներով՝

1. Տմտեսագիտությունը որպես գիտություն (Fachsprache)
2. Տմտեսագիտություն մասնագիտական լեզվով (Berufssprachen)
3. Երկրագիտական ինֆորմացիա տմտեսության վերաբերյալ, (հիմնականում իրականացվում է ամսագրերի, թերթերի միջոցով):

Ի մի բերելով կարելի է ասել տմտեսական- գիտական գերմաներենը մասնագիտական բառապաշարով հագեցած տեքստերի մի ուսումնասիրություն: «Մասնագիտական լեզու» հասկացությունը լեզվական միջոցների ամբողջությունն է, որ կիրառվում է նեղ մասնագիտական հաղորդակցման բանագավառում և որը ծառայում է այդ բնագավառում աշխատող



մասնագետների շրջանակներում միմյանց ճիշտ հասկանալուն և ըմբռնելուն:

Մասնագիտական բառապաշարը համընդհանուր լեզվի մի մասն է կազմում, որում հնչյունաբանական, բառակազմական և շարահյուսական տարրերը մի ամբողջություն են կազմում, որը և հնարավորություն է ստեղծում տվյալ մասնագիտության բնագավառում դրա կիրառմանը:

Պայմանավորված լինելով վերջինիս արագ զարգացմամբ, միշտ մասնագիտական լեզուն վերաբերում է որոշակի ժամանակահատվածի: Ասենք՝ մի տերմին առաջ ընդունելի էր, այժմ կորցրել է իր նախկին կենսունակությունը՝ փոխարինվելով այլ հասկացությամբ:

Մասնագիտական բառապաշարը կապված լինելով գիտության այս կամ այն բնագավառի հետ ծառայում է նրան՝ արտացոլելով այդ ճյուղի առանձնահատկությունները: Յուրաքանչյուր մասնագիտական բառապաշար կիրառվում է մասնագետի կողմից, ոչ մասնագետը օգտագործում է այդ բառապաշարի լոկ տարրերը: Մասնագիտական լեզվին բնորոշ է համակարգված, տերմինացված բառապաշար, նրան բնորոշ է նաև ոճային առանձնահատկությունը (Stilmerkmale): Բնագիտական, տեխնիկական մասնագիտական լեզուներին բնորոշ է ճշգրտությունը և միանշանակությունը:

«Տնտեսագիտական գերմաներենը, - ըստ Բուհլմանի, բոլոր լեզվական միջոցների ամբողջությունն է, որը կիրառվում է սահմանափակ հաղորդակցման որոշակի բնագավառում և ծառայում է այդ բնագավառում զբաղված մարդկանց ճիշտ ըմբռնմանը»<sup>1</sup>:

Իսկ որն է այն կարևորը, որին պետք է հաղորդակից դարձնել տնտեսագիտություն ուսումնասիրող ուսանողին: Կան բնագավառներ, որի շրջանակներում ուսանողը պետք է հմտություններ ձեռք բերի՝ կատարելով գրավոր ձևակերպումներ, իսկ կան բնագավառներ, որտեղ բանավոր խոսքի հմտություններն են կարևորը: Լինելով այդքան ծավալուն, տնտեսական գերմաներենի բառապաշարը իր հետ բերում է նաև դասավանդման հետ առնչվող (նյութի մատուցում, ձևակերպում, դասընթացի հետ կապված

<sup>1</sup> Jehreshuch DaF, Band 15. 1989, München

կազմակերպում) մեծ դժվարություններ: Այստեղ պետք է հաշվի առնել և այն հանգամանքը, թե ինչ մակարդակի վրա են ուսանողները, և ներմուծվող նյութը գերմաներենով ինչքան է ըմբռնելի նրանց համար: Ուստի յուրաքանչյուրը պետք է նախ և առաջ հաշվի առնի ուսման նպատակը, բովանդակությունը, որոնք իրենց մեջ պետք է ներառեն ոչ միայն լեզվական, այլ նաև երկրագիտական բովանդակություն:

Վերոհիշյալը կարելի է ներկայացնել դասի մեկ օրինակով, որի թեման է արտադրական գործոններ (Produktionsfaktoren): Այն նախատեսվում է 1- ին կուրսի 2- րդ կիսամյակի համար: Դասի նպատակը թեմայի հետ առնչվող մասնագիտական բառապաշարի յուրացումն է, որպես համընդհանուր լեզվի լեզվական օրինաչափություն: Ձեռնարկության տնտեսության բնագավառի բառապաշարը նախատեսված է ավելի ցածր կուրսերի համար, իսկ երկրագիտականը՝ բարձր կուրսերի և մագիստրատուրայի ուսանողների համար: Խտացված յուրաքանչյուր թեմա եզրափակվում է երկխոսությամբ կամ էլ զրույցով որին մասնակցում է ամբողջ խումբը: Դասի թեման մաքուրությամբ կարելի է համարել յուրացված, եթե համապատասխանում են լեզվական և մասնագիտական ունակությունները: Ներկայացնենք «Ձեռնարկություն» թեմայի հետ առնչվող տեքստերից մեկը, որն իր բնույթով զուտ մասնագիտական է և ունի ինֆորմացիոն բնույթ, ելնելով թեմայի բովանդակությունից՝ ուսանողը ինքը պետք է բերի օրինակներ:

#### Das Einliniensystem

“Das Einliniensystem ist ein System mit einem hierarchischen Dienstweg, der von allen arbeitenden Menschen einzuhalten ist. Also jeder Arbeiter hat einen, der ihm befiehlt. Dieses System hat wie alle anderen Dinge auf der Welt Vor- und Nachteile. In dieser Organisation ist die Leitungsspitze überlastet, es gibt keine direkte Koordination zwischen gleichrangigen Stellen und Instanzen. Die Leitung ist nicht spezialisiert, das sind die Nachteile des Systems. Das System hat auch Vorteile: Einheit der Auftragserteilung, klare Kommunikation, klare Kompetenzabgrenzung, leichte Kontrolle.”



Մեջբերված տեքստը թարգմանելուց և հասկանալուց հետո, ուսանողը կարող է արդեն սահմանել թե ինչ է իրենից ներկայացնում “Einliniensystem” հասկացությունը: Սահմանումից հետո խոսվում է այդ համակարգի թերությունների և առավելությունների մասին, որը նույնպես ինֆորմացիայի տեսքով ընդգրկված է տեքստի մեջ (Nachteile – Vorteile):

Տնտեսական գերմաներենի հետ կապված դժվարություններից է այն, որ բացի զուտ մասնագիտական թեմա լինելուց, (ինչպես վերը նշված օրինակն է) կան տեքստեր, որոնք ունեն նաև երկրագիտական ուղղվածություն, և ուսանողին միայն բավարար չէ մասնագիտական բառապաշարը, կամ էլ մայրենի լեզվով նույն թեմայի վերաբերյալ լսած դասախոսությունները, այլ նաև այն, որ վերջինս պետք է պատկերացնի Գերմանիան իր ողջ մշակութային, արտադրական և գիտական կոմպոնենտներով միասին վերցրած: Այստեղից էլ բխում է այն փաստը, որ երկրագիտական ուղղվածություն ունեցող մասնագիտական տեքստերը մատուցվում են բարձր կուրսերում, մինչ այդ ուսանողը հաղորդակից է դառնում այնպիսի պարզ բնագավառների, ինչպիսիք են երկրի աշխարհագրական դիրքը, նրա տնտեսական աշխարհագրությունը, երկրում գործող ֆիրմաներն ու խոշոր ձեռնարկությունները և այլն:

«Երկրագիտություն» հասկացությունը մինչ այժմ չունի իր հստակ սահմանումը, սակայն առանց որի էլ չի ընթանում և ոչ մի օտար լեզվի ուսուցում: Օտար լեզվի ուսուցումը չի կարելի պատկերացնել երկրագիտությունից կտրված: 1987թ. լույս տեսած Միչա Մելդի գրքի վերնագիրը որոշ չափով պարզաբանում է մտցնում երկրագիտության և օտար լեզվի դասավանդման փոխկապակցվածության մեջ “Zur Integration von Landeskunde und Kommunikation im Fremdsprachenunterricht”: Ըստ հեղինակի ցանկացած ուսանող հաղորդակցման համար պետք է ունենա երկրագիտական և մշակութային գիտելիք: Հատկապես դա վերաբերում է միջազգային տնտեսական հաղորդակցման գործընթացին: Երկրագիտությունը տնտեսական գերմաներենում ենթադրում է ամենաքիչը երկու հանգամանք «բառապաշարի իմացություն՝ կապված Գերմանիայի տնտեսության հետ և միջմշակութային իմացություն, որին էլ հետևում է միջմշակութային հաղորդակցումը: Շատ հաճախ ոչ միշտ է հնարավոր տարբերակել այն պարզ

բաժանումը, որը գոյություն ունի երկրագիտական, մշակութային և միջմշակութային հաղորդակցման միջև: Օրինակ՝ գովազդի բնագավառում այն իր մեջ կարող է ներառել մի կողմից մասնագիտական, մյուս կողմից՝ մշակութային իմացությունը: Օտար լեզվի դասավանդման ընթացքում կարելի է որքան հնարավոր է շատ ինֆորմացիա հաղորդել օտար երկրի մշակույթի մասին՝ հակադրելով վերջինիս մեկ այլ երկրի մշակույթին: Օրինակ՝ Անգլիայում ողջույնի համար ձեռք չեն մեկնում, ի տարբերություն Գերմանիայի: Իմանալով այդ սովորույթի մասին՝ գերմանացի գործարարը հանդիպման ժամանակ ողջունելիս կարող է ձեռք չմեկնի, իսկ չի բացառվում նաև այն հանգամանքը, որ անգլիացին էլ իր հերթին հաշվի առնելով գերմանացիների սովորույթը, սպասի, որ վերջինս մեկնի ձեռքը, որն էլ կարող է դիտարկվել անգլիացու կողմից անբաղաժանվարություն: Այստեղից էլ պետք է եզրակացնել, որ միայն տեսական իմացությունը բավարար չէ. ուսանողը պետք է հնարավորություն ունենա (տեսաֆիլմերի, գերմանական ալիքի (DW) տեսագրությունների ուսուցման և ներմուծման շնորհիվ) հաղորդակցվելու նաև պրակտիկայում իրականացվող միջմշակութային հաղորդակցմանը: Դրան նպաստում են տնտեսագիտական գերմաներենով լույս տեսած շատ դասագրքեր, որոնք ուղեկցվում են տեսաֆիլմերով, ընդգրկում են հեռախոսազրույցներ, բանակցությունների ընթացք, առևտրային պայմանագրեր կնքելու դրվագներ և այլն: Տնտեսագիտության ֆակուլտետի բարձր կուրսերում դասագրքերին զուգահեռ մատուցվում է Kraus-ի (Ein eiliger Grobbauftrag) տեսաֆիլմը, որը պատմում է գործարար կապերի մասին, որոնք ընթանում են Շվեդիայում: Շվեդական մի ֆիրմա գործընկեր է փնտրում Գերմանիայում, որը կկարողանա ներկայացնել շվեդական ապրանքները Գերմանիայում, միաժամանակ կազմակերպելով վերջիններիս գովազդը: Իհարկե այն ամենը, ինչ տեսնում է ուսանողը ֆիլմում, տեսականորեն գիտի, գիտի բառապաշարը և բովանդակությունը և բանակցություններ վարելու կարգը: Ֆիլմը օգնում է մեկ անգամ ևս ի մի բերելու գիտեցածը և նույնպիսի բանակցությունների կազմակերպում անցկացնել դասասենյակում օրինակ բերելով արդեն հայկական և գերմանական ֆիրմաներ: Երկխոսություն



սկսվում է հյուրանոցից, հետո տեղափոխվում բանկ և ավարտվում բանակցություններով տոնավաճառում այդ ապրանքի ներկայացմամբ:

Մյուս տեսաֆիլմը, «Messegespräch» է: Այն ամբողջությամբ վերաբերվում է տոնավաճառում տեղի ունեցող գործարար իրավիճակներին: Ֆիլմի նպատակն է վեր հանել սովորույթների հետ կապված գործարար առևտրային դժվարությունները: Ֆիլմը դիտելուց հետո ուսանողները, նշում են այն բոլոր դժվարությունները, որոնք ի հայտ են գալիս տարբեր երկրներում սովորույթների տարբերության հետ կապված: Տնտեսական գերմաներենը որպես լեզվի ուսուցման առանձին բնագավառ անընդհատ ենթարկվում է փոփոխությունների, և որպեսզի ուսանողը հասնի այդ բնագավառում որոշակի հմտությունների, պետք է անընդհատ հաղորդակից դառնա նորագույն փոփոխություններին, որի հնարավորությունն այժմ առավել, քան երբևէ գոյություն ունի՝ կապված հաղորդակցման արդիական հնարավորությունների հետ:

ОБУЧЕНИЕ ПОНИМАНИЮ ПРЕДЛОЖЕНИЙ В  
ТЕКСТЕ ПРИ НЕТРАДИЦИОННОМ ЛОГИКО-  
СЕМАНТИЧЕСКОМ АНАЛИЗЕ

В учебной деятельности учащихся исключительно важную роль играет умение понимать письменные тексты при чтении и выражении своих мыслей в устной и письменной форме.

С психологической точки зрения понимание текста — результат сложной умственно-речевой деятельности, "обслуживаемой" разнообразными речевыми и интеллектуальными действиями, состав которых до сих пор не выявлен; не выявлено также основное действие в структуре указанной деятельности. По мнению некоторых авторов, основным действием, обеспечивающим понимание текста при чтении, является действие вычленения в тексте его семантических единиц. В качестве таковых одни авторы называют смысловые звенья текста /Я. В. Большунов/, другие — "элементарное высказывание" /А. М. Сохор/ и т. д. Некоторые авторы /А. В. Звегинцев, 1969, О. Ланже, 1969, Б. А. Зильберт 1978 и др/ рассматривают в качестве смысловой единицы текста предложение. Мы придерживаемся последней точки зрения, что дает основание рассматривать действие распознавания предложения как основное в структуре деятельности, направленной на понимание текста.

Умение распознавать предложения в заданном тексте и умение классифицировать заданный текст как предложение, как известно, формируется при изучении грамматики. В настоящее время изучение грамматики (как и изучение многих школьных предметов) направлено на формирование у учащихся местных умений, т. е. действий, способных обслужить узкий круг явлений



в определенной области знаний или практической деятельности. Теоретическую основу частных умений и навыков составляют частные знания, заучиваемые учащимися. Однако усвоение частных знаний не способствует формированию у учащихся теоретического мышления. А между тем на формирование частных знаний и умений школа затрачивает много времени, формируя "на выходе" неглубокие знания и низкое качество практических действий.

Чтобы в процессе изучения грамматики сформировать у учащихся высококачественные речевые умения, в том числе и умение понимать предложения при их восприятии, а также правильно выражать свои мысли в речи, необходимо, во-первых, существенно изменить содержание такого раздела грамматики, при изучении которого данные умения формируются — синтаксиса и пунктуации; во-вторых, раскрыть понятие "глубокое" понимание высказанных в предложении мыслей; для этого надо выявить уровни понимания предложений; в-третьих, разработать методику формирования умения глубоко понимать предложения при чтении и способы диагностики уровней сформированности данного умения.

В данной статье делается попытка рассмотреть некоторые аспекты понимания предложений в тексте при чтении и раскрыть закономерности понимания предложения как единицы текста.

Нами выявлено шесть уровней понимания предложения при чтении: 1 — понимание лексического содержания предложения; 2 — понимание его логического содержания /наличия в тексте законченной мысли/; 3 — понимание логического смысла предложений (их сути); 4 — понимание основного смысла предложений (по цели высказывания); 5 — понимание добавочного смыслового оттенка, присущего некоторым предложениям (логического и эмоционально-побудительного); 6 — понимание (осознание) способов

представления в языке разнообразных характеристик мысли, высказанной в предложении.

Подобная методика поможет учащимся глубоко (на всех уровнях) понимать предложение при чтении и умение правильно выражать свои мысли не только в устной, но и в письменной речи, правильно оформляя их нужными знаками препинания.

В данной статье делается попытка показать нетрадиционный лингво-методический анализ предложения как единицы текста. Но в силу определенных обстоятельств, мы представляем лишь анализ простого предложения и цифровой ряд членов предложения. За каждым членом предложения закрепляется определенная цифра, а в зависимости от логической нагрузки члена предложения и индекс, указывающий на добавочный оттенок того или иного члена предложения. Подлежащее — 1; сказуемое — 2; определение — 3; дополнение — 4; обстоятельство — 5.

Предлагается формула предложения  $1 \overbrace{2}$ , т. е. графически показано наличие в предложении подлежащего и сказуемого (предикативной части). Известно, что предикат (сказуемое, независимо от его вида) является показателем отношения субъекта к объективной действительности. Следовательно, логико-синтаксический анализ предложений следует начинать с поиска в предложении сказуемого, т. к. этот член предложения несет на себе наибольшую логическую нагрузку /многие лингвисты считают, что без сказуемого нет предложения/. Когда распознано сказуемое, распознавание других членов предложения обеспечивается процедурой построения схемы логико-синтаксических слов заданного предложения. В случае "выражения" членов предложения нетипичными морфологическими признаками, распознавание требует двух процедур: 1 — процедуры трансформации нетипичной формы в типичную и 2 — процедуры замены типичной модальным словом.







синтаксическую связь слов в предложении, семантическую и логическую нагрузку членов предложения, выраженных той или иной частью речи (в данном предложении прямое дополнение выражено существительным 2-ого склонения мужского рода). Подобное предложение сложно для анализа не только в национальной, но и в русской школе, если нет определенных навыков и знаний в области понимания логики и синтаксиса предложения. Опираясь на ранее полученные учениками знания, мы предлагаем им заменить слово "мост" существительным 1-ого склонения. Применяв способ подстановки и заменив слово "мост" словом "деревня", они наглядно увидели, что получили искомое, т. е. слово "деревню", объясняя, что подлежащее не может быть выражено существительным в форме винительного падежа. Следовательно, "мост" — это прямое дополнение. А где же подлежащее? Ведь логико-семантический анализ предложения начался с поиска сказуемого, которое определяет субъект. Учащиеся приходят к выводу, что в данном предложении подлежащего (субъекта) нет и не может быть, т. к. "снесло" в данном контексте безличный глагол, а значит, и предложение безличное. Но мы говорили о том, что предложение лишь тогда является полноценным, когда в нем присутствуют и субъект и предикат. Обратим внимание на тот факт, что глагол-сказуемое "снесло" требует хоть и формального, но субъекта. Мы убеждаемся в этом при переводе предложения на армянский язык: Չեւի՛ր հիւսիսը քշեց լիւսնորը, где дополнение "мост" в русском предложении является подлежащим в армянском. Это в той или иной мере дает нам право говорить об объективации той смысловой (семантической) единицы, которая присутствует в структуре мысли, но никак не проявляется в высказывании.

Под объективацией мы понимаем выход наружу тех семантических компонентов, которые присутствуют в глубинных структурах, но не эксплицируются в силу определенной специфики русского языка (в некоторых случаях отдельно взятых

языков вообще). Следовательно схема предложения выглядит так: Б/б [ 4 2 4 <sup>5</sup> ], т. е. прямое дополнение, простое глагольное сказуемое и косвенное дополнение, а индекс "5" обозначает добавочный обстоятельственный оттенок, который явно присутствует в данном случае "течением" отвечает на вопрос чем?, но это не только объект, это еще и добавочный оттенок, который указывает на способ, образ действия.

Учащиеся экспериментального класса заданные им действия выполняли в знаковой форме; учащиеся же традиционного класса - в вербальной. Результаты опроса показали высокий уровень знаний, навыков и умений в экспериментальном классе, что очевидно из письменных работ учащихся. Имеется основание говорить о том, что знаковый способ выполнения учащимися разнообразных интеллектуальных действий, сформированный в ходе обучения, позволяет представить их в большом объеме в более короткий по времени срок, чем невербальный способ, применяемый в традиционном обучении.



ՂԱՆԻԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
Ս Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

Ցանկացած իրավունքի իրականացման սահմանների հիմնահարցը բխում է քաղաքացիական ազատությունների պաշտոնական ճանաչման կամ իրավաբանական ամրագրման աստիճանից: Ընդհանրապես, իրավունքի և ազատության փոխհարաբերակցության խնդիրը ցանկացած պատմական ժամանակաշրջանի համար հրատապ է և դրանց փոխհարաբերակցության հարցը լուծվել է տվյալ դարաշրջանի պահանջներից ելնելով:

Օրենսդրական մակարդակով ազատության իրավաբանական բնորոշումն առաջին անգամ ամրագրված է Ֆրանսիայի «Մարդու և քաղաքացու իրավունքների մասին» հռչակագրի /1789թ./ 4-րդ հոդվածում. «Ազատությունն ամեն ինչ անելու հնարավորությունն է, որ վնաս չի պատճառի ուրիշին, այսպիսով, յուրաքանչյուրի բնական իրավունքների իրականացումը սահմանափակում է այն սահմաններով, որն ապահովում է հասարակության մյուս անդամների նույն իրավունքների կենսագործ մանը»:<sup>1</sup>

Ըստ Պոլ Լաֆարգի, «իրավաբանները, քաղաքագետները, փիլիսոփաները և կրոնական ռեֆորմատորները շատ հաճախ են վիճել անսահմանափակ սեփականության իրավունքի մասին»:<sup>2</sup>

<sup>1</sup> Տես, Конституции зарубежных государств. Учебное пособие. 2-е изд. исправ. и доп.- М., с.135.

<sup>2</sup> Տես, Пель Лафарг. Происхождение и развитие собственности. "Московский рабочий", 1925, с.68.

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին իրավանական գրականությունում նշմարվում էր երկու հիմնական մոտեցում:<sup>1</sup> Այսպես, Սավինին գտնում էր, որ սեփականության իրավունքն իր էությանը անսահմանափակ իրավունք է: Այդպիսի տեսակետը հետագայում բաժանում էին Պուշտան Վինդլեյդը, Ջոնը և ուրիշները:<sup>2</sup>

Այդ տեսակետին հակառակ իրավաբանների մեկ այլ խումբ՝ Դեմոլոմբ, Գորտման, Դերնբուրգ, Կուրդինովսկի, Շերշենկիչ և այլն, գտնում էր, որ սեփականության իրավունքը անսահմանափակ չէ, որ սեփականությունը սահմանափակվում է իրավունքով:<sup>3</sup> Դ.Ի.Մեյերը նույնպես պնդում էր, որ «ոչ մի տեղ գոյություն չունի անսահմանափակ սեփականության իրավունք»:<sup>4</sup> Վ.Պ.Գրիգանովն արդարացիորեն գտնում է, որ նման դիրքորոշումն անշուշտ ընդունելի է, քանի որ «այն առավել ճիշտ է արտացոլում իրավունքի էությունը»:<sup>5</sup> Այս տեսակետն իր օրենսդրական ամրագրումն ստացավ 19-րդ դարի քաղաքացիական մի շարք օրենսգրքերում:<sup>6</sup>

Սեփականատիրոջ իրավունքի ազատության արտաքին սահմանները որոշվում են ցանկըացած հասարակությունում ընդունված բարոյական հիմնական չափանիշների՝ բարու և չարի շրջանակներում: Սեփականության ազատության արտաքին չափն անփոփոխ և հաստատուն կատեգորիա չէ ոչ միայն պոզիտիվ /դրական/, այլև բնական իրավունքի տեսանկյունից: Այն փոփոխվում է պայմանավորված հասարակության զարգացման աստիճանից, ազգային իրավական ավանդույթներից և իրավական համակարգի

<sup>1</sup> Մանրամասն տես, Грибанов В.П. Предел осуществления и защиты гражданских прав.-М, 1972 с.18-19.

<sup>2</sup> Տես, Виндлейд. Учебник падежного права. Том 1 Общая часть. СПб 1874, с.73-80, Зом. Институтции, ч.2 1916, с.251 և այլն:

<sup>3</sup> Տես, орինակ, Дернбург Г. Пандекти. Том 2 ч.1.

<sup>4</sup> Мейер Д.И. Русское гражданское право / в 2-х ч.4 Часть 2/. По исправленному и дополненному 8-му изд., 1902 М., Статут / в серии Классики российской цивилистики /, 1997, с.4.

<sup>5</sup> Грибанов В.П. Пределы осуществления и защиты гражданских прав. М., 1972, с.19.

<sup>6</sup> Տես ст. 544 Французского Гражданского кодекса ст.641 Швейцарского Гражданского Уложения.



առանձնահատկություններից: Ըստ Ե.Ն.Տրաբեցկու կարծիքի. «Առանձին անձին պետք է տրվի արտաքին ազատությունների առավելագույնը, որը համատեղելի կլինի հասարակության, որպես ամբողջի բարօրությանը»:<sup>1</sup>

Սեփականության իրավունքը, ինչպես ցանկացած իրավունք, ունի որոշակի սահմաններ: Դրանց կարելի է անվանել սեփականության իրավունքի կամ դրա իրականացման սահմաններ: Վ.Վ.Սերկուլովը նշում է, որ «Տվյալ իրավունքի ծավալն ու սահմանները նշանակալի չափով կանխորոշում են քաղաքացիական իրավա սուբյեկտության բովանդակությունը, որն իր հերթին ստեղծում է անհրաժեշտ պայմաններ տարբեր սուբյեկտիվ իրավունքի ձեռք բերման և իրացման համար»:<sup>2</sup>

Մ.Խ.Խուտիզի և Պ.Ն.Սերգեյկոյի կարծիքով. «սուբյեկտիվ իրավունքը նախանշում է նրա մասնակիցների ազատության սահմանները: Սեփականության ազատությանը շահանակներից դուրս գալը ենթադրում է պատասխանատվություն, որի անխուսափելիությունը պահանջում է պահպանել սուբյեկտիվ իրավունքի սահմանները և չխախտել ուրիշների իրավական ազատությունը»:<sup>3</sup>

Մասնավոր-իրավական հարաբերություններում այդպիսի ազատությունն արտահայտվում է հետևյալ բանաձևով. «թույլատրվում է անենը, ինչ արգելված չէ օրենքով, այսինքն՝ քաղաքացու գործողությունը մինչև դրա համար նախատեսված սահմանը ապահովված է պետության միջամտությունից»:<sup>4</sup>

Սակայն Մ.Խուտիզը և Պ.Սերգեյկոն չեն գտնում, որ այդ սահմանների ներսում իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում: Ըստ նրանց «անձի իրավունքների և ազատությունների երաշխիքը

ծառայում է պատասխանատվությունը՝ իրավախախտման համար»:<sup>1</sup> Այդպիսի դիրքերում մեր կարծիքով անընդունելի է և միակողմանի բնույթ է կրում:

Պատասխանատվությունը չի կարող հանդիսանալ անձի իրավունքների և ազատությունների միակ երաշխիքը:

Օրենքով երաշխավորված սեփականության իրավունքը ունի իր սահմանները, որոնք վերջին հաշվով կոչված են պաշտպանելու այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը՝ անբարեխիղճ սեփականատիրոջ գործողություններից: Այս հանգամանքը անհրաժեշտաբար թելադրում է սեփականության հարաբերությունների պետական կարգավորում և սեփականատիրոջ գործողությունների նկատմամբ պետական վերահսկողություն:

Սեփականատիրոջն ուղղված օրենքի պահանջը՝ այլ անձանց իրավունքների և շահերի պահպանումը, կարելի է ներկայացնել որպես իրավունքի սահմանափակում:

Այստեղ անհրաժեշտ է տարբերել սեփականության իրավունքի սահմանները՝ սեփականության իրավունքի սահմանափակումներից: Բ.Ս.Էրժևի կարծիքով, մարդու հիմնական իրավունքների սահմանները՝ Սահմանադրությամբ ամրագրված և պաշտոնապես ճանաչված իրավունքներն ու ազատություններն են, իսկ ինչ վերաբերում է այդ իրավունքի և ազատությունների սահմանափակումներին, ապա դրանք Սահմանադրությամբ նախատեսված և օրենքով ամրագրված սահմանափակումներն, որոնք կրում են ժամանակավոր բնույթ:<sup>2</sup>

Բացի դրանից, ըստ Բ.Ս.Էրժևի, մարդու հիմնական իրավունքների սահմանափակում կարելի է դիտել նաև իրավունքների և ազատությունների

<sup>1</sup> Трубецкой Е.Н. Энциклопедия права / Оформление обложки С. Шапиро, А.Олексенко / СПб. Изд.во "Лань", 1998, с.69.

<sup>2</sup> Меркуров В.В. Гражданско-правовой договор в механизме регулирования товарно-денежных отношений / Монография.- Рязань, РВШ МВД РФ, 1994, с.119.

<sup>3</sup> Энциклопедия права, Учебное пособие / хутиз М.Х. и Сегзейко П.Н.Кубан.Гос.Ун- т, 1995, с.13.

<sup>4</sup> Նույն տեղը:

<sup>1</sup> Նույն տեղը:

<sup>2</sup> Ств, "Круглый стол" журнал "Государство и право". Принципы пределы4 основания ограничения прав и свобод человека по российскому законодательству и международному праву. Государство и право И.7, 19984, с.24.



նորմատիվ բովանդակությունը կազմող որևէ իրավագործության վերցնումը:<sup>1</sup> Գ.Ա.Գաջիկը իրավագիտորեն նշում է, որ «անհրաժեշտ է սահմանազատել հիմնական իրավունքների սահմանափակումները և դրանց իրավաբանական բովանդակության շրջանակները»:<sup>2</sup>

Այսպիսով, սեփականության իրավունքի նորմատիվ-իրավական բովանդակության սահմանները նորմի ներգործության ընդհանուր շրջանակներն են, որոնց ներսում կարող են սահմանափակումներ լինել՝ ա/ ըստ օբյեկտների, բ/ ըստ սուբյեկտների, գ/ ըստ հասարակական հարաբերությունների կարգավորման բնագավառի, դ/ ըստ գործառույթների և այլն: Սասնավորապես, սեփականության իրավունքի վերաբերյալ այդպիսի սահմանափակումների օրինակ կարող են ծառայել օրենքով նախատեսված որոշակի արգելքները, որոնք սահմանափակում են սեփականտիրոջ գործողություններն իրեն պատկանող գույքի նկատմամբ:

Որոշ դեպքերում սեփականության իրավունքի սահմանափակումները կրում են հատուկ բնույթ և պայմանավորված են սեփականության ներքո գտնվող գույքի ռեժիմով: Այսպես, համաձայն ՀՀ քաղ.օր.133 հոդվածի. «1. Քաղաքացիական իրավունքների օբյեկտները կարող են ազատորեն օտարվել կամ անցնել մեկ անձից մյուսին համապարփակ իրավահաջորդության կարգով /ժառանգում, իրավաբանական անձի վերակազմակերպում/, կամ այլ եղանակով, եթե դրանք հանված չեն շրջանառությունից, կամ դրանց շրջանառությունը սահմանափակված չէ:

2. Քաղաքացիական իրավունքների օբյեկտների տեսակները, որոնց շրջանառության մեջ գտնվելը չի թույլատրվում / շրջանառությունից հանված օբյեկտներ/, պետք է ուղղակի նշված լինեն օրենքում:

3. Քաղաքացիական իրավունքների օբյեկտների տեսակները, որոնք կարող են պատկանել շրջանառության սուկ որոշակի մասնակիցների կամ կարող են

շրջանառության մեջ դրվել հատուկ թույլտվությամբ /սահմանափակ շրջանառու օբյեկտներ/, որոշվում են օրենքով սահմանված կարգով»:

Բացի դրանից, սեփականատիրոջ և նրա գույքը տիրապետող, օգտագործող կամ տնօրինող անձի միջև կնքված պայմանագրով կարող են նախատեսվել սեփականատիրոջ իրավագործությունների այլ՝ իրենց բնույթով մասնակի սահմանափակումներ:

Սակայն, նման դեպքերում դրանք ծագում են հենց սեփականատիրոջ կամքով՝ նրա հայեցողությամբ: Նման սահմանափակումների ավելի հաճախ կարելի է հանդիպել վարձակալության, ընդերքի հետազոտման, գույքի հավատարմագրային կառավարման և այլ երկարաժամկետ պայմանագրերում:

Սեփականության անսահմանփակ, բացարձակ իրավունքի վերափոխումը սահմանափակ սուբյեկտիվ իրավունքի, իսթան հանդիսացավ նոր տեսական հետազոտությունների և սեփականության իրավունքի նոր հայեցակարգերի մշակման համար: Առավել տարածված հայեցակարգերից է, այսպես կոչված, սեփականության սոցիալական գործառույթի հայեցակարգը: Ըստ այդ հայեցակարգի՝ սեփականության ժամանակակից սուբյեկտիվ իրավունքում ավգելի ու ավելի ընդգծվում է նրա սոցիալական գործառույթի նշանակությունը: Սեփականության իրավունքի սոցիալական գործառույթներն ապահովվում են սեփականության իրավագործությունների սահմանափակումները սոցիալական շահերի տեսանկյունից: Սեփականության «սոցիալական գործառույթի» մասին գրել են՝ Յա.Վ.Գեդեմանը<sup>1</sup>, Օ.Գիրկեն<sup>2</sup>, Ռ.Յորինգը<sup>3</sup>, Յան Լազարը<sup>4</sup> և ուրիշները:

Իրավունքի սոցիալական գործառույթի հեղինակները /Կոնտ, Դյուգո և այլք/ հաստատում էին, որ սուբյեկտներն իրավունք չունեն, նրանք պարտավոր են ենթարկվել սոցիալական նորմերի պահանջներին, կատարել

<sup>1</sup> Stu, "Круглый стол" журнал "Государство и право". Принципы пределы оснований ограничения прав и свобод человека по российскому законодательству и международному праву. Государство и право, И.7, 19984с.24.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 25:

<sup>1</sup> Stu, Hedemann J.W. Sachenrecht des bugerlichen Gesetzbucher, 1924, s.61-65.

<sup>2</sup> Stu, Gierke O. Deutsches Privatrecht. 2, 1905, s. 358, 465.

<sup>3</sup> Stu, Hering R. Der zveck im Recht, Leipzig, 1893, s 519.

<sup>4</sup> Stu, Лазар Ян.Собственность в буржуазной правовой теории4 Пер.с.нем.-М. Юрид.лит.1985 /Критика буржуазной идеологии и ревизионизма/, с.46



իրենց վրա դրված սոցիալական գործառույթները:<sup>1</sup> Սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի տեսությունն իր որոշակի ազդեցությունն ունեցավ եվրոպական մի շարք պետությունների օրենսդրության վրա:

Մասնավորապես, 1919թ. Վեյմարյան Սահմանադրության /Գերմանիա/ 153հոդվածի համաձայն, սեփականությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն և այն պետք է ծառայի հանրության բարօրությանը:<sup>2</sup> 1949թ. ԳՖԴ-ի Սահմանադրությունում այդ նորմի բովանդակությունն ավելի զարգացում ստացավ. «Սեփականությունը պարտավորեցնում է: Նրա օգտագործումը ծառայում է ընդհանուրի բարօրությանը»:

Իսպանիայի Սահմանադրությունը /1978թ./ նույնպես ամրագրել է, որ «սեփականության իրավունքի սոցիալական գործառույթը՝ օրենքին համապատասխան, սահմանափակում է նրա բովանդակությունը, /33հոդ.2-րդ մաս/:<sup>3</sup> Գունաստանի Սահմանադրության համաձայն, սեփականության իրավունքը...չի կարող իրականացվել հասարակական շահերին հակառակ» /17հոդ.1-ին մաս/:<sup>4</sup>

Սեփականության իրավունքի սոցիալական գործառույթն առավել լիակատար արտացոլված է Իտալիայի Սահմանադրությունում. «Մասնավոր սեփականությունը ճանաչվում և երաշխավորվում է օրենքով, որը որոշում է դրա ձեռքբերման և օգտագործման հիմքերը, ինչպես նաև դրա սահմանները՝ ապահովելու սեփականության սոցիալական գործառույթը և բոլորի համար նրա հասանելիությունը» /42հոդ. 2-րդ մաս/:<sup>5</sup> Ճապոնիայի Սահմանադրությունում սեփականության իրավունքի բովանդակությունը

«սահմանվում է օրենքով, որպեսզի այն չհակասի հասարակական բարօրությանը» /29հոդ.2-րդ կետ/:<sup>1</sup>

Սեփականության իրավունքի սոցիալական սահմանափակման մասին հայեցակարգի համաձայն, սեփականատերը պարտավոր է հաշվի առնել նաև հասարակության շահերը, որը ենթադրում է որոշակի պարտականություններ: «Այդ պարտականության էությունը կայանում է նրանում, գրում է Է.Շտեյնը, որ սեփականության օգտագործումը միաժամանակ պետք է ծառայի բոլորին:

Այդպիսով, սեփականատերը պարտավոր է հաշվի առնել հասարակության շահերը»:<sup>2</sup>

Այս տեսանկյունից իրավական, սոցիալական պետության ձևավորումը իր հերթին ուժեղացնում է մասնավոր սեփականության «սոցիալական գործառույթը»: Ինչպես պնդում է Խ.Յու.Ֆոգելը. «սեփականությունն իր էությամբ սոցիալական նշանակություն ունի»:<sup>3</sup>

Սեզանում սեփականության իրավունքը ամրագրված է ԳՂ Սահմանադրության 28 հոդվածում. «Յուրաքանչյուր ոք ունի սեփականության ժառանգման իրավունք:

Գողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Սեփականությունից կարող է զրկել միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նշված 28 հոդվածն իր էությամբ նույն Սահմանադրության 8 հոդվածի տրամաբանական շարունակությունը և իրավաբանական երաշխիքն է: Վերջինս ամրագրում է

<sup>1</sup> Sbu, Кулагин М.И. Избранные труды. М. Статут / в серии "Классика российской цивилистики" / 1997, с.246

<sup>2</sup> Sbu, Конституции зарубежных государств. Учебное пособие. 2-е изд. исправ. и допол. М., 1996, с.159.

<sup>3</sup> Լույն տեղը, էջ 306:

<sup>4</sup> Լույն տեղը, էջ 371:

<sup>5</sup> Լույն տեղը, էջ 352:

<sup>1</sup> Լույն տեղը, էջ 446:

<sup>2</sup> Sbu, Лазар Ян. Собственность в буржуазной правовой теории. Пер. с нем.-М.Юрид. лит. 1985 /Критика буржуазной идеологии и ревизионизма/, с.47.

<sup>3</sup> Լույն տեղը:



սկզբունքային նշանակություն ունեցող սահմանադրական նորմ սեփականության ճանաչման և սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության մասին. «Չայաստանի Չանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

Սեփականատերն իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում և տնօրի նում է իրեն պատկանող գույքը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը»:

Նշված սահմանադրական նորմի բովանդակությունից կարելի է ենթադրել, որ սեփականության իրավունքը ներառում է ինչպես անձնական /իր հայեցողությամբ տիրապետել, օգտագործել և տնօրինել իրեն պատկանող գույքը/, այնպես էլ հասարակական / այդ իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը/ շահերը:

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ԸՍԲՈՆՈՒՄԸ

Իրավունքի ֆենոմենը հետազոտելու համար անհրաժեշտ է ղեկավարվել ոչ միայն վերացական տրամաբանական համակարգով, որը բավարարում է համընդհանուր ճանաչում ստացած չափանիշներին՝ արդարություն, բարություն, ազատություն, հավասարություն, մարդասիրություն, այլ այն պետք է դիտարկել նաև կոնկրետ ազգային մշակույթի տեսանկյունից, վերջինիս համատեքստում, որտեղ ձևավորվել և զարգացել է իրավունքը:

Իրավական համակարգի ուսումնասիրությունը կոնկրետ ազգային մշակույթի համատեքստում նշանակում է մշակել ազգային իրավական համակարգի տեսություն կամ հայեցակարգ, իհարկե այնքանով, որքանով դրան նպաստում են առկա պատմավավերագրական փաստերը: Միայն այս մեթոդաբանության շնորհիվ կարելի է բացահայտել ազգային իրավական համակարգի առանձնահատկությունները, նրա պատմական զարգացման հիմնական ուղենիշները, ինչպես նաև այն ընդհանրությունները, որոնք բնորոշ են նաև այլ իրավական համակարգերին:

Ընդհանրապես իրավական համակարգի ձևավորման և զարգացման վրա ներգործում են տվյալ ժամանակաշրջանի հասարակության ողջ հոգևոր մշակույթը՝ կրոնը, փիլիսոփայությունը, բարոյականությունը, գեղարվեստական, քաղաքական մշակույթը, քաղաքականությունը և տնտեսությունը:<sup>1</sup>

Այս կապակցությամբ պետք է նշել, որ պետության և իրավունքի տեսության ժամանակակից զրականությունում առանձնակի ուշադրություն է դարձվում «իրավական համակարգ», «իրավունքի համակարգ» և «օրենսդրության համակարգ» կատեգորիաներին:<sup>2</sup> Դա բացատրվում է

<sup>1</sup> Տե՛ս, Теория государства и права. Курс лекций /Под ред. М.Н.Марченко, с. 301.  
<sup>2</sup> Տե՛ս, Общая теория права и государства. Учебник /Под ред. В.В.Лазарева. М., 1996, с. 178; Теория государства и права. Учебник для юридических вузов и факультетов /Под ред. В.М.Корельеого и В.Д.Перевалова. М., 1997, с. 314-322;



պետական շինարարության բնագավառում նոր իրավական համակարգի ձևավորման անհրաժեշտությամբ: Խորհրդային իրավական համակարգի փլուզման հետևանքով օբյեկտիվ անհրաժեշտություն առաջացավ ձևավորել հասարակական, տնտեսական, քաղաքական պայմաններին համարժեք նոր իրավական համակարգ, որի հիմքում պետք է ընկած լինեն ժողովրդավարության հիմնարար սկզբունքները: Ոչ վաղ անցյալում «իրավական համակարգ» և «իրավունքի համակարգ» կատեգորիաները նույնացվում էին, դրանք դիտարկվում էին որպես իրավական միևնույն երևույթ:<sup>3</sup>

Չնայած ժամանակակից իրավունքի տեսությունը տարբերակում է իրավական համակարգ և իրավունքի համակարգ հասկացությունները, այդուհանդերձ, պետք է նշել, որ գոյություն չունի միասնական տեսակետ «իրավական համակարգ» հասկացության վերաբերյալ:

Իրավունքի տեսության մեջ իրավական համակարգը դիտարկվում է տարբեր տեսանկյուններից՝ ձևական-իրավաբանական, սոցիալ-տնտեսական, կառավարչական, ազգային-աշխարհագրական և, ըստ այդմ էլ ներկայացվում է տարբեր կերպ՝ որպես իրավունքի աղբյուրների և իրավական հաստատությունների համակցություն, որպես կառավարչական-կառուցվածքային ստորաբաժանումների ամբողջություն, որպես հոգևոր կյանքի ֆենոմեն և այլն:<sup>4</sup>

Ակադեմիկոս Ս.Ս.Ալեքսեևի կարծիքով, իրավական համակարգն են կազմում՝ իրավունքը և իր աղբյուրները:<sup>5</sup> Ն.Ի.Սատուգովը կարծում է, որ հասարակության իրավական համակարգը ներառում է՝ 1) իրավունքը՝ որպես պետության կողմից ստեղծվող ու պաշտպանվող իրավական նորմերի համակցություն, 2) օրենսդրությունը՝ որպես այդ իրավական նորմերի

արտահայտման ձև (նորմատիվ ակտերը), 3) իրավական հասկացությունները, որոնք իրականացնում են պետության իրավական քաղաքականությունը, 4) դատական և այլ իրավաբանական պրակտիկան, 5) իրավական կարգավորման մեխանիզմը, 6) իրավակիրառ պրոցեսը (ներառյալ իրավակիրառ ակտերը և մեկնաբանությունը), 7) քաղաքացիների իրավունքները, ազատությունները և պարտականությունները (իրավունքը սուբյեկտիվ իմաստով), 8) իրավա-հարաբերությունները, 9) օրինականությունը և իրավակարգը, 10) իրավական գաղափարախոսությունը, 11) իրավունքի սուբյեկտները, 12) իրավական համակարգի միասնությունը, ամբողջությունը և կայունությունն ապահովող կապերը, 13) այլ իրավական երևույթները (իրավաբանական պատասխանատվությունը, իրավասուբյեկտիվությունը, իրավական դրությունը և այլն):<sup>6</sup>

Պրոֆեսոր Յու.Ա.Տիխոմիրովի կարծիքով՝ իրավական համակարգն ընդգրկում է օրենսդրությունը և իրավունքի այլ աղբյուրները, իրավական կարգավորման նպատակներն ու սկզբունքները, համակարգող կապերը:<sup>7</sup>

Ըստ պրոֆեսոր Վ.Ն.Սիմյուկովի՝ ազգային իրավական համակարգի տարրերն են՝

- իրավունքի և օրենսդրության համակարգերը,
- իրավաբանական հաստատությունների, այդ թվում իրավապահ մարմինների կառուցվածքը,
- տարածաշրջանային և տեղական իրավական կառույցները,
- հսկողական և վերահսկողական ենթահամակարգերը,
- իրավախախտումների կանխարգելման և սոցիալական վերահսկողության համակարգերը,
- իրավական ինֆորմացիայի և կոմունիկացիայի համակարգերը,
- մարդու իրավունքների ապահովման մեխանիզմները,
- իրավաբանական, կրթական կադրերի պատրաստման և վերապատրաստման համակարգերը,

Бобылов А.И. Современное толкование системы права и системы законодательства // "Государство и право, 1998, N 2, с. 22-27; Система законодательства Республики Башкертостана: становление и дальнейшее развитие. Уфа, 1996.

<sup>3</sup> Տե՛ս, Явич А.С., Общая теория права. А., 1976, с. 125-126; Марксистско-ленинская общая теория государства и права. Основные институты и понятия. М., 1970, с. 344-346.

<sup>4</sup> Տե՛ս, Синюков В.Н., Российская правовая система /вопросы теории/. Диссертация на соискание ученой степени док.юрид.наук. Саратов, 1995. На правах рукописи. с. 46.

<sup>5</sup> Տե՛ս, Алексеев С.С., Общая теория права. Курс в 2-х томах. Том I, М., 1981, с. 87-88.

<sup>6</sup> Տե՛ս, Матузов Н.И., Правовая система и личность. Саратов, 1987, с. 25.

<sup>7</sup> Տե՛ս, Тихомиров Ю.А., Правовая система развитого социализма /Советское государство и право. 1979, N 7, с. 33.



- իրավական գաղափարախոսության կենտրոնները (գիտահետազոտական ինստիտուտներ, կենտրոններ, հիմնադրամներ, իրավաբանների միություններ և այլն):<sup>8</sup>

Պրոֆեսոր Ֆ.Ս.Ռեշետնիկովը նշում է, որ իրավական համակարգը իրավական հաստատությունների, ամենից առաջ, դատական մարմինների համակարգն է:<sup>9</sup> Իսկ պրոֆեսոր Մ.Ն.Մարչենկոյի կարծիքով՝ իրավական համակարգը դիտարկվում է որպես համակցություն՝ ա) իրավական նորմերի, սկզբունքների և ինստիտուտների (նորմատիվ ասպեկտը), բ) իրավական հաստատությունների (կազմակերպական ասպեկտը), գ) իրավական հայացքների, պատկերացումների, գաղափարների և իրավական կուլտուրայի:<sup>10</sup>

Մեր կարծիքով, ազգային իրավական համակարգը, իրավական երևույթների բարդ և միասնական ամբողջություն է, որի հիմնական բաղադրիչներն են՝ իրավունքի և օրենսդրության համակարգերը, իրավական հաստատություններն ու իրավական կուլտուրան, գաղափարախոսությունը: Այս առումով, անհրաժեշտ է սահմանազատել նաև ազգային իրավական համակարգը՝ իրավական ընտանիքներից, քանզի իրավունքը համաշխարհային քաղաքակրթության արդյունք է, որի շրջանակներում ձևավորվում և գործում են բազմաթիվ իրավական համակարգեր: Եթե ներպետական իրավական համակարգը ազգային իրավունքի «ներքին քարտեզն է», ապա իրավական ընտանիքները կազմում են «աշխարհի իրավական քարտեզը»:

Իրավական ընտանիքն ազգային իրավական համակարգերի համակցություն է՝ հիմնված իրավունքի աղբյուրների, նրանց կառուցվածքի և պատմականորեն ձևավորման ընդհանրությունների վրա: Այդ չափանիշները հիմք ընդունելով՝ համեմատական իրավագիտությունը տարբերակում է հետևյալ իրավական ընտանիքները. ա) անգլո-սաքսոնական (ընդհանուր իրավունքի), բ) ռոմանդերմանական (մայրցամաքային), գ) սոցիալիստական

<sup>8</sup> Синюков В.И., Российская правовая система /вопросы теории/. Диссертация на соиск. учен. степ. док. юр. наук. На правах рукописи. Саратов, 1995, с. 179.

<sup>9</sup> Ст'ю, Решетников Ф.М., Правовые системы мира. М., 1993.

<sup>10</sup> Ст'ю, Теория государства и права. Курс лекций /Под ред. М.Н.Марченко, М., 1996, с. 300.

և կրոնական-ավանդական:<sup>11</sup> Ինչպես տեսնում ենք, նման դասակարգման հիմքում ընկած են ոչ թե քաղաքական, սոցիալական կամ այլ կարգի գործոններ, այլ միայն իրավական չափանիշները:

Ազգային իրավական համակարգերի դասակարգումն ունի ինչպես տեսական-գիտական, այնպես էլ գործնական-կիրառական նշանակություն:

Տեսական-գիտական առումով նման դասակարգման նշանակությունը այն է, որ հնարավորություն է տալիս առավել խորը և բազմակողմանի ուսումնասիրել յուրաքանչյուր իրավական ընտանիքի ինչպես ընդհանուր գծերը, այնպես էլ դրանց կազմի մեջ մտնող յուրաքանչյուր ազգային իրավական համակարգի առանձնահատկությունները, միայն դրանց բնորոշ գծերը:

Գործնական-կիրառական առումով այն ազգային օրենսդրությունների մերձեցման, դրանց ունիֆիկացման, գոյություն ունեցող իրավական հակասությունների աստիճանաբար վերացման խթան է: Ընդգծելով այս փաստը՝ ամերիկացի գիտնական Պ.Գրուզը իրավացիորեն նշում է, որ իրավական ընտանիքների դասակարգումով տեսաբան և պրակտիկ իրավաբանները «ծագում էին ապահովել, եթե ոչ լիովին, ապա զոնե մասնակիորեն, բոլոր քաղաքակիրթ իրավական համակարգերի միասնականացման պրոցեսի հիմնական, առավել էական մասը»:<sup>12</sup>

Նման տեսակետը ընդունում են նաև շատ հեղինակներ, քանի որ լրիվ կամ մասնակի միասնականացումը կարող է հաջողությամբ պսակվել, եթե ազգային իրավական համակարգերի դասակարգումը տեսականորեն և գործնականորեն առավել հիմնավորված է:

Իրավական համակարգերի դասակարգում, ըստ իրենց ընդհանուր հատկանիշների, օրենսդիրներին և հետազոտողներին հնարավորություն է տալիս ճիշտ կամ նվազագույն սխալներով տրանսֆորմացիայի ենթարկել այլ իրավական համակարգերի նորմերը կամ վերացնելու նրանց միջև գոյություն ունեցող հակասությունները, կամ էլ լրացնելու օրենսդրական բացը: Հենց

<sup>11</sup> Ст'ю, Марченко М.Н., Сравнительное правоведение. Общая часть. Учебник для юридических вузов.- М., Издательство "Зерцало", 2001, с. 263-535; Кристофер Осаке, Сравнительное правоведение в схемах: Общая и Особенная часть. Учеб.-практ. пособие. М., "Дело", 2000; Проблемы общей теории права и государства. Учебник для вузов. Под ред. академика РАН. доктора юрид. наук, проф. В.С.Нерсесянц, М., 2001, с. 281-306; Давид Р., Жоффр-Спиноза К., Основные правовые системы современности. М., 1996.

<sup>12</sup> Gruz P.A., Modern Approach to Comparative Law, Boston, 1993, p. 28.



սրանում է դրսևորվում ազգային իրավական համակարգերի դասակարգման գործնական նշանակությունը:

Սակայն, երբ օրենսդիրը շրջանցում է «հարազատ» իրավական ընտանիքը և փորձում է տրանսֆորմացիայի ենթարկել այլ իրավական ընտանիքի ազգային իրավական համակարգի նորմերը, ապա է գոյանում օրենսդրության խառնաշփոթ, անհամաձայնեցում, խախտվում է օրենսդրության համակարգը, տրամաբանական կառուցվածքը, ներդաշնակությունը: Որպես դասական օրինակ բերենք ընդհանուր իրավունքին բնորոշ տրաստի ինստիտուտը: Այդ ինստիտուտն իր արտացոլումն է գտել ԱՊՅ անդամ պետությունների,<sup>13</sup> այդ թվում և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 3-րդ կետում նշված է. «Սեփականատերը կարող է իր գույքը հանձնել այլ անձի հավատարմագրային կառավարման: Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում սեփականության իրավունքի փոխանցման: Հավատարմագրային կառավարիչը պարտավոր է գույքը կառավարել ի շահ սեփականատիրոջ կամ նրա կողմից նշված երրորդ անձի»:

Ռոմանոզերմանական ընտանիքի այլ իրավական համակարգերում, չնայած համեմատական իրավագիտության տեսաբանների ջանքերին, որոնք ուղղված են հիմնավորելու «տրաստի» ռեցեպցիան,<sup>14</sup> այն այնքան էլ լայն տարածում չի գտել: Այդ ինստիտուտի փոխակերպումը ԱՊՅ երկրների իրավական համակարգում առավել բարդություններ է առաջացրել, քան մայրցամաքային իրավական ընտանիքի զարգացած իրավական համակարգերում (գերմանական, ֆրանսիական, հոլանդական և այլն):<sup>15</sup>

Այդ խնդրի մասին ռուսական իրավաբանական գրականությունում արդեն իրենց կարծիքն են արտահայտել գիտնականները: Ըստ այդ կարծիքի՝ ա) այդ ներմուծումը հետևանք է համեմատական իրավագիտությանը անբավարար մակարդակով տեղյակ լինելուն, բ) այդ ինստիտուտը իմիջայլոց է տեղ գտել ռուսական քաղաքացիական օրենսդրությունում, գ) այդ նորությունը՝

տրաստը, առանձնահատուկ անհարմարություններ չի ստեղծում, սակայն նրա իմաստն ու կենսունակությունը խիստ կասկածելի են:<sup>16</sup>

Եվ պատահական չէ, որ այդ ինստիտուտը մեզանում գրեթե չի կիրառվում: Այս ամենը վկայում է, որ իրավական համակարգերի դասակարգումն ամենևին էլ տեսաբան իրավաբանների «մտքի վարժանք չէ», այլ ունի հսկայական կիրառական նշանակություն և օգնում է ավելի խորությամբ ըմբռնելու սեփական իրավական համակարգի իմաստն ու բովանդակությունը:

Իրավաբանական գրականությունում հաճախ են շփոթում նաև իրավունքի համակարգը իրավունքի հասկացության հետ:<sup>17</sup> Եթե իրավունքը հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի համակարգ է՝ հիմնված արդարության և ազատության համամարդկային արժեքների վրա<sup>18</sup>, ապա իրավունքի համակարգը իրավունքի ներքին կառուցվածքն է:<sup>19</sup>

Այս բոլորից հետևում է, որ անհրաժեշտ է հստակորեն միմյանցից տարբերակել՝ «ազգային իրավական համակարգ», «իրավական ընտանիք», «իրավունքի համակարգ», «օրենսդրության համակարգ» և «իրավունք» հասկացությունները, հակառակ դեպքում՝ դրանց շփոթումը իրավակիրառ պրակտիկայում բերում է հակասությունների, անհամաձայնությունների, անօրինականությունների և, վերջին հաշվով, իրավական նիհիլիզմի:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացության. ազգային իրավական համակարգը պատմականորեն ձևավորված և տվյալ պետությունում գործող իրավունքի և օրենսդրության համակարգերի, իրավակիրառ պրակտիկայի և իրավական զաղափարախոսության ամբողջությունն է:

<sup>13</sup> Stu, Гражданский кодекс Российской Федерации. М.: 1995, ст. 209, п. 4.

<sup>14</sup> Stu, Wiegang W., The Receptor of American Law in Europe // The American journal of Comparative Law, 1991, no 2, p. 220-448; Cruz P.A., Modern Approach to Comparative Law, Boston, 1993, p. 335-337.

<sup>15</sup> Այդ մասին մանրամասն տես, Dainow J., Civil Law and the Common Law: Some points of Comparison // The American journal of Comparative Law, 1966-1967, vol. 15, p. 419-435.

<sup>16</sup> Арановский К.В. В преддверии сравнительного правоведения // Правоведение, 1998, N2, /221/, с. 29.

<sup>17</sup> Stu, Теория государства и права. Учебник для юридических вузов и факультетов / Под ред. В.М.Корельского и В.Д.Перевалова, с. 315.

<sup>18</sup> Stu, Общая теория права / Под ред. В.К.Бабаева. Нижний Новгород, 1993, с. 111.

<sup>19</sup> Stu, Общая теория права и государства. Учебник / Под ред. В.В.Лазарева, с. 168.

<sup>13</sup> Stu, Гражданский кодекс Российской Федерации. М.: 1995, ст. 209, п. 4.

<sup>14</sup> Stu, Wiegang W., The Receptor of American Law in Europe // The American journal of Comparative Law, 1991, no 2, p. 220-448; Cruz P.A., Modern Approach to Comparative Law, Boston, 1993, p. 335-337.

<sup>15</sup> Այդ մասին մանրամասն տես, Dainow J., Civil Law and the Common Law: Some points of Comparison // The American journal of Comparative Law, 1966-1967, vol. 15, p. 419-435.



СООТНОШЕНИЕ ПОНЯТИЯ  
"НЕСОСТОЯТЕЛЬНОСТЬ" С ПОНЯТИЯМИ  
"НЕПЛАТЕЖЕСПОСОБНОСТЬ" И "БАНКРОТСТВО"

Понятие несостоятельности определенным образом соотносится с понятием неплатежеспособности и банкротства.

В Толковом словаре В.И.Даля составитель словаря рассматривал понятия "несостоятельность" и "банкротство" как синонимы. Давая толкование несостоятельности, он писал: "Несостоятельный должник, подрядчик, коего долги превышают истинные".<sup>1</sup>

В юридическом словаре под редакцией П.И. Кудрявцева, несостоятельность комментировалась как, "установленная судом неспособность должника к полной оплате денежных требований кредиторам".<sup>2</sup>

В словаре Т.М. Капельзона под банкротством понималось: 1)долговая несостоятельность, прекращение платежей по своим обязательствам, 2) крах, провал.<sup>3</sup>

Неплатежеспособность может быть обусловлена разными причинами и состоит в том, что, к моменту наступления срока платежа у лица отсутствуют в необходимом количестве средства платежа. Неплатежеспособность может быть относительной и абсолютной.

Относительная неплатежеспособность означает, что при удовлетворительной структуре баланса лица (пассив не превышает актива), оно временно не обладает средствами платежа. В этом случае конфликт между должником и его кредиторами может быть разрешен обычными гражданско —

правовыми средствами, например, привлечением должника к ответственности за просрочку исполнения обязательства уплатить деньги.

Абсолютная неплатежеспособность имеет место тогда, когда лицо при обычном ведении дел не может погасить все свои обязательства, срок платежа по которым уже наступил, например, при неудовлетворительной структуре баланса.

Абсолютная неплатежеспособность лица, удостоверенная судом или объявленная им самим, называется несостоятельностью. В настоящее время западное законодательство использует термин "несостоятельность" так как существует точка зрения, что "банкротство это уголовно — правовая сторона несостоятельности".

Поэтому " в большинстве стран нормы, регулирующие уголовно — правовые вопросы, исключены из законов о несостоятельности, инкорпорированы в уголовные кодексы и применяются только по отношению к физическим лицам".<sup>4</sup>

В США лицо, в отношении которого возбуждены процедуры банкротства, во время производства по делу считается несостоятельным, а после судебного решения может быть признано банкротом.

Действующий закон РА о неплатежеспособности (банкротстве) не дифференцирует понятия "неплатежеспособность" и "банкротство". Между тем по поводу этого вопроса постоянно ведутся споры.

Так Г.Ф. Шершеневич считал, что банкротство является "неосторожное или умышленное причинение несостоятельным должником ущерба кредиторам посредством уменьшения или сокрытия имущества".<sup>5</sup>

Правоведы приходили к выводу, что банкротство — "деликт своеобразный: он слагается из 2-х элементов, из которых

<sup>1</sup> Даль В.И. Толковый словарь живого великорусского языка Т2, М., 1956г., с. 536.

<sup>2</sup> Юридический словарь Т1, гл. Ред. П.И. Кудрявцев М., 1956г., с. 660.

<sup>3</sup> Словарь иностранных слов, вошедших в русский язык. Под ред. Т.М. Капельзона, М, 1933 г., с. 159.

<sup>4</sup> Васильев В.А Гражданское и торговое право кап-их государств М., 1993г. с. 441.

<sup>5</sup> Шершеневич Г.Ф. курс торгового права 1912г., с. 580.



один (несостоятельность) — понятие гражданского права, другой (банкротское деяние) — понятие уголовного права.<sup>6</sup>

Позиция армянского законодателя по поводу отождествления понятия "несостоятельность" и "банкротство" как видно по тому, что отсутствуют какие — либо публикации, разделяется всеми.

Между тем, судя по публикациям российских ученых (кстати в Российском законодательстве о несостоятельности вышеуказанные понятия отождествляются) последние не разделяют эту позицию.

Так, М.В. Телюкин придерживается мнения, что банкротство является несостоятельностью, сопряженной с виновным поведением должника, направленным на причинение вреда кредиторам.

В.В. Степанов считает, что лицо в отношении которого возбуждены процедуры банкротства, во время производства по делу считается несостоятельным, а после судебного решения может быть признано банкротом.

Интересны рассуждения по этому поводу вьетнамского экономиста Ле Хоа Нгуена, который считает, что понятие "несостоятельность" с экономической точки зрения отождествляется с понятием "неплатежеспособность". То есть "несостоятельность" и "неплатежеспособность" — синонимы.

Под неплатежеспособностью (несостоятельностью) предприятия понимается его неспособность своевременно и в полном объеме погасить кредиторскую задолженность. Продолжительное и непрерывное состояние неплатежеспособности (несостоятельности) может перерасти в абсолютную неплатежеспособность и продолжение его деятельности представляется невозможным и нецелесообразным.

Невозможность продолжения деятельности предприятия заключается в отсутствии шанса восстановить свою платежеспособность и необходимости средств для ведения финансово — хозяйственной деятельности. Нецелесообразность

продолжения деятельности предприятия обусловлена отсутствием его социально — экономической значимости, экономического и производственного потенциала, рыночной привлекательности и конкурентоспособности выпускаемой им продукции и т.д. Такое предприятие становится банкротом и подлежит ликвидации и продажи в целях соразмерного удовлетворения требований кредиторов. Таким образом, с экономической точки зрения банкротство — процедура ликвидации и продажа имущества неплатежеспособного предприятия с целью соразмерного удовлетворения требований кредиторов в связи с невозможностью и нецелесообразностью продолжения его деятельности. Банкротство является частным случаем его неплатежеспособности (несостоятельности). Из вышеуказанного следует, что "несостоятельность" и "банкротство" два различных понятия. Поэтому, как полагает Ле Хоа Нгуен, их нельзя использовать в законе как синонимы. В законе следовало бы отдельно дать определение "неплатежеспособности" (несостоятельности) и банкротства.<sup>7</sup>

Думается, что подход к данной проблеме изложенный в Законе о несостоятельности (банкротстве) РА не вполне правильный, целесообразнее было бы в Новом Законе о несостоятельности (банкротстве) отождествлять понятия "неплатежеспособность" и "банкротство".

"Неплатежеспособность" могла бы рассматриваться в качестве предварительной оценки состояния должника, а банкротство, как окончательная, установленная судом неспособность расплатиться по своим финансовым обязательствам.

<sup>7</sup> Ле Хоа Нгуен "Новый Закон о несостоятельности (банкротстве) Экономика и жизнь 1998 г. N 11 с. 20.

<sup>6</sup> Трайнин Несостоятельность и банкротство 1913 г., с. 27.



ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Քաղաքական կուսակցությունների տիպաբանության համար ելակետային նշանակություն ունի քաղաքական կուսակցություն հասկացության սահմանումը, առանց որի անհնար է նաև կուսակցական համակարգերի ուսումնասիրությունն ու տիպավորումը: Կուսակցություն հասկացությունը ժամանակակից օտարալեզու գրականության մեջ նշվում է «պարտիա» տերմինով: Այս տերմինը առաջացել է լատիներեն «pars» կամ «partis» բառից, որը նշանակում է «նաս» և օգտագործվել է մարդկանց մի որոշակի խումբ, որոշակի մաս մատնանշելու համար:

Ինչպիսի՞ կազմակերպություն է կուսակցությունը, որո՞նք են այն ընդհանրությունները, դրդապատճառներն ու նպատակները, որոնք համախմբում են մարդկանց այդ կազմակերպությունների մեջ և մղում միասնական գործունեության: Բավականին դժվար է պատասխանել այս հարցերին, որովհետև ժամանակակից աշխարհի մոտ 200 պետություններում գործում են մոտավոր հաշվարկներով հազարից ավելի կուսակցություններ, որոնք ունեն բազմաթիվ տարբերիչ հատկանիշներ, գործում են ոչ միասնական պայմաններում, միմյանցից էականորեն տարբերվող պետական կարգի ու քաղաքական ռեժիմների պայմաններում, որն իր կնիքն է դնում քաղաքական կուսակցությունների վրա, ձևավորում ու ձևախեղում նրանց: Արդյունքում մեր առջև հառնում է կուսակցությունների բազմապիսի և բազմաբնույթ աշխարհը, որտեղ ուսումնասիրողի առջև ծառանում են մեծ թվով դժվարություններ, երբ որ նպատակ է դրվում գտնել և ձևակերպել այնպիսի սահմանում, որ կարողանա առավելագույնս սպառնիչ կերպով բնութագրել քաղաքական համակարգի այս կարևոր քաղաքարհիչը:

Պետք է նշել, որ հարցադրումը նոր չէ, այն բավականին հին պատմություն ունի, որովհետև դասական կուսակցությունների ի հայտ գալուց հետո նոր և նորագույն ժամանակների քաղաքական մտքի համար սկսած 17-րդ դարի վերջերից այն ուսումնասիրության առարկա է հանդիսացել: Քաղաքական կուսակցությունների մասին առաջին գիտական պատկերացումները մենք կարող ենք հանդիպել 18-րդ դարի քաղաքական գործիչների և մտածողների (Մոնտեսքիո, Ռուսո, Վաշինգտոն) և 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին լայն ճանաչում ստացած քաղաքագետներ Մ.Վեբերի, Ռ.Միխելսի, Դժ.Բրայսի աշխատություններում: Հիմնախնդրին փորձել են սպառնիչ պատասխան տալ ժամանակակից պարտողգիայի հիմնադիրներ Մորիս Դյուվերժեն և Դժ. Սարտորին: Ներկայումս, 21-րդ դարի նախաշեմին քաղաքական գիտության և հատկապես պարտողգիային վերաբերող գիտական աշխատություններում հարցադրումը շարունակում է առաջնային տեղ զբաղեցնել և նոր մոտեցումներով նոր սահմանումներ են առաջադրվում: Սա մի անգամ ևս ապացուցում է, որ հիմնախնդիրը պահպանվում է, և մեր կարծիքով, առանձին գիտական ուսումնասիրություններով է, որ հնարավոր է արդեն գոյություն ունեցող տեսակետների համադրումը, համեմատական վերլուծությունը, դրանց համակարգումը և նոր սահմանումների ձևակերպումը, որպես գիտական ճշմարտացիության հասնելու միջոց: Սակայն առաջնորդվելով այս սկզբունքով, մենք հիմնական ուշադրությունը կնվիրենք արդիական սահմանումների վերլուծությանը, որովհետև քաղաքական համակարգի բոլոր բաղադրիչները, այդ թվում նաև քաղաքական կուսակցությունները գտնվում են անընդհատ զարգացման և փոխակերպման գործընթացի մեջ, որի վրա մեծապես ազդում են տնտեսական, սոցիալական, ներքաղաքական և արտաքին-քաղաքական բազմաթիվ գործոններ: Այս առումով բոլոր այն տեսակետները, որ առկա են նույնիսկ 20-րդ դարի կեսերին հրատարակված գիտական ուսումնասիրություններում և պետական-օրենսդրական փաստաթղթերում, այսօր արդեն վիճելի են և չեն արտացոլում իրականությունը: Ուստի անդրադարձը դեպի նախորդ ժամանակաշրջան, նպատակ ունի տալ ավելի շատ հիմնախնդրի պատմությունը: Այս առումով նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ հատկապես Բյորկի, Տոկվիլի,



Մարքսի, Լենինի, Օստրոգորսկու, Վեբերի, Միխեյևսի և Դյուվերթեի տեսակետներին: Այն հնարավորություն կտա պատկերացնել քաղաքական մտքի էվոլյուցիան հիմնախնդրի լուսաբանման ճանապարհին սկսած 19-րդ դարի սկզբներից մինչ 20-րդ դարի կեսերը, որովհետև սրանք այն մտածողներն էին, որոնց տեսակետները ամենից տարածվածն ու ընդունելի էին նախորդ ժամանակաշրջանի քաղաքական գիտության մեջ:

Անգլիացի քաղաքական գործիչ, փիլիսոփա և հրապարակախոս Էդմոնդ Բյորկը ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության ժամանակակիցն էր: Նա 1790թ հրատարակեց հեղափոխության մասին իր գիրքը<sup>1</sup>, որի մեջ առաջիններից մեկը փորձեց տալ քաղաքական կուսակցության սահմանումը: Բյորկը կուսակցությունը համարում էր ազգային շահը համատեղ ուժերով առաջ մղելու նպատակով միավորված մարդկանց կազմակերպություն, որն առաջնորդվում է որոշակի առանձնահատուկ սկզբունքների վերաբերյալ բոլորի կողմից կայացած համաձայնությամբ: Լինելով դասական պահպանողականության հիմնադիրներից մեկը, նա ապացուցում էր, որ հասարակական կյանքը հիմնվում է ավանդույթների, բարոյական ու նյութական արժեքների վրա: Անցյալից ժառանգություն ստացած այդ արժեքների վրա հենվելով հնարավոր է աստիճանաբար վերափոխել հասարակությունը և համատեղ ուժերով առաջ մղել ազգային շահը, որը նաև կուսակցությունների նպատակն է:

Ֆրանսիացի իրավաբան, 19-րդ դարի առաջին կեսին հայտնի պետական քաղաքական գործիչ Ալեքսիս Տոկվիլը ուսումնասիրելով Ամերիկյան դեմոկրատիան եկավ այն եզրակացության, որ կուսակցությունները դրանք փառասիրության ծնունդ են: Նրա պատկերացմամբ կուսակցությունների ի հայտ գալը կատարվում է հետևյալ սխեմայով. մի որևիցե քաղաքական գործիչ նպատակ ունենալով հասնել իշխանության ձևակերպում է իր քաղաքական շահը, այնուհետև այն կատարում է այլ քաղաքական շահերի որոնումներ, որոնք մոտ են իրենին և միայն այնուհետև փնտրում է գոյություն ունեցող դոկտրինաներից ամենահարմարը: Վեջինս դառնում է յուրօրինակ անցաթուղք քաղաքական պայքարի թատերաբեմ մուտք գործելու համար և նպաստում է նշված քաղաքական շահերով համախոհների միավորմանը կուսակցական

կազմակերպությունների մեջ: Տոկվիլը գրում է «Անհրաժեշտ է քաղաքական կուսակցությունների ստեղծմանը նպատակաուղղված բավականին ուժեղ ամբիցիաներ, որպեսզի վերցվի իշխանությունը: Չէ որ դժվար է տապալել նրան ում ձեռքում գտնվում է իշխանությունը, միակ իրական այն պատրվակով, որ դուք ուզում եք գրավել իր տեղը<sup>2</sup>»: Եթե փորձենք կուսակցությունների մասին Տոկվիլի տեսությունից հասկացության պարզաբանումը դուրս բերել կստացվի, որ կուսակցությունները համախոհների կազմակերպություններ են, որոնց հիմնադիր-ստեղծողների փառասիրությունը քողարկվում է քաղաքական շահերով, որի համար էլ նա ուղղակիորեն գրում է. «Կուսակցությունները - դրանք չարիք են բնորոշ դեմոկրատական կառավարմանը<sup>3</sup>»:

Մոտավորապես նույն դիրքորոշումն ունի նաև քաղաքական կուսակցությունների լուրջան քաղաքական մեջ Յա. Մ. Օստրոգորսկին, որը կրկին կատարել է ամերիկյան կուսակցությունների ուսումնասիրության օրինակով: Դարասկզբի ամերիկյան դեմոկրատիայի մեջ քաղաքական կուսակցությունների դերը լուսաբանելով նա հանգում է այն հետևության, որ «Կուսակցությունը իր լուրջամբ հանդիսանում է քաղաքացիների ազատ միավորում», որը չի ենթարկվում արտաքին ազդեցության այնքանով, որքանով որ պետությունը ԱՄՆ-ում իրավունք չունի միջամտելու կուսակցությունների գործունեությանը և դրոշմակնքել նրանց քաղաքական համոզումները<sup>4</sup>: Այնուհետև այս միավորումների գործունեության ծրագրերը ձեռք են բերում կրոնական հավատքի բնույթ և կուսակցականները իրավունք չունեն հեռանալ այդ հավատքից: Համապատասխանությունը կուսակցության հավատո հանգանակին դառնում է քաղաքական վարքագծի միակ կանոնը: Մինևույն ժամանակ կուսակցություն հասկացությունը ձեռք է բերում «սոցիալական սարսափեցման» ուժ, որն ըստ Օստրոգորսկու ամերիկյան դեմոկրատիայի բարձրագույն ուժն է: Քաղաքական կյանքի զարգացումը և ընտրությունները քաղաքացիներին ներգրավում են կառավարման մեջ, որն էլ հարկադրում է մարդկանց իրենց քաղաքացիական պարտքը կատարելու համար համաձայնության գալ միմյանց հետ: Յուրաքանչյուրի նպատակների իրականացումը պահանջում է թելադրում է «կոոպերացիա», որն անհնարին է առանց կազմակերպության «Քաղաքացիների խմբավորումները հանուն



քաղաքական շահերի», որոնք կոչվում են կուսակցություններ հենց այդ կազմակերպություններն են, որոնք անհրաժեշտ են այնտեղ, որտեղ քաղաքացիները իրավունք ունեն և պարտավոր են մասնակցել կառավարմանը<sup>5</sup>: Կուսակցություն հասկացության ելությունը Օստրոգորսկին լուսաբանում է նաև անդրադառնալով քաղաքական կուսակցություն-իշխանություն-էլիտա փոխկապակցվածության վերլուծությանը, դեռևս 20-րդ դարի սկզբների կանխատեսելով, որ ապագա դեմոկրատիայի փուլը լինելու է իր էությանը «կուսակցական դեմոկրատիայի» ժամանակաշրջան: Նրա կարծիքով իրական քաղաքականության մեջ դերակատարները ոչ թե կուսակցություններն են, այլ նրանց ադմինիստրացիաների միջուկը՝ «կոկուսը»<sup>6</sup>: Կոկուսը դառնում է այն մեխանիզմը, որը ԱՄՆ-ում հնարավորություն է տալիս փոքրաթիվ մարդկանց վերահսկել և ուղղորդել զանգվածների վարքագիծը, կանխորոշել ժողովների, դիսկուսիաների, նախընտրական մրցարշավների ելքն ու արդյունքները: Այնուհետև աստիճանաբար կուսակցական դեկավարության կենտրոնացումը և բյուրոկրատացումը շարունակվում է: Նեղանում է ղեկավարների շրջանակը, կոկուսի ներսում ձևավորվում է կուսակցական ղեկավարների նեղ օղակ, որն Օստրոգորսկին անվանում է «ինտիմ» խմբակ: Արդյունքում «հավասար ընտրական իրավունքի պայմաններում բնակչության հիմնական զանգվածը այնուամենայնիվ դուրս է մղվում ակտիվ քաղաքական կյանքից, դառնալով կոկուսների մեքենայությունների օբյեկտ»<sup>7</sup>: Ամփոփելով Օստրոգորսկու տեսակետները, կարող ենք նշել, որ քաղաքական կուսակցություն հասկացությունը նա մեկնաբանում է երկու դիրքերից, փորձելով պարզաբանել մեղալի երկու երեսները: Առաջինը արտաքուստ երևացող քաղաքական համախոհների կազմակերպությունն է, որն առաջանում է կառավարմանը մասնակցելու համար քաղաքական գործունեության կոոպերացիայի պատճառով, մյուսը՝ կուսակցական ադմինիստրացիայի և վերնախավի բյուրոկրատական մեքենան է, որը շարքային կուսակցականներին ստիպում է հավատարիմ մնալ կուսակցության գլխավոր գծին, այսինքն ծառայել իրեն, իսկ զանգվածներին օգտագործել որպես կույր գործիք: Ստեղծվում են երկու տեսակի բարոյականություն, մեկը կուսակցական էլիտայի, մյուսը շարքային կուսակցականների համար, որն էլ իր հերթին

հանգեցնում է հասարակության ապաքաղաքականացմանը, բարոյականության և քաղաքականության խզմանը<sup>8</sup>: Մինչ Օստրոգորսկին ամերիկյան դեմոկրատիայի ուսումնասիրության ճանապարհով փորձում էր պարզաբանել քաղաքական կուսակցությունների էությունը, նրա ժամանակակիցներից շատերը և հատկապես սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների առաջնորդ-տեսաբանները զինված մարքսիստական տեսությամբ հիմնախնդիրը լուսաբանում էին այլ մոտեցմամբ:

Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Էնգելսը կուսակցությունների էության բացահայտումը չեն դարձրել առանձին ուսումնասիրությունների առարկա, սակայն նրանց նոր պատմափիլիսոփայական հայեցակետը, ըստ որի պատմության շարժիչ ուժը դասակարգային պայքարն է, դարձավ քաղաքական կուսակցությունների մասին տեսության առանձին ուղղության հիմքը, որը կենսունակ է մինչև օրս և ունի բավականաչափ մեծ թվով հետևորդներ: Մարքսիզմի առաջին ծրագրային փաստաթուղթը՝ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», որն հրատարակվեց 1848թ., հիմնավորում էր կապիտալիզմի կործանման անխուսափելիությունը, սակայն ինչպես նշում էին Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը իր դարն ապրած ոչ մի տիրապետող դասակարգ պատմության բեմից կամավոր չի հեռանում: Բուրժուազիայի խորտակումը նույնպես հնարավոր է միմիայն դասակարգային կատաղի պայքարի և հեղափոխության միջոցով: Հեղափոխությունը պետք է իրականացնեն բանվորները, որոնք պետք է դառնան տիրապետող դասակարգ և նվաճեն իշխանությունը: Բանվորների կողմից քաղաքական իշխանությունը նվաճելու և հասարակությունը վերակառուցելու անհրաժեշտ պայմանը Մարքսը համարում էր կուսակցության ստեղծումը: Նա գրում էր. «Կոմունիստները, հետևաբար, գործնականում հանդիսանում են բոլոր երկրների բանվորական կուսակցությունների ամենավճռական, շարունակ առաջընթաց շարժմանը մղող մասը, իսկ տեսականորեն նրանք պրոլետարիատի մնացած մասսայի համեմատությամբ առավելություն ունեն, պրոլետարական շարժման պայմանները, ընթացքը և ընդհանուր արդյունքներն ըմբռնելու գործում»<sup>9</sup>: Այսպիսով մարքսիզմի հիմնադիրները քաղաքական պայքարը նույնացնում էին դասակարգային պայքարի հետ, իսկ կուսակցությունը համարում դասակարգային կազմակերպության բարձրագույն



ձև, որը միավորում է դասակարգի ակտիվ, վճռական և քաղաքականապես գրագետ մասը:

Մարքսիզմի այս դրույթները հիմք ընդունելով կուսակցությունների մասին իր տեսությունը զարգացրեց Վ.Ի.Լենինը: Լենինյան տեսությունը կրում է սահմանափակ բնույթ և նպատակ ունի միմիայն հիմնավորել հեղափոխական-բանվորական կուսակցության դերն ու անհրաժեշտությունը սոցիալիստական հեղափոխության իրականացման գործում: Լենինի մի շարք աշխատությունների<sup>10</sup> խորքային ուսումնասիրությունը, բերում է այն համոզման, որ նա կուսակցությունը դիտում էր որպես ռազմական կարգապահությամբ, գաղափարական միասնությամբ, կիսալեզալ և անլեզալ քաղաքական գործունեությանն հարմարեցված և իշխանության բռնի զավթմանը նպատակաուղղված մարտական կազմակերպություն: Մենշևիկների և իր մյուս գաղափարական-քաղաքական հակառակորդների դեմ պայքարում բոլշևիկների առաջնորդը զարգացրեց կուսակցությունների կազմակերպական սկզբունքների մասին բավականին ծավալուն հայացքների մի համակարգ, որն իր կենսունակությունը չի կորցրել և ամբողջությամբ, կամ մասամբ ընկած է բազմաթիվ ծախ կուսակցությունների կազմակերպական կառուցվածքների հիմքում: Ըստ Լենինի.

- կուսակցությունը բանվոր դասակարգի մի մասն է, նրա առաջավոր ջոկատը,
- կուսակցությունը դասակարգի կազմակերպված ջոկատն է կամքի միասնությամբ, գործողությունների միասնությամբ, կարգապահության միասնությամբ,
- կուսակցությունը որպես կազմակերպություն կարող է կայանալ միայն, եթե կառուցվի ցենտրալիզմի սկզբունքներով,
- մարքսիստական կուսակցությունը բանվորների դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևն է,
- «պրոլետարիատն այլ զենք չունի իշխանության համար մղվող պայքարում, բացի կազմակերպությունից»<sup>11</sup>,

- «բանվոր դասակարգի ուժը կազմակերպությունն է: Առանց մասսաների կազմակերպման՝ պրոլետարիատը ոչինչ է, կազմակերպված՝ նա ամեն ինչ է»<sup>12</sup>:

Քաղաքական կուսակցություն հասկացության պարզաբանման մեջ կազմակերպության գործոնի գերազանահատումը Լենինի կողմից բխում էր Ռուսաստանի առանձնահատկություններից: Սահմանադրական կարգի և պառլամենտարիզմի բացակայության, երկրի հետամնացության, ինքնակալական վարչակարգի և զանգվածների ցածր քաղաքական գիտակցականության պայմաններում հնարավոր չէր պայքարել առանց մարտական կազմակերպության: Ժամանակակից ուսումնասիրողների մի զգալի մասը բոլշևիզմի անկյունաքարերից մեկը համդիսացող այս դրույթները համարում է խորհրդային տոտալիտարիզմի հիմքը: Օրինակ, Ֆրանսիացի քաղաքագետ Դոմինիկ Կոլան գտնում է, որ Լենինը այնքան բացարձակացրեց կուսակցության կազմակերպչական դերը, որ խեղաթյուրվեց Մարքսի դասակարգային պայքարի տեսությունը: Եթե Մարքսի մոտ պատմական զարգացման շաժիչ ուժերը դասակարգերն էին, ապա Լենինի մոտ դա փոխարինված է հեղափոխական կուսակցությամբ: Սրան հետագայում հաջորդեցին նոր փոխարինումներ. կենտրոնական կոմիտեն փոխարինեց կուսակցությանը, զխավոր քարտուղարը փոխարինեց կենտրոնական կոմիտեին, որն էլ հանգեցրեց անհատի պաշտամունքին<sup>13</sup>:

Կուսակցություն և դասակարգ հասկացությունները Լենինը իսկապես խառնել է իրար, բայց ոչ թե ակամայից, այլ գիտակցաբար, բոլշևիկների մենատիրությունը, որն անվանում է «պրոլետարիատի դիկտատուրա», հիմնավորելու համար:

Միասնական կուսակցությունը Լենինի պատկերացմամբ կարող էր իր կամքը հաղորդել հարյուրավոր, հազարավոր, հարյուր-հազարավոր մարդկանց, որն էլ հետո կդառնար միլիոնների և դասակարգի կամքը<sup>14</sup>:

1970-ական թթ. արևմտյան սոցիալիզմի և քաղաքագիտության մեջ լայն տարածում ստացան Մաքս Վեբերի հայացքները, որին անվանում էին «բուրժուազիայի Մարքս»: 1905-1920թթ. գրված իր մի շարք աշխատություններում («Բողոքական եթիկան և կապիտալիստական ոգին», «Քաղաքականությունը



որպես կոչում և մասնագիտություն», «Տնտեսությունը և հասարակությունը»<sup>15</sup> Վեբերը բոլորովին այլ դիրքերից, քան Մարքսը, փորձում է բացահայտել քաղաքականության էությունը, լեգիտիմ իշխանության տիպերը, բյուրոկրատիայի սոցիալ-քաղաքական արմատները և անդրադառնում է նաև կուսակցություններին: Քաղաքական կուսակցությունը ըստ Վեբերի, դա կազմակերպություն է, որի նպատակը իշխանության նվաճումն է իր ղեկավարների համար, իսկ անդամները նույնպես կարող են որոշակի օգուտներ քաղել և առավելություններ ձեռք բերել: Այդ առավելությունները հնարավորություն են տալիս իրականացնել քաղաքական նպատակներ կամ ստանալ անձնական օգուտներ՝ կամ էլ երկուսը միասին: Կուլեկտիվ և անհատական շահի նշանակության ընդգծումը կուսակցություն հասկացության սահմանման մեջ Վեբերի մոտ առաջնային տեղ է զբաղեցնում: Սակայն այս հանգամանքը մեզ չպետք է շփոթության մեջ գցի և ստացվի այն տպավորությունը, թե կուսակցությունը ձեռնարկություն է, որտեղ աշխատողները միայն տնտեսական շահեր ունեն: Վեբերը նշում է, որ կուսակցությունների մեջ համախմբված մարդիկ շահագրգռված են քաղաքականապես, շարժվում են գաղափարախոսությամբ կամ ձգտում են իշխանության, որպես այդպիսին: Այսինքն պետական բարձր պաշտոնների ձգտող կուսակցականին մենք չենք կարող մեղադրել հարստանալու ցանկության մեջ, չնայած որ նյութական օգուտներ քաղելու գործոնը ակնհայտ է: Այսպիսով քաղաքական կուսակցություն հասկացության սահմանման մեջ Վեբերը նյութական շահագրգռվածության գործոնը նշելով, դա չի համարում զլխավորը և իրենց կենսամակարդակը բարձրացնելու համար կուսակցության անդամների ձգտումը առանձնացնում է տնտեսական արդյունավետության պարզ պատկերացումից: Վեբերի հայացքների համաձայն կուսակցությունները հանդիսանում են նաև «շահագրգռված մարդկանց ձեռնարկություններ», որ հնարավորություն է տալիս նրանց գործունեությունը համեմատել կապիտալիստների գործունեության հետ, չմոռանալով այդ դեպքում, որ շահը այստեղ ոչ թե կապիտալի կուտակումն է, այլ քաղաքական տիրապետության նվաճումը:

Այս մտտեցումը առկա է նաև գերմանացի հետազոտող Վ. Դասբախի մոտ: Նա կուսակցությունը դիտում է որպես «միատեսակ քաղաքական հայացքներով և

նպատակներով մարդկանց միություն, որը ձգտում է գրավել քաղաքական իշխանությունը սեփական շահերի իրականացման համար օգտագործելու նպատակով»<sup>16</sup>:

Գերմանացի մեկ այլ քաղաքագետ Ռոբերտ Միխելսը կուսակցությունների էությունը բացահայտելու համար ընտրել է սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդը: Վերլուծելով սոցիալական հարաբերությունները, Միխելսը հանգեց ուղղակի դեմոկրատիայի և ժողովրդական զանգվածների ուղղակի տիրապետության անհնարինության հետևությանը, որի պատճառով ստեղծվում են ներկայացուցչական մարմիններ: Նա նման ներկայացուցչական մարմիններ է համարում քաղաքական կուսակցություններին: Կուսակցությունների գործունեության հետևանքով սկսվում է օլիգարխացումը՝ կառավարող վերնախավի անջատումը զանգվածներից և նրա վերածումը փակ կաստայի: Կաստայացված քաղաքական էլիտաները փոխարինում են միմյանց իշխանության ղեկի մոտ: Ըստ Միխելսի, փաստացիորեն տեղի է ունենում ոչ թե փոփոխություն այլ նոր էլիտայի միահյուսումը հին էլիտայի հետ, քաղաքական էլիտաների շրջապատյալ: «Ընդդիմադիր կուսակցության բոլոր փորձերը նպատակաուղղված են կառավարող կուսակցության տապալմանը, որպեսզի գրավի նրա տեղը, այլ կերպ ասած տիրապետող դասակարգի մի խմբավորումը փոխարինվի մյուսով: Սակայն շուտ թե ուշ մրցակցային պայքարը տիրապետող դասակարգի առանձին խմբավորումների միջև ավարտվում է հաշտեցմամբ, որի դրդապատճառը զանգվածների վրա տիրապետության պահպանումն է, կամ նրա բաժանումը»<sup>17</sup>: Նա ընդգծում է նաև, որ «Կուսակցությունը դա միայն նպատակին հասնելու միջոց է», որի գործունեության հիմքը կազմում է ծրագիրը»<sup>18</sup>:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Միխելսի տեսակետով քաղաքական կուսակցությունները առաջանում են սկզբում որպես զանգվածների շահերը արտահայտող ներկայացուցչական կազմակերպություններ, այնուհետև վերածվում քաղաքական պայքարի միջոցի, տիրապետող դասակարգի վերնախավի խմբավորումների համար և ի վերջո դառնում օլիգարխացմանը նպաստող գործոն: Ահա թե ինչու նա ընդգծում է, որ կուսակցությունը որոշակի



դասակարգի շահերը կարող է արտահայտել միայն տեսականորեն: Օրինակ, սոցիալ-դեմոկրատիան հանդիսանում է պրոլետարիատի գաղափարախոսության կրողը, սակայն բոլորովին էլ դասակարգային մարմին չէ: Այն դասակարգային խառնուրդ է, որովհետև բաղկացած է այնպիսի սոցիալական տարրերից, որոնք տնտեսական տարբեր ֆունկցիաներ ունեն: Այս իրողությունը մատուցվում է այնպես, որ իբր թե կուսակցության մեջ գտնվող այդ տարրերը, որոնք այլ դասակարգից են, հանուն «գաղափարի զոհում են իրենց անձնական շահերը»<sup>19</sup>:

Մ. Վեբերի և Ռ. Միխելսից հետո ֆրանսիացի հանրահայտ քաղաքագետ Մորիս Դյուվերժեն հենվելով քաղաքական գիտությունների նախորդ նվաճումների վրա, բոլորովին նոր մոտեցում ցուցաբերեց քաղաքական կուսակցություն հասկացության մեկնաբանմանը՝ շեշտը դնելով միայն ժամանակակից կուսակցությունների վրա:

Ժամանակակից կուսակցությունները, ըստ Դյուվերժեի, դրանք այն կուսակցություններն են, որոնք ձևավորվում են համընդհանուր ընտրական օրենքի հաստատման ժամանակաշրջանում, որը իշխանության լեգիտիմացման և պառլամենտի իրավունքների որակական ընդլայնման միակ միջոցն էր: Առաջանալով ինքնակալական-ֆեոդալական ռեժիմների, ավտորիտար քաղաքական իշխանությունների, ցենզային ընտրությունների և հիերարխիկ հասարակարգի կործանման հետ զուգահեռ, ժամանակակից կուսակցությունները Դյուվերժի կարծիքով դառնում են այն կազմակերպությունները, որոնք իրականացնում են համընդհանուր ընտրական օրենքը գործի դնելով դեմոկրատական հասարակության ինստիտուտները: Սակայն ի տարբերություն իր նախորդների, Դյուվերժեն կուսակցությունների էության բացահայտման չափանիշ է ընտրում ոչ թե գաղափարական (դոկտրինալ) և սոցիալ-դասակարգային ընդհանրությունը, այլ կազմակերպական ընդհանրությունը: Բոլորովին չանտեսելով ոչ գաղափարի, ոչ սոցիալ-դասակարգային դետերմինացիայի նշանակությունը, Դյուվերժեն ձևակերպում է իր ելակետային դրույթները. ժամանակակից քաղաքական կուսակցությունների էությունը բացահայտվում է նրանց կազմակերպությամբ. կուսակցությունը ընդհանրություն է որոշակի կազմակերպական կառուցվածքի

հենքի (բազայի) վրա. կառուցվածքային միավորների բնույթը և մեկ կազմակերպության մեջ նրանց ինտեգրացման ձևը ազդում է սոցիալ-դասակարգային կազմի և գաղափարական միասնության վրա. կուսակցության արդյունավետ գործունեությունը և այդ գործունեության սկզբունքներն ու մեթոդները անմիջականորեն որոշվում են բազային կազմակերպական կառուցվածքով, որը հանդիսանում է ամենակայուն բնութագրիչը կուսակցությունների համար: Իր հանրահայտ «Քաղաքական կուսակցություններ» գրքում Դյուվերժեն անդրադառնալով կուսակցությունների ծագմանը համեմատության մեջ է դնում անգլիացի իդեալիստ փիլիսոփա Դավիդ Դյունմի և ֆրանսիացի գրող, լիբերալիզմի տեսաբան Բենժամեն Կոնստանի տեսակետները: Դ.Դյունմի «Կուսակցությունների փորձի մասին» (1760) աշխատությունից նա ընդգծում է, որ ծրագիրը առաջնային է կուսակցությունների համար միայն վաղ փուլում, երբ այն նպաստում է ցրված անհատների միավորմանը, իսկ այնուհետև առաջին պլան է մղվում կազմակերպությունը, որից հետո պլատֆորմը (գաղափարա-քաղաքական ծրագրահենքը - հեղ.) վերածվում է աքսեսուարի (կողմնակի հանգամանքի - հեղ.)<sup>20</sup>:

Բ. Կոնստանի մտքերից մեջբերում է նրա սահմանումը. «Կուսակցությունը դա անձանց ընդհանրություն է, որն հրապարակավ դավանում է միևնույն քաղաքական դոկտրինան»<sup>21</sup>: Դյուվերժեն միանշանակորեն ճշմարտացի համարում է Դ.Դյունմի տեսակետը, գտնելով որ Բ.Կոնստանի լիբերալ կոնցեպցիան հնարավորություն է տալիս լուսաբանել ավելի շատ կուսակցությունների պատմությունը, քան նրանց սոցիալ-քաղաքական էությունը: Ահա թե ինչու Դյուվերժեի տեսության մեջ կուսակցություն հասկացությունը լուսաբանված է ոչ թե կուսակցությունների դոկտրինաների կամ սոցիալական կազմի վերլուծության բնույթի, այլ նրա կառուցվածքների գեներալի բացահայտմամբ<sup>22</sup>: Քաղաքական կուսակցությունների առաջացումը կապվում է ընտրական կոմիտեների և պառլամենտական միավորումների (խմբավորումների, ֆրակցիաների) առաջացման հետ, որոնց անվանում է էլեկտորալ (ընտրազանգվածային-հեղ.) և պառլամենտական ծագման կուսակցություններ<sup>23</sup>: Միևնույն ժամանակ առանձնացվում է կուսակցությունների երկրորդ խումբը, որոնց ձևավորումը կատարվում է պառլամենտական և էլեկտորալ



շրջանակներից դուրս՝ արտաքին գործոնի ազդեցության հետևանքով: Այդ կուսակցությունները Դյուվեժեն անվանում է արտաքին ծագման կուսակցություններ: Արտաքին գործոններ են համարվում հասարակական բազմաբնույթ միավորումները՝ փիլիսոփայական ընկերությունները, ժողովրդական ակումբները, թերթերը, արհմիությունները, գյուղատնտեսական կոոպերատիվները, եկեղեցին և կրոնական համայնքները, պատերազմի վետերանների միությունները, արդյունաբերական-առևտրական կազմակերպությունները ու միությունները<sup>24</sup>:

Այսպիսով, ըստ Դյուվեժեի քաղաքական կուսակցությունները դեմոկրատիայի աստիճանական զարգացման որոշակի փուլում առաջացած և էլեկտորալ-պառլամենտական ու արտաքին գործոնների ազդեցությամբ ձևավորված, «հատուկ կառուցվածք» ունեցող կազմակերպություններ են: Դրանք նաև «համեմատաբար ամուր, երկարատև գոյատևող սոցիալական կազմակերպություններ են», ձգտում են տիրել պետական իշխանությանը և ունեն այնպիսի ներքին կազմակերպական կառուցվածք, որը «կապում է կուսակցական ղեկավարման կենտրոնների լիդերներին քաղաքական արենայի իրենց կողմակիցների հետ:»

Դյուվեժեի աշխատությունից հետո 1960-1980-ական թթ. արևմուտքում հրատարակվեցին նոր քաղաքագիտական ուսումնասիրություններ, որոնց մեջ կուսակցություն հասկացությունը սահմանվում է այլ դիրքերից: Օրինակ, Իտալիայի հանրահայտ քաղաքագետ Ջովանի Սարտորին կուսակցությունը բնորոշում է որպես ընտրություններին մասնակցող և ընտրությունների ճանապարհով պետական պաշտոնների համար թեկնածուներ առաջադրող քաղաքական խումբ<sup>25</sup>: Ինչպես տեսնում ենք Սարտորիի սահմանման մեջ առաջնայինը ոչ թե կազմակերպական կառույցն է, այլ ընտրություններին մասնակցելու և ընտրովի քաղաքական պաշտոններում մարդկանց նշանակումը կամ թեկնածության առաջադրումը:

Ամերիկացի քաղաքագետ Սեյմուր Լիպսետը, քաղաքական սոցիոլոգիայի և համեմատական քաղաքագիտության իր մի շարք հիմնարար հետազոտությունների մեջ անդրադառնալով հիմնախնդրին, գրում է, որ ժամանակակից դեմոկրատական երկրներում քաղաքական կուսակցությունների գոյությունը

պայմանավորված է այնպիսի գործոններով, որոնք կապված են ստրատիֆիկացիայի (հասարակության սոցիալական շերտավորվածության-հեղ.) և մշակութային արժեքների հետ: Առաջինի նախատիպը հանդիսանում է դասակարգային կուսակցությունը, երկրորդինը՝ կրոնական կուսակցությունը<sup>26</sup>: Մեկ այլ ամերիկացի հեղինակ Կ. Ջենդը կուսակցությունը սահմանում է, որպես կառավարման պոստերում իր ներկայացուցիչներին տեղավորելու նպատակ ունեցող կազմակերպությունների հավաքածու:

Ժամանակակից սահմանումների մեջ, անհրաժեշտ է նաև նշել Ռ.ժ.Շվարցենբերգի սահմանումը, որը բազմակողմանի սոցիոլոգիական հետազոտությունների միջոցով հանգում է այն հետևությանը, որ «Քաղաքական կուսակցությունը - դա անընդմեջ գործող կազմակերպություն է, որը գործում է ինչպես համազգային, այնպես էլ տեղական մակարդակներում, նպատակադրված է վերցնել և ուղղորդել իշխանությունը և այդ նպատակով ձգտում է ստանալ ժողովրդական աջակցությունը»<sup>27</sup>: Շվարցենբերգը գտնում է, որ կուսակցությունը հենվում է ընդհանուր համերաշխության գաղափարի վրա, հետամուտ լինելով ընդհանուր (զլորալ) հասարակության այս կամ այն գաղափարին:

Արևմտյան որոշ ուսումնասիրողներ կուսակցությունների էությունը բացահայտում են ժամանակակից հասարակության քաղաքական հակամարտությունների բնույթի և դրանց լուծման մեխանիզմների համատեքստում, ընդ որում, անտեսելով դասակարգային գործոնը<sup>28</sup>: Առանձին և բավականաչափ մեծ խումբ են կազմում այն քաղաքագետները, որոնք իրենց սահմանումների մեջ, առաջնային տեղ են հատկացնում ֆունկցիոնալ գործոնին: Օրինակ Կ. Լոուսոնը նշում է, որ ոչ մի սահմանում չի կարող կատարյալ լինել, բայց առավել ընդունելի են այն սահմանումները, որոնք շեշտը դնում են կուսակցությունների գործունեության վրա: Լոուսոնը առաջարկում է հետևյալ սահմանումը. «Քաղաքական կուսակցությունը, դա անհատների կազմակերպություն է, որը ձգտում է ընտրությունների միջոցով կամ առանց ընտրությունների երկարաձգել այդ կազմակերպության հատուկ ներկայացուցիչներին ժողովրդի կամ նրա մի հատվածի կողմից տրված լիազորությունները, որպեսզի իրականացվի տվյալ կառավարական հաստատու-



թյունների քաղաքական իշխանությունը, հավաստիացնելով, որ այդ իշխանությունը կիրականացվի ժողովրդի անունից»<sup>29</sup>: Մեկ այլ ամերիկյան քաղաքագետ Պ. Մերկլը կուսակցությունը համարում է «այնպիսի քաղաքական կազմավորում, որը հավաքագրում և սոցիալիզացնում է նոր անդամներ, ընտրում է առաջնորդներ ներկայացուցչության ներքին գործընթացներով ու ընտրություններով, լուծում է ներքին վեճերը»<sup>30</sup>: Ֆունկցիոնալ գործոնը առաջնային է նաև ՌԻ. Կրոտտի սահմանման մեջ:

Նա կուսակցությունը դիտում է ձևականորեն կազմակերպված խումբ, որը կատարում է «հասարակության քաղաքական ուսուցման, հավաքագրման և ծառայական սանդղակով առաջ քաշման, զանգվածների ու օրենսդիրների միջև լայն կապերի հաստատման ֆունկցիաներ»<sup>31</sup>:

Ֆունկցիոնալ գործոնից բացի որոշ ամերիկյան քաղաքագետներ (Ի.Լապալենբարա, Ի.Վեյներ)<sup>32</sup> կուսակցությունների բնույթի բացահայտման համար առանձնացնում են հետևյալ հատկանիշները.

1. Կազմակերպության երկարաժամկետությունը,
2. Համազգային մասշտաբով գործունեությունը:

Այսպիսի մոտեցումների դեպքում կուսակցությունները ներկայացվում են որպես պետական իշխանության և քաղաքական գործընթացների սուբյեկտ և հասարակության հատուկ քաղաքական ինստիտուտ: Ի դեպ, ներկայումս այս տեսակետը ամենից տարածվածն ու գերիշխողն է, որը կուսակցություն հասկացության սահմանումը կատարում է նրա սահմանադրական-իրավական էության բացահայտման ուղիով: Սահմանադրաիրավական ձևակերպումները առկա են ոչ միայն գիտական ուսումնասիրություններում, այլև սահմանադրություններում և օրենսդրական փաստաթղթերում<sup>33</sup>: Կուսակցություն հասկացության սահմանումը ունի ոչ միայն գիտական, այլ նաև պետական ու իրավական նշանակություն: Դա պայմանավորված է, ինչպես ներածության մեջ նշեցինք նրանով, որ առանց քաղաքական կուսակցությունների անհնար է ազգային-պետական քաղաքականության մշակումն ու ձևավորումը, ռեսուրսների հավաքագրումը և որոշումների ընդունումը նրա իրականացման համար: Առանց կուսակցությունների անհնար է ապահովել դեմոկրատիան, որպես այդպիսին, որովհետև կուսակցությունների ազատությունը դեմոկրատիայի

գրավականն է: Ահա թե ինչու դեմոկրատական ռեժիմ ունեցող պետությունների սահմանադրությունների մեջ առանձին հոդվածներով տրված է քաղաքական կուսակցություն հասկացության սահմանումը: Այդպիսի հոդվածներ ունեն Գերմանիայի ֆեդերատիվ Հանրապետության, Իտալիայի, Ֆրանսիայի, Շվեդիայի, Բուլղարիայի, Մեքսիկայի սահմանադրությունները: Հասկացության սահմանումը ձևակերպված է նաև կուսակցությունների և ընտրությունների մասին հատուկ օրենքներում, կամ էլ ինչպես ԱՄՆ-ում է՝ Գերագույն դատարանի որոշումներում: Չխորանալով այդ հոդվածներում տրված սահմանումների երկրորդական նշանակություն ունեցող մանրամասնությունների մեջ՝ նշենք ամենաէականն ու բնորոշիչը. քաղաքական կուսակցությունը համարվում է քաղաքացիների միություն, որի հիմնական նպատակը մասնակցությունն է կենտրոնական կամ նահանգային օրենսդիր մարմինների ընտրություններին և այնտեղ ժողովրդի ներկայացուցչության ապահովումը:

#### Ծանոթագրություններ

1. Берк Э. Размышления о революции во Франции. М., Наука.
2. Токвиль А. Демократия в Америке. Кн.1. ч.2, М.: Прогресс, 1992, стр. 146.
3. Տես նույն տեղը, էջ 144.
4. Острогорский М. Демократия и политические партии. В 2 т. М., 1930, Т.2 Соединенные Штаты Америки, стр. 276.
5. Տես նույն տեղը, էջ 293, 295, 296, 298-299, 303, 308, 314, 324, 343-346:
6. Այսպես էին անվանում ամերիկյան կուսակցությունների, ֆրակցիաներին կոմգրեսում, որն հետագայում օգտագործվում էր կուսակցական վերնախավը մատնանշելու համար:
7. Острогорский М.Я. Демократия и политические партии. Т.1 М., 1927, стр. 144.
8. Տես նույն տեղը, էջ 249.
9. Կ.Մարքս, Ֆ.Էնգելս Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, Երևան, 1973, էջ. 72:
10. Տես Վ.Լենինի «Մի քայլ առաջ, երկու քայլ ետ» «Ինչ անել», «Ռուսական քաղաքական կուսակցությունների դասակարգման փորձը», «Քաղաքական կուսակցությունները Ռուսաստանում», «Քաղաքական կուսակցությունները Ռուսաստանում և պրոլետարիատի խնդիրները» աշխատությունները: Երկերի լիակատար ժողովածու, 4-րդ կամ 5-րդ հրատ.:
11. Վ. Ի.Լենին, Երկեր, հ. 7, էջ. 536-537:
12. Վ.Ի.Լենին, Երկեր, հ. 11, էջ 395:



## ՍԱՍՈՒՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

## ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Գիտական գրականության մեջ առկա են «Կյանքի որակ» հասկացության բազմատարբերակային բնորոշումներ: Սակայն կարծես բոլորի կողմից ընդունվում է այն, որ կյանքի որակն արտահայտում է մարդկանց պահանջմունքների բավարարման որակը: Սա կյանքի որակի գլխավոր տարբերիչ հատկանիշն է մարդկային գործունեության տարբեր կողմերն արտահայտող «կյանքի մակարդակ», «կենսածն», «կյանքի ոճ», «ապրելակերպ» հասկացություններից:

Կյանքի որակի բազմագործառնական օգտագործման գլխավոր պատճառներից մեկը վերլուծվող բաղադրիչներն են, դրանց թիվը և բաղադրման (մանրամասնման) աստիճանը: Չետաբար, կյանքի որակի ճիշտ գնահատման համար կարևոր նշանակություն են ձեռք բերում վերլուծվող բաղադրիչները և դրանց մանրամասնման աստիճանը [1]:

Վերջինս կախված է այն հանգամանքից, թե հեղինակները ընդհանրապես ինչպիսի՞ պատկերացումներ ունեն մարդու և հասարակության՝ որպես մեկ ամբողջական համակարգի, նրանց պահանջմունքների մասին, և ինչպիսի՞ նշանակություն են տալիս վերջիններիս՝ կյանքի որակի ինդիկատորների մշակման ժամանակ, չէ՞ որ կյանքի որակը արտահայտում է մարդկանց հասարակության պահանջմունքների բավարարման որակական մակարդակը: Կյանքի որակի վերլուծվող բաղադրիչները և նրանց մանրամասնման աստիճանը կախված են նաև այն հանգամանքից, թե ինչպիսի՞ տարաբնակեցման համակարգում է վերլուծվում այն. տարբեր տիպի տարաբնակեցման համակարգերում տարբեր են կյանքի որակը պայմանավորող գործոնները: Աշխատությունների մի մասում (օրինակ Ռ.Պիրսի, Ռ.Բոյերի և Դ.Սավաժոյի, Բեն-Չեն Լյուի [15, 10, 13] և ուրիշների մոտ)

13. Кола Доминик. Политическая социология. Пер. с фр. М., "Весь Мир", "ИНФРА-М", 2001, стр. 178.
14. Տե՛ս Ленин В.И. Полн. собр. соч. Т. 24, стр. 24-35.
15. Տե՛ս Вебер М. Избрание произведения. М., 1990.
16. Տե՛ս Гаджиев К.С. Политическая наука. М., "Международные отношения", 1996, стр. 135.
17. Михельс Р. Социология политической партии в условиях демократии. В кн. Политология: хрестоматия. М.: Гардарики, 2000, стр. 541.
18. Լույն տեղում, էջ 544, 545:
19. Михельс Р. Социология политической партии в условиях демократии. В кн. Политология: хрестоматия. М.: Гардарики, 2000, стр. 544.
20. Дюверже М. Политические партии. Пер. с франц. М.: Академический Проект, 2000, стр. 17.
21. Լույն տեղում
22. Дюверже М. Политические партии. Пер. с франц. М.: Академический Проект, 2000, стр. 18.
23. Լույն տեղում էջ 22-29:
24. Լույն տեղում էջ 29-37:
25. Даниленко В.И. Современный политологический словарь. М.: NOTA BENE, 2000, стр. 614.
26. Липсет С. Политическая социология. Американская социология. М., 1972, стр. 214.
27. Шварценберг Р.Ж. Политическая социология. Часть III, М., 1992, стр. 78.
28. Дарендорф Р. О будущем партий // Политология вчера и сегодня. Выпуск четвертый. М., 1992, стр. 133-138; Элдери Т., Армер Д. Условия достижения консенсуса. Там же, стр. 154-163; Беймс К. Партии. Там же, стр. 65.
29. Տե՛ս Политология. Под. ред. Г.В.Полуниной. М., "Акалис", 1999, стр. 188.
30. Լույն տեղում:
31. Լույն տեղում:
32. Տե՛ս Евдокимов Е.В. Партии в политической системе буржуазного общества. Свердловск, 1990.
33. Տե՛ս Законодательство о политических партиях в зарубежных странах. М., 1990.



կյանքի որակը վերլուծվում է քաղաքային ազլոմերացիաներում, մի մասում (օրինակ Դ.ժ.Թոմասի [16] և ուրիշների մոտ) միկրոպոլիտենային արեալներում կամ ազլոմերացիայի տարբեր մասերում: Կան համակարգեր, որոնց մոջոցով կյանքի որակը գնահատվում է ամբողջ երկրի համար: Օրինակ, այդպիսի համակարգ է 1963թ.-ին ՄԱԿ-ի փորձագետների կողմից մշակված դասակարգումը, որը օգտագործվում է ոչ միայն զարգացած, այլ նաև զարգացող երկրների համար [7, էջ 177]: Կամ այդպիսի մոտեցման մեկ այլ օրինակ է համաշխարհային բանկի կողմից կիրառվող համակարգը [4, էջ 216-217] և այլն:

Կյանքի որակի բաղադրիչների մասին պատկերացումները ինչպե՞ս են արտահայտված «կյանքի որակի» բնորոշումներում:

«Կյանքի որակ» հասկացության բնորոշումներում միշտ չէ, որ ընդգծվում է կյանքի որակի վրա ազդող գործոնների դերը, շատ դեպքերում՝ կյանքի որակի բաղադրիչները իրենց արտացոլումը չեն գտնում հասկացության բնորոշումներում: Օրինակ, կյանքի որակի էության մասին այդպիսի մոտեցում ունեն Ջ.Գալբրայթը, Ն.Դալկին և Դ.Ռուրկը, Ֆ.Չոֆմանը [5, 11, 17] և ուրիշները: Սակայն կան հեղինակներ, որոնց բնորոշումներում շեշտադրվում են կյանքի որակի վրա ազդող գործոնների, կյանքի որակի բաղադրիչների դերը: Օրինակ այդպիսի բնորոշումներ են տվել Ժ.Գարդենը, Լ.Լևին և Լ.Անդերսենը [18, 6] և ուրիշները: Սակայն, տարբեր է այդ բնորոշումներում այս կամ այն բաղադրիչին տրվող նշանակությունը: Ժ. Գարդենի մոտ ընդգծվում է նյութական ռեսուրսների, զբաղվածության, բնակարանային պայմանների, աշխատանքային պայմանների, տրանսպորտային մատչելի միջոցների, շրջակա միջավայրի, գիտելիքների, ֆիզիկական և հոգևոր առողջության նշանակությունը [18, էջ 126]: Լ.Լևին և Լ.Անդերսենը կյանքի որակը ձևավորող գլխավոր գործոններ են համարում առողջական վիճակը, ամուսնությունը, ընտանեկան հարաբերությունները, աշխատանքը, բնակարանային պայմանները, ֆինանսական պայմանները, կրթությունը և այլն [6, էջ 20]:

Սա նշանակում է, որ հեղինակների մոտ միանշանակ մոտեցում չկա կյանքի որակը ձևավորող գործոնների մասին:

Նմանատիպ մոտեցում է հեղինակների մոտ նաև կյանքի որակի ցուցանիշների համակարգերի մշակման ժամանակ:

Կան հեղինակներ, որոնք կյանքի որակն արտահայտում են մի քանի ինտեգրալ ցուցանիշների միջոցով: Օրինակ, ըստ Ջ.Ֆորեստերի համակարգի, կյանքի որակը կարելի է որոշել 4 ինտեգրալ ցուցանիշների միջոցով՝ ստրեսային իրադրությունների և ընդհանրապես կյանքի դժվարությունների մակարդակի, շրջակա միջավայրի աղտոտվածության աստիճանի, բնակչության կուտակման աստիճանի և սննդի ու առողջության որակի [2, էջ 45]:

Ընդհանրապես, մի քանի ինտեգրալ ցուցանիշներով կյանքի որակի գնահատումը՝ մեր կարծիքով, ընդունելի չէ, որովհետև այստեղ անտեսվում են մարդկանց կյանքի բոլոր կողմերը, նպատակ չկա մարդու պահանջմունքների համակարգը հնարավորինս մանրամասն արտահայտելու: Սակայն, կան համակարգեր, որոնք կյանքի որակը արտահայտում են ոչ միայն սակավաթիվ ցուցանիշներով, այլ նրանք չունեն ինտեգրալ բնույթ ունեցող ցուցանիշներ: Այդպիսին է, օրինակ՝ համաշխարհային բանկի կողմից կիրառվող համակարգը [4, էջ 216-217]: Սա կյանքի որակի բաղադրիչների համակարգերից ամենաչիաջողվածներից է:

Սակայն, գերակշռող տենդենց այնուամենայնիվ համարվում է կյանքի որակի որոշման ժամանակ բավականին մեծ թվով ինդիկատորների ներգրավումը, որն ավելի խորությամբ է արտահայտում կյանքի որակի էությունը, նրա տարբեր կողմերը, պահանջմունքները, որի բավարարման է ուղղված գնահատման նպատակը: Օրինակ, այդպիսի հաջողված մոտեցում կարելի է համարել Բեն-Չեն Լյուի, Ջ.Ս.Պապագեորգիուի, Ռ.Բոյերի և Դ.Սավաժոյի, Ջ.Ս.Թոմասի, ՄԱԿ-ի փորձագետների կողմից մշակված կյանքի որակի և կյանքի մակարդակի ցուցանիշների համակարգերը [13, 14, 10, 16, 7] և այլն: Բեն-Չեն Լյուի կողմից մշակված համակարգում միայն կյանքի որակի ֆիզիկական գործոնների բնութագրման համար օգտագործվում են 125 ինդիկատորներ [13, էջ 52-79]: Այդ համակարգը՝ բացի ֆիզիկական գործոններից, որոնք ընդգրկում են տնտեսական, քաղաքական, էկոլոգիական, առողջապահական ու կրթական և սոցիալական պայմանները, ընդգրկում է նաև հոգեբանական պայմանները, որոնք չեն տրվում որակական ու քանակական չափման: Չնայած այն հանգամանքին, որ Բ.Չ.Լյուի «Quality of life indicators in US metropolitan areas» (New-York, 1976) աշխատությունը բավականին հին է,



մինչ օրս համարվում է դասական, և այստեղ առկա կյանքի որակի ցուցանիշների համակարգը կիրառվում է տարբեր երկրներում քաղաքային բնակավայրերի բնակչության կյանքի որակի գնահատման ժամանակ:

Ռ.Բոյերի և Դ.Սավաժոյի կողմից մշակված համակարգը իր մեջ ներառում է ցուցանիշների հետևյալ խմբերը, կյանքի որակի հետևյալ բաղադրիչները՝ կյանքի արժեքը, աշխատանքը, հանցագործությունները, առողջապահությունը, տրանսպորտը, կրթությունը, մշակույթը, հանգստի և զվարճացման ոլորտը և եղանակային-կլիմայական պայմանները [10]: Այս համակարգը հետաքրքիր է նրանով, որ ցուցանիշների մի մասը ունի ինտեգրալ բնույթ. կյանքի արժեքը ներկայացվում է բնակարանի արժեքի համաթվով, սննդամթերքների արժեքի համաթվով, տրանսպորտային ծախսերի համաթվով, բժշկական սպասարկման համաթվով: Իսկ ընդհանրապես, Ռ.Բոյերի և Դ.Սավաժոյի ներկայացրած համակարգը գործոնների 9 խմբերով և 49 ցուցանիշների միջոցով ներկայացնում է կյանքի որակի տարբեր կողմերը և մարդու (հասարակության) պահանջմունքների բավարարման որակը: Իսկ օրինակ, Ջ.Ս.Թոմասի կողմից ներկայացված համակարգը ներառում է գործոնների 10 խումբ՝ եղանակային-կլիմայական պայմանները և բնական միջավայրը, ռեկրեացիոն ոլորտը, տնտեսությունը, կրթությունը, բնակչության «իմաստնացածությունը» (Sophistication), առողջապահությունը, բնակարանային պայմանները, հասարակության մեջ կյանքի անվտանգությունը, տրանսպորտը, քաղաքային կյանքի խոշոր միջուկների նկատմամբ տեղադիրքը [16]: Ընդհանուր առմամբ այս համակարգը ներառում է 50 ցուցանիշներ:

Անհրաժեշտ է նշել նաև Ջ.Ս.Պապագեորգիուի կյանքի որակի համակարգի մասին [14]: Այստեղ կյանքի որակը ներկայացվում է 14 խումբ գործոնների միջոցով: Դրանք են՝ օդի որակը, ջրի որակը, հողերի որակը, բնական պայմանները և տարրերային աղետները, բնակարանային պայմանները, ուրբանիզացիան, կոմունիկացիաները, սնունդը, առողջապահությունը, կրթությունը, տնտեսական պայմանները, անվտանգությունը և սոցիալական ապահովվածությունը, սոցիալական բնութագիրները և ազատ ժամանակը, ռեկրեացիան: Համակարգը

ներկայացնող գործոնների որոշ խմբեր ներկայացված են ենթախմբերով: Բավականին մանրամասն են ներկայացված շրջակա միջավայրի գործոնները: Այս համակարգը հետաքրքիր է նրանով, որ հեղինակը առաջարկում է ոչ այնքան լրացնել ցուցանիշների համակարգը, որքան կրճատել՝ գտնելով, որ իր համակարգը չափից ավելի է բաղադրում մարդու կյանքի որակի վրա ազդող գործոնները: Սակայն, այս համակարգը, ունի ակնհայտ թերություններ՝ այն ընդհանրապես հաշվի չի առնում կյանքի որակի վրա, քաղաքական և մշակութային գործոնների ազդեցությունը, իսկ դրա կողքին մանրակրկիտ ցույց տալով շրջակա բնական միջավայրի ազդեցությունը: Կյանքի որակը պայմանավորող գործոնները հնարավորին մանրամասն ցույց տալու սկզբունքը կարծես չի վերաբերում գործոնների բոլոր խմբերին:

Ընդհանրապես կյանքի որակի ցուցանիշների համակարգերում տարբեր է գործոնների ոչ միայն բաղադրման աստիճանը, այլ նաև՝ տարբեր է հեղինակների կողմից գործոններին վերագրված նշանակությունը, դերը: Օրինակ, ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի փորձագետների կողմից մշակված համակարգում առաջին տեղում են սննդամթերքների օգտագործումը, բնակչության առողջական վիճակը և կրթական մակարդակը [7, էջ 177], 60-ական թթ-ի վերջում և 70-ականների սկզբին մշակված կյանքի որակի շվեդական մոդելում առաջին տեղում էր աշխատանքը, նրա պայմանները, մարդու տնտեսական և քաղաքական հնարավորությունները և այլն [12]: Սակայն, սրա հետ մեկտեղ, բոլոր համակարգերի համար ընդհանուր կարելի է համարել սոցիալական գործոններին տրվող մեծ դերը, նշանակությունը:

Գնահատելով տարբեր հեղինակների կողմից առաջարկված կյանքի որակի ցուցանիշների համակարգերը, պետք է բարձր գնահատել կյանքի որակի ուսումնասիրության ժամանակ կիրառվող մոտեցումների լայնույթը, նրանց ուսումնասիրությունների որոշակի հումանիստական ոգին, նրանց նպատակասլացությունը՝ հաշվի առնելու տարաբնակեցման համակարգերում սոցիալ-տնտեսական տարբերությունները և այլն: Սակայն, սրանց հետ մեկտեղ ցուցանիշների համակարգեր են ներգրավվում այնպիսիները, որոնք թվում են երկրորդական, իսկ որոշ դեպքերում ոչ համոզիչ: Եվ ընդհանրապես, նկատելի



է ցուցանիչների մշակման հատուկ մեխանիզմի բացակայությունը:

Կյանքի որակի բաղադրիչների հետ կապված առկա է մեկ կարևոր թերություն ևս. ցուցանիչների ընտրությունը չի զուգակցվում սահմանադրության մեջ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների հետ կապի շեշտադրմամբ: Վերջիններս ցույց են տալիս, թե տվյալ երկրում մարդու պահանջմունքների բավարարման ինչպիսի՞ իրավունքներ, պետական երաշխիքներ կան: Պատահական չէ, որ մարդու պահանջմունքների շատ համակարգերում առկա են այս կամ այն պահանջմունքի բավարարման իրավունքի սահմանադրական երաշխիքները:

Սակայն, մեր կարծիքով կյանքի որակի ինդիկատորների մշակման ժամանակ ամենազխտավորը՝ մարդու (հասարակության) պահանջմունքները առավելագույնս ամբողջական և մանրամասն արտահայտող համակարգի մշակման և կիրառման խնդիրն է: Այդ պատճառով առանձին քննարկման է արժանի պահանջմունքների համակարգի ընդունման հարցը:

Судь Философский энциклопедический словарь. (М., 1989) գրքի, պահանջմունքները՝ դա օրգանիզմի, մարդկային անձնավորության սոցիալական խմբերի, ընդհանրապես հասարակության զարգացման և կենսագործունեության պահպանման համար անհրաժեշտ ինչ-որ բանի պահանջը (պահանջարկը) կամ անբավարարվածությունն է, ակտիվության ներքին խթանը [9, էջ 499]:

Ինչքանով են կիրառելի մարդու պահանջմունքների համակարգերը հասարակության կյանքի որակի գնահատման ժամանակ:

Բուն «պահանջմունք» գաղափարն ունի երկու մակարդակ, կամ կտրվածք: Անհատի շրջանակներում դա ցեղի շարունակման և կյանքի որոշ անհրաժեշտ պայմաններն են որոշակի որակական մակարդակի նկատառումներով, որը թելադրվում է ոչ միայն ֆիզիոլոգիական կարիքներով, այլև կյանքի որակի մասին պատկերացումներով: Հասարակության տեսանկյունից և նրա շրջանակներում, դա նյութական և հոգևոր բարիքների և ծառայությունների սպառման հնարավորությունների հետ կապված հասարակական հարաբերություններն են [3, էջ 6-7]: Այդ հարաբերությունները ընդլայնում կամ նվազեցնում են, ինչպես նաև վերափոխում անձի

հնարավորությունները՝ բավարարելու սեփական պահանջները, սակայն չեն փոխում պահանջմունքների ընկալման առաջին կտրվածքի՝ այսիքն, որպես մարդկանց կայնքի և նրա շարունակման պայմանների էությունը [8, էջ 298]:

Հասարակական պահանջմունքները համակարգայնորեն յուրաքանչյուր անձի անձնական պահանջմունքների քանակական գումարը չեն, բայց որակապես դրանք նույն պահանջմունքներն են և նրանց միմյանցից անջատելը նպատակահարմար չէ և մեթոդաբանորեն չարդարացված: Ուստի, կարելի է հենվել մարդկանց պահանջմունքների համակարգերի բազմատարբերակային ցանցի մեջ առավել ինտեգրացիոն բնույթ ունեցող համակարգի վրա՝ հասարակության պահանջմունքների մասին պատկերացում կազմելու, հետևապես՝ կյանքի որակի ցուցանիչների ընտրություն կատարելու համար:

Մարդու նկատմամբ ամբողջական մոտեցման փորձերից մեկը և առավել հաջողվածներից կարելի է համարել Ն.Ֆ.Ռեյմերսի կողմից ներկայացված մարդու պահանջմունքների տիպաբանությունը [8, էջ 297-316], որտեղ հիմք են ընդունվել Լ. Յա. Բարանովայի կողմից առանձնացված մարդու պահանջմունքների դասակարգման սկզբունքները (ինտեգրացված ձևով) [3, էջ 50], ինչպես նաև մարդու և մարդկության՝ որպես համակարգային զոյացության մասին պատկերացումները [8, էջ 292-297]: Արդյունքում ստացվել է մարդու գրաֆիկական մի մոդել՝ կազմված փոխադարձ սերտ կապված 6 ենթահամակարգերից [8, էջ 304-316].

#### 1. «Կենսաբանական» մարդ

ա) Կենսաբանական (անատոմո-ֆիզիոլոգիական) պահանջմունքներ  
բ) էթոլոգո-վարքագծային (հոգեբանական) պահանջմունքներ

#### 2. «Բնաաշխատանքային» մարդ

գ) Աշխատանքային պահանջմունքներ

դ) էթնիկական պահանջմունքներ

#### 3. Սոցիալական մարդ

ե) Տնտեսական պահանջմունքներ

զ) Սոցիալական պահանջմունքներ

Բոլոր 6 խմբերի ընդհանուր ցուցակը ներառում է 56 որակական ենթախումբ [8, էջ 297-316]:



Մարդկային կարիքների բազմազանությունը գործնականում անսահման է: Չկա «ստանդարտ մարդ», չկա «ստանդարտ խումբ», չկան նաև ստանդարտացված պահանջումները [8, էջ 315-316]: ՈՒստի, այս տիպաբանությունը նույնպես բոլորի համար օրինակելի համարել չի կարելի: Սակայն, գնահատելով այս համակարգի առավելություններն ու թերությունները, այն իմ կողմից հիմք է ընդունվել՝ «ՀՀ քաղաքների բնակչության կյանքի որակի աշխարհագրական վերլուծությունը» թեմայով դիսերտացիոն աշխատանքը կատարելիս: Այստեղ (իհարկե հաշվի առնելով ՀՀ-ում վիճակագրական տվյալների ապահովման խնդիրը), կյանքի որակի ինդիկատորների ընտրություն ժամանակ շեշտադրվում է, թե ո՞ր ինդիկատորը ո՞ր պահանջումների բավարարումն է արտահայտում:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ պետք է նշել, որ հեղինակների մոտ միանշանակ մոտեցում չկա «կյանքի որակի», նրա բաղադրիչների, մարդու (հասարակության) տարբեր պահանջումների որակակն մակարդակն արտահայտող ինդիկատորների առավել ամբողջական համակարգի մշակման մեխանիզմների մասին: Ինդիկատորների մշակման ժամանակ բացակայում է պահանջումներին համապատասխան ինդիկատորների ընտրության շեշտադրման անհրաժեշտության գիտակցումը: ՈՒստի արդիակն է թե կյանքի որակի ինդիկատորների մշակման համար մարդու (հասարակության) պահանջումները առավելագույնս ամբողջական և մանրամասն արտահայտող համակարգի մշակման և կիրառման, թե այդ համակարգի հիմքի վրա ինդիկատորների մշակման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակման խնդիրը:

#### Օգտագործված գրականություն

1. Սարիբեկյան Ս. Լ., Կյանքի որակը՝ որպես աշխարհագրական հետազոտության առարկա, «Աշխարհագրություն 99», Եր. 1999
2. Арутюнян Л. А., Социалистический образ жизни: методологические проблемы социологического изучения. Ер., 1985
3. Баранова Л. Я., Личные потребности. М., 1984
4. Всемирный банк. На пороге 21 века. Доклад о мировом развитии 1999/2000 М., 2000

5. Гелбрайт Дж., Общество изобилия. М., 1968
6. Леви Л., Андерсен Л. Народоноселение, окружающая среда и качество жизни. М., 1979
7. Народоноселение: энциклопедический словарь. Ред. колл. А. Я. Кваша, Г. Г. Меликян (гл. ред.) и др. М., 1994
8. Реймерс Н. Ф. Надежды на выживание человечества: концептуальная экология. М., 1992
9. Философский энциклопедический словарь. М., 1989
10. Boyer R., Savageau D. Places rated almanac. Your guide to finding best places to live in America. N.Y., 1989
11. Dalkey N., Rourke D., «The Delphi Procedure and Rating Quality of Life Factors», in Experimental Assassments of Delphi Procedures with Group Value Jngments. Californias Rand Corporation, 1971
12. Erikson R., «Descriptions of Inequality: The Swedish Approach to Welfare Research» in The Quality of Life. Clarendon Press. Oxford, 1993
13. Liu Ben-Chieh., Quality of life indicators in US metropolitan areas. N.Y., 1976
14. Papageorgiou J., Quality of life indicators. «Intern. J. of Environment Studies», 1976, v. 9, N 3
15. Pirse, R. M., «Rating Americas Metropolitan Areas», in American Demographics 7 (7) : 20-25, 1985
16. Thomas G.S., The rating guide to life in Americas small cities. Buffalo, 1990
17. Hofman F., Um die kommunalpolitik von morgen - §Die Zukunff!, März 1973
18. Garden J. La qualité de la vie.- "Nef.", P. 1975, à 32 N56



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Տ. Գֆելլեր - Պարզունակությունը որպես հոգևոր խորության հենարան (ռուսերեն) ..... 3

**ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Ա. Ղազարյան - Դ. Դեմիրճյանի «Վարդանանց պատերազմ» հետազոտության երկրորդ ծանցվածքը ..... 19  
 Ա. Մակարյան - Գրական դիմանկարի նախանմուշները ..... 27  
 Վ. Գրիգորյան - Սիմվոլը Շանթի դրամաներում ..... 51  
 Ա. Բոյախյան - Ի. Շպաժինսկու դրամատուրգիան հայ մինչհեղափոխական թատրոնում (ռուսերեն) ..... 56  
 Մ. Խաչատրյան - Հայոց ազատամարտի արտացոլումը Համաստեղի «Սպիտակ ծիլերը» վեպում ..... 61  
 Ս. Թումանյան - Անհատի և հանրության հոգեբանության փոխհարաբերության խնդիրն արծակում (60-80-ական թթ.) ..... 75  
 Զ. Հայրյան - Թարգմանությունը որպես գրական կապերի միջոց (ռուսերեն) ..... 86  
 Լ. Գալստյան - Ճշմարիտ տաղանդի երախայրիքը ..... 91  
 Մ. Հովսեփյան - Օրենսդրական դաշտի կարգավորման առանձնահատկությունները հանրապետական ռադիոշուկայում ..... 103

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ե. Կարաբեգովա - Կոնոտացիան «Արևելք-Արևմուտք» գերմանական գրականության մեջ XIX-XX դարեր (ռուսերեն) ..... 115  
 Ա. Ադիլխանյան - Նորաբանությունները Շիրազի պոեմներում (Դանթեական, Բիբլիական, Հայոց Հրաշքը, Սիամանթո և Խջեզարե, Անի) ..... 121  
 Դ. Ղազարյան - Ոճական փոխակերպումների առանձնահատկությունները բանաստեղծական թարգմանության մեջ ..... 137  
 Ն. Հովակիմյան - «Նորաբանություն» հասկացության ըմբռնումը ժամանակակից լեզվաբանության մեջ ..... 143  
 Թ. Խոջայան - Հավելիմաստությունը որպես զավեշտական իրավիճակի ստեղծման նախադրյալ (ռուսերեն) ..... 147  
 Ա. Սիմոնյան - Ու. Ֆոլկների «Աբխոզում, Աբխոզում» վեպի շարադրական կառույցի ոճակազմական գործառույթը (ռուսերեն) ..... 158  
 Ա. Ալանսկյան - Ոչ գործընթացային բարդ հատկանիշի դրսևորումները անգլերեն, ռուսերեն և հայերեն լեզուներում (ռուսերեն) ..... 165

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

Ա. Խաչատրյան - Ֆրանսիայի և մյուս մեծ տերությունների դիվանագիտությունը Հայկական հարցում 20-րդ դարի սկզբում ..... 176

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

Գ. Վարդանյան - Տնտեսական գերմաներենի ուսուցման մի քանի դրույթներ ..... 185  
 Ռ. Հարությունյան - Տրամաբանական-սեմանտիկ հարաբերությունների հասկացողության ուսուցումը նախադասության ոչ տրադիցիոն վերլուծության ժամանակ (ռուսերեն) ..... 193

**ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Դ. Խաչատրյան - Սեփականության իրավունքի իրականացման սահմանները ..... 200  
 Կ. Մուրադյան - Իրավական համակարգի ժամանակակից ըմբռնումը ..... 209  
 Է. Հայրյան - Անկարողության, անվճարունակության և սնանկացման հասկացությունների հարաբերակցությունը (ռուսերեն) ..... 216

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Գ. Քեռյան - Քաղաքական կուսակցություն հասկացության սահմանումները ..... 220

**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Ս. Սարիբեկյան - Կյանքի որակի բաղադրիչները ..... 237

Շապիկի ձևավորումը ՎԱՐԴԱՆ ԳԱՐԻԵԼՅԱՆԻ  
 Համակարգչային ձևավորումը ՎԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ



# ԿԱՆԹԵՂ 1

## ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ



ԱՍՈՂԻԿ

«ԱՍՈՂԻԿ» հրատարակչություն

Ստորագրված է տպագրության 25.01.2002

Ֆորմատ 60x84/16

Թուղթ՝ օֆսեթ

Պատվեր՝ N: 162

Տպաքանակ՝ 100:

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» ՍՊԸ-ի տպարանում:

Ք. Երևան, Ավան, Չարենցի թաղ. 9/22

Հեռ. 58.22.99, 40.49.82

E-mail: [print@netsys.am](mailto:print@netsys.am)